Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

28
P-79

531

№ 41.

12

Въ Лазаревскій Институтъ отъ Его Превосходительства Христофора Климовича Лазарева приношеніе. 1854 г. изъ Парижа.

X

Լաչ
531
N 238.
238
4.
0101
40803

ԹՈՎՄԱՑԻ
ԳԵՄԲԱՑԻՈՑ

ՅԱՂԱԳՍ ՆՄԱՆՈՂ ԼԻՆԵԼՈՅ ՔՐԻՍՏՈՍԻ

ԹԱՐԳՄԱՆԵԱՑ

Հ. ՎՐԹԱՆԷՍ Վ. ԱՍԿԷՐԵԱՆ

ՄԽԻԹԱՐԵԱՆ

Երկրորդ տպագրութիւն

ЛЕНИНГРАДСКАЯ ГОСУДАРСТВЕННАЯ БИБЛИОТЕКА
ЛЕНИНГРАДСКАГО ИНСТИТУТА ИСТОРИИ

Ի ՎԵՆԵՏԻԿ
Ի ՍՈՒՐԲՆ ՂԱԶԱՐ
1853

ՑԻՐԱՏԱԿ

ՀԱՆԳՈՒՅՑԵԱԼ ՀՈԳԻՈՑ

ՊՈՒՐԻՍԵԱՆ

ԲԱՐԵՊԱՇՏՕՆ ՏՈՀՄԻՆ

ԱՊ 535

531-2009

Ս. ՁԴ

Խնդիր է առ գիտաւորս զլորեցուն գրոց որ ՅԱՂԱԳՍ ՆՄԱՆՈՂ ՔՐԻՍՏՈՍԻ ԼԻՆԵԼՈՅ՝ թէ յումմէ ումիքէ արդեօք իցեն գրեալ, որովհետև առանց անուան մատենագրին աւանդեն գրչագիրք զայն։

Կէսք համարին Գերսոնի միանձին իտալացւոյ գրեալ զայն, այլք Գերսոնի կանոնիկոսի գաղղիացւոյ. բայց առաւելագոյնք այնոքիկ են, որք Թովմայի Գեմբացւոյ օգոստինեան կրօնաւորի ընծայեն զայն։ Քանզի գրչագիրք մատենիս բազումք յայսոսիկ ամս դատն յիտալիա 'ի Գաղղիա և 'ի Գերմանիա թաղեալք 'ի խորշս մատենադարանաց. և ոչ միոյ ուրուք յայնցանէ ոՀ և ձև գրուածոյն և այլ նշանակք հնութեանն գտանին երիցագոյնք քան զՀնգետասանեորդ դար, յորում եկաց Գեմբացին։

Զսոյն կարծիս առաւելապէս հաստատէ և գիւտ այլոյ գրչագրի միոջ 'ի

մատենագարանի Կէսարոնք քաղաքի 'ի Վէսդֆալիա, գրեալ 'ի 1425, որ 'ի Ճա-
կատ գրոցն բերէ զանուն Թովմայի Գեմ-
բացւոյ, բառնալով 'ի բաց զամենայն
երկբայութիւն։ Վասն որոյ և մեք որ-
պէս զառաջին տպագիրս մեր, նոյնպէս
և զառաջիկայս յանուն նորին 'ի դէպ
վարկաք մակագրել։

531-2009

ԱՌ

ՀՈԳԵՍԷՐ ԸՆԹԵՐՑՈՂՍ

Բազում է յոյժ յարգ գրոյս 'ի մէջ հոգեւորական գրոց, վասն իւրոց ազգոյր և. ոգեշահ բանից. Որոմ իբրև ընտրականի իմիք անձկացեալ ազգք բազումք, յիւրեանց բարբառ շրջեցին. Թարգմանեցաւ վասոյր և.՝ և. 'ի մեր բարբառ, և. տպեցաւ իսկ բազում անգամ. բայց յանընտել շարամանուրեանէ բառից 'ի թարգմանուրեան անդ՝ բազում ուրեք բաղեալ երևէին իրաց ցուցածք բանիցն. Վասն այսորիկ իբրև հարկ եղև. զաս նորոգ տպագրութեամբ 'ի լոյս ընծայել, պատշաճ դուն

ցաւ՝ զայն ըստ ոնոյ մեկնուն լեզուի բարգմանողօրէն դիւրիմաց գործել. Զի ոգեշահ խրատք մատենիս վերծանողաց դիւրապոռ լիցին. և փափաքողք բանից սորա մտադիւրագոյն ընթերցցին յօգուտ.



ՅԱՂԱԳՍ

ՆՄԱՆՈՂ ԼԻՆԵԼՈՅ ՔՐԻՍՏՈՍԻ

ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ

ԽՐԱՏՔ ԱՌ ՀՈԳԵՒՈՐ ԿԵԱՆՍ ՊԻՏԱՆԻՔ

ԳԼՈՒԽ Ա.

Յաղագս եմանող լինելոյ Քրիստոսի, և արիւնամարիկ զամենայն ուռնայ նուրբիւնս աշխարհի.

Ա. Որ գայ զկնիկ իմ, ընդ խաւար մի զնասցէ. ասէ տէր։ Այս բանք են Քրիստոսի, որովք խրատիմք կենաց նորա և վարուց լինել նմա-

նողք, եթէ կամիմք ճշմարտապէս լուսաւորել, և յամենայն կուրութենէ սրտի լինել զերծ։ Այս մեծ փոյթ մեր լիցի՝ խոկալ զվարս Յիսուսի Քրիստոսի։

Բ. Վարդապետութիւն Քրիստոսի 'ի մեր է քան զամենայն վարդապետութիւնս սրբոց. և որ զհոգին ունի՝ զծածկեալն 'ի նմա գտանէ զմանանայ։ Բայց բազումք 'ի ստէպ լրոյ աւետարանին չառնուն ինչ եռանդն. զի չունին զհոգին Քրիստոսի։ Այլ որ կամի լիով և քաղցրութեամբ զբանս Քրիստոսի առնուլ 'ի միտ, զամենայն զվարս իւր փոյթ կալցի առնել նմին նմանող։

Գ. Զինչ օգուտ է քեզ՝ խորհիլ զերրորդութենէ, եթէ չիք քո խոնարհութիւն, որով երրորդութեանն լինիս անհաճոյ։ Խորին բանք ոչ առնեն սուրբ և արդար. այլ առաքինի վարք սիրելի առնեն Աստուծոյ։ Առաւել ըղձանամ՝ յանձին զգալ զդղջութիւն, քան զիտել զնորին սահման։ Եթէ

գիտէիր զամենայն աստուածա-
շունչ գիրս 'ի բերան, և զամենայն
խնամատարեալս բանս, զինչ օգուտ
էր այն ամենայն՝ առանց սիրոյն
Աստուծոյ և շնորհաց։ Ունայնու-
թիւն ունայնութեանց, ամենայն
ինչ ընդունայն է, բաց 'ի սիրոյն
Աստուծոյ և 'ի ծառայութենէ նո-
ցա։ Այս է կատար խնամատութեան.
արհամարհութեամբ աշխարհի դի-
մել յարքայութիւնն երկնից։

Դ. Այլ ունայնութիւն է կորըս-
տական մեծութեան 'ի խնդիր լի-
նել, և յայն հաստատել զյոյս։ Ու-
նայնութիւն է և պատուասիրել, և
զաւագութեան թեկն ածել։ Ունայ-
նութիւն է մարմնոյ ցանկութեանց
զհետ երթալ, և ցանկալ այնմ՝ որ
վասն յետ սակաւ միոյ զայ 'ի վե-
րայ ծանր պատուհաս։ Ունայնու-
թիւն է երկար կեանս խնդրել, և
զբարի վարուց անփոյթ լինել։ Ու-
նայնութիւն է աստի կենաց միայն
միտ դնել, և զհանդերձելոյս ինչ
ոչ հոգալ։ Ունայնութիւն է սիրել
զայն՝ որ վաղ անցանէ, և չփու-

թալ յայն՝ ուր մշտնջենաւոր խօն-
դութիւնն է։

Ե. Ցուշ լիցի քեզ ստէպ առակն,
թէ ոչ յաղեսցի ակն տեսանելով,
և ոչ լցցի ունկն լսելով։ Ապա փու-
թա 'ի սիրոյ երեսելեաց զսիրտ քո
'ի բաց դարձուցանել, և յաներևոյթս
զքեզ փոխաբերել։ Զի որք զզգայ-
ութեան իւրեանց զհետ երթան,
զխիղճ մտաց արատեն, և զԱստու-
ծոյ շնորհս կորուսանեն։

ԳԼՈՒԽ Բ

Յաղագս նուռաստ համարելոյ զանձն.

Ա. Այժմեայն մարդ բնաւորա-
պէս զիտել ցանկայ, այլ զիտու-
թիւն առանց երկիւղին Աստուծոյ
զինչ օգուտ իցէ։ Այո՝ լաւ է խո-
նարհ գեղջուկ՝ որ Աստուծոյ ծա-
ռայէ, քան զհպարտ փիլիսոփայ՝
որ անփոյթ լեալ զանձնէ, զընթացս
երկնից զննէ։ Որ քաջ զանձն ճա-
նաչէ, անձին նանրանայ, և ընդ

գովեստ մարդկան ոչ խնդայ։ Եթէ գիտէի զամենայն որ ինչ է յաշխարհի, և ոչ կայի 'ի սէր, զինչ օգուտ էր ինձ առաջի Աստուծոյ, որ զատելոցն է զիս ըստ գործոց։

Բ. Կասիր 'ի կարի ինն ըղձանալոյ գիտութեան. զի մեծ է որ 'ի նմայն զբաղումն և պատրանք։ Գիտունք՝ մտադիւր կամին երևել, և իմաստունք կոչիլ։ Բազում ինչ է, որոց գիտութիւն նուազ կամ ոչինչ օգտէ հոգւոյ։ Եւ յոյժ անմիտ է, որ 'ի չգիտոյս փրկութեան իւրոյ պատաղի։ Բանք բազումք ոչ յազեցուցանեն զհոգի. այլ վարք բարիք հանգուցանեն զմիտս, և մաքուր խիղճ մտաց մեծապէս վստահացուցանէ յԱստուած։

Գ. Որչափ առաւելուս 'ի գիտութիւն, այնչափ ծանրագոյն համար ունիս տալ, թէ ոչ սրբագոյն կեանս վարես։ Ապա մի մեծամտիր ընդ արուեստ ինչ կամ ընդ գիտութիւն. այլ երկիր վասն քանքարոյն, որ տուաւ քեզ։ Եթէ թուի քեզ բազում ինչ գիտել և քաջահմուտ գոլ,

և զայն գիտասջիր, թէ կայ ևս բա-
զում ինչ, զոր ոչ գիտես։ Մի՛ հը-
պարտանար. այլ զտգիտութիւն քո
խոստովան լեր։ Ջիա՛րդ լաւ համա-
րիս զքեզ քան զայլս, ուր բազումք
կան քան զքեզ գիտունք և օրէնս-
գէտք։ Թէ կամիս գիտել ինչ կամ
ուսանել յօգուտ, սիրեա անծանօթ
լինել, և առ ոչինչ համարել։

Դ. Այս է բարձրակատար և օգ-
տակարագոյն ուսումն. անձին ճըշ-
մարիտ ճանաչումն և արհամար-
հութիւն։ Զանձն չնչին համարել, և
զայլս յամենայնի լաւ և արդոյ վար-
կանել, մեծ իմաստութիւն է և կա-
տարելութիւն։ Թէպէտ և տեսցես
զոք յայտնապէս մեղուցեալ, կամ
ծանուցս յանցուցեալ, սակայն չէ
արժան քեզ լաւ քան զնա զանձն
համարել. զի ոչ գիտես ցոր վայր
կացցես մնասցես 'ի բարին։ Ամե-
նեքին տկար եմք, այլ դու մի՛ զոք
քան զքեզ տկար համարիր։

ԳԼՈՒԽ Գ.

Յաղագս վարդապետական ճշմարտութեան.

Ա. Երանի՛, որում ճշմարտութիւնն ինքնին ուսուցանէ ոչ օրինակօք և ոչ անցաւոր բարբառովք, այլ որպէս և էն։ Կարծիք մեր և միտք բազում այն է զի խաբեն զմեզ, և ընդ աղօտ տեսանեն։ Զինչ օգուտ է կարի իմն հետազօտութիւն գաղտնի և մթին իրաց, վասն որոց ոչ յանդիմանիցիմք 'ի դատաստանի՝ թէ զմի՛ ոչ գիտացաք։ Մեծ անմտութիւն է, զի զանց զպիտանեօք արարեալ և զկարևորօք, կամակար ձգիմք յընդվայրաքնինս և 'ի վնասակարս։ Աչս ունիմք, և ոչ տեսանեմք։

Բ. Եւ զինչ փոյթ է մեզ զսեռից և զտեսակաց։ Ընդ որում յաւիտենական Բանն խօսի, նա 'ի բազում խնդրոց զերծ զտանի։ Ի միայ-

նոյ Բանէ անտի է ամենայն, և զնոյն պատմէ ամենայն ինչ. և այն է սկիզբն որ և խօսի ընդ մեզ։ Առանց նորա ոչ ոք իմանայ կամ դատի ուղիղ։ Որում ամենայն ինչ 'ի միումն է, և զամենայն 'ի մի ձգէ, և զամենայն 'ի միում տեսանէ, մարթ է սրտի նորա լինել յանդորրու, և խաղաղական անձամբ կալ մնալ յԱստուած։ Աստուած ճշմարտութեան, յօդեա զիս ընդ քեզ մշտնջենաւոր սիրով։ Տաղտկալի է ինձ յաճախ բազումս ընթեռնուլ և լսել. 'ի քեզ է ամենայն զոր խնդրեմ, և որում անձկամ։ Լռեսցեն ամենայն վարդապետք. կարկեսցին ամենայն աբարածք առաջի քո. դու միայն խօսեաց ընդ իս։

Գ. Որչափ ոք ներանձնացեալ է, և ներքուստ պարզեալ, այնչափ բազումս և վսեմականս անաչխատ առնու 'ի միտ. զի 'ի վերուստ անտի ընդունի զլոյս հանճարոյ։ Զինչ և պարզ և անդրդուելի հոգի՝ 'ի յաճախել գործոց ոչ զբաղնու. զի զամենայն 'ի փառս Աստուծոյ գործէ,

և 'ի խնդրելոյ զիւրն յամենայնի ջանայ լինել անձնապահ։ Զինչ է, որ խափանէ զքեզ և նեղէ, բայց քո անմեռ իդձ սրտի։ Այր բարի և փոյթեռանդն զգործս իւր, զոր արտաքոյ առնել ունի, նախ 'ի ներքոյ կարգադրէ։ Եւ ոչ այնք ձգեն զնա 'ի ցանկութիւն ախտաւոր յօժարութեան. այլ ինքն չրջէ զնոսա ըստ հաճոյից ուղիղ բանի։ Ո՞եմ այնպէս սաստիկ պատերազմ առաջի կայցէ, որպէս այնմ՝ որ ջանայ յաղթել անձին։ Այսմ պարտ էր փոյթ ունել մեզ. անձանց յաղթել, և օր ըստ օրէ 'ի մեր վերայ զօրանալ, և 'ի լաւ անդր յառաջադէմ լինել։

Դ. Այմենայն կատարելութիւն յաստի կեանս՝ թերութիւն ինչ ունի ընդ իւր լծորդ, որպէս և ամենայն տեսութիւն մեր չէ ամենևին անմռայլ։ Խոնարհ ճանաչումն անձին՝ ստուգագոյն ճանապարհ է առ Աստուած, քան զիմաստասիրին զիտութիւն։ Չէ ինչ ստգտանելի զիտութիւն, կամ զինչ և իցէ իրաց պարզ ծանօթութիւն, որ յիւրմէ

բարի է, և առ յԱստուծոյ կարգեալ. բայց նախադասել պարտ է յամենայնի զբարիսն խիղճ մտաց և զառաքինի վարս։ Եւ քանզի բազումք առաւել ջանան զիտել, քան բարուք կեալ. վասն այսորիկ ստէպ մոլորին, և ոչինչ կամ սակաւս պտղաբերեն։

Ե. Եթէ այնչափ փոյթ 'ի մէջ առնուին 'ի խլել զմոլութիւնս և 'ի տնկել զառաքինութիւնս, որչափ 'ի յուզել զվանդիրս, ոչ արդեօք 'ի վեր երևէին այսչափ չարիք և գայթակղութիւնք 'ի ժողովրդեան, և ոչ այսչափ թուլութիւն 'ի վանականս։ Ի զալ աւուրն դատաստանի ոչ լինի առ մեզ հարցփորձ, թէ զինչ ընթերցաք, այլ թէ զինչ գործեցաք. և ոչ, թէ քանի՞ ճարտար խօսեցաք, այլ թէ քանի՞ կրօնասիրութեամբ քաղաքավարեցաք։ Ասա՛ ինձ. ո՞ւր են արդ այն ամենայն տեարք և վարդապետք՝ զորս քաջ ճանաչէիր, մինչ դեռ կենդանի էին և զիտութեամբք ծաղկէին։ Այժմ 'ի հասս նոցա այլք վայելեն, և չգի-

տեմ թէ խորհիցին ինչ զնոցանէ։ Ի կենդանութեան իւրեանց համարէին լինել ինչ. բայց արդ լռութիւն է զնոցանէ։

Զ. Ո՛վ, որպէս վաղվաղակի անցանեն փառք աշխարհի։ Երանի՛ թէ վարք նոցա ընդ զիտութիւն իւրեանց միաբանէին։ Յայնժամ քաջաղէպ յայջողեալ էր նոցա ուսումն և դպրութիւն։ Քանի՛ք կորնչին սնոտի զիտութեամբ յաշխարհի, ոչք անփոյթ են զԱստուծոյ ծառայութենէ։ Եւ զի առաւել ընտրեն մեծարզի լինել քան խոնարհ, վասն այնորիկ նանրանան 'ի խորհուրդս իւրեանց։ Նա է ճշմարտապէս մեծ, որոյ մեծ է սէր։ Նա է ճշմարտապէս մեծ, որ յաչս անձին փոքր է, և զամենայն բարձրութիւն պատուոյ ոչ համարի ինչ։ Նա է ճշմարտապէս խոհեմ, որ զերկրաւորս ամենայն համարի կղկղանս, զի զՔրիստոս շահեսցի։ Եւ նա է քաջ ուսեալ, որ զկամս Աստուծոյ առնէ, յիւրոց կամաց հրաժարեալ։

ԳԼՈՒԽ Դ

Յաղագս յառաջատևսուրեան 'ի գործս.

Ա. Մի հաւատար ամենայն բանի և զրգռութեան. այլ զգուշութեամբ և երկայնմտութեամբ ըստ Աստուծոյ կշռեա զամենայն։ Ա. ա՛ղ, զի բազում անգամ մոռադիւրագոյն հաւատամբ և խօսիմք զայլմէ զչար քան զբարի. այսպէս տըկար եմք։ Բայց արք կատարեալք ոչ զիւրաւ հաւատան ամենայնի՝ զոր բերէ զրոյց. քանզի զիտեն զմարդկան տկարութիւն, զի զիւրամէտ է 'ի չարն, և 'ի բանս իւր սայթաք։

Բ. Մեծ խմաստութիւն է չլինել վազվազակ 'ի գործս, և ոչ յամառ յիւր կարծիս։ Յայս հայի ևս՝ ոչ ամենայն մարդոյ խօսիլ հաւատալ. և զոր լուաւ զք կամ հաւատաց՝ ոչ իսկ և իսկ յայլոց ականջս հեղուլ։

Ընդ առն իմաստնոյ և երկիւղածի մուտ 'ի խորհուրդ. և խնդրեսա ուսանել 'ի լաւէ անտի, քան զհետ երթալ խորհրդոց քոց։ Վարք բարիք առնեն զմարդ իմաստուն ըստ Աստուծոյ, և փորձ 'ի բազումս։ Որչափ առաւել ոք խոնարհ է յաչս անձին, և Աստուծոյ հնազանդ, այնչափ յամենայնի իմաստնագոյն լինի և խաղաղագոյն։

(1010) 531-2009 40803

ԳԼՈՒԽ Ե

Քաղաքս ընթերցման սուրբ գրոց.

Ա. Ցճշմարտութիւն խնդրել պարտ է 'ի սուրբ գիրս, և ոչ ճարտարիսօսութիւն։ Զամենայն սուրբ գիրս այնու հոգւով պարտ է ընթեռնուլ, որով և գրեցան։ Առաւել պարտ է 'ի սուրբ գիրս՝ 'ի խընդիր լինել օգտի, քան նրբութեան բանից։ Այնպէս մտադիր պարտ է մեզ ընթեռնուլ զՍերմեռանդն և զվիրիմաց գիրս, որպէս զբար-

ձունս և դխորինս։ Մի գայթակղեցուցանէք զքեզ մատենագրին անուն, թէ շատ կամ սակաւ իցէ նորա գրագիտութիւն. այլ սէր լոկոյ ճըշմարտութեան ձգեսցէ զքեզ յընթերցումն։ Մի խնդրեր, թէ ո՞յր դայս ինչ իցէ ասացեալ, այլ միտ դիր, թէ զի՞նչ ասէ։

Բ. Մարդիկ անցանեն, այլ ճըշմարտութիւն տեառն մնայ յաւիտեան։ Առանց ակնառութեան բազմօրինակ խօսքի ընդ մեզ Աստուած։ Ընդվայրաքննութիւն մեր յոլովակի խոչ լինի մեզ յընթերցումնս զրոց. զի կամիմք խելամուտ լինել, և մանր կրկտել, ուր պարտ էր հարեանցի անցանել։ Եթէ կամիս օգտիլ, ընթերցիր խոնարհութեամբ, պարզմտութեամբ, և հաւատարմութեամբ. և մի յօժարիր երբէք կոչիլ գիտնաւոր։ Հարց մըտագիր, և լուր լռիկ զբանս սըրբոց. և մի արհամարհեր զառակս ծերոց, զի չասացին վայրապար։

ԳԼՈՒԽ Զ

Յաղագս անկարգ ախորժակաց.

Ա. Յորժամ անկարգ ըղձիս բերի զբ առ իմն, անդէն վաղվաղակի նեղի յանձն։ Ամբարտաւանն և արծաթասէր ոչ երբէք հանգչին. աղքատն և խոնարհ հոգւով վայելեն 'ի բազում խաղաղութեան։ Այր՝ որ զեռ անմեռ է յինքեան, վաղվաղակի փորձի և յաղթի 'ի փոքունս և 'ի չնչինս։ Տկարն հոգւով, և որ զեռ ըստ իրաց ինչ մարմնաւոր է և յօժարամիտ 'ի զգալիս, դըժուարին է նմա յերկրաւոր ցանկութեանց 'ի բաց կալ խսպառ։ Վասն այսորիկ բազում անգամ տրտմութիւն ունի զնա, յորժամ 'ի բաց հրաժարէ. և դիւրաշարժ է 'ի ցասումն, թէ զբ նմա ընդդէմ գտանայ։

Բ. Այս եթէ զհետ երթայ, որում ցանկայ, անդէն 'ի խղճէ մը-

տայ ծանրանայ. զի զիւրոյ կրից չդաւաւ զհետ, որ ոչինչ օգտեն խաղաղութեանն՝ զոր խնդրէ։ Ապա զիմամարտ լինելով կրից՝ գտանի ճշմարիտ խաղաղութիւն սրտի, և ոչ թէ ծառայելով նոցա։ Ապա չիք խաղաղութիւն 'ի սիրտ առն մարմնասիրի, և ոչ 'ի մարդ՝ որ անձնատուր է յարտաքինս, այլ յայն՝ որ եռանդնոտ է և հոգեսէր։

ԳԼՈՒԽ Է.

Յաղագս խորշելոյ 'ի սնոտի յոռւոյ, և 'ի մեծամտութենէ.

Ա. Սնոտի է, որ զնէ զյոյս իւր 'ի մարդիկ կամ յարարածս։ Մի՝ ամօթ համարիր այլում ծառայել 'ի սէր Յիսուսի Քրիստոսի, և յաշխարհի աստ աղքատ համարիլ։ Մի՝ ապաւինիր յանձն. այլ յԱստուած հաստատեա զյոյս քո։ Սրա որ ինչ անկ է քեզ. և Աստուած յաջողեսցէ կամաց քոց 'ի բարին։

Մի ապաւինիր 'ի քո գիտութիւն, կամ 'ի հանճար մեղուաց, այլ 'ի շնորհս Աստուծոյ, որ ձեռնտու է խոնարհաց, և խոնարհ առնէ ըզյանձնապաստանս։

Բ. Մի պարծիր յինչս, թէ ունիս. և մի 'ի բարեկամս, թէ հզօր են. այլ յԱստուած, որ ամենայնի է պարգևատու, և քան զամենայն ինչ զանձն տալ կամի։ Մի հպարտանար ընդ մեծութիւն, կամ ընդ զեղ մարմնոյ՝ որ դոյզն հիւանդութեամբ ապականեալ տգեղանայ։ Մի լինիր անձնահաճ, վասն լինելոյ քոյ աջողաձեռն և զգօնամիտ. զի մի անհաճոյ լիցիս յաչս Աստուծոյ, որոյ է ամենայն՝ որ ինչ ձիրք բնութեան են 'ի քեզ։

Գ. Մի համարիր զանձն լաւ քան զայլս. զուցէ յաչս Աստուծոյ յոռեզոյն իցես, որ գիտէ թէ զինչ կայ 'ի մարդ։ Մի հպարտանար ընդ գործս բարեաց, զի այլազգ են դատաստանք Աստուծոյ քան զմարդկան, որոյ առաջի անհաճոյ են յաճախ հաճոյք մարդկան։ Թէ ունիս

ԳԼՈՒԽ Թ

Յաղագս հնազանդութեան և հպատակութեան.

Ա. Մեծ է յոյժ կալ 'ի հնազանդութեան ընդ ձեռամբ առաջնորդի, և չլինել ինքնագլուխ։ Աստահովագոյն է կալ 'ի հպատակութեան՝ քան յառաջնորդութեան։ Բազումք կան ընդ հնազանդութեամբ առ հարկի, և ոչ 'ի սիրոյ։ Եւ այսպիսիք տանջին, և ընդ դոյզն իրաց տրտնջեն։ Եւ չստանան զազատութիւն մտաց, թէ ոչ 'ի բոլոր սրտէ վասն Աստուծոյ հնազանդեն զանձինս։ Ընթա՛ յայսկոյս յայնկոյս, և ոչ զտցես հանգիստ, բայց 'ի խոնարհ հպատակութեան ընդ հովուութեամբ առաջնորդի։ Յնորք տեղափոխութեան զբազումս արկին 'ի պատրանս։

Բ. Ճշմարիտ է՝ թէ ամենայն ոք մտադիւր գործէ ըստ միտս իւր, և

առաւել միտէ 'ի համախոհս իւր։ Բայց եթէ Աստուած է 'ի միջի մեր, հարկ է թողուլ երբեմն և ըզմեր կարծիս՝ վասն օգտի խաղաղութեան։ Ո՞վ այնպէս իմաստուն իցէ, որ զամենայն լիով գիտիցէ։ Ապա մի՛ կարի իմն ապաստան լինիր 'ի քո կարծիս, այլ մտադիր և կարծեաց այլոց լեր ունկնդիր։ Եթէ քաջ են քո կարծիք, և դու վասն Աստուծոյ զքոյն թողեալ՝ այլում անսա, բազումս օգտեսցիս։

Գ. Բազում անգամ լուեալ է իմ. ապահովագոյն է լսել և առնուլ խորհուրդ՝ քան տալ։ Մարթ իսկ է, թէ իւրաքանչիւրոց կարծիք իցեն բարի. այլ չանսալն այլոց 'ի պահանջել բանին, նշան է հպարտութեան և յամառութեան։

ԳԼՈՒԽ Ժ

Յաղագս խորշելոյ 'ի դատարկ բանից.

Ա. Զգոյշ լեր յամբոխէ մարդկան ըստ կարի. զի յոյժ խափանեն զբոյգք աշխարհային իրաց, թէպէտ և պարզմտութեամբ ասացեալ։ Քանզի անդէն յունայնութիւն շաղախիմք, և 'ի գերութիւն մատնիմք։ Ո՞տայր, թէ յոլովակի լռէի, և չլինէի 'ի մէջ մարդկան։ Այլ զի՞ է մեզ այդպէս յօժարամիտ բերիլ 'ի խօսս և 'ի զբոյցս, որ դուն ուրեք անխիղճ դառնամք 'ի լռութիւն։ Յայն սակս յօժարամիտ բերիմք 'ի զբոյցս, զի ընդ միմեանս խօսակցութեամբ 'ի միմեանց մխիթարել խնդրեմք. և զսիրտ մեր 'ի պէսպէս խորհրդոց վաստակաւոր՝ սփոփել կամիմք։ Եւ առ որս կարի ինն սէր և անճուկ ունիմք, կամ զորս հակառակ մեզ կարծեմք, զայնց մտադիւրագոյն ևս կամ է մեզ խօսել և խորհել։

Բ. Բայց աւա՜ղ, զի բազում անգամ զուր տարապարտուց զայս առնեմք։ Քանզի արտաքինս այս մխիթարութիւն՝ ներքին և աստուածային մխիթարութեան ոչ փոքր վնաս գործէ։ Վասն այսորիկ հըսկել պարտ է և կալ յաղօթս, զի մի դատարկ անցցէ ժամանակն։ Եթէ արժան և օգուտ իցէ խօսել, որ ինչ 'ի չինութիւն է՝ զայն խօսեաց։ Ի չար սովորութենէ, և 'ի հեղգութենէ յառաջադիմութեան մերոյ է բազում անգամ բերանոյ մերոյ անպահպանութիւն։ Բայց զհոգևոր իրաց խօսս առնել՝ ոչ սակաւ օգուտ է հոգևոր զարգացման, մանաւանդ՝ ուր համամիտք և համաշունչք յանուն տեառն միաբանեալ իցեն։

ԳԼՈՒԽ ԺԱ.

Յաղագս ստանալոյ զիսաղաղութիւն, և յաղագս նախանձու յառաջադիմութեան.

Ա. Ի բազում խաղաղութեան վայելէաք, եթէ ոչ պատաղէաք յայլոց բանս և 'ի գործս, և յորս ոչ են անկ հոգաբարձութեան մերոյ։ Զիսաղդ հնար է ընդ երկար 'ի խաղաղութեան լինել այնմ, որ յօտարի հոգս խառնի, որ արտաքոյ զբաղանս խնդրէ, և որում չէ ինչ փոյթ ներանձնանալ։ Երանի այնոցիկ, որք միամիտքն են. զի բազում խաղաղութիւն զտցեն։

Բ. Զիսաղդ ոմանք 'ի սրբոց յառաջադէմ զտան 'ի կատարելութիւնս և 'ի վերնական խոկմունս։ Վասն զի զլսովին զանձինս մեռուցանել ջանացան յամենայն երկրաւոր ցանկութեանց։ Վասն այսորիկ սրտի մտօք ընդ Աստուծոյ

միացան, և անխափան կարող ե-
ղեն զանձամբք պատագիլ։ Մեք
կարի իմն զբաղիմք 'ի մեր կիրս,
և զանցաւորաց յոյժ խնամ ունիմք։
Դ. Ժուարահաս եմք զէթ միում 'ի
մոլութեանց յաղթել, և առ օրըստ-
օրէ յառաջադիմութիւն չունիմք ինչ
եռանդն. վասն այսորիկ կամք մը-
նամք ցուրտք և զաղջք։

Գ. Եթէ էաք կատարելապէս մե-
ռեալք յանձինս, և ներքոյ 'ի զբա-
զանաց զերծք, կարող լինէաք գաս-
տուածայինս խորհիլ, և զերկնային
խոկմանց առնուլ ինչ ճաշակ։ Մեծ
խոչ խափանարար այն է, զի չեմք
'ի կրից և 'ի ցանկութեանց զերծք,
և ոչ ընդ սրբոց շաւիղ գնալ կա-
միմք անվրէպ։ Եթէ դոյզն վիշտ
ընդ առաջ լինի, անդէն վաղվա-
զակի լքանիմք, և 'ի մարդկային
մխիթարութիւնս բերիմք։

Դ. Եթէ ջանայաք որպէս քաջք՝
պինդ կալ 'ի մարտի, տեսանէաք
արդեօք զտեառն օգնութիւն յերկ-
նից 'ի մեզ հասեալ։ Զի նա ինքն
քաջամարտից և 'ի շնորհս իւր յու-

ասելոց՝ պատրաստ է օգնել. որ առաջի առնէ մեզ ասպարէզ մարտի, զի յաղթեսցուք։ Եթէ միայն յարտաքին պահպանութիւնս կանոնաց գնեմք զյառաջադիմութիւն կրօնաւորութեան, փութով չիջցի մեր եռանդն։ Այլ զտապարն առ արմին զիցուք, զի մաքրեալք 'ի կրից՝ խաղաղական միտս ստացցուք։

Ե. Եթէ ամ յամէ զմի 'ի մոլութեանց խլէաք, վաղվաղակի լեալ էաք արք կատարեալք։ Բայց արդ բազում անգամ զհակառակն սեսանեմք. զի լուազոյնս և մաքրազոյնս զտանեմք զմեզ 'ի սկզբան դարձի, քան յետ բազմամեայ ուխտապրութեան։ Պարտ էր եռանդանն և յառաջադիմութեան օր ըստ օրէ առաւելուլ. այլ այժմ մեծ խմն համարի, եթէ որ զառաջնոյ եռանդան զմասն ինչ յանձին ունիցի։ Եթէ առ փոքր մի բռնադատէաք զանձինս 'ի սկզբան, ապա զամենայն կարող էաք առնել հեշտեաւ և խնդութեամբ։

Զ. Ծանր է զսովորականս թողուլ. այլ ծանրագոյն ևս՝ ընդդէմ կամաց անձին գնալ։ Արդ թէ չես յաղթօղ 'ի փոքունս և 'ի թեթևս, զիարդ յաղթեսցես 'ի դժուարինս։ Ի սկզբան անդ լեր զիմակալ քում յօժարութեան, և կասիր 'ի չար սովորութենէ. զի մի առ փոքր փոքր արկցէ զքեզ յառաւել դժուարութիւն։ Եթէ զիտէիր թէ քանի խաղաղութիւն զործէր քեզ և այլոց խնդութիւն՝ անձինդ բարեկրութիւն, ժրագոյն արդեօք լինէիր 'ի փոյթ հոգևոր յառաջադիմութեան։

ԳԼՈՒԽ ԺԲ

Յաղագս օգտի վշտաց.

Ա. Բարի է մեզ ունել երբեմն ծանրութիւնս ինչ և ընդդիմութիւնս. քանզի բազում անգամ յիշեցուցանեն մարդոյ ճանաչել՝ թէ յաքսորս է, և չգնել զյոյս իւր յաշխարհայինս։ Բարի է մեզ կրել երբեմն հակառակութիւնս, և զի խոր-

հիցին զմէնք չարիս և անկատա-
ռութիւնս. թէպէտ և բարի իցեն
մեր գործք և խորհուրդք։ Օգնեն ստ-
քա յոլովակի խոնարհութեան, և
'ի անափառութենէ պահեն զմեզ։
Զի յայնժամ լաւ ևս ապաստան
լինիմք 'ի Ներքին մեր վկայ Աստ-
ուած, յորժամ արտաքոյ 'ի մարդ-
կանէ անարգիմք, և չեն զմէնք 'ի
բարի կարծիս։

Ռ. Վասն այսորիկ պարտ էր
մարդոյ քաջայոյս լինել Աստուած,
մինչ ոչ կարօտել 'ի խնդիր լինելոյ
մարդկային միխթարութեանց։ Այլ
բարեսէր յորժամ նեղի կամ փոր-
ձի, կամ 'ի չար խորհրդոց տառա-
պի, յայնժամ առաւել իմանայ թէ
պէտս ունի Աստուծոյ օգնականու-
թեան. առանց որոյ տկարանայ առ
ամենայն բարի։ Յայնժամ տրտ-
մի, հեծէ, և յաղօթս կանխէ վասն
թշուառութեանց՝ զորս կրէ։ Յայն-
ժամ տաղտկալի լինին նմա երկար
կեանք, և անձկայ մահու. զի լու-
ծեալ 'ի մարմնոյ՝ ընդ Քրիստոսի լի-
ցի։ Եւ յայնժամ խելամուտ լինի

թէ կատարեալ ապահովութիւն և լիուլի խաղաղութիւն չիք ուրեք յաշխարհի։

ԳԼՈՒԽ ԺԳ

Յաղագս հակառակ կալոյ փորձառութեանց.

Ա. Յորչափ յաշխարհի եմք, առանց նեղութեան և փորձութեան լինել ոչ կարեմք։ Ուստի ասէ Յոբ. Ո՞չ ապաքէն փորձութիւն են վարք մարդոյ 'ի վերայ երկրի։ Վասն այսորիկ ամենայն ոք զգուշաւոր լիցի 'ի փորձութիւնս իւր, և տքնեսցի յաղօթս, զի մի պատրողութեան տեղի զոցէ սատանայ. որ ոչ երբէք ննջէ, այլ շրջի և խնդրէ թէ զո՞ կլանիցէ։ Զիք ոք այնպէս կատարեալ և սուրբ, որ ոչ կրիցէ երբեմն փորձութիւնս. և բոլորովին զերծ լինել յայնցանէ անհնար է մեզ։

Բ. Բայց փորձութիւնք բազում անգամ օգուտ են յոյժ մարդոյ,

թէպէտև տաղտկալիք իցեն և ծանր. զի նոքօք խոնարհի մարդ և մաքրի և խրատի։ Ամենայն սուրբք ընդ բա- զում նեղութիւնս և փորձութիւնս անցին, և օգտեցան։ Եւ որք փոր- ձութեանց համբերել ոչ կարացին, անարգեցան և յետնեալ գտան։ Զիր կրօն այնպէս սուրբ, և ոչ տեղի այնպէս անքոյթ, ուր ոչ իցեն փոր- ձութիւնք կամ վիշտք։

Դ. Զէ մարդ բոլորովին աներ- կեան 'ի փորձութեանց՝ ցորչափ կենդանի է. զի 'ի ներքս 'ի մեզ է՝ ուստի փորձիմք, որովհետև ցան- կութեամբ ծնաք։ Ընդ մեկնել միոյ փորձութեան կամ՝ նեղութեան՝ միւս 'ի վերայ գայ. և միշտ ունիմք կրել ինչ, զի զբարին երջանկու- թեան մերոյ կորուսաք։ Բազումք խնդրեն փախչել 'ի փորձութեանց, և ծանրագոյնս անկանին 'ի նոյնս։ Փախստեամբ լոկով յաղթել ոչ զօ- րեմք. այլ համբերութեամբ և ճշ- մարիտ խոնարհութեամբ առ ամե- նայն թշնամիս արիանամք։

Դ. Որ զբ միայն վերիվերոյ խոր-

չի, և ոչ խլէ զչարն արմատաքի, ոչինչ օգտի. նա՝ վաղագոյն ևս դառնան 'ի նա փորձութիւնք, և չար ևս լինի։ Ա. ռ փոքր փոքր և երկայնամիտ համբերութեամբ, (յաջողելով տեառն) լաւագոյն յաղթես, քան քոյին խստութեամբ և ապաժոյժ նեղսրտութեամբ։ Խնդրեա ստէպ խորհուրդ 'ի փորձութեան. և ընդ փորձանաւորի մի խստիւ զնար, այլ քաջալերեա զնա, որպէս կամէիր թէ առնէին ընդ քեզ։

Ե. Սկիզբն ամենայն փորձութեանց չարաց՝ է յողդողդութիւն մտաց, և թերայոյսլինել յԱստուած։ Զի որպէս նաւ անղեակ յայսկոյս յայնկոյս յալեաց ծփի, նոյնպէս այր թոյլ և յառաջադրութիւնս իւր մեղկ՝ բազմօրինակ փորձի։ Հուր փորձէ զերկաթ, և փորձութիւն զայր արդար։ Բազում անգամ ոչ ճանաչեմք զկար մեր, այլ փորձութիւնն յայտնէ թէ զինչ եմք։ Սակայն արթուն կալ պարտ է՝ մանաւանդ 'ի սկզբան անդ փորձութեան. զի յայնժամ դիւրագոյն յաղթի թըշ-

նամին, յորժամ մտանել անգամ ընդ դուռն մտաց չներեմք. այլ անդէն առ սեամս 'ի բաղխել զդուրս, ընդդէմ ելանեմք։ Վասն որոյ ասաց ոմն *։

Կաց հակառակ դու 'ի սկզբան.
Զի պատրասային դեղք անագան,
Այն ինչ յերկար դանդաղութեամբ,
Ախաք 'ի հնարից գոն ապրստամբ։

Քանզի զառաջինն ընդ առաջ լինի մտաց սոսկ մտածութիւն. ապա սաստիկ երևակայութիւն. ապա բերկրութիւն, և անկարգ շարժումն, և հաւանութիւն։ Եւ այնպէս փոքր փոքր զլխովին 'ի ներքս մտանէ չար թշնամին, յորժամ ոչ 'ի դիմի հարկանիմք նմա 'ի սկզբան։ Եւ որչափ յերկարագոյն դանդաղի ոք զդէմ ունել, այնչափ օր ըստ օրէ յինքեան տկարանայ, և թշնամին 'ի վերայ նորա զօրանայ։

Զ. Ոմանք 'ի սկզբան դարձի իւրեանց՝ ծանունս կրեն փորձութիւնս,

* Ովիդիոս։

և ոմանք 'ի կատարածի։ Իսկ ոմանք գրեթէ յամենայն կեանս իւրեանց տառապին. և ոմանք մեղմ փորձին. իւրաքանչիւր ըստ իմաստութեան և ըստ ուղղութեան աստուածային կարգաւորութեան, որ ըզպայման և զկար մարդկան կշռէ, և զամենայն 'ի փրկութիւն ընտրելոց իւրոց նախակարգէ։

Է. Վասն այսորիկ ոչ է պարտ մեզ վհատել 'ի փորձութեան. այլ ջերմագոյն ևս աղաչել զԱստուած, զի օգնական մեզ լիցի յամենայն նեղութիւնս. որ ըստ ասելոյն Պօղոսի՝ արասցէ ընդ փորձութեան և զելս, զի համբերել կարասցուք։ Ապա խոնարհեցուսցուք զանձինս մեր ընդ ձեռամբ Աստուծոյ յամենայն փորձութիւնս և 'ի վիշտս. զի զխոնարհս հոգւով կեցուցանէ, և բարձր առնէ։

Ը. Ի փորձութիւնս և 'ի վիշտս փորձի մարդ, թէ որչափ ինչ օգտեցաւ. և յայնս առաւելուն վաստակք, և լաւ ևս երևին առաքինութիւնք։ Զէ ինչ մեծ ջերմ լինել մար-

գոյ և եռանդնոտ, յորժամ չզգայ ինչ ծանրութիւն. այլ եթէ 'ի ժամանակի վշտաց համբերութեամբ տանի, կայ յոյս մեծի օգտի։ Ոմանք 'ի մեծամեծ փորձութեանց պահին, և 'ի փոքունս հանապազօրեայս ստէպ յաղթին. զի խոնարհեալք՝ մի երբէք 'ի մեծամեծս յանձնապաստան լիցին, որ 'ի փոքունս տկարանան։

ԳԼՈՒԽ ԺԴ

Յաղագս խորշելոյ 'ի յանդուգն դատողութենէ.

Ա. Զաչսդ 'ի քեզ դարձո. և զայլոց գործս զգոյշ լեր չդատել։ Ի դատել զայլս՝ մարդ զուր ջանայ, յոլովակի սխալէ, և դիւրաւ մեղանչէ։ Իսկ 'ի դատել և 'ի քննել զանձն՝ միշտ ջանք իւր են յօգուտ։ Որպէս զիարդ են իրք 'ի սիրտ մեր, ըստ այնմ սովոր եմք դատել զնոցանէ. զի զուղիղ դատաստան՝ առ առանձնական սիրոյ՝ դիւրաւ կորուսանեմք։ Եթէ առ Աստուած էր յա-

մենայնի բերումն ըղձից մերոց, ոչ այդպէս վաղվաղակի խառվէաք ընդ դիմադարձութիւն կարծեաց մերոց։

Բ. Բայց բաղում անդամ զօղեալ կայ ինչ ներքոյ, կամ ընթացակցի ինչ և արտաքոյ, որ և զմեզ միահաղոյն ձգէ զկնի։ Բաղումք 'ի ծածուկ զանձինս խնդրեն յամենայնի զոր առնեն, և ոչ իմանան։ Թուին և 'ի բարուք խաղաղութեան կալ, յորժամ յաջողեն իրք ըստ կամս նոցա և ըստ հաճոյս. ապա եթէ այլ ազգ ինչ քան զհաճոյս նոցա պատահէ, անդէն վաղվաղակի խառվին և տխրին։ Առ պէսպէս մտածութեան և կարծեաց յոլովակի ծագին երկպառակութիւնք 'ի մէջ բարեկամաց և քաղաքացեաց, 'ի մէջ կրօնաւորաց և առաքինեաց։

Գ. Զսովորութիւն հնացեալ ոչ վաղվաղակի է թողուլ. և քան զիւր տեսութիւն և անդր՝ ոչ զք մտադիր բերի։ Եթէ կարի իմն ապաստան ես 'ի տրամաբանութիւն քո կամ 'ի հանճար, քան 'ի հնազանդական առաքինութիւն Յիսուսի Քրիստո-

սի, հազիւ երբէք և անագան լիցիս այր լուսաւորեալ։ Զի Աստուծոյ կամք այս են. հնազանդ լինել մեզ նմա յամենայնի, և բորբոքեալ սիրով զանցանել զամենայն տրամաբանութեամբ։

ԳԼՈՒԽ ԺԵ

Յաղագս որ 'ի սիրոյ արարեալ գործք.

Ա. Վասն աշխարհի իրողութեանց և վասն սիրոյ մարդկան չէ արժան առնել ինչ չար. բայց վասն օգտի՝ որոյ պէտս ունին, երբեմն զբարի ինչ գործ կամաւ թողուլ կամ 'ի լաւ ևս փոխել՝ արժան է։ Զի 'ի լինել այսմ այսպէս, գործն բարի ոչ եթէ խանգարի, այլ 'ի լաւագոյն փոխարկի։ Առանց սիրոյ արտաքին գործք ոչինչ օգտեն. իսկ որինչ 'ի սիրոյ արարեալ, որչափ և փոքր իցէ, և խոտան, զվիսովին լինի շահեկան։ Զի առաւել հայի Աստուած 'ի սէրն՝ որով ոք գործէ, քան 'ի գործն՝ զոր առնէ։

Բ. Բազում ինչ գործէ, որ չատ սիրէ։ Բազում ինչ գործէ, որ ըզ-գործն բարւոք առնէ։ Բարւոք գոր-ծէ, որ առաւել հասարակաց քան իւրոց կամաց ծառայէ։ Բազում անդամ երևի թէ է սէր, և է առա-ւել մարմնասիրութիւն. զի բնաւոր յօժարութիւն, սեպհական կամք, յոյս հատուցման, և ախորժակ ան-ձընդիւրութեան՝ դուն ուրեք լինին 'ի բայէ։

Գ. Որ ունի զճշմարիտ և զկատա-րեալ սէր, ոչ յիմիք խնդրէ զանձն. այլ միայն փառացն Աստուծոյ յա-մենայնի ըզձանայ։ Ոչ ումիք և նա-խանձի, զի ոչինչ առանձնաւոր խնդութիւն սիրէ. և ոչ խնդայ յան-ձրն, այլ յԱստուած ըզձանայ երա-նելի լինել քան յամենայն բարու-թիւնս։ Ոչ ումիք ընծայէ ինչ բա-րի, այլ զամենայն յԱստուած վե-րաբերէ. յորմէ որպէս յաղբերէ յառաջ գայ ամենայն, և յոր ամե-նայն սուրբք որպէս 'ի փափաքան ըզ-մայրմամբ հանգչին։ Թէ որ կայծ մի ունէր զճշմարիտ սիրոյ, իմանայր

արդեաք թէ երկրաւորքս, ամենայն լի են ունայնութեամբք։

ԳԼՈՒԽ ԺԶ

Յաղագս հաւրենեալոյ պակասութեանց այլոց.

Ա. Զոր ինչ ոք յինքն կամ յայլս ուղղել տկարանայ, պարտի համբերել երկայնմտութեամբ մինչև Աստուած այլազգ ինչ տնօրինեսցէ։ Խորհեաց, գուցէ այնպէս լաւ ևս իցէ 'ի հանդէս համբերութեան քոյ. առանց որոյ չեն ինչ արդոյ արդիւնք մեր։ Բայց յայդպիսի ոտնառու խոչս աղաչեա զԱստուած՝ օգնական լինել քեզ, առ 'ի կարող լինելոյ տանել քաղցրութեամբ։

Բ. Եթէ ոք միանգամ կամ երկիցս խրատեալ՝ ոչ անսայ, մի կացեր ընդ նմա. այլ զամենայն Աստուծոյ յանձն արա. զի եղիցին կամք նորա և պատիւ յամենայն ծա-

ռայս իւր. որ քաջ գիտէ զչարիս յեղափոխել 'ի բարին։ Զանա երկայնամիտ լինել 'ի տանել պակասութեանց այլոց և որպիսի և իցէ տկարութեանց. զի և քոյ կայ բազում ինչ, որոց այլք համբերել ունին։ Եթէ չես ձեռնհաս առնել ըզքեզ որպէս կամիս, զիարդ կարօղ լիցիս խոնարհել զայլս 'ի հաճոյս քո։ Մտադիր կամիմք, թէ այլք իցեն կատարեալք. բայց զմեր անկատարութիւնս ոչ ուզղեմք։

Դ. Կամիմք թէ այլք խստիւ յանդիմանեսցին. և մեք յանդիմանիլ ոչ կամիմք։ Անհաճոյ է յաչս մեր այլոց համարձակութիւն. բայց ոչ կամիմք թէ զլաւսցին մեր խընդիրք։ Կամիմք թէ յայլս պահեսցի խստութիւն կանոնի. և մեք չառնումք յանձն՝ ընդ լծով լինել կանոնի։ Ապա յայտ է թէ զուն ուրեմն խորհիմք զընկերէն՝ որպէս զանձանց։ Եթէ ամենեքին էին կատարեալք, զինչ միայր մեզ յայնժամ կրել յայլոց վասն Աստուծոյ։

Դ. Այլ արդ Աստուած այսպէս

անօրինեաց, զի ուսցուք զմիմեանց բեռն բառնալ. վասն զի չիք ոք ա-նարատ, չիք ոք անբեռն, չիք ոք ինքնաբաւ, չիք ոք անձին լիով ի-մաստուն. այլ պարտ է մեզ տանել միմեանց, միմեամբք մխիթարիլ, միմեանց օգնել, զմիմեանս ուսու-ցանել և խրատել։ Եւ թէ քանի յա-ռաջադէմ է ոք յառաքինութեան, լաւ ևս երևի՛ի զէպս վշտաց։ Քան-զի զէպք զմարդ ոչ տկարացուցա-նեն, այլ յայտ առնեն թէ որպիսի ոք է։

ԳԼՈՒԽ ԺԷ

Յաղագս միանձնական վարուց.

Ա. Ուսիր զկամս քո՛ի բաղումս խորտակել, եթէ կամիս խաղաղու-թիւն և միաբանութիւն ընդ այլս ունել։ Զէ ինչ փոքր՝՝ի մենաստանս կամ՝՝ի ժողովս եղբարց բնակել, և անդ անտրտունջ գնալ, և մինչև՝՝ի մահ հաւատարիմ մնալ։ Երանի՛

այնմ՝ որ անտանօր բպտոք քաղա-
քավարի, և բարեաւ զընթացան կա-
տարէ։ Եթէ կամիս ըստ արժանեաց
կեալ և զարդանալ, կալ զքեզ որ-
պէս վոտարանդի պանդուխտ 'ի վե-
բայ երկրի։ Լեր յիմար վասն Քրիս-
տոսի, եթէ կամիս կեանս վարել
կրօնաւորի։

Բ. Աքեմ և հեթակտութիւն ինչ
ոչ օգտեն. այլ փոփոխութիւն վա-
բուց և կատարեալ մեռելութիւն ախ-
տից առնեն ճշմարիտ կրօնաւոր։ Որ
այլ ինչ խնդրէ, և ոչ զԱստուած
միայն և զհոգւոյ իւրոյ փրկութիւն,
ոչ ինչ զտանէ, բայց նեղութիւնս և
վիշտս։ Զէ հնար և ընդերկար կալ
'ի խաղաղութեան այնմ որ ոչ ջա-
նայ լինել կրտսեր և տրուալ քան
զամենեսեան։

Գ. Ի ծառայութիւն եկիր, և ոչ
յառաջնորդութիւն. 'ի համբերու-
թիւն և յաշխատութիւն կոչեցար,
և ոչ 'ի դատարկութիւն և 'ի շատ-
խօսութիւն։ Այս աստ փորձին
մարդիկ, որպէս ոսկի 'ի բոմս։ Աստ
ոչ որ կարօղ է կալ, եթէ ոչ յամե-

նայն սրտէ յօժարեսցի խոնարհել զանձն վասն Աստուծոյ։

ԳԼՈՒԽ ԺԸ

Յաղագս օրինակաց սրբոց հարց.

Ա. Հայեաց 'ի կենդանի օրինակս սրբոց հարց, յորս փայլեցին ճըշմարիտ կատարելութիւն և կրօնաւորութիւն. և տեսցես որպէս դուզնաքեայ իմն է և չնչին, զոր մեքն առնեմք։ Բաբէ, զինչ են վարք մեր առ վարուք նոցա։ Սուրբք և սիրելիք Քրիստոսի ծառայեցին տեառն 'ի քաղց և 'ի ծարաւ, 'ի ցուրտ և 'ի մերկութեան, 'ի վաստակս և յաշխատութիւնս, 'ի խոկմունս և 'ի պահըս, յաղօթս և 'ի սուրբ խոկմունս, 'ի հալածանս և 'ի նախատինս բազումս։

Բ. Ո՞վ, որպէս բազմաց և ծանուցց նեղութեանց համբերեցին առաքեալք, մարտիրոսք, խոստովանողք, կուսանք, և այլք ամենե-

քին՝ որք զՔրիստոսի շաւղաց յո-
ժարեցին երթալ զհետ։ Քանզի զան-
ձինս իւրեանց յաշխարհի ատ ա-
տեցին, զի՝ի յաւիտենական կեանս
ժառանգեսցեն զնոսա։ Ո՛վ, որպէս
խիստ և հրաժարական կեանս վա-
րեցին սուրբ հարք յանապատի.
քանի՛ երկար և ծանր փորձութեանց
տարան. ո՛րպէս յոլովակի՛ի թշ-
նամւոյն տանջեցան. ո՛րպէս ստէպ
և ջերմեռանդն աղօթս առ Աստուած
մատուցին. որպիսի՛ խստամբեր ճը-
զանց տարան. որպիսի՛ մեծ նա-
խանձ և եռանդն առ հոգևոր յա-
ռաջադիմութիւն ստացան. ո՛րպէս
աստիկ պատերազմաւ զախտս նը-
ւաճեցին. ո՛րպէս սուրբ և ուղիղ
դիտաւորութիւն առ Աստուած կա-
լան յանձինս։ Ի տուէ՛ի ձեռա-
գործս վաստակէին, և՛ի գիշերի
ընդ երկար յաղօթս պարապէին.
թէպէտ և՝ի ձեռագործել իսկ՝ ի մը-
տաւոր աղօթից ոչ դադարէին։

Գ. Զամենայն ժամանակս ծա-
խէին յօգուտ. ամենայն ժամ պա-
րապելոյ յԱստուած՝ թուէր նոցա

սուղ։ Եւ առ մեծի քաղցրութեան խոկման՝ մոռանային և զպէտս մարմնաւոր կերակրոյ։ Յամենայն մեծութենէ 'ի փառաց և 'ի պատուոյ, 'ի բարեկամաց և յաղգայնոց հրաժարեալ կային. ոչ ինչ յաշխարհէ ըղձանային ունել. հաղիւ թէ ըզպէտս կենաց առնուին. իսկ մարմնոյ ծառայել և 'ի կարևորս՝ ծանր էր նոցա։ Ապա աղքատք էին յերկրաւոր ինչս, այլ մեծատունք յոյժ 'ի շնորհս և յառաքինութիւնս։ Արտաքոյ չքաւորք էին այլ ներքոյ աստուածային շնորհաց և մխիթարութեամբ յղփացեալք։

Դ. Օտարք էին յաշխարհէ, այլ Աստուծոյ մօտաւոր և մտերիմ բարեկամք։ Յաչս անձանց թուէին ոչինչ, և յաչս աշխարհի արհամարհք. այլ յաչս Աստուծոյ էին պատուականք և սիրելիք։ Ի ճշմարիտ խոնարհութեան կային. միամիտ հնազանդութեամբ վարէին. սիրով և համբերութեամբ զնային։ Վասն այսորիկ օրըստօրէ հոգւով զարգանային, և մեծամեծ շնորհս առ յԱս-

տուծոյ ընդունէին։ Ցուան յօրինակ ամենայն կրօնաւորաց. որք առաւել պարտին յորդորել զմեզ առբարւոք յառաջադիմութիւն, քան զաղջացելոց բազմութիւնք 'ի ցոփութիւն։

Ե. Ո՛վ, քանի՛ եռանդն էր ամենայն կրօնաւորաց 'ի սկիզբն սուրբ կարգաց իւրեանց։ Քանի՛ իղձ աղօթից. քանի՛ նախանձ առաքինութեան. ո՛րպէս առաւելոյր բարեկարգութիւն. քանի՛ յարգ և հնազանդութիւն ընդ կանոնաւ վարժապետի ծաղկեաց յամենեսին։ Վրկայ են արդ ևս հետք շաւղաց նոցա, թէ արդարև սուրբք էին և կատարեալք, որք այնպէս արիաբար պատերազմեալ՝ յաղթեցին աշխարհի։ Եւ այժմ մեծ ոմն համարի, թէ որ չեղև օրինազանց, թէ որ վչտաց ենկելոց՝ համբերութեամբ ժուժել կարաց։

Զ. Ո՛վ զաղջութեան և հեղգութեան վիճակի մերոյ. որ այդպէս վաղվաղակի հովանամբ 'ի նախնի եռանդնէ, և տաղտկանամբ 'ի կե-

նաց առ մեղկութեան և գաղջութեան։ Երանի՜ թէ ոչ ննջէր երբէք 'ի քեզ յառաջադիմութիւն առաքինութեանց, որ բազումս բազում անգամ տեսեր օրինակս առաքինեաց։

ԳԼՈՒԽ ԺԹ

Ցաղագս կրթութեանց բարւոյ կրօնաւորի.

Ա. Պարտ է վարուց բարւոյ կրօնաւորի ամենայն առաքինութեամբ լինել զարդարեալ. մինչև այնպիսի զոլ ներքոյ, որպիսի երևի մարդկան արտաքոյ։ Նա՝ առաւել պարտ է լինել ներքոյ, քան զերևեալն արտաքոյ. զի սրտատես մեր Աստուած է, յորմէ մեծապէս պարտիմք պատկառել ուր և իցեմք. և որպէս զհրեշտակս առաջի նորա զնալ սրբութեամբ։ Օրըստօրէ նորոգել պարտ է մեզ զառաջադրութիւն մեր, և յեռանդն զմեզ զարթուցանել, որպէս թէ այն օր իցէ սկիզբն դարձի մե-

բոյ, և ասել։ Օգնեա՛ ինձ տէր ի՛ բարւոք առաջադրութեանս և ի՛ սուրբ ծառայութեան քում, և տուր ինձ յայսմ օրէ կատարելապէս ըս-կիզբն առնել. զի զոր մինչև ցարդ գործեցի, չէ ինչ։

Բ. Ըստ առաջադրութեան մերոյ են ընթացք յառաջադիմութեան մերոյ. և բազում փութոյ պէտք են այնմ, որ քաջ զարգանալ կամիցի։ Զի թէ որ արիաբար առաջադրէ, բազում անգամ կասի, զինչ այնմ լինիցի, որ հազիւ երբէք կամ հարեւանցի առաջադրէ ինչ։ Բայց բազմ-օրինակ պատահէ մեզ կասել ի մերմէ առաջադրութենէ. և զոյգն զանցառութիւն կրթութեանց չանցանէ առանց ինչ վնասու։ Այրդա-բոց առաջադրութիւն առաւել հաստատեալ է ի շնորհս Աստուծոյ, քան յիւրեանց իմաստութիւն. յոր և ապաւինին միշտ, յինչ և ձեռնարկեն։ Քանզի մարդ առաջադրէ, այլ Աստուած է որ տնօրինէ. և չեն ըստ մարդկան ճանապարհք նորա։

Գ. Եթէ վանք բարեպաշտութեան և'ի սակս օգտի եղբօրն՝ զանց արասցէ զբերեալն զսովորական կըրթութեամբ, զիւրին է զկնի լնուլ զթերին։ Բայց եթէ առ տաղտկութեան սրտի և առ հեղգութեան թողցէ ինչ զբերաւ, ըստգիւտ մեծ է, և վնաս գործի։ Ի ջանալ իսկ յամենայն գօրութենէ, զեռ զիւրաւ 'ի բազումս գտանիմք յետնեալ։ Բայց և այնպէս յամենայն ժամ զարտ է մեզ առաջադրել ինչ, մանաւանդ ընդդէմ այնց՝ որք առաւել խոչ են մեզ։ Զարտաքինս մեր, միանգամայն և զներքինն, քննեսցուք և կարգեսցուք. զի երկաքանչիւրն օգուտ են առ յառաջադիմութիւն։

Դ. Թէ չես ձեռնհաս անդադար գրեզ ժողովել, զէթ երբեմն, զէթ միանգամ յաւուրն՝ ընդ առաւօտս կամ ընդ երեկս։ Առաւօտուն առաջադրեա. ընդ երեկս քննեա ըզվարս քո, թէ զիարդ անցուցեր զայն օր 'ի բանս 'ի գործս և'ի խորհուրդս, զուցէ բազում անգամ յանցեար յայնս յԱստուած և յընկերդ։ Ընդ-

գեա զմէջս քո որպէս այր զօրու-
թեան ընդդէմ բանսարկուին պատ-
բանաց. սանձեա զորկորդ, և զա-
մենայն մարմնական յօժարութիւն
գիւրաւ սանձեսցես։ Մի երբէք
կացցես բնաւ դատարկ. այլ կամ
ընթերցիր, կամ գրեա, կամ աղո-
թեա, կամ խոկա, կամ գործեա
ինչ առ հասարակաց օգուտ։ Բայց
զմարմնաւոր աշխատութիւնս ընտ-
րողութեամբ պարտ է առնել. և չէ
արժան ամենեցուն միօրինակ յայնս
ձեռնարկել։

Ե. Որ ինչ ոչ է հասարակաց, մի
ցուցաներ արտաքոյ. զի առանձնա-
կանք 'ի ծածուկ առաւել աներկեան
գործին։ Բայց զգոյշ լեր չլինել հեղգ
առ հասարակացն և փոյթ առ առ-
անձնականս. այլ իբրև կատարես-
ցես լիով և հաւատարմութեամբ ըզ-
պարտս և որ ինչ անկ է քեզ, եթէ
գեռ կայցէ ժամանակ պարապոյ,
յաւել և զքոյդ ըստ ըղձից եռան-
դեան քոյ։ Ոչ ամենեցուն է պատ-
շաճ մի և նոյն կրթութիւն. այլ ումն
այսմ և ումն այնմ է առաւել ճահո-

զական։ Այլ և ըստ պատշաճի ժամանակին կրթութիւն քան զկրթութիւն ընտրելագոյն թուի. զի են՝ որք 'ի տօնս, և են՝ որք յաւուրս արգոյ յաւէտ քաղցրանան։ Են՝ որք պիտին 'ի ժամանակի փորձութեան, և են՝ որք 'ի խաղաղութեան և 'ի հանգըստեան։ Են՝ զորս մտադիր խորհիմք յորժամ եմք 'ի տրտմութեան, և են՝ զորս յորժամ ուրախ եմք 'ի տէր։

Զ. Ցերեկլի տօնս նորոգել պարտ է զբարիոք կրթութիւնս, և զսրբոց օգնականութիւնս ջերմագոյն մաղթել։ Յօնէ 'ի տօն պարտ է մեզ առաջադրել ինչ, որպէս թէ յայնժամ հանդերձեալ իցեմք յաշխարհէ աստի փոխել, և յանանց տօնախըմբութիւն ժամանել։ Վասն այսորիկ փութոյ պնդութեամբ պատրաստել պարտիմք զանձինս 'ի հանգիսի աւուրս, և առաքինագոյն վարս յանձին բերել, և զամենայն պահպանութիւնս զգուշագոյն պահել. որպէս թէ ակն ունելով ընդ հուպ զվարձս վաստակոց մերոց առ յԱստուծոյ ընդունել։

Է. Եւ թէ յապաղեսցէ, համա-
բեսցուք զանձինս դեռ անպատ-
բաստս և անարժանս մեծի փա-
ռացն, որք յայտնելոց են 'ի մեզ 'ի
դէպ ժամանակի. և ջանասցուք լաւ
ևս պատրաստել զմեզ յելս։ Երանի
իցէ ծառայիցն այնոցիկ, ասէ տէր
յաւետարանն Ղուկասու, զորս ե-
կեալ տէրն գտցէ արթունս. ամէն
ասեմ ձեզ, զի 'ի վերայ ամենայն
ընչից իւրոց կացուսցէ զնոսա։

ԳԼՈՒԽ Ի

*Յաղագս սիրոյ առանձնութեան
և շուրջեան.*

Ա. Խնդրեա դէպ ժամանակ միտ
դնելոյ անձին. և զԱստուծոյ առ
քեզ երախտիս ստէպ խոկա։ Թող
զընդվայրաքննինս, և ընթերցիր
զայնպիսի գիրս, որ ապաշաւ 'ի քեզ
բերեն և ոչ զբօսանս։ Թէ անձնա-
պահ լինիս յաւելորդ զրուցաց և յու-
նայն շրջագնացութենէ և 'ի նորա-

նոր լրոց, զտցես բաւական պա-
ռասպ 'ի բարի խորհուրդս պատաղե-
լոյ։ Մեծամեծք 'ի սրբոց խորհէին
ըստ կարի 'ի մարդկան կենցաղա-
վարութենէ, և ընտրէին ծառայել
Աստուծոյ 'ի ծածուկ։

Բ. Ասաց ոմն. քանիցս անգամ
եղէ 'ի մէջ մարդկան, դարձայ ան-
տի նուազեալ։ Զսորա յոլովակի
առնումք զչափ, յորժամ յերկար
զբանիւք անկանիմք։ Դիւրին է ա-
մենեին լռել, քան չափաւոր խօսել։
Դիւրին է առանին դադարել, քան
արտաքոյ ըստ արժանեաց անձնա-
պահ լինել։ Ապա որ կամի 'ի ներ-
քինս և 'ի հոգևորականս ժամանել,
պարտ է նմա ընդ Յիսուսի խոյս
տալ յամբոխէ։ Ոչ ոք անքոյթ ե-
րևի, բայց որ մտադիւր թաքչի։ Ոչ
ոք անքոյթ խօսի, բայց որ մտա-
դիւր լռէ։ Ոչ ոք անքոյթ իշխէ,
բայց որ մտադիւր հպատակի։ Ոչ
ոք անքոյթ հրամայէ, բայց որ զի-
տաց բարուք հնազանդել։

Գ. Ոչ ոք աներկեան խնդայ, բայց
որ զբարուք խղճի մտաց վկայու-

թիւն յանձին ունիցի։ Բայց սրբոցն աներկանութիւն՝ լի եղև միշտ երկիւղիւ Աստուծոյ։ Եւ ոչ նուազեաց նոցա փոյթ և խոնարհութիւն, վասն մեծամեծ առաքինութեանցն և շընորհաց որ 'ի նոսա։ Իսկ թիւրելոց աներկանութիւն 'ի հպարտութենէ և 'ի յանդգնութենէ գայ յառաջ, և յանցի 'ի պատրանս անձին։ Մի երբէք խոստանար քեզ աներկանութիւն յաստի կենաս, թէպէտ և թուիցիս յաչս անձին բարեկիր վանական, կամ փոյթեռանդն անապատաւոր։

Դ. Բազում անգամ ընտիրքն յաչս մարդկան ծանրագոյն վանական կեցան վասն կարի իմն յանձնապատանութեան։ Վասն այսորիկ լաւ է բազմաց՝ չլինել ամենեին զերծ 'ի փորձութենանց, այլ լինել 'ի սէպ ճգունս մարտ, զի մի կարի իմն անհոգասցին. զուցէ ամբարտաւանութեամբ փքացին, կամ յարտաքին մխիթարութիւնս համարձակ խոտորեսցին։ Ո՛վ քանի՛ բարիոք խիղճ մտաց յանձին հաստատիցէ, որ ոչ

երբէք անցաւոր ուրախութեան լինի 'ի խնդիր, և ոչ երբէք յաշխարհայինս պատուղի։ Քանի՛ խաղաղութիւն և հանգիստ ժառանգիցէ, որ զամենայն անոտի հոգս 'ի բաց հատանէ, և զփրկականս և զաստուածայինս միայն խորհի, և զամենայն յոյս իւր դնէ յԱստուած։

Ե. Ոչոք արժանի է երկնային մըխիթարութեան, եթէ ոչ 'ի սուրբ զղջութիւն տացէ զանձն։ Եթէ կամիս զեղջ 'ի սրտի ունել, մուտ 'ի սենեակ քո, և փակեա զդուրս առ աշխարհային աղմուկս. որպէս և գրեալ է, յանկողինս ձեր զղջացարուք։ Ի սենեկի զտցես, զոր ինչ արտաքոյ յոլովակի կորուսեր։ Ի սենեկի դադարել քաղցր է, և արտաքոյ նորա դեղերանք՝ բերեն տաղտկութիւն։ Եթէ 'ի սկզբան դարձի քո սերտ բնականաս և պատրաստարիս 'ի նմա, լինի քեզ յայնմ հետէ մտերիմ սիրելի, և սփոփումն հաճոյական։

Զ. Ի լռութեան և 'ի հանգստի զարգանայ փոյթեռանդն ոգի, և յու-

սանի զխորհուրդս սուրբ զրոց։ Անդ գտանէ աղբիւրս արտասուաց, ո՞
րովք զամենայն զիշեր լուանայ զան՝
ձրն և մաքրէ. և արարչի իւրում՝
այնչափ ընտանենայ, որչափ առա՝
ւել յամենայն աշխարհական աղմկէ
օտարանայ։ Ապա որ 'ի բաց կայ 'ի
ծանօթից և 'ի բարեկամաց, առ այն՝
պիսին մերձի Աստուած ընդ սրբոց
հրեշտակաց։ Լաւ է մենանալ, և
վասն անձին հոգալ, քան զանձնէ
անփոյթ լեալ, նշանս գործել։ Գո՝
վելի է կրօնաւորի սակաւ ուրեք
արտաքս ելանել, խորշել յերեսելոյ
մարդկան, և չկամել իսկ տեսանել
զմարդիկ։

Է. Զի՞ է քեզ տեսանել, զոր չէ
արժան ստանալ։ Անցանէ աշխարհ,
և ցանկութիւն նորա։ Զդեն զգայա՝
կան իղձք 'ի դրօսանս. այլ յանցա՝
նել ժամուն զի՞նչ ինայ քեզ, բայց
ծանրութիւն խղճի և ցրումն մտաց։
Ուրախ ելք բազում՝ այն է զի տը՝
խուր դարձ գործեն. և խնդամիտ
հսկումն երեկոյի, տխուր առաւօտ
բերէ։ Այսպէս ամենայն մարմնա՝

ւոր խնդութիւն անոյշ մտանէ, այլ 'ի վախճանի խայթէ և սպանանէ։ Զինչ այլուր կարող ես տեսանել, զոր չտեսանես 'ի սենեկի։ Ահա երկինք և երկիր, և ամենայն տարերք. զի 'ի սոցանէ եղև ամենայն։

Ը. Զինչ ուրեք տեսանիցես յերկարաւև ընդ արեգակամբ։ Կարծիցես թերևս յաղենալ. այլ չիք քեզ այդմ ժամանել։ Եթէ զամենայն զաստիս տեսանէիր, զինչ էր՝ թէ ոչ տեսիլ սնոտի։ Ամբարձ զաչս քո 'ի բարձունս առ Աստուած, և կաց յաղօթս վասն մեղաց քոց, և հեղգութեանց։ Թո՛ղ զսնոտիս սնոտւոց. և զու միտ դիր ամենայնի, զոր հրամայէ քեզ Աստուած։ Փակեա 'ի վերայ քոյ զդուրս քո, և կարդա զսիրելիդ քո զՅիսուս։ Լեր ընդ նմա 'ի սենեկի. զի չիք գտանել այլուր խաղաղութիւն այդպիսի։ Թէ չէիր ելեալ արտաքս, և լուեալ շփոթս, լաւ ես վայելէիր 'ի խաղաղութեան։ Ցորչափ ախորժես լսել նորալուրս, մնայ քեզ վասն այդր կրել մտաց ամբոխմունս։

ԳԼՈՒԽ ԻԱ.

Յաղագս զղջութեան սրտի.

Ա. Եթէ կամիս օգտել ինչ, կալ զքեզ յերկիւղ տեառն։ Եւ մի լինիր կարի իմն համարձակ, այլ ըստ կանոնաց զուսպ կալ զամենայն գքո զգայարանս. և մի տար զանձն յուրախութիւն՝ որ ոչ վայելէ։ Ցուր զքեզ 'ի զղջութիւն սրտի, և զտցես եռանդն։ Զղջութիւն յայտնէ բարութիւն բազումս, զորս ցոփութիւն վաղ կորուսանէ։ Զարմանք են, թէ զիարդ հնար է մարդոյ խնդալից լինել յաստի կեանս, որ զմտաւ ածէ զիւր աքսորանս և զհոգւոյ իւրոյ բազմապատիկ վտանգս։

Բ. Ա. թեթևութեան սրտի, և առ անփոյթ լինելոյ զպակասութեանց մերոց, չիմանամք զաղէտս հոգւոյ մերոյ. այլ բազում անգամ ծիծաղիմք վայրապար, ուր յիրաւի էր մեզ լալ։ Զիք ճշմարիտ ազատու-

թիւն, և ոչ զեղեցիկ ուրախութիւն, բայց յերկիւղի տեառն և 'ի բարուք խիղճ մտաց։ Երանի՛, որ մերժէ յանձնէ զամենայն խոչ զբաղական, և միտ դնէ սուրբ զղջութեան։ Երանի՛, որ հրաժարէ յամենայնէ՝ որ զխիղճ իւր արատէ կամ՝ ծանրաբեռնէ։ Մարտիր քաջութեամբ, զի սովորութիւն սովորութեամբ յաղթի։ Եթէ թողուս զու զմարդիկ, և նոքա թողացուսցեն քեզ անսայ գործոց քոց։

Գ. Մի՛ առարկաներ 'ի քեզ զայլոց իրողութիւնս, և մի՛ մղեր զանձն 'ի դատս մեծամեծաց։ Կալ յամենայնի զաչս 'ի վերայ քո, և լեր յաւէտ խրատտու անձին՝ քան սիրելեաց քոց։ Եթէ չես 'ի շնորհս մարդկան, մի տրամիր վասն այդր. այլ այն եղիցի քեզ ծանր, եթէ չիցես բարեկիր և զգաստ 'ի գնացս, որպէս վայելէ Աստուծոյ ծառայի, և փոյթեռանդն կրօնաւորի։ Լաւ է և ապահովագոյն՝ չունել մարդոյ մըխիթարութիւնս բազումս յաստի կեանս, մանաւանդ զմարմնականս։

Բայց թէ վրէպ եմք յաստուածայնոցն, կամ զուն ուրեք առնումք զնոցին ճաշակ, մեր են յանցանք. փոխանակ զի զզիղջ սրտի ոչ խնդրեմք, և զանոտիս և զարտաքինս ոչ իսպառ մերժեմք 'ի բաց։

Դ. Մի համարիր զանձն արժանաւոր աստուածային միսիթարութեան, այլ յաւէտ արժանի բազում նեղութեան։ Ամն զղջական ծանր և զառն է ամենայն աշխարհ։ Այր բարի շատ նիւթ զանէ ցաւոց և լալոյ։ Զի եթէ յանձն հայի, և եթէ յընկերն, 'ի միտ առնու թէ չկայ զբ յաշխարհի աստ առանց նեղութեան. և ըստ զզուշագոյն քննութեան անձին, առաւելուն 'ի նա ցաւք։ Նիւթ արդար ցաւոց և ներքին զղջութեան՝ են մեզք և յոռութիւնք մեր. յորս այնպէս չաղեալ զնիմք, մինչև հազիւ նկատել մեզ զերկնաւորս։

Ե. Թէ ստէպ խորհիցիր զմահուանէ քումմէ, քան զերկարութենէ կենաց, ժրագոյնս արդեաք ուղղիր զքեզ։ Եւ թէ զհանդերձեալ պատ-

ժոց գժոխոց կամ՝ քաւարանի մտա-
խորհ լինէիր, մտազիւրազոյն ար-
դեօք տանէիր վաստակոց և ցաւոց.
և ոչ՝ի խստութենէ ինչ զանգիտէիր։
Բայց քանզի ոչ ընդ մտանեն տո-
քա՝ի սիրտ մեր, և դեռ սիրեմք ըզ-
հրապոյրս, վասն այնորիկ կամք
մեամք ցուրտք և հեղգացեալք։

Զ. Բաղում անգամ՝ի կարճմը-
տութենէ է այն, զի ընդ փոյթ տա-
ռապեալ մարմինն տրտնջէ։ Այլ դու
խոնարհութեամբ խնդրեա՝ի տեառ-
նէ, զի տացէ քեզ ոգի զղջութեան,
և ասա ընդ մարգարէին. Զամբեա
ինձ տէր հաց արտասուաց, և արբո
ինձ արտասուս չափով։

ԳԼՈՒԽ ԻԲ

*Յաղագս խոկման մարդկային
դշուառութեան.*

Ա. Յոր վայր և իցես, յոր կողմն
և դարձցիս, թշուառական ես, եթէ
ոչ առ Աստուած դառնաս։ Զի՞ խոռ-

վիս, յորժամ ոչ յաջողէ քեզ որ-
պէս կամիս և ցանկաս։ Ո՞վ է, որ
զամենայն ունիցի ըստ իւրոց կա-
մաց։ Ոչ ես, ոչ դու, և ոչ ամե-
նայն մարդ որ 'ի վերայ երկրի։ Ոչ
ոք է յաշխարհի առանց ինչ նեղու-
թեան կամ անձկութեան, թէպէտ
և թագաւոր իցէ թէպէտ և քահա-
նայապետ։ Ոչիր պայման լաւ իցէ,
բայց այնորիկ՝ որ վասն Աստուծոյ
կրէ ինչ։

Բ. Ասեն բաղում խօթամիտք և
տկարք։ Ահա քանի՞ բարեկեցիկ է
այն ոք, քանի՞ ճոխ և մեծատուն,
քանի՞ հզօր և արգոյ։ Այլ դու հայ-
եաց յերկնային բարիս, և տեսցես՝
զի առօրեայքս ամենայն ոչինչ են
և անստոյգք և նեղիչք յոյժ. զի ոչ
երբէք հնար է ժառանգել զնոսա
անհոգ և աներկիւղ։ Զէ մարդոյ եր-
ջանկութիւն՝ առօրէիցս յղփութիւն.
այլ շատ է նմա միջասահման կեն-
ցաղ։ Ապաքէն թշուառութիւն է
կեալ 'ի վերայ երկրի։ Որչափ ա-
ռաւել լինի ոք հոգեսէր, այնչափ
աստի կեանք լինին նմա դառնա-

զոյն. զի լաւ ևս զգայ, և յայտնա-
զոյն տեսանէ զմարդկային ապա-
կանութեան կիրս։ Քանզի ուտել և
ըմպել, տքնել և'ի քուն լինել, հանգ-
չել և վաստակել, և այլոց կարեաց
բնութեան ներքոյ լինել, մեծ տա-
ռապանք են և վիշտք առն հոգեսի-
րի՝ որում անձկալի է ազատ լինել
և զերծ յամենայն մեղաց։

Գ. Քանզի յոյժ ծանրաբեռնի ներ-
քին մարդն կարեօք մարմնոյ յաշ-
խարհի աստ։ Վասն այսորիկ մար-
զարէն եռանդեամբ մաղթէ, զերծ
լինել յայսպիսեաց աստի, և ասէ.
Ի վշտաց իմոց հան զիս։ Բայց վա՛յ,
որոց ոչ ճանաչեն զիւրեանց թշուա-
ռութիւն. և ևս վա՛յ, որոց սիրեն
զթշուառ և զապականացու զայս
կենցաղ։ Քանզի այնպէս ոմանք
փարին զսովաւ, թէպէտ և հաղիւ
զոգեպահ պէտս վաստակօք կամ
մուրոդութեամբ 'ի ձեռն բերեն,
մինչ զի թէ հնար էր միշտ կեալ յաշ-
խարհի, զարքայութենէ երկնից չէր
ինչ նոցա փոյթ։

Դ. Ո՛վ անմտութեան և անհաս-

տաստուծեան սրտի նոցա. որք այն-
պէս գետնաքարշ բերին զերկրաւո-
ղաց, մինչև ոչինչ խորհել նոցա,
բայց միայն զմարմնաւորս։ Բայց
ծանրագոյն ևս 'ի միտ առցեն տա-
ռապեալքն 'ի կատարածի, քանի՛
խոտան և չնչին էր՝ զոր սիրեցին։
Այլ սուրբք Աստուծոյ և ջերմ՝ բա-
րեկամք Քրիստոսի ոչ հայեցան 'ի
հաճոյս մարմնոյ, և ոչ 'ի ծաղկեալսն
յայսմ աշխարհի. այլ բովանդակ
նոցա յոյս և զիտումն անձկայր ա-
նանց բարեաց։ Իղձ նոցա բովան-
դակ բերիւր 'ի վեր 'ի մնայունս և
յանեւևոյթս, զի մի սիրով երևե-
լեաց ձգեսցին 'ի ստորինս։

Ե. Մի վհատիր, եղբայր, 'ի յա-
ռաջադէմն լինելոյ 'ի հոգևորս. զեռ
կայ քոյ ժամ և ժամանակ։ Զի՛ յա-
պաղեա զառաջադրութիւնդ. արի,
վաղվաղակի սկիզբն արա, և ասա.
Արդ ժամ է ձեռն 'ի գործ առնելոյ.
արդ ժամանակ է պատերազմի, և
զէպ ժամանակ զգաստանալոյ։ Ի
չարակրութիւնս քո և 'ի վիշտս՝ ժա-
մանակ է առաւելլոյ զարդիւնս։

Պարտ է քեզ անցանել ընդ հուր և ընդ ջուր, մինչև ժամանեսցես 'ի հանգիստ։ Թէ ոչ բուռն առնես անձին, ոչ յաղթեսցես ախտից։ Յորշափ զտկար զայս մարմին բարձեալ ունիմք, ոչ առանց մեղայ լինել հնար է մեզ, և ոչ անձանձիր և անվիչտ կեանս վարել։ Մարթ էր մեզ զերծ լինել յամենայն տառապանաց. բայց քանզի կորուսաք մեզոք զանմեղութիւն, կորուսաք և զճշմարիտ երանութիւն։ Վասն որոյ պարտ է մեզ համբերութիւն ունել, և Աստուծոյ ողորմութեանն ակնկալել. մինչև անցցէ անօրէնութիւնս այս, և ընկլցի մահկանացուս 'ի կենաց անտի։

Զ. Ով մեծի տկարութեան մարդկան, որ միշտ դիւրամէտ է 'ի յոռութիւնս։ Այսօր խոստովանիս զմեղս քո. և վաղիւ դարձեալ ըզնոյնս գործես։ Առ ժամն առաջադրես զգուշանալ. և յետ ժամուն գործես, որպէս թէ չէիր ինչ առաջադրեալ։ Ապա յիրաւի է մեզ խոնարհել, և ոչ արդոյ ինչ զանձինս

համարել, փոխանակ զի այսչափ տկար եմք և զիւրակործան։ Թող զի մարթիմք վաղ կորուսանել հեղ-ութեամբ, զոր բաղում վաստակօք հաղիւ ստացաք չնորհօք։

Ե. Զի՞նչ լինիցի մեզ առյաւպայ, որ այսպէս յայգուէ զաղջանամք։ Վա՛յ է մեզ, եթէ միտեմք 'ի հան-գիստ՝ իբրև 'ի խաղաղութեան զոլով և յապահովի, մինչդեռ և ոչ հետք երևին ճշմարիտ սրբութեան 'ի զը-նացս մեր։ Ո՞ւր էր թէ անդրէն յու-սումն խոնարհէաք քաջ վարուց՝ իբրև զնորընծայս. զի թերևս լինէր մեզ յոյս ապագայ ուղղութեան, և առաւելլոյ 'ի հոգևոր յառաջադի-մութեան։

ԳԼՈՒԽ ԻԳ

Յաղագս խոկման մահու.

Ա. Յոյժ վաղվաղակի հասանէ քեզ օր մահու. արդ տես թէ զիարդ կաս. այսօր է ոք, և վաղիւ ոչ ևս

երևի։ Իսկ յորժամ բարձեալ լինի ոք յաչաց, զնայ վաղվաղակի և յիշատակ նորա 'ի մտաց։ Ո՛վ թանձրամտութեան և խստասրտութեան մարդկան. որ միայն զարդիս խորհի, և զհանդերձելոց ինչ ոչ հոգայ։ Այնպէս պարտ էր քեզ լինել յամենայն գործս և 'ի խորհուրդս, որպէս թէ այսօր հանդերձեալ էիր մեռանել։ Եթէ կայր 'ի քեզ բարիոք խիղճ մտաց, ոչ յոյժ երկնչէիր 'ի մահուանէ։ Լաւ է քեզ խորշել 'ի մեղաց, քան խուսափել 'ի մահուանէ։ Եթէ այսօր չես պատրաստ, ո՞րպէս լինիցես առ վաղիւ։ Վաղուի օր անստոյգ է, և զի՞ զիտես թէ հասանիցես վաղուի։

Բ. Զի՞նչ օգուտ է մեզ կեալ ընդերկար, յորժամ չեմք փոյթք 'ի ըզգաստանալ։ Երկար կեանք ոչ միշտ ուղղեն զվարս, այլ յորովակի յաւելուն զյանցուածս։ Ո՞տայր, թէ օր մի բարւոք քաղաքավարեալ էաք յաշխարհի։ Բազումք զամս հաշուեն զդարձի. այլ բազում այն է զի ուղղութեան ինչ պտուղ չերևի։ Եթէ

սարսափելի է մահ, թերևս վտան-
գաւոր ևս իցեն ընդ երկար կեանք։
Երանի՛, որ զժամ մահուն իւրոյ հա-
նապազ առաջի աչաց ունի, և օր-
ըստօրէ 'ի մահ պատրաստի։ Եթէ
տեսեր երբէք զմեռանել մարդոյ,
յիշեա զի և դու գնալ ունիս ընդ
նոյն ճանապարհ։

Գ. Ի լինել առաւօտու զիր 'ի մը-
տի, թէ չես հասանելոց յերեկոյն։
Եւ 'ի գալ երեկոյի՝ մի իշխեր խոս-
տանալ քեզ զժամ առաւօտու։ Ա-
պա պատրաստ լեր միշտ. և այնպէս
կեցջիր, որ ոչ երբէք անպատրաստ
գտցէ զքեզ մահ։ Բազումք 'ի քրիս-
թել ական և յանկարծ մեռանին.
զի 'ի ժամու, յորում ոչ կարծեմք,
գայ որդի մարդոյ։ Ի գալ այնր յե-
տին ժամու՝ յոյժ այլազգ թուեսցին
քեզ ամենայն անցեալ կեանք քո.
և զղջասցիս յոյժ, զի այդպէս հեզգ
գտար և թոյլ։

Դ. Քանի՛ երջանիկ է և իմաստ-
տուն, որ այժմէն ջանայ այնպիսի
լինել 'ի կեանս, որպիսի կամի թէ
գտցի 'ի մահու։ Քանզի մեծ հանար-

ճակութիւն տայ երջանիկ մահու, կատարեալ արհամարհութիւն աշխարհի, փոյթեռանդն իղձ զարգանալոյ յառաքինութիւնս, սէր խրատու, ճիգն ապաշխարութեան, յօժարամտութիւն հնազանդութեան, ուրացութիւն անձին, և համբերութիւն վշտաց վասն սիրոյն Քրիստոսի։ Բաղում բարիս կարօղ ես զործել յառողջութեան. այլ 'ի հիւանդութեան չգիտեմ թէ կարող ինչ իցես։ Սակաւք 'ի հիւանդութենէ յառաջադէմ լինին 'ի բարին. որպէս և որք յուխտի տեղիս յածեալ չրջին՝ դուն ուրեք ժամանեն 'ի սըրբութիւն։

Ե. Մի ապաւինիր 'ի բարեկամս և 'ի մերձաւորս, և մի ձգեր զիրբկութիւն քո 'ի վախճան աւուրց. զի վաղ քան զոր կարծես՝ մոռացին զքեզ մարդիկ։ Լաւ է այժմէն յառաջատես լինել, և կանխաւ պատրաստել ինչ բարի, քան յուսալ յօգնութիւն այլոց։ Թէ ոչ այժմ հոգաս վասն անձին, ո՞վ հոգասցի վասն քոյ առյապայ։ Այժմ է պա-

տուական ժամանակ։ Ահաւասիկ ժամանակ ընդունելի. ահա օր փրկութեան։ Այլ վայ է քեզ, եթէ ոչ ծախես զայն յօգուտ, արժանի լինել նոփաւ յաւիտենիցն կենաց։ Եկեսցէ ժամանակ, զի օր մի կամ ժամ մի ուզղութեան խնդրեսցես, և չգիտեմ թէ գտցես։

Զ. Ապա, սիրելի, 'ի բազում փոանդէ լիցիս ազատ, և յերկիւղէ մեծէ ղերծ, եթէ այժմէն յամենայնի երկիւղած իցես, և կասկած մահու իցէ զքեզ։ Զանա արդ այնպէս կեալ, որ 'ի ժամ մահու կարող լիցիս առաւել խնդալ քան երկնչիլ։ Ուստր արդ մեռանիլ աշխարհի, զի յայնժամ սկիզբն արասցես կեալ ընդ Քրիստոսի։ Ուստր արդ զամենայն արհամարհել, զի յայնժամ կարող լիցիս համարձակութեամբ առ Քրիստոս դիմել։ Ճնշեա արդ զմարմին քո ապաշխարութեամբ, զի յայնժամ քաջայոյս գտցիս։

Է. Անմիտ, զի՞ խորհիս ապրել ընդերկար, որ և ոչ օր մի ունիս աներկեան։ Քանի՞ք խաբեցան, և

յանկարծ 'ի մարմնոյ յափշտակե-
ցան։ Քանի՞ցս անգամ լուար՝ ղի
ասէին. այս ոք սրով անկաւ, այն
ոք ծովակուր եղև, այս ոք 'ի բար-
ձուէ անկեալ՝ ողն նորա բեկաւ,
այն ոք յուտել իւրում կարկամե-
ցաւ, և այն ոք 'ի խաղալ իւրում
անշնչացաւ։ Ոմն հրով, ոմն սրով,
ոմն տարաժամ մահուամբ, և ոմն
հինիւ կորեաւ. և այնպէս ամենե-
ցուն կատարած մահ է. և կեանք
մարդկան որպէս ստուեր վաղ ան-
ցանեն։

Ը. Ո՞վ յիշեսցէ զքեզ յետ մա-
հու. և ո՞վ կացցէ յաղօթս վասն քո։
Արի, սիրելի, և այժմէն արա զոր
ինչ կարող ես առնել. զի ոչ գիտես
երբ մեռանելոց ես, և ոչ գիտես
զինչ դիպեսցի քեզ յետ մահու։
Մինչդեռ ժամանակս 'ի ձեռս է,
ժողովեա քեզ զանձ անմահութեան։
Բայց 'ի փրկութենէ քումմէ մի ինչ
խորհիր. միայն զաստուծոյն հո-
գա։ Արա արդ քեզ բարեկամս, ըղ-
ստուերս Աստուծոյ ղատուեալ, և
վարուց նոցա նմանեալ. զի յորժամ

պակասեսցիս 'ի կենաց սատի, ընկալցին նոքա զքեզ 'ի յարկսն յաւիտենականս։

Թ. Կա՛ զքեզ որպէս պանդուխտ և իջաւոր 'ի վերայ երկրի, որում ոչինչ փոյթ է զաշխարհի իրողութեանց։ Պահեա զսիրտդ ազատ, և առ Աստուած ուղերձեալ. զի ոչ ունիս սատ քաղաք մնայուն։ Ի նա ուղղեա զօրըստօրէ աղաչանս քո և դիեցուցիչս արտասուօք. զի հոգիդ քո արժանասցի յետ մահու՝ բարեաւ փոխիլ առ տէր. Ամէն։

ԳԼՈՒԽ ԻԴ

Յաղագս դատաստանի, և պատժոց մեղաւորաց.

Ա. Յամենայնի հայեաց 'ի կատարածն, և թէ որպէս կալոց ես առաջի անաչառ դատաւորին, յորմէ ոչ ծածկի ինչ. որ ոչ կաշառօք համոզի, և ոչ պատճառանս ընդունի. այլ արդարութեամբ դատի։ Ո՛վ

թշուառական և անմիտ մեղաւոր զինչ տացես պատասխանի Աստուծոյ, որ իրաւէտն է ամենայն չարեաց քոց. որ բազում անգամ զարհուրեալ զողաս յերեսաց առն բարկացելոյ։ Զիմարդ ոչ պատրաստես զքեզ աւուրն դատաստանի, յորում ոչ կարէ ոք 'ի ձեռն այլոց արդարանալ. զի իւրաքանչիւր ոք բաւական բեռն է անձին։ Այժմ արդիւնաւոր են քո ճգունք, ընդունելի են լալիք, լսելի են հեծութիւնք, և քաւարար են վիշտք։

Բ. Մեծ և փրկական քաւարան է համբերողի, որ զրկեալ՝ առաւել ցաւէ նմա վասն չարութեան ընկերին՝ քան վասն իւրոյ վնասու։ Որ վասն հակառակորդաց իւրոց յօժարամիտ յաղօթս կայ, և սրտի մտօք յանցուածոց նոցա ներէ։ Որ թողութիւն յայլոց խնդրել ոչ յապաղէ։ Որ երաշ է յողորմիլ քան 'ի բարկանալ։ Որ ստէպ բուռն առնէ անձին, և զմարմինն ամենայնիւ ջանայ հնազանդել հոգւոյ։ Լաւ է արդ զմեղս քաւել, և զախտս 'ի բաց հա-

տանել, քան հանդերձեալ քաւութեան պահել։ Զանձինս ուրեմն խաբեմք անկարգ սիրոմ զոր առ մարմին ունիմք։

Դ. Զի՞նչ կերիցէ հուրն այն, բայց զմեզս քո։ Որչափ առաւել արդ անձին խնայես, և մարմնոյ անսաս, այնչափ խստիւ առ յապայ տուժիս, և առաւելագոյն նիւթ կիզման ամբարես։ Որովք մեղանչէ՛ զք, նոքիմբք ծանրագոյնս տանջի։ Անդ ծոյլք հրացեալ խթանօք տագնապեսցին, և որկորաժէտք անհնարին սովու և ծարաւով տանջեսցին։ Անդ բղջախոհք և հեշտասէրք յեռացեալ ձիւթ և 'ի զարշահոտ ծծումբ լողեսցին, և նախանձոտք որպէս կատաղի շունք առ ցաւոց կաղկանձեսցեն։

Դ. Զիք ինչ ախտ, որոյ ոչ իցեն իւր տանջանք։ Անդ ամբարտաւանք ամօթալից լիցին, և ագահք չարաչար չքաւորութեամբ տուայտեսցին։ Անդ ժամ մի պատժոց ծանր եղիցի, քան զատի հարիւրամեայ ծանր ապաշխարութիւնս։ Անդ չիք ինչ հանգիստ, չիք ինչ մխիթարու-

թիւն դատապարտելոց. այլ ասա երբեմն դուլ լինի 'ի վաստակոց, և սփոփութիւն 'ի բարեկամաց։ Լեր արդ 'ի հոգս և 'ի ցաւս վասն մեղաց քոց, զի յօր դատաստանին անհոգ լիցիս ընդ երանելոց։ Զի յայնժամ կացցեն արդարք բազում համարձակութեամբ հանդէպ նեղչաց իւրեանց և հարստահարողաց։ Յայնժամ նստցի յաթոռ դատողական, որ արդ խոնարհութեամբ հնազանդի դատաստանաց մարդկան։ Յայնժամ մեծ քաջալերութիւն զգեցցի աղքատն և խոնարհն, և զարհուրեալ դողացի ամբարտաւանն։

Ե. Յայնժամ յայտնեսցի թէ իմաստուն էր յայսմ աշխարհի, որ վասն Քրիստոսի ուսաւ յիմար լինել և արհամարհ։ Յայնժամ քաղցր եղիցի ամենայն նեղութիւն համբերութեամբ յանձն առեալ. և ամենայն անօրէնութիւն խցցէ զբերան իւր։ Յայնժամ խնդասցէ ամենայն առաքինասէր, և տխրեսցի ամենայն ամպարիշտ։ Յայնժամ առաւել ցնծասցէ մարմին վշտահար,

քան զզրգեալն 'ի վարկութիւնս։ Յայնժամ պայծառասցի աղքատ ձորձիկ, և խաւարեսցին հանդերձք բեհեղեալք։ Յայնժամ առաւել զոսվեսցի աղքատին յարկ, քան զոսկենկար ապարանս։ Յայնժամ առաւել օգտեսցէ արիական համբերութիւն, քան զամենայն աշխարհի իշխանութիւն։ Յայնժամ առաւել բարձր եղիցի միամիտ հնազանդութիւն, քան զամենայն աշխարհական խորագիտութիւն։

Զ. Յայնժամ առաւել ուրախ առասցէ սուրբ և բարի խիղճ մտաց, քան զներհուն իմաստասիրութիւն։ Յայնժամ առաւել յարգեսցի արհամարհութիւն ընչից, քան զամենայն զանձս երկրածնաց։ Յայնժամ առաւել մխիթարեսցիս 'ի վերայ Ջերմեռանդն աղօթից, քան 'ի վերայ համեղահամ կերակրոց։ Յայնժամ առաւել ուրախ եղիցիս 'ի վերայ լուսակացութեան, քան 'ի վերայ երկար զրուցաց։ Յայնժամ առաւել զօրեսցեն սուրբ զորձք, քան զբազում զեղեցիկ բանս։ Յայն-

ժամ առաւել հաճոյ լիցին անձուկ կեանք և խստամբեր ճգանք, քան զամենայն երկրաւոր բերկրութիւն։ Ուստիր արդ սակաւուն համբերել, զի յայնժամ 'ի ծանունց ապրեսցիս։ Ասա յառաջագոյն փորձեա, թէ ո՞ր մի իմիք ժուժալ բաւես առ յապայ։ Եթէ այժմ զոյզն չարչարանք զքեզ նեղասրտեն, զի՞նչ արասցէ յայնժամ զեհեանն։ Ահա անհնար է երկուս ունել խնդութիւնս. ասա յաշխարհի 'ի զրդանս վայելել, և անդ ընդ Քրիստոսի թագաւորել։

Է. Եթէ մինչև ցայսօր միշտ 'ի պատուի լեալ էիր և 'ի փափկութիւնս, զի՞նչ օգուտ էր քեզ յայնմ ամենայնէ, եթէ արդ յանկարծ 'ի վերայ հասանէր մահ։ Ապա ամենայնն ունայնութիւն է, բաց 'ի սիրոյն Աստուծոյ և 'ի ծառայութենէ նորա։ Զի որ զԱստուած յամենայն սրտէ սիրէ, ոչ 'ի մահուանէ երկընչի, ոչ 'ի տանջանաց, ոչ 'ի դատաստանէ, և ոչ 'ի դժոխոց։ Վասն զի կատարեալ սէրն անհոգ մատչի առ Աստուած։ Իսկ որում զեռ

քաղցր է մեղանչել, չեն ինչ զարմանք թէ երկնչի 'ի մահուանէ և 'ի դատաստանէ։ Բայց բարուք է, զի թէ ոչ սէրն խոտորեցուցանէ զքեզ 'ի չարէ, զէթ երկիւղ զեհենին հրաժարեցուցէ։ Իսկ որ զերկիւղն Աստուծոյ մերժէ, ոչ է կարօղ ընդ երկար կալ մնալ 'ի բարին. այլ վաղագոյն անկանի յորոգայթս սատանայի։

ԳԼՈՒԽ ԻԵ

Յաղագս փոյթ լուսանցեն ուղղութեան վարուց մերոց.

Ա. Լեր արթուն և փոյթ 'ի ծառայութեանն Աստուծոյ. և խորհեաց ստէպ, թէ յինչ կոչեցար և զիաւրդ թողեր զաշխարհ։ Ոչ ապաքէն, զի յԱստուած կեցցես, և լիցիս այր հոգևոր։ Ապա լեր փոյթեանդն 'ի յառաջադիմութիւն, զի զվարձս վաստակոց քոց առցես ընդ հուպ. և յայնժամ ոչ ևս եղիցի եր-

կիւղ կամ ցաւ 'ի սահմանս քո։ Փոքր մի արդ վաստակեսջիր, և զոյցես հանգիստ մեծ և ուրախութիւն յաւերժական։ Եթէ կացցես մնասցես հաւատարիմ և փոյթեռանղն 'ի գործ, և Աստուած եղիցի հաւատարիմ և առատ 'ի հատուցումն։ Լեր քաջայոյս, թէ հասցես յաղթանակի. այլ չէ պարտ լինել աներկեան, զուցէ հեղգասցիս կամ փքասցիս։

Բ. Ցիսեալ ուրումն երբեմն 'ի վարանս երկիւղի և յուսոյ՝ այն ինչ ոգւով թախծութեան յեկեղեցւոջ առաջի սուրբ սեղանոյն անկեալ կայր յաղօթս, և խորհէր ընդ միտս, իցէ՞ թէ ժուժկալիցեմ իսպառ, անդէն առ յԱստուծոյ այսպիսի լուաւ պատասխանի 'ի սրտի։ Եթէ զայդ գիտէիր, զինչ առնէիր, զնոյն արդ արա, և եղիցիս քաջ յապահովի։ Որոյ անդէն վաղվաղակի քաջալերեալ և զօրացեալ՝ 'ի կամս Աստուծոյ եղև յանձն, և դաղարեցին 'ի նմանէ յոյզք խորհրդոց։ Եւ այլ ոչ ընդվայրաքննին հետազօտեաց, ի-

մանալ զինչ անդք անցանելոց իցեն ընդ նա առ յապայ. այլ յաւէտ ջնաջացաւ խնդրել, թէ զինչ են կամք Աստուծոյ հաճոյն և կատարեալն, առ սկիզբն առնելոյ և կատարելոյ զամենայն գործս բարութեան։

Դ. Յուսա՛ի տէր, և արա զբարի, ասէ մարգարէն. բնակեաց յերկրի, և հովուեսցիս՝ի մեծութեան նորա։ Մի՛ ինչ է, որ զբազումս յետս ընկրկէ՝ի յառաջադիմութենէ և՝ի փոյթեռանդն ուղղութենէ վարուց. ահ դժուարութեան, կամ՝ ճիգն պատերազմի։ Բայց այնք առաւել քան զայլս յառաջադէմ են յառաքինութիւնս, որք առաւել ծանուցեալ և հաստատակաց տրիտղոյն ջանան յաղթել։ Քանզի անդ առաւել զարգանայ որ, և յոլովագունից արժանի լինի շնորհաց, ուր առաւել յաղթէ անձին, և հոգևորապէս զնա մեռուցանէ։

Դ. Ոչ ամենեցուն հաւասար են իրք յաղթութեան և մեռուցման։ Բայց ժրաջան նախանձախնդիր զօրացոյն է՝ի յառաջադիմութիւն, թէ-

պէտ և բազում իցեն նորա կիրք, քան զբարեկիր ոք՝ որոյ նուազ իցէ եռանդն յառաքինութիւնս։ Երկու ինչ առաւելապէս յաջողեն զուղղութիւն վարուց. բուռն 'ի բաց քեցիլ յամենայնէ, յոր ախտաբար միտէ բնութիւնն. և սրտի մտօք պինդ ունել զբարին, որում առաւել կարօտի ոք։ Յայնց ևս անճնապահ լեր, և յաղթել ջանա, զորս անհաճոյ է քեզ տեսանել յայլոց վերայ։

Ե. Յամենայնի միտ դիր քումդ յառաջադիմութեան, որպէս զի թէ բարի ինչ օրինակ տեսանես կամ լսես, վառեսցիս բորբոքեսցիս լինել նմանող։ Ապա թէ ըստգիւտ ինչ յայլս տեսանես, զգոյշ լեր չառնել զնոյն. և թէ արարեր երբէք, փութա վաղագոյն ուղղել զքեզ։ Որպէս աչք քո յայլս հային, նոյնպէս աչք այլոց 'ի քեզ են։ Զի՞րդ բերկրական է և քաղցր՝ տեսանել եռանդնոտ և առաքինի եղբարս, բարեկիրս և խրատեալս։ Զի՞րդ տխուր է և ծանր՝ տեսանել զխեղաբարոյս,

որք անզործ են յամենայնէ՝ յոր կոչեցան։ Զիարդ վնասակար է հեղգալ 'ի գէմ եղեալ նպաստակ իւրոյ կոչման, և յօժարամտել յայն՝ որ չէ նմա յանձն։

Զ. Յուշ լիցի քեզ առաջադրութիւնդ՝ յոր ձեռնարկեր. և զիր առաջի աչաց զնաչեցելոյն պատկեր։ Հայեցեալ 'ի վարս Յիսուսի Քրիստոսի, յամօթ լեր. զի չև ես կերպարանակից լինել նմա ջանացար, թէ պէտ և ընդ երկար 'ի ճանապարհի Աստուծոյ եղեր։ Կրօնաւոր՝ որ սրբոտի մտաք և եռանդեամբ 'ի սուրբ վարս և 'ի չարչարանս Քրիստոսի կրթէ զանձն, զամենայն պիտանիս և զկարևորս անձին զտանէ անդ առատապէս. և ոչ պիտի նմա արտաքոյ Յիսուսի՝ լաւագունի իմիք լինել 'ի խնդիր։ Եթէ խաչելեալն Յիսուս եկաւորէր 'ի սիրտ մեր, ո՛վ թէ զիարդ վաղվաղակի և լիով լինէր մեզ զգօնանալ։

Է. Կրօնաւոր փոյթեռանդն բարիոք համբերէ և տանի ամենայնի, որ նմա հրամայի։ Կրօնաւոր հեղգ

և յոյլ՝ ունի նեղութիւն 'ի նեղութեան վերայ, և յամենայն կողմանէ անձկութիւն կրէ. զի չունի զներքին մխիթարութիւն, և արտաքնոյն 'ի խնդիր լինել՝ չէ նմա հրաման։ Կրօնաւորի որ անկանոն կեանս վարէ, մեծ կործանումն 'ի վերայ կայ։ Որ ցովութեան և թուլութեան զհետ երթայ, միշտ յանձկութիւնս եղիցի. զի ընդ այս ինչ կամ՝ ընդ այն ոչ հաճեսցի անձն նորա։

Ը. Զինչ գործեն այսչափ բազմութիւնք կրօնաւորաց, որք ընդ լծով են վանական կարգաց։ Հազիւ երբէք արտաքս ելանեն, հրաժարական վարեն կեանս, աղքատօրէն ուտեն, խոշոր զգենուն, բազումս վաստակին, սակաւ խօսին, ընդերկար հսկեն, կանուխ յառնեն, զաղօթս երկարեն, ստէպ ընթեռնուն, և յամենայն պահպանութիւնս կանոնաց են զգուշաւորք։ Հայեաց 'ի կարթուսեանս, և 'ի կիստերսեանս, և 'ի պէսպէս կրօնից միանձունս և կուսանս, որպէս յա-

մենայն զիշերի յառնեն սաղմոս ա-
սել տեառն։ Վասն այսորիկ ամօթ
է քեզ առ այդպիսի սուրբ գործ
հեղգանալ 'ի ժամանակի յորժամ
այսչափ բազմութիւն կրօնաւորաց
սկիզբն առնեն աղաղակել առ Ա-
ստուած։

Թ. Երանի՛ թէ ոչ այլ ինչ միայր
մեզ առնել, բայց զտէր Աստուած
մեր յամենայն սրտէ և 'ի բերանոյ
օրհնել։ Երանի՛ թէ ոչ ինչ պէտք
էին քեզ ուտելոյ, կամ ըմպելոյ,
կամ ննջելոյ. այլ կարող լինէիր
միշտ զԱստուած օրհնել, և միայն
հոգևոր փութոյ պարապել. յայն-
ժամ բարեբաստազոյն զտանէիր
քան այժմ, որ կարեաց մարմնոյ
ծառայես։ Երանի՛ թէ չէին 'ի միջի
այս կարիք, այլ միայն իմանալի կե-
րակուր. զորոյ, բա՛ռ, զիարդ սա-
կաւ առնումք զճաշակ։

Ժ. Յորժամ զբ ցայն վայր հա-
սանէ, մինչև չինդրել ինչ իւր միսի-
թարութիւն յարարածոց, յայնժամ
սկիզբն առնէ զքաղցրութեանն Ա-
ստուծոյ լիով առնուլ զճաշակ։ Յայն-

ժամ զոհ զտանի և յամենայն անցս՝ որք անցանեն ընդ նա։ Յայնժամ ոչ ընդ մեծ ինչ ուրախանայ, և ոչ ընդ խուն ինչ տրտմի. այլ զքովին յԱստուած հաստատէ զյոյս իւր, որ է նմա ամենայն յամենայնի։ Որում ոչ կորնչի ինչ, և ոչ մեռանի. այլ ամենեքին նմա կենդանիք են, և ակնարկման նորա անյապաղ ծառայեն։

ԺԱ. Յուշ լիցի քեզ վախճանն, և թէ ժամանակն կորուսեալ այլ ոչ դառնայ։ Առանց փութոյ և ջանից ոչ երբէք ստացիս զառաքինութիւնս։ Թէ սկիզբն առնես զաղջանալոյ, սկիզբն առնես և չարաչար վարուց։ Ապա եթէ տացես զանձն քո յեռանդն, զտցես խաղաղութիւն մեծ. և զիւր լիցի քեզ 'ի վաստակս, վասն շնորհացն Աստուծոյ, և սիրոյ առաքինութեան։ Այր եռանդնոտ և ժրաջան՝ պատրաստ է առ ամենայն։ Մեծ է վաստակ դիմամարտութեան ախտից և կրից; քան զքրտնաջան լինել 'ի մարմնաւոր վաստակս։ Որ 'ի դոյզն պակա-

սուրբեանց չխորշի, փոքր փոքր 'ի մեծամեծս սահի։ Ուրախ լիցիս հանապազ ընդ երեկս. եթէ զօրն անցուցեր յօգուտ։ Հսկեա 'ի վերայ քոյ, զարթո զ քեզ, յիշեցո քեզ. և զիարդ և իցեն այլք, զու զանձնէ մի հեղգար։ Այնչափ զարգասցիս, որչափ անձին քում բուռն արասցես։ Ամէն։

Կատարեցաւ խրատք առ հոգևոր կեանս պիտանիք.



ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ

ԽՐԱՏՔ ՈՐՔ ԶԳԵՆ ԶՄԵԶ Ի ՆԵՐՔԻՆՍ

ԳԼՈՒԽ Ա.

Յաղագս հերքիւն գնացից.

Ա. Գրքեցութիւնն Աստուծոյ 'ի ներքս 'ի ձեզ է, ասէ տէր։ Դարձիր յամենայն սրտէ առ տէր, և թող զթշուառ զայս աշխարհ. և գտցէ անձն քո հանգիստ։ Ուսիր զարտաքինս արհամարհել, և 'ի ներքինս անձնատուր լինել. և տեսցես զարքայութիւնն Աստուծոյ առ քեզ եկեալ։ Զի արքայութիւնն Աստու-

ծոյ է խաղաղութիւն և խնդութիւն
'ի հոգի սուրբ, որ ոչ չնորհի ամ-
պարշտաց։ Եկեսցէ առ քեզ Քրիս-
տոս, ցուցեալ քեզ զմխիթարու-
թիւն իւր, եթէ պատրաստեսցես
նմա 'ի ներքս 'ի քեզ արժանի օ-
թեվան։ Ամենայն փառք նորա և
վայելչութիւն է 'ի ներքոյ, և անդ
լինել հաճոյ է նմա։ Ընդ ներանձնա-
ցեալս է նորա ստէպ այցելութիւն,
քաղցր խօսակցութիւն, բերկրա-
կան մխիթարութիւն, բազում խա-
ղաղութիւն, և մեծահրաշ ընտա-
նութիւն։

Բ. Աղէ, հաւատացեալդ ոգի,
պատրաստեա այսմ փեսայի զսիրտ
քո. զի հաճեսցի առ քեզ եկաւ-
րել, և 'ի քեզ բնակել։ Զի այսպէս
ասէ նա։ Եթէ ոք սիրէ զիս, զբանն
իմ պահեսցէ. և առ նա եկեսցուք,
և օթեվանս առ նմա արասցուք։ Ա-
պա պատրաստեա Քրիստոսի տեղի,
և այլում ամենայնի մի՛ տար մուտ։
Թէ է 'ի քեզ Քրիստոս, մեծատուն
ես, և շատ է քեզ։ Նա եղիցի քո
հոգաբարձու, և հաւատարիմ խնա-

մակալու յամենայնի, որ այլ ոչ պի-
տի յուսալ 'ի մարդիկ։ Զի մարդիկ
վաղվաղակի փոխին, և փութով
պակասին. Քրիստոս կայ մնայ յա-
վիտեան, և զօրավիդն է քո մինչ
իսպառ։

Դ. Մի կարի իմն ապաւինիր 'ի
մարդ տկար և մահկանացու, թէ-
պէտ և պիտանի ոք իցէ և սիրելի.
և մի յոյժ տրտմեցիս, թէ ուրեք
երբէք ընդդէմ դառնայ և հակա-
ռակի։ Որք այսօր 'ի քո կողմն են,
հնար է թէ վաղիւ դիմադարձ զըտ-
ցին. և զսորին հակառակն՝ բազում
անգամ իբրև զհողմ փոփոխին։ Դիր
բովանդակ զյոյս քո յԱստուած, և
նա եղիցի քո երկիւղ և սէր։ Նա
փոխանակ քո տացէ պատասխա-
նի, և յաջողեսցէ յայն՝ որ լաւ իցէ։
Ոչ ունիս աստ քաղաք մնայուն. և
ուր և իցես, օտար ես և պանդուխտ.
և ոչ երբէք զտցես հանգիստ, թէ
ոչ սերտ միանաս ընդ Քրիստոսի։

Դ. Զի շուրջ հայիս աստ. չէ քոյ
այս տեղի հանդստեան։ Յերկնա-
ւորս պարտի լինել քո բնակութիւն,

և հարևանցի հայել պարտիս յամենայն երկրաւորս։ Անցանէ ամենայն, և զու ընդ նոսին միահաղոյն։ Զզոյշ լեր չյարել 'ի նոսա. զուցէ ըմբռնեսցիս, և կորիցես։ Առ բարձրելոյն եղիցին խորհուրդք քո, և աղաչանք քո առ Քրիստոս անդադար ուղղեսցին։ Թէ ոչ զիտես խոկալ զբարձունս և զերկնայինս, հանզիր 'ի Քրիստոսի չարչարանս, և 'ի սուրբ վերս նորա մտադիր բնակեաց։ Զի թէ 'ի վերս և 'ի պատուական սպիս Յիսուսի սրտեռանդն լինիս ապաստան, բազում քաջալերութիւն զգեցցիս 'ի նեղութեան, ոչ մեծ ինչ զրեսցես զմարդկան արհամարհանս, և թշնամանաղիր բանից զիւրաւ տարցիս։

Ե· Քրիստոս իսկ յաշխարհի 'ի մարդկանէ անգոսնեցաւ, և յանհընարին վիշտս 'ի ծանօթից և 'ի բարեկամաց թողաւ 'ի նախատինս։ Կամք եղեն Քրիստոսի չարչարիլ և անարդիլ. և զու իշխես բնաւ տրրտունջ ունել զումեքէ։ Քրիստոսի եղեն հակառակորդք և չարախօսք.

և դու կամիս թէ ամենեքին քո բա-
րեկամք իցեն և բարեբարք։ Ի՞
պսակեսցի քո համբերութիւն, թէ
ոչինչ վիշտ ընդ առաջ լինիցի։ Ե-
թէ ոչ կամիս կրել ինչ հակառա-
կութիւն, զիարդ լինիցիս բարեկամ
Քրիստոսի։ Համբեր ընդ Քրիստո-
սի և վասն Քրիստոսի, եթէ թա-
գաւորել կամիս ընդ Քրիստոսի։

Զ. Եթէ առ անդամ մի մտեալ
էր քո'ի սիրտ Յիսուսի, և առ փոքր
մի զվառեալ սիրոյ նորա առեալ
զճաշակ, այնուհետեւ չլինէր քեզ
փոյթ զդիւրութենէ կամ զվշտաց
անձին. այլ ուրախ լինէիր ընդ ըն-
կալեալ նախատինս. զի սէրն Յի-
սուսի տայ մարդոյ արհամարհել
զանձն։ Սիրողն Յիսուսի և ճշմար-
տութեան, և որ ներանձնացեալն է
և դերծ յանկարգ ախորժակաց, մար-
թի համարձակ մուտ ունել առ Ա-
ստուած, և հոգւով վերառեալ՝'ի հան-
դիստ վայելել։

Է. Որ իմանայ զամենայն որպէս
և էն, և ոչ ըստ ասից կամ կար-
ծեաց մարդկան, նա է ճշմարտա-

պէս խմաստուն, ուսեալ առ յԱստուծոյ քան 'ի մարդկանէ։ Որ ըստ ներքնոյն գիտէ գնալ, և ոչ ըստ արտաքնոյն կշռէ գիրս, ոչ խնդրէ տեղի և ոչ սպասէ ժամանակի՝ 'ի հոգևոր մարդս ձեռնարկելոյ։ Այր ներանձնաւոր փութով յինքն ամփոփի. զի ոչ երբէք բոլորովին առ արտաքինս զեղանի։ Զէ նմա խափան գործն արտաքին, կամ զբաղումն առ ժամն պիտեան. այլ ըստ բերման իրաց պատշաճէ զանձն։ Որ կազմ է 'ի ներքոյ և բարեկարգ, ոչինչ հոգայ զմարդկան զարմանաւոր և զթիւր գործոց։ Որչափ ոք յինքն առարկանէ իրս, այնչափ առաւել խափանի և զբաղնու։

Ը. Եթէ ուղիղ էիր և բարեյարգար, ամենայն յաջողէր քեզ 'ի բարի և յօգուտ։ Վասն այնորիկ բազում ինչ անհաճոյ է քեզ, և ստէպ խռովէ. զի դեռ չես լիով մեռեալ անձին, և ոչ զատեալ որոշեալ յամենայն երկրաւորաց։ Ոչինչ այնպէս արատէ և թակարդէ զսիրտ մարդոյ, որպէս խառնակ սէր ա-

բարածոց։ Թէ հրաժարիս յարտաքին մխիթարութենէ, կարող լիցիս խոկալ զերկնայինս, և ստէպ վայելել 'ի ներքին բերկրանս։

ԳԼՈՒԽ Բ

Յաղագս խոնարհ հպատակութեան.

Ա. Մի համարիր ինչ, թէ ոք 'ի քո կողմն իցէ կամ հակառակ քո. այլ այն իցէ քո վոյթ, զի Աստուած ընդ քեզ իցէ յամենայնի զոր առնես։ Կալ յանձին զբարիոք խիղճ մտաց, և Աստուած խնամակալու լիցի քեզ։ Չի որում օգնել կամի Աստուած, ոչ ուրուք ապիրատութիւն կարողանայ հասուցանել նմա վնաս։ Եթէ զիտիցես լռել և համբերել, տեսցես անտարակոյս ըզտեառն օգնականութիւն։ Նա զիտէ զժամանակ և զեղանակ ապրեցուցանելոյ զքեզ. վասն այսորիկ 'ի նա զքեզ յանձն արա։ Աստուծոյ է օգնել, և յամենայն խռովութենէ

զերծուցանել։ Այ առաւելու՛ի խոնարհութեան օգուտէ յոյժ բազում անգամ, թէ այլք զմեր պակասութիւնս ծանիցեն և յանդիմանեսցեն։

Բ. Ի խոնարհել առն վասն իւրոց պակասութեանց, զիւրաքանչարտէ զայլս, և հեշտեաւ ցածուցանել զցասուցեալն՝ի վերայ իւր։ Զխոնարհն պաշտպանէ Աստուած, և ապրեցուցանէ. զխոնարհն սիրէ և մխիթարէ. խոնարհին զիջանի. խոնարհին առատաձեռնէ շնորհս մեծամեծս, և յետ նեղութեան բարձրացուցանէ զնա՝ի փառս։ Խոնարհին յայտնէ զիւր զաղտնիս, և յինքըն քաղցրութեամբ ճոէ զնա և հրաւիրէ։ Խոնարհն յընդունելն զարհամարհանս, կայ յանխռով խաղաղութեան. զի յԱստուած կեայ, և ոչ յաշխարհի։ Մի յառաջադէմ զք կարծեր զքեզ, եթէ ոչ քան զամենեսին ստորին զանձն համարեսցիս։

ԳԼՈՒԽ Գ

Յաղագս առն խաղաղարարի.

Ա. Հաստատեա զքեզ նախ 'ի խաղաղութեան, և ապա կարող լիցիս զայլս խաղաղել։ Այր խաղաղարար առաւել օգուտ է քան զգիտնաւոր։ Այր ախտաւոր և զբարին ձգէ 'ի չար, և զիւրաւ հաւատայ չարի։ Այր խաղաղարար զամենայն փոխարկէ 'ի բարի։ Որ հաստեալն է 'ի խաղաղութեան, ոչ կասկածէ ինչ զումեքէ. այլ անզգոյն և խռովարարն 'ի սէյսպէս կասկածանս ծրի. ոչ ինքն հանդչի, և ոչ այլոց ապ հանդչել։ Ասէ բազում անգամ, զոր չէր պարտ ասել. և չառնէ, զոր օգուտ էր նմա առնել։ Խորհի, թէ զինչ այլոց անկ էր առնել. և չխորհի, թէ զինչ նմա է անկ։ Ապա լեր նախանձաւոր նախ 'ի վերայ անձին, և ապա իրաւամբք նախանձաւոր լիցիս և ընկերի քում։

Բ. Քաջ գիտես դու զործոց քոց պատճառանս պատճառել, և արդարացուցանել. բայց զայլոց պատճառանս ընդունել չառնուս յանձն։ Իրաւացի ես լինէր, թէ զքէն ամբաստան լինէիր, և զեղբայր քո արդարացուցանէիր։ Եթէ կամիս թէ այլք քեզ տարցին, տար և դու այլոց։ Ցես, քանի հեռի ես դեռ 'ի ճշմարիտ սիրոյ և 'ի խոնարհութենէ, որ ոչ ումեք գիտէ բարկանալ կամ ցանուլ, բայց միայն անձին։ Զէ ինչ մեծ ընդ բարեկիրս և ընդ հեզաբարոյս քաղաքավարել. զի այդ ամենեցուն բնաւորապէս է հաճոյ, և ընդ այնպիսիս ամենայն ոք մտադիր խաղաղութեամբ զնայ և զհամախոհս իւրառաւել սիրէ. բայց ընդ խիստս և ընդ խեղաբարոյս, ընդ անխրատս և ընդ հակառակորդս մեր խաղաղութեամբ կեալ՝ մեծ շնորհ է, և զործ զովելի յոյժ և արիական։

Գ. Են՝ որք զանձինս 'ի խաղաղութիւն հաստեն, և ընդ այլս ևս զխաղաղութիւն ունին։ Եւ են՝ որք

ոչ զխաղաղութիւն ունին, և ոչ այլոց թողուն կալ 'ի խաղաղութեան. այլոց ծանր են, այլ անձանց յամենայնի ծանրագոյն ևս։ Եւ են՝ որք զանձինս 'ի խաղաղութեան պահեն, և զայլս 'ի խաղաղութիւն արկանել փութան։ Բայց բովանդակ մեր խաղաղութիւն 'ի ցաւալից յայս կեանս՝ առաւել հաստատելի է 'ի խոնարհական համբերութիւն, քան 'ի չզգալ զհակառակս։ Որ քաջ զիտէ համբերել, մեծ խաղաղութիւն կալցի։ Այնպիսին յաղթող է անձին, և տէր աշխարհի. բարեկամ Քրիստոսի, և ժառանգորդ երկնից։

ԳԼՈՒԽ Դ

Յաղագս մաքուր մտաց, և միամիտ դիտաւորութեան.

Ա. Երկոքումբք թևօք վերանայ մարդ յերկրաւորաց. միամտութեամբ, և մաքրութեամբ։ Միամտութեանն պարտ է լինել 'ի դիտ-

մունս, մաքրութեանն յախորժակս։ Մխամտութիւնն զիմէ յԱստուած. մաքրութիւնն հասանէ և ճաշակէ։ Ոչինչ գործ բարի խափանեսցէ ըզ-քեզ, եթէ ներքոյ ազատ լինիցիս յանկարգ ախորժակաց։ Եթէ ոչ այլ ինչ դիտես և խնդրես, բայց զհաճոյսն Աստուծոյ և զօգուտ ընկերին, վայելեսցես 'ի ներքին ա-զատութեան։ Եթէ ուղիղ էր քո սիրտ, ամենայն արարածք լինէին քեզ հայելի վարուց, և մատեան ի-մաստից սրբութեան։ Զիք արարած այնպէս փոքր և խոտան, որ ոչ յանդիման երևեցուցանէ զԱստու-ծոյ բարութիւնն։

Բ. Եթէ 'ի ներքոյ լինէիր բարի և մաքուր, զամենայն անխափան տե-սանէիր և քաջ առնուիր 'ի միտ։ Սիրտ մաքուր ընդմտանէ յերկինս և 'ի զժոխս։ Որպիսի է որ 'ի ներ-քոյ, այնպէս դատի արտաքոյ։ Ե-թէ է խնդութիւն յաշխարհի, ժա-ռանգել զնա այր՝ որոյ սուրբ է սիրտ։ Եւ թէ է ուրեք նեղութիւն և վիշտ, քաջ զնորա զչափ առնու, որոյ չար

է խիղճ մտաց։ Որպէս երկաթ արկեալ 'ի հուր՝ կորուսանէ զժանգ և լինի հրավառ, նոյնպէս այր՝ որ յամենայն սրտէ զառնայ առ Աստուած, 'ի բաց զնէ զթմրութիւն, և 'ի նոր մարդ փոխարկի։

Գ. Յորժամ զաղջանալ սկսանի այր, 'ի զոյգն վաստակոց երկնչի, և մտազիւր զարտաքին մխիթարութեամբք յաձի։ Այլ յորժամ սկիզբն առնէ կատարելապէս յաղթել անձին, և զնալ զճանապարհ Աստուծոյ արիաբար, թեթև իմն թուի նմա, զոր յառաջն կարծէր ծանր։

ԳԼՈՒԽ Ե

Յաղագս ձանձրելոյ զչարի անձին.

Ա. Անմարթ է մեզ կարի իմն հաւատալ անձանց. զի բազում անգամ չիք մեր շնորհ և իմաստութիւն։ Խուն ինչ լոյս է 'ի մեզ. և զայն վաղվաղակի հեղգութեամբ կորուսանեմք։ Յոլովակի չհայիմք և 'ի

ներքին մեր կուրութիւն։ Բազում անգամ չարաչար գործեմք, և ևս չարաչար պատճառանս պատճառեմք։ Է՛ զի՝ ի կրից չարժիմք, և նախանձաւորութիւն կարծեմք։ Զայլոց մանունս յանդիմանեմք, և զմեզ բովք մեծամեծօք հարևանցիկ առնեմք։ Քաջ վաղվաղակի խորհիմք և կշռեմք, թէ զինչ յայլոց կրեմք. բայց թէ որչափ ինչ այլք՝ ի մէնջ կրեն, յայն ինչ ոչ հայիմք։ Թէ որ բարիոք և ուղիղ զիւրսն կշռէր, չզտանէր յայլս ծանր ինչ նիւթ դատողութեան։

Բ. Այր ներանձնաւոր զանձին փոյթ քան զամենեցուն վերադասէ. և որ ժրաջան անձին միտ դնէ, զիւրին է նմա զայլոց լռել։ Ոչ երբէք լինիս ներանձնայեալ և փոյթեռանդն, թէ ոչ լռես զօտարոտուց, և առաւելապէս՝ի քեզ հայիս։ Թէ Աստուծոյ և անձին միտ դնես բոլորովին, սակաւ չարժեն զքեզ, զոր ինչ արտաքոյ տեսանես։ Ո՞ւր ես, յորժամ ոչ անձին միտ դնես։ Եւ յորժամ զանձնէ հեղգացեալ՝

զամենայն հետազօտես, զինչ օգտիս։ Եթէ զխաղաղութիւն խընդրէիր և զճշմարիտ միաբանութիւն, պարտ էր քեզ՝ զամենայն իսկ 'ի վերջոյ դասել, և զքեզ միայն առաջի աչաց ունել։

Գ. Վասն այսորիկ բազումս օգտիս, եթէ պարապորդ պահես զանձն յամենայն առօրեայ հոգոց։ Եւ կարի ինն յետնեալ գտանիս, եթէ զառօրեայքս մեծ ինչ գրես։ Մի ինչ մեծ թուեսցի քեզ, մի ինչ բարձրը, մի ինչ ըղձալի, և մի ինչ ընդունելի, բայց միայն Աստուած և աստուծոյքն։ Զամենայն անոտի համարեսջիր, զինչ և մխիթարութիւն դիպեսցի քեզ յարարածոց։ Անձն որ սիրէ զԱստուած, առ Աստուծով արհամարհ համարի զամենայն։ Միայն Աստուած յաւիտենական և անչափ՝ լցուցիչ է ամենայնի, սփոփութիւն անձին, և ճշմարիտ ուրախութիւն սրտի։

ԳԼՈՒԽ Զ

Յաղագս ուրախութեան բարւոք խղճի մտաց.

Ա. Փառք առն բարւոյ՝ վկայութիւն բարիոք խղճի մտաց։ Կա՛ղ յանձին զբարւոք խիղճ մտաց, և եղիցի 'ի քեզ հանապազ ուրախութիւն։ Բարւոք խիղճ մտաց՝ բազում ինչ բերէ, և յոյժ ուրախ է 'ի վիշտս։ Զար խիղճ մտաց երկչոտ է յամենայնի և անհանգիստ։ Քաղցրութեամբ հանգիցես, թէ սիրտ քո ոչ ատգտանէ զքեզ։ Մի՛ ուրախ լինիր, բայց յորժամ բարիս գործիցես։ Զարք ոչ երբէք ունին ըստ ճշմարիտ ուրախութիւն, և ոչ զգան յանձինս զներքին խաղաղութիւն։ Զի՛ ոչ գոյ խաղաղութիւն ամպարշտաց, ասէ տէր։ Եւ թէ ասիցեն. 'ի խաղաղութեան եմք, ոչ եկեսցեն 'ի վերայ մեր չարիք, և ո՞ իշխեսցէ վնասել մեզ, մի՛ հաւա-

տար նոցա. զի յանկարծակի յա-
րիցէ բարկութիւնն Աստուծոյ, և
նանրասցին գործք նոցա, և խոր-
հուրդք նոցա կորիցեն։

Բ. Պարծել 'ի նեղութիւնս՝ չէ ինչ
ծանր սիրողին. զի այդպէս պար-
ծել՝ է պարծել 'ի խաչն տեառն։
Սուղ ինչ են փառք, զոր մարդիկ
տան և առնուն։ Զփառաց աշխար-
հի միշտ զհետ գայ տրտմութիւն։
Բարեաց փառք 'ի խիղճ մտաց նո-
ցա են, և ոչ 'ի բերան մարդկան։
Արդարոց ուրախութիւն յաղագս
Աստուծոյ է, և յԱստուած. և խըն-
դութիւն նոցա յաղագս ճշմարտու-
թեան։ Որ ճշմարիտ և յաւիտենա-
կան փառաց ցանկայ, զառժամայն
փառաց չէ ինչ նմա փոյթ։ Եւ որ
զառժամայն փառս խնդրէ, կամ 'ի
սրտէ ոչ արհամարհէ, յայտ է թէ
զերկնաւոր փառս ոչ սիրէ։ Մեծ
հանդարտութիւն սրտի ունի, ո-
րում ոչ զզովութենէ փոյթ ինչ է
և ոչ գնախատանաց։

Գ. Դիւրին է զոհ լինել և խա-
զաղական, որոյ խիղճ մտաց սուրբ

իցէ։ Զես ինչ սուրբ, եթէ զովիս. և ոչ անարգ, թէ արհամարհիս։ Որ ինչ ես՝ այն ես. և ոչ մեծ կոչել մարթիս, քան զոր Աստուած վըկայէ զքէն։ Թէ հայիս, զինչ 'ի ներքս 'ի քեզ ես, ոչ ինչ հոգաս ցիս թէ զինչ խօսիցին զքէն մարդիկ։ Մարդ հայի յերեսս, այլ Աստուած հայի 'ի սիրտ։ Մարդ հայի 'ի գործս, այլ Աստուած կշռէ ըզխորհուրդս։ Միշտ բարիս գործել և զանձն չնչին համարել, ցոյց է խոնարհ հոգւոյ։ Զառնուլ մխիթարութիւն 'ի ստեղծուածոց, մեծի մաքրութեան և ներքին վստահութեան է նշանակ։

Դ. Որ ոչինչ արտաքին վկայութիւն խնդրէ վասն իւր, յայտ է թէ բոլորովին վստահ է յԱստուած։ Չի ոչ որ զանձն ընծայեցուցանէ՝ նա է ընտրեալ, ասէ երանելին Պաւղոս, այլ զոր տէրն ընծայեցուցանէ։ Հաճոյ լինել Աստուծոյ ներքոյ, և ընդ ոչինչ ախորժակ զրաւիլ արտաքոյ, ներքին մարդոյ է։

ԳԼՈՒԽ Է.

Յաղագս սիրոյն Յիսուսի 'ի վեր քան զամենայն.

Ա. Երանի՛, որ 'ի միտ առնու զինչ իցէ սիրել զՅիսուս, և արհամարհել զանձն վասն Յիսուսի։ Պարտ է Թողուլ զսիրելին վասն սիրելւոյ. զի Յիսուսի կամք այս են, սիրելի լինել միայն 'ի վեր քան զամենայն։ Սէր ստեղծուածոց խաբեբայ է և յողղողդ. սէր Յիսուսի հաւատարիմ է և մնայուն։ Որ յարի 'ի ստեղծուածս, անցանէ ընդ անցաւորս. որ փարի զՅիսուսիս, հաստատուն մնայ յաւիտեան։ Զայն սիրեա և կալ քեզ բարեկամ, որ 'ի Թողուլ ամենեցուն ոչ Թողու զքեզ, և ոչ տայ Թոյլ կորնչել 'ի սպառ։ Յամենայնէ պարտ է քեզ երբեմն որոշիլ, եթէ կամայ և եթէ ակամայ։

Բ. Կալ զքեզ առ Յիսուսի, եթէ

'ի կեանս և եթէ 'ի մահու, և հաւա-
տարմութեան նորա արա զքեզ
յանձն, որ 'ի թողուլ ամենեցուն՝
միայն կարող է օգնել քեզ։ Սիրել-
ւոյ քոյ այսպիսի է բնութիւն, որ
օտարի ոչ տայ տեղի. այլ միայնակ
կամի զրաւականել զսիրտ քո, և
որպէս թագաւոր յաթոռ իւր բազ-
մել։ Թէ զիտէիր քաջ դատարկել
զքեզ յամենայն արարածոց, մտա-
զիւր արդեօք Քրիստոս բնակէր ընդ
քեզ։ Կորուսեալ զտցես զամենայն,
զոր ինչ արտաքոյ Յիսուսի եղեր 'ի
մարդիկ։ Մի ապաւինիր և մի յե-
նուր յեղէգն հողմավար. զի ամե-
նայն մարմին խոտ է, և ամենայն
փառք մարդոյ իբրև զծաղիկ խոտոյ
թօթափեսցի։

Դ. Դիւրաւ խաբիս, եթէ յար-
տաքին երևոյթ մարդկան միայն
հայիս։ Զի թէ յայլս խնդրես զքո
սփոփանս և զշահ, բազում անգամ
տուժիս։ Եթէ խնդրես յամենայնի
զՅիսուս, այո՝ զտցես զՅիսուս։ Ա-
պա եթէ խնդրես զանձն, զտցես և
զանձն, բայց 'ի կորուստ քո։ Զի

առաւել վնասակար է մարդ անձին՝ եթէ ոչ խնդրէ զՅիսուս, քան զաշխարհ ամենայն, և քան զամենայն զիւր հակառակորդս։

ԳԼՈՒԽ Ը

Յաղագս մտերիմ սիրելութեան Յիսուսի.

Ա. Յորժամ մերձ է Յիսուս, բարւոք է ամենայն, և չերևի ինչ դըժուարին. այլ 'ի հեռանալ Յիսուսի, խիստ է ամենայն ինչ։ Յորժամ Յիսուս ոչ խօսի 'ի սիրտ, անարգ է մխիթարութիւնն. ապա եթէ մի միայն բան խօսի Յիսուս, մեծ մխիթարութիւն 'ի վերայ գայ։ Ոչ ապաքէն Մարիամ մագդաղենացի յարեաւ վաղվաղակի 'ի տեղւոջէն՝ ուր լայր, յորժամ ասաց ցնա Մարթա. վարդապետ եկեալ է, և կոչէ զքեզ։ Երանի՜ ժամուն, յորում կոչէ Յիսուս յարտասուաց 'ի խնդութիւն հոգւոյ։ Քանի՜ ցամաքեալ և

խիստ ես առանց Յիսուսի, քանի՛ անմիտ և ընդունայն ես, եթէ խնդրես ինչ արտաքոյ Յիսուսի։ Ո՞չ մեծ է վնասդ, քան եթէ զաշխարհ ամենայն տուժէիր։

Բ. Չինչ ձեռնհաս է աշխարհ տալ քեզ՝ առանց Յիսուսի։ Լինել առանց Յիսուսի՝ ծանր դժոխք են. և լինել ընդ Յիսուսի՝ քաղցր արքայութիւն։ Եթէ ընդ քեզ է Յիսուս, ոչինչ ձեռնհաս է թշնամին վնասել։ Որ գտանէ զՅիսուս, գտանէ զգանձ բարի, նա՝ զբարի գեր քան զամենայն բարի։ Եւ որ կորուսանէ զՅիսուս, կորուսանէ բազում յոյժ, և առաւել քան զաշխարհ ամենայն։ Աղքատ է յոյժ, որ կեայ առանց Յիսուսի. և մեծատուն յոյժ, որ բարիոք է ընդ Յիսուսի։

Գ. Մեծ արուեստ է, գիտել կենաց կցորդ լինել Յիսուսի. և մեծ իմաստութիւն՝ գիտել առ իւր ունել զՅիսուս։ Լեր խոնարհ և խաղաղաբար, և եղիցի ընդ քեզ Յիսուս։ Լեր Ջերմեռանդն և հանդարտ, և մնասցէ առ քեզ Յիսուս։ Վաղվա-

զակի իսկ հնար է հալածել քեզ զՅիսուս, և զչնորհս նորա կորուսանել, եթէ յօժարեսցիս յարտաքինս խոտորել։ Եւ թէ զնա հալածեցեր և կորուսեր, յո՞ դիմեսցես, և որո՞յ բարեկամի՝ ի խնդիր լինիցիս։ Առանց բարեկամի չէ քեզ հնար բարիոք կեալ. և թէ ոչ եղիցի քեզ Յիսուս առաւել քան զամենայն բարեկամ, լիցիս տրտում յոյժ և լքեալ։ Ապա անմտութիւն գործես, եթէ յայլ ոք ապաւինիս կամ ուրախ լինիս։ Ընտրեա առաւել զաշխարհ ամենայն ունել քեզ ոսոխ, քան թէ զՅիսուս բարկացեալ։ Ապա յամենայն սիրելեաց միայն Յիսուս լիցի քո հարազատ սիրելի։

Դ. Սիրեսջիր զամենայն վասն Յիսուսի, այլ զՅիսուս վասն իւր։ Միայն Յիսուս Քրիստոս դեր՝ ի վերայ է սիրելի, զի միայն զտանի բարի և հաւատարիմ քան զամենայն բարեկամս։ Վասն նորա և՝ ի նմա սիրելի լիցին քեզ եթէ բարեկամք և եթէ թշնամիք. և վասն ամենե-

ցուն սոցա կաց յաղօթս, զի ամենեքին զնա ծանիցեն և սիրեսցեն։ Մի ցանկար առանձինն իմն գովեստ կամ՝ սէր ընդունել. զի այդ Աստուծոյ միայն է, որում՝ չիք ոք նմանող։ Մի յօժարեսցիս, թէ ոք առ քեզ 'ի սրտի իւրում անձուկ ունիցի, և մի զու ընդ ումեք անձուկ սիրոյ կալցիս. այլ Յիսուս լիցի 'ի քեզ, և յամենայն այր բարի։

Ե. Լեր մաքուր և ազատ 'ի ներքոյ, առանց ինչ ընդ արարածս ողեխառնութեան։ Պարտ է քեզ մերկիկ լինել, և սիրտ մաքուր առ Աստուած ունել, եթէ կամիս ժամ առնուլ և տեսանել զի քաղցր է տէր։ Եւ արդարև ոչ լիցի քեզ այդմ ժամանել, թէ ոչ շնորհ նորա կանխեսցէ և ձգեսցէ զքեզ. զի յամենայնէ թափուր լեալ և զերծ, միայնոյ ընդ միայնում միաւորեսցիս։ Զի 'ի զալ շնորհին Աստուծոյ առ մարդ, կարող լինի նա ամենայնի. և 'ի հեռանալ նորա, չքաւորի և տկարանայ, և որպէս թէ 'ի տանջանս մատնի։ Յայսմ ամենայնի չէ պարտ նմա

լքանել և յուսահատել. այլ կամացն Աստուծոյ երկայնամտել. և ամենայնի, որ 'ի վերայ դայ, համբերել 'ի զովեստ Յիսուսի Քրիստոսի։ Զի յետ ձմերայնի գայ ամառն, յետ գիշերի տիւ, և յետ մրրկի պարզութիւն օդոց։

ԳԼՈՒԽ Թ

Յաղագս պակասութեան ամենայն սփոփանաց.

Ա. Զէ ինչ ծանր զմարդկային սփոփանս արհամարհել, յորժամ առընթեր կայ աստուածայինն։ Մեծ է և յոյժ մեծ, եթէ 'ի մարդկայնոց և եթէ յաստուածայնոց վրէպ լինել սփոփանաց, և 'ի պատիւ Աստուծոյ մտադիր համբերել վտարանդութեան սրտի, և ոչ յիրս ինչ խնդրել զանձն, և ոչ յիւրն հայել արժանաւորութիւն։ Զինչ մեծ է, եթէ զուարթ իցես և փոյթեսանդն 'ի գալ շնորհի. այդ ժամ ամենեցուն

է ըղձալի։ Խնդամիտ ձիավարէ, զոր
չնորհք Աստուծոյ բարձեալ տանին։
Եւ զինչ զարմանք են, թէ չզգայ
ինչ ծանրութիւն, որ բարձեալ բե-
րի յամենակալէն, և որում առաջ-
նորդէ առաջնորդացն առաջնորդ։

Բ. Մտադիր բերիմք 'ի սիր-
փանս, և գժուարին է մարդոյ մեր-
կանալ յանձնէ։ Յաղթեաց սուրբ
վկայն Լաւրենտիոս աշխարհի, ընդ
իւրում քահանայի. զի զամենայն
զրդանս աշխարհի արհամարհեաց.
և այնմ ևս զի բարձաւ յիւրմէ մեծ
քահանայապետն Աստուծոյ Քսես-
տոս՝ զոր յոյժ սիրէր, վասն սիրոյն
Քրիստոսի հեզութեամբ տարաւ։
Ապա սիրով արարչին՝ մարդկային
սիրոյ յաղթեաց, և փոխանակ մարդ-
կային սիրոյ՝ զաստուածային
հաճոյսն ընտրեաց։ Ուստի և դու
զկարևոր և զսիրելի քո բարեկամ
վասն Աստուծոյ սիրոյն թողուլ։ Եւ
մի ինչ զժգոհեսցիս, յորժամ էբեալ
թողցիս 'ի բարեկամէ, զիտելով թէ
պարտ է ամենեցուն մեզ հուսկ ու-
բեմն մեկնել 'ի միմեանց։

Դ. Պիտոյ է մարդոյ բաղումն և ընդերկար պատերազմել յինքեան, մինչև ուսցի լիով յաղթել անձին, և զամենայն զիւր ախորժակս ճգել յԱստուած։ Յորժամ զանձինն հոգայ մարդ, զիւրաւ զթէ 'ի մարդկային մխիթարութիւնս։ Այլ որ ճշմարիտ սիրողն է Քրիստոսի, և ժրաջան հետամուտ առաքինութեանց, ոչ անձնատուր լինի 'ի մխիթարութիւնս, և ոչ խնդրէ զայդպիսի զդայական քաղցրութիւնս. այլ ձեռնարկէ 'ի մարդս արիականս, և 'ի խստամբերս ճգունս վասն Քրիստոսի։

Դ. Ապա 'ի տալ քեզ Աստուծոյ զհոգևորական մխիթարութիւն, զոհութեամբ ընկալջիր. բայց և 'ի միտ առջիր, թէ 'ի պարգևաց Աստուծոյ է այն, և ոչ 'ի քումմէ արժանաւորութենէ։ Մի հպարտանար, մի կարի խմն խնդար, և մի վստահիր 'ի անոտիս. այլ ըստ պարգևին լեր առաւել ևս խոնարհ և զգուշաւոր և երկիւղած յամենայն 'ի գործս քո։ Զի անցանէ ժամն այն,

և զհետ դայ փորձութիւն։ Ի բառ-
նիլ մխիթարութեան մի անդէն վաղ-
վաղակի յուսահատիր, այլ խոնար-
հութեամբ և երկայնմտութեամբ ա-
կընկալջիր երկնայինն այցելու-
թեան. զի կարող է Աստուած միւս-
անգամ շնորհել քեզ առաւելագոյն
ևս մխիթարութիւն։ Զէ՞ ինչ այս
նոր և օտար, որոց փորձ են ճանա-
պարհին Աստուծոյ. զի՛ի մեծամեծ
սուրբս և՛ի նախնի մարգարէս իսկ
եղև յաճախ այդպիսւոյ փոփոխու-
թեան օրինակ։

Ե. Վասն որոյ ոմն՛ի գալ շնոր-
հաց՝ ասէր. Ես ասացի՛ի բարե-
կենդանութեան իմում, թէ ոչ սա-
սանեցայց յաւիտեան։ Իսկ թէ զինչ
՛ի մեկնել շնորհաց զդայր յանձին,
՛ի վերայ բերէ ասելով. Դարձուցեր
զերեսս քո յինէն, և ես եղէ խռո-
վեալ։ Սակայն և այնպէս յայսմ
ամենայնի ինչ ոչ լքանի, այլ ստէպ
աղաչէ զտէր և ասէ. Ա՛ռ քեզ տէր
կարդացի, և առ Աստուած իմ ա-
ղաղակեցի։ Ապա զիւրոց աղօթից
պտուղ ընկալեալ, վասն լսելի լի-

նելոյ իւրոյ վկայէ ասելով. Լուա՛ ինձ տէր, և ողորմեցա՛, և տէր եղև՛ իմ օգնական։ Եւ ի՛. Դարձոյց, ա՛սէ, զսուգ իմ յուրախութիւն, և զերծ յինէն զքուրձ, և ինձ զգեցոյց զուրախութիւն։ Այդ եթէ այս անցք անցին ընդ մեծամեծս 'ի սրբոց, ապա անմարթ է յուսահատել մեզ տկարացս և աղքատաց, եթէ երբեմն յեռանդեան լինիմք, և երբեմն 'ի հովութեան։ Զի հոգին գայ և զընայ ըստ հաճոյից կամաց իւրոց։ Վասն որոյ ասէ երանելին Յոբ. Այց առնես նմա առաւօտու, և անդէն փորձես զնա։

Զ. Իսկ յինչ յուսայցեմ, կամ յինչ ապաւինիցիմ, բայց միայն յանբաւ մարդասիրութիւնն Աստուծոյ, և միայն 'ի յոյս երկնային չնորհաց։ Զի թէպէտ և արք բարիք առ ինև իցեն, թէպէտ և Ջերմեռանդն եղբարք կամ մտերիմ բարեկամք, թէպէտ և զերք սուրբք և ճառք հոգեպատումք, թէպէտ և քաղցր երգք և օրհնութիւնք, այդ ամենայն սակաւ օգտէ ինձ և սա-

կաւ քաղցրանայ, ցորչափ լքեալ կամ 'ի շնորհաց և թողեալ յիմումն աղքատութեան։ Եւ յայնժամ չկք լաւագոյն հնար քան զերկայնմտութիւն, և քան զանձին 'ի կամս Աստուծոյ յանձնարարութիւն։

Է. Ոչ զոմի երբէք զոք այնպէս կրօնասէր և ջերմեռանդն, որ չունէր երբեմն ցամաքութիւն շնորհաց, կամ չզգայր նուազումն եռանդեան։ Ոչ ոք 'ի սրբոց այնպէս 'ի բարձունս յափշտակեցաւ և լուսաւորեցաւ, որ յառաջ կամ զկնի չփորձեցաւ։ Զի չէ արժանի նկատող լինել խորոցն Աստուծոյ, որոյ չէ առեալ զճաշակ նեղութեան վասն Աստուծոյ։ Քանզի յոլովակի հետագայ մխիթարութեան՝ յառաջընթաց փորձութիւնն է նշան։ Իբր զի հանդիսացելոցն 'ի փորձութիւնս, խոստացեալ լինի մխիթարութիւնն երկնային։ Որ յաղթէ, ասէ, տաց նմա ուտել 'ի փայտէն կենաց։

Ը. Իսկ տուեալ լինի մխիթարութիւնն աստուածային, զի առաւել ևս զօրասցի մարդ 'ի համբերել վըշ-

տայ։ Զկնի գայ և փորձութիւն, զի մի մեծամտեսցի ընդ բարին։ Ոչ ննջէ սատանայ, և չէ մեռեալ դեռ մարմինն. վասն այսորիկ մի զա-դարեր պատրաստել 'ի պատերազմ. զի յաջմէ և յահեկէ թշնամիք կան, որք ոչ երբէք հանգչին։

ԳԼՈՒԽ Ժ

Յաղագս գոհութեան առ շնորհս Աստուծոյ.

Ա. Զի՞ խնդրես դու հանգիստ, որ ծնար յաշխատութիւն։ Ցուր զանձն 'ի համբերութիւն, և մի 'ի մխիթարութիւնս. 'ի խաչակրութիւնս, և մի յուրախութիւն։ Ո՞վ որ յաշխարհայնոց ոչ մտագիւր ընդունէր զհոգևորականն մխիթարութիւն և զուրախութիւն, եթէ յամենայն ժամ կարողանայր 'ի ձեռս բերել։ Քանզի 'ի վեր են հոգևորական մխիթարութիւնք, քան զամենայն աշխարհական փափկութիւնս

և մարմնական հեշտութիւնս։ Զի ամենայն աշխարհային փափկութիւնք և զրգանք՝ կամ սնոտի են, և կամ զազրոտի։ Միայն հոգևոր զրգանք են բերկրականք և վայելչականք, ծնունդք առաքինութեանց, և աստուածապարգև ձիրք մաքուր մտաց։ Բայց յայսոսիկ աստուածաձիր մխիթարութիւնս՝ ոչ ոք ըստ կամս իւր յամենայն ժամ վայելել զօրէ. վասն զի ժամանակ փորձութեան ոչ յերկար լուէ։

Բ. Արդ վերնական այցելութեանս յոյժ զիմագարձի սուտ ազատութիւն մտաց, և կարի խիստ վստահութիւն յանձն։ Բարերար է Աստուած 'ի տալ զշնորհս մխիթարութեան. բայց ապերախտի մարդ, եթէ ոչ զամենայնն փոխատրէ Աստուծոյ գոհութեամբ։ Վասն այսորիկ ոչ զեղուն 'ի մեզ բարութիւնք շնորհաց, զի ապերախտ եմք տուողին, և ոչ զամենայնն անդրէն հեղումք 'ի բուն աղբիւր անդր։ Զի միշտ շնորհի է արժանի, որ զարժանին մատուցանէ շնորհակալու-

թիւն. և բառնի յամբարտաւանէն, որ ինչ խոնարհի շնորհին։

Դ. Ոչ կամիմ զմխիթարութիւն, որ բառնայ զիմ զղջութիւն. և ոչ զխորախորհուրդ միտս, որ ածէ 'ի բարձրամտութիւն։ Զի ոչ ամենայն բարձր է սուրբ, ոչ ամենայն քաղցր՝ բարի, ոչ ամենայն ցանկութիւն՝ մաքուր, և ոչ ամենայն սիրելի՝ աստուածահաճոյ։ Մտաղիւր ընդունիմ զայն շնորհ՝ որով յամենայնի առաւել խոնարհ և երկիւղած գտանիմ, և 'ի չապաւինել յիս լինիմ պատրաստագոյն։ Ուսեալն 'ի պարզևէ շնորհաց, և խրատեալն զանիւ երեսդարձութեան, ոչ իշխէ բարի ինչ անձին ընծայել. այլ աղքատ և մերկ զինքն խոստովանի։ Տուր Աստուծոյ զԱստուծոյն, և կալ քեզ զքոյն. այս է, մատո Աստուծոյ շնորհս ընդ շնորհաց. այլ անձին զյանցուածսդ միայն, և զարժանի պատիժ յանցուածոցդ պատկանա-զրեսջիր։

Դ. Կալ քեզ միշտ զտորինն, և տացի քեզ վերինն. զի առանց ըս-

տորնոյն ոչ կայ վերին։ Սուրբք որք մեծ են յաչս Աստուծոյ, փոքր են յաչս անձանց. և որչափ փառաւորագոյն, այնչափ յինքեանս են խոնարհագոյն։ Ճոխացեալքն ճշմարտութեամբ և երկնային փառօք՝ չեն սնափառութեան սիրողք։ Ցաստուած հիմնեալք և հաստատեալք, ոչ իւիք զիտեն փքանալ։ Եւ որք զամենայն զաստուածաձիր բարիս Աստուծոյ տան, զփառս 'ի միմեանց ոչ խնդրեն, այլ զփառս զառ 'ի միոյն Աստուծոյ կամին, և զԱստուած յանձինս և յամենայն սուրբս 'ի վեր քան զամենայն օրհնել ըղձանան, և միշտ 'ի նոյն բերին։

Ե. Ապաւեր զոհացող 'ի փոքունս, և զմեծամեծս ընդունելոյ լիցիս արժանի։ Եղիցի քեզ փոքրն որպէս մեծ, և գուզնաքեայն որպէս առանձինն իմն պարգև։ Եթէ 'ի մեծութիւն հայիս տուողին, ոչինչ տուրք փոքր են կամ խոտան. զի չեն ինչ փոքր՝ պարգևք մեծին Աստուծոյ։ Թէպէտ և պատիժս և հարուածս 'ի վերայ ածիցէ, զոհացող լիջիր. զի

միշտ 'ի փրկութիւն մեր գործէ, զոր ինչ թողացուցանէ գալ 'ի վերայ մեր։ Որ զշնորհս Աստուծոյ պինդ ունել կամի, վասն տուեալ շնորհաց շնորհ կալցի, և վասն բարձելոցն երկայնամիտ լիցի։ Յաղօթս կացցէ, զի անդրէն տացի. զգուշաւոր և խոնարհ լիցի, զի մի կորուսցէ։

ԳԼՈՒԽ ԺԱ.

Յաղագս սակաւուրեան սիրողաց խաչին Յիսուսի.

Ա. Ունի Յիսուս արդ բազում սիրողս արքայութեան իւրոյ երկնաւորի, այլ բարձողս խաչի իւրոյ սակաւս։ Բազումս ունի փափաքողս մխիթարութեան, այլ նեղութեան՝ սակաւս։ Բազումս գտանէ հաղորդս սեղանոյ, այլ սակաւս պահոց պնդութեան։ Ամենեքին ցանկան ուրախ լինել ընդ նմա, սակաւք կամին կրել ինչ վասն նորա։ Բազումք զհետ երթան Յիսուսի մինչ 'ի բե-

կումն հային, բայց սակաւք մինչև ցարբումն չարչարանաց բաժակին։ Բազումք զաքանչելիս նորա յարզեն, սակաւք նախատանաց խաչին զկնի երթան։ Բազումք զՅիսուս սիրեն, ցորչափ ոչ պատահէ ինչ նոցա վիշտ։ Բազումք զովեն զնա և օրհնեն, ցորչափ մխիթարութիւնս ինչ 'ի նմանէ ընդունին։ Բայց թէ թաքչի Յիսուս 'ի նոցանէ և առվայր մի թողու զնոսա, կամ 'ի տրտունջ լուծանին և կամ 'ի կարի խմն լքումն։

Բ· Բայց ոչք զՅիսուս վասն Յիսուսի, և ոչ վասն իւրեանց մխիթարութեանց սիրեն, յամենայն նեղութիւնս և յանձկութիւնս սրտի իւրև 'ի մեծի մխիթարութեան օրհնեն զնա։ Թէպէտ և չտայր ինչ երբէք նոցա մխիթարութիւն, սակայն և այնպէս միշտ օրհնէին զնա, և միշտ զոհանային։

Գ· Ո՜վ, որպէս հզօր է սէրն Յիսուսի անապակ և յամենայն զիւրութենէ և 'ի սիրոյ անձին անխառն։ Ո՞չ վարձկանս կոչել արժան իցէ

զամենեսին, որք միշտ 'ի խնդիր են մխիթարութեան։ Ո՞չ անձնասէրք իցեն քան քրիստոսասէրք, որք զղիւրութիւն և զչահ անձանց միշտ խորհին։ Ո՞ւր գտանիցի ոք, որ ձրի պաշտիցէ զԱստուած։

Դ. Դուն ուրեք գտանի ոք այնպէս հոգւոր, որ յամենայնէ իցէ մերկացեալ։ Քանզի զճշմարիտ աղքատն հոգւով և զմերկիկն յամենայն արարածոց ո՞վ գտանիցէ։ Ի հեռաստանէ և 'ի վերջին սահմանաց է յարդ նորա։ Եթէ տացէ մարդ զամենայն զիւր ինչս, ահա չէ ինչ։ Թէպէտ և արասցէ ապաշխարութիւն մեծ, դեռ սակաւ ինչ է։ Թէպէտ և խելամուտ լիցի ամենայն գիտութեանց, դեռ 'ի բացէ է։ Թէպէտ և ստասցի առաքինութիւնս մեծամեծս և մեծաբորբոք եռանդն, դեռ բազում ինչ պակաս է նմա. յայտ է թէ ինչ մի, որ մեծապէս պիտոյ է նմա։ Եւ ո՞ր իցէ այն։ Զի 'ի թողուլ զամենայն թողցէ և զանձն, և յիւրմէ զլխովին ելցէ արտաքս, և ոչինչ յառանձնական սի-

րոյ կալցի առ իւր։ Եւ իբրև արաս-
ցէ զամենայն՝ զոր գիտէր թէ պարտ
է առնել, համարեսցի թէ չէ ինչ
իւր արարեալ։

Ե. Մի՛ մեծ ինչ զրեսցէ, զոր հը-
նար էր մեծ համարել. այլ ճշմար-
տութեամբ ծառայ անպիտան զան-
ձն խոստովանեսցի, որպէս և ճըշ-
մարտութիւնն ասէ. Յորժամ առնի-
ցէք զամենայն հրամայեալսն ձեզ,
ասասջիք եթէ ծառայք անպիտան
եմք։ Յայնժամ ստուգութեամբ աղ-
քատ և մերկ լիցի հոգւով, և կարող
լիցի ընդ մարգարէին ասել. Զի
միամօր և աղքատ եմ ես։ Սակայն
չիք ոք փարթամագոյն, և ոչ զօրա-
գոյն քան զայն, որ գիտէ զինքն և
զամենայն թողուլ, և՝ ի յետին նը-
աստութիւն զանձն իջուցանել։

ԳԼՈՒԽ ԺԲ

Յաղագս արքունի ձանապարհի սրբոյ խաչին.

Ա. Խիստ թուի բազմաց բանս. Ուրացիր զանձն, առ զխաչ քո, և եկ զկնի Յիսուսի։ Բայց խստագոյն ևս եղիցի լսել զվերջին զայն բան. Երթայք յինէն անիծեալք 'ի հուրն յաւիտենական։ Զի որք արդ մտադիւր լսեն և զհետ երթան ձայնի խաչին, ոչ երկիցեն յայնժամ 'ի լրոյ յաւիտենական դատապարտութեան։ Այս նշան խաչի երևեսցի յերկինս, յորժամ եկեսցէ տէր 'ի դատել։ Յայնժամ ամենայն ծառայք խաչին, որք խաչելոյն խաչակցեցան յաստի կեանս, մատիցեն առ Քրիստոս դատաւոր բազում համարձակութեամբ։

Բ. Արդ զի երկնչիս բառնալ ըզխաչն, որով լինի մուտ յարքայութիւնն։ Ի խաչի է փրկութիւն, 'ի

խաչի կեանք, 'ի խաչի պաշտպանութիւն 'ի թշնամեաց, 'ի խաչի հեղումն վերնական քաղցրութեան, 'ի խաչի զօրութիւն մտաց, 'ի խաչի խնդութիւն հոգւոյ, 'ի խաչի լրումն առաքինութեան, 'ի խաչի կատարելութիւն սրբութեան։ Զիք փրկութիւն հոգւոյ, և ոչ յոյս յարութենիցն կենաց, բայց եթէ 'ի խաչի։ Ապա բարձ զխաչ քո, և երթ զկնի Յիսուսի, և ժամանեսցես 'ի կեանսն յարութենից։ Յառաջեաց նա՝ բարձեալ զիւր խաչն, և մեռաւ վասն քոյ 'ի խաչի. զի և դու զքոյդ բարձցես զխաչ, և սխորժեսցես մեռանել 'ի խաչի։ Զի եթէ ընդ նմա մեռանիս, ընդ նմին և կեցցես. և թէ կցորդ լինիս տանջանացն, կըցորդ լիցիս և փառացն։

Գ. Ահա 'ի խաչի հաստատեալ է ամենայն, և 'ի մեռելութեան եղեալ կայ ամենայն. և չիք այլ ճանապարհ կենաց և ճշմարիտ ներքին խաղաղութեան, բայց միայն ճանապարհ խաչին, և հանապազորդ մեռելութեան։ Գնա ուր և կամիս, և ընդ-

բեա որչափ և կամիս. ոչ զտցես բարձրագոյն ճանապարհ 'ի վեր, և ապահովագոյն ճանապարհ 'ի խոնարհ, բաց 'ի ճանապարհէ սրբոյ խաչին։ Ցնորինեա և կարգեա զամենայն ըստ կամս քո, և որպէս զիարդ թուի քեզ. և միշտ զտցես ինչ, որում պարտ է համբերել կամայ կամ ակամայ. և այնպէս միշտ զտցես զխաչ։ Զի կամ ցաւս 'ի մարմնի ունիցիս, և կամ վիշտս 'ի հոգի։

Դ. Երբեմն առ յԱստուծոյ լքեալ թողցիս, երբեմն յընկերէն նեղեսցիս. և որ ևն է, բազում անգամ անձամբ անձին իսկ ծանրասցիս։ Եւ ոչ ժամանեսցես զտանել ինչ հնար զերծանելոյ, կամ սփոփանս՝ անձին զիւրելոյ. այլ ցորվայր կամք են Աստուծոյ՝ մնայ քեզ համբերել։ Զի Աստուծոյ կամք այս են, ուսանել քեզ՝ անմխիթար տանել նեղութեան, և ամենայնիւ զքեզ նմա հնազանդել, և 'ի նեղութենէ անտի առաւել ևս խոնարհ լինել։ Ոչ որ այնպէս մորմոքի 'ի չարչարանս Քրիստոսի, որպէս այն՝ որում հասանէ

զնոյնս չարչարիլ։ Ապա յամենայն ժամ՝ի պատրաստի է խաչն, և ամենայն ուրեք քեզ սպասեալ մնայ։ Զիք քեզ խուսել՝ի նմանէ, յոր վայր և ընթացիս. զի ուր և գնաս, զքեզ ընդ քեզ տանիս, և միշտ ըզքեզ գտանես։ Դարձիր՝ի վեր, դարձիր՝ի վայր, դարձիր՝ի ներքս, դարձիր արտաքս, և յամենայնի յայսմ գտցես զխաչ. և հարկ է քեզ ամենայն ուրեք համբերութիւն ունել, եթէ կամիս ստանալ զներքին խաղաղութիւն, և արժանի լինել անթառամ պսակին։

Ե. Թէ մտադիր զխաչն բառնաս, բարձցէ զքեզ և տարցի՝ի վախճան ցանկալի, ուր վախճան լիցի չարակրութեանց. զոր ոչն է տեսանել յաստիս։ Եթէ ակամայ բառնաս, բեռն առնես անձին, և զքեզ առաւել ևս ծանրաբեռնես. սակայն և այնպէս մնայ քեզ համբերել։ Եթէ մերժես զմի խաչ, անտարակոյս զայլ խաչ գտցես, և թերևս ծանրագոյն։

Զ. Կարծիցես զերծանիլ, յորմէ

ոչ ոք 'ի մարդկանէ եղև զերծ։ Ո՞
ոք 'ի սրբոց եղև յաշխարհի առանց
խաչի և նեղութեան։ Չի և ոչ տէր
մեր Յիսուս Քրիստոս եղև ժամ մի
առանց ցաւոց չարչարանաց, ցոր-
չափ եկեաց։ Պարտ էր, ասէ, Քրիս-
տոսի չարչարիլ և յառնել 'ի մեռե-
լոց, և այնպէս մտանել 'ի փառս
իւր։ Եւ զիա՞րդ դու այլ ճանապարհ
խնդրես քան զարքունի զայս ճա-
նապարհ սրբոյ խաչին։

Է. Ամենայն կեանք Քրիստոսի
խաչ էին և մարտիրոսութիւն, և
դու խնդրես քեզ հանգիստ և խըն-
դութիւն։ Խաբիս, խաբիս, թէ այլ
ինչ խնդրես, և ոչ զհամբերութիւն
'ի վիշտս. զի բովանդակ մահկանա-
ցու այս կեանք լի են թշուառու-
թեամբք, և շուրջ կնքեալ խաչիւ։
Եւ որչափ բարձրագոյն ոք յառա-
ջադէմ է ըստ հոգւոյ, այնչափ ծան-
րագոյնս յոլովակի զտանէ խաչս։
Չի աքսորանաց իւրոց պատիժ ա-
ռաւելու 'ի սիրոյ։

Ը. Բայց որ այսպէս բազմօրի-
նակ տառապի, չէ ինչ անմասն 'ի

մխիթարութենէ. զիտելով թէ մեծապէս առաւելու շահ անձին 'ի համբերութենէ անտի խուչին։ Զի 'ի բառնալ զնա յուս իւր յօժարութեամբ, ամենայն բեռն նեղութեան փոխի 'ի քաջալերութիւն աստուածային մխիթարութեան։ Եւ որչափ խոշտանգի մարմինն վշտաց, այնչափ զօրանայ հոգին ներքին շնորհաց։ Եւ երբեմն այնպէս քաջալերի անձկանաց նեղութեան և վշտաց, 'ի սակս սիրոյ նմանակցութեան խաչին Քրիստոսի, մինչև ոչ են նմա կամք լինել անցաւ և անվիշտ. զի այնչափ առաւել աստուածահաճոյ զանձն վարկանի, որչափ բազումս և զժուարակիրս վասն նորա կրել յանձն առնու։ Ոչ է այս կար զօրութեան մարդոյ, այլ շնորհն Քրիստոսի. որ այնչափ ազդէ և ներզործէ 'ի տկար մարմին, մինչև յորմէ բնապէս յաւէտ խորշի և խուսափէ՝ յայն տարփմամբ սրտի ձեռնարկել նմա, և սիրել զնա։

Թ. Ոչ ըստ մարդկան է բառնալ զխաչ, և սիրել զնա, ճնշել զմար-

մինն և ծառայեցուցանել, փախչել 'ի պատուց և մտադիր համբերել նախատանաց, զանձն արհամարհել և զարհամարհանս սխորժել, զամենայն վիշտս վնասուք յանձն առնուլ, և ոչինչ յաջողուած յաշխարհի աստ խնդրել։ Եթէ յանձն հայիս, և ոչ զմի յայսպիսեաց աստի քեզէն կարողանաս առնել։ Բայց թէ 'ի տէր յուսացեալ ես, տացի քեզ յերկնից զօրութիւն. և ընդ բռամբ նուաճեսցես զաշխարհ և զմարմին։ Այլ և ոչ 'ի բանտարկու թշնամւոյն երկիցես, եթէ հաւատոյ զինուք վառեալ ես, և խաչիւ Քրիստոսի կնքեալ։

Ժ. Այսպա զօրացիր որպէս քաջ և հաւատարիմ ծառայ Քրիստոսի 'ի բառնալ արիաբար զխաչ տեառն քոյ, որ խաչեցաւ՝ վասն սիրոյ քոյ։ Պատրաստ լեր տանել բազում վշտաց և սպէսպէս նեղութեանց 'ի ցաւալից յաստի կեանս. զի այսպէս ընդ քեզ եղիցի, ուր և լինիցիս. և ստուգութեամբ գտցես զնա, յոր վայր և թաքուցեալ իցես։ Պարտ է

այսմ այսպէս լինել. և չիք հնար զերծ լինել 'ի չարակրութենէ և 'ի ցաւոց, բայց եթէ համբերելով։ Զբաժակ տեառն ախորժելով արբ-ջիր, եթէ բարեկամ ես նորա, և մասն ընդ նմա ունել ըղձանաս։ Զմխիթարութիւնս յԱստուած յանձն արա. և արասցէ նա ընդ այսպիսիս, որպէս զիարդ առաւել հաճոյ իցէ նմա։ Այլ զու հաստատեա զքեզ 'ի համբերութիւն վրշտաց, և համարեա զնոսա մխիթարութիւն մեծ։ Զի ոչ են արժանի չարչարանք ժամանակիս հանդերձելոցն փառաց, թէպէտ և անձամբ լոկով ամենայնի համբերէիր։

ԺԱ. Իբրև ցայն վայր հասանիցես մինչև քաղցրանալ քեզ նեղութեան վասն Քրիստոսի, ծանիր թէ յաջողեալ է քեզ. զի զտեր զարքայութիւն յերկրի։ Յորչափ ծանր է քեզ չարչարիլ, և փախուստ խնդրես, չէ յաջողեալ քեզ. և զհետ եկեսցէ քոյ ամենայն ուրեք նեղութիւն, յորմէ փախչիս։

ԺԲ. Եթէ պատրաստ ես 'ի վիշտս

և 'ի մահ՝ որպէս պարտն է, վաղ յաջողեսցէ քեզ 'ի բարի, և խաղաղութիւն զտցես։ Թէպէտ և յերրորդ երկինս յափշտակեսցիս ընդ Պօղոսի, սակայն և այնպէս չես անքոյթ 'ի կրելոյ զհակառակութիւնս. զի ասէ Յիսուս. Ես ցուցից որչափ պարտ իցէ նմա չարչարիլ վասն անուան իմոյ։ Ապա կայ մնայ քեզ չարչարիլ, եթէ քաղցր է քեզ սիրել զՅիսուս, և հանապազ նմա ծառայել։

ԺԳ. Երանի՜ թէ արժանի լինէիր կրել ինչ վասն անուանն Յիսուսի. քանի՜ փառք մնային քեզ, քանի՜ ցնծութիւն լինէր ամենայն սրբոց, և քանի՜ շինութիւն ընկերաց։ Քանզի զհամբերութիւն ամենեքին գովեն, թէպէտև սակաւք համբերել կամին։ Յիրաւի էր քեզ մտադիր կրել խուն ինչ վասն Քրիստոսի, ուր բազումք ծանունս կրեն վասն աշխարհի։

ԺԴ. Գիտելով զիտասջիր, թէ պարտ է քեզ կեանս վարել մահկանս. և որչափ առաւել ոք մեռանի

անձին, այնչափ առաւել կենդանի լինի յԱստուած։ Ոչ ոք է արժանի հասանել երկնաւորաց, թէ ոչ յանձն առնու համբերել վասն Քրիստոսի վշտաց։ Զիք ինչ առաւել աստուածահաճոյ, չիք ինչ քեզ առաւել փրկական յաշխարհի աստ, որպէս մտադիր չարչարիլ վասն Քրիստոսի։ Եւ թէ 'ի ձեռս էր քոյ ընտրել, յաւէտ պարտ էր քեզ փափաքել՝ վասն Քրիստոսի վշտաց համբերել, քան 'ի բազում մխիթարութիւնս վայելել։ Զի Քրիստոսի լինէիր նմանագոյն, և ամենայն սրբոց կերպարանակից։ Զի չեն հաստատեալ առաքինութիւնք մեր, և յառաջադիմութիւն վիճակի մերոյ՝ 'ի բազում քաղցրութիւնս և 'ի մխիթարութիւնս, այլ յաւէտ 'ի համբերել մեծամեծ ծանրութեանց և նեղութեանց։

ԺԵ. Թէ արդարև կայր ինչ լաւ և օգտակար փրկութեան մարդկան քան զչարչարիլ, ցուցեալ էր արդեօք Քրիստոսի զայն բանիւ և օրինակաւ։ Քանզի և զաշակերտս որք

զհետ չոքան Նորա, և զամենեսին իսկ՝ որք ցանկացան հետևել հետոց Նորա, յայտնի՛ի խաչաբարձութիւն հրաւիրեաց, ասելով. Եթէ ոք կամի զկնի իմ գալ, ուրասցի զանձն, և առցէ զխաչ իւր, և եկեսցէ զկնի իմ։ Ապա զայս ամենայն ընթերցեալ և քննեալ, յայս կնքեսցուք զբանս. թէ բազում նեղութեամբ պարտ է մեզ մտանել յարքայութիւնն Աստուծոյ։

Կատարեցան խրատք որք ձգեան զմեզ ՚ի ներքինս.

ԳԻՐՔ ԵՐՐՈՐԴ

ՅԱՂԱԳՍ ՆԵՐՔԻՆ ՄԽԻԹԱՐՈՒԹԵԱՆ

ԳԼՈՒԽ Ա.

Յաղագս ներքին Յիսուսից Քրիստոսի առ հաւատացեալ ոգի.

Ա. ԼՈՒԱՑՑ զինչ խօսի ընդ իս տէր Աստուած։ Երանի՛ անձին՝ որ լսէ տեառն բարբառելոյ 'ի նմա, և 'ի բերանոյ նորա ընդունի զբան մխիթարութեան։ Երանի՛ ականջաց, որք զուղխս աստուածային ազդեցութեան ընդունին, և աշխարհի քրթմնջանաց ոչինչ միտ դնեն։ Երանի՛ ականջաց, որք ոչ ունկն դնեն

արտաքին հնչման ձայնի, այլ ներ-
քին ճշմարտութեան որ ուսուցանէ։
Երանի՜ աչաց, որք առ արտաքինս
փակեալք են, և առ ներքինս յա-
ռեալք։ Երանի՜, ոյք 'ի ներքինս ընդ-
մտանեն, և առ իմանալ զերկնային
գաղտնիս՝ ևս քան զևս հանապա-
զորդ կրթութեամբ Ջանան պատ-
րաստել զանձինս։ Երանի՜, ոյք
խնդամիտ պատգին յԱստուած,
և զամենայն խոչ աշխարհային յան-
ձանց 'ի բաց թօթափեն։ Ի միտ առ
զայս անձն իմ՝ և փակեա զզգայու-
թեանց քոց զրունս, զի կարող լի-
ցիս լսել զինչ խօսի 'ի քեզ տէր Ա-
ստուած քո։

Բ. Այսպէս ասէ սիրելին քո.
Փրկութիւն քո ես եմ, խաղաղու-
թիւն քո և կեանք քո։ Կալ զքեզ
առ իս, և խաղաղութիւն գտցես։
Թող զամենայն անցաւորս, և ինդ-
րեա զանանցս։ Զինչ են ժամանա-
կաւորքս, բայց եթէ պատրոդա-
կանք. և զինչ օգուտ են քեզ ամե-
նայն արարածք, եթէ լքեալ թող-
ցիս յարարչէդ։ Ապա հրաժարեալ

յամենայնէ, արարչի քում լեր հաճոյ և հաւատարիմ, զի ճշմարիտ երանութեան լինիցիս հաստատ։

ԳԼՈՒԽ Բ

Թէ ճշմարտութիւնն ներքուստ խօսի յոգեկան.

Ա. Խօսեաց տէր, զի լուիցէ ծառայ քո։ Ծառայ քո եմ ես, իմաստուն արա զիս, զի ծանեայց զվըկայութիւնս քո։ Խոնարհեցո զսիրտ իմ 'ի բանս բերանոյ քոյ. իջցեն որպէս ցօղ պատգամք քո։ Ասէին երբեմն որդիքն Իսրայէլի ցՄովսէս. Խօսեաց դու ընդ մեզ, և լուիցուք. մի՛ խօսեսցի ընդ մեզ տէր, զուցէ մեռանիցիմք։ Ոչ այսպէս, տէր, ոչ այսպէս կամ ես յաղօթս. այլ ընդ Սամուէլի մարգարէին խոնարհութեամբ և անձկանօք հայցեմ. Խօսեաց տէր, զի լուիցէ ծառայ քո։ Մի՛ խօսեսցի ընդ իս Մովսէս, կամ 'ի մարգարէից ոք. այլ դու ինքնին

խօսեաց տէր, որ ազդիչ և լուսաւորիչդ ես ամենայն մարդարէից. զի դու միայն առանց նոցա կարող ես լիով խելամուտ առնել զիս, բայց նոքա առանց քոյ ինչ ոչ օգտեսցեն։

Բ. Կարող են բարբառել, այլ ազդութիւն ոչ բերեն։ Գեղեցիկս խօսին, այլ 'ի լռել քո՝ զսիրտս ոչ բորբոքեն։ Գիրս աւանդեն, այլ դու բանաս զմիտս։ Խորհուրդս քարոզեն, այլ դու յայտնես զիմաստս կնքելոց։ Պատուէրս առաջի առնեն, այլ դու օգնես 'ի կատարումն։ Ճանապարհ ցուցանեն, այլ դու զօրացուցանես 'ի գնացս։ Նոքա արտաքոյ միայն գործեն, այլ դու ըզսիրտս իմաստուն առնես և լուսաւորես։ Նոքա արտաքոյ ուղղանեն, այլ դու արգասաւորութիւն շնորհես լսելեաց։

Գ. Ապա մի խօսեսցի ընդ իս Մովսէս. այլ դու տէր Աստուած իմ, ճշմարտութիւն յաւիտենական. դուցէ մեռանիցիմ և անպտուղ լինիցիմ, եթէ արտաքոյ միայն խրա-

տնալ, և ներքոյ ոչ բորբոքիցիմ. զի մի 'ի զատապարտութիւն լիցի ինձ լսել զբանն և ոչ առնել, ճանաչել և ոչ սիրել, հաւատալ և ոչ պահել։ Այլ խօսեայց տէր, զի լուիցէ ծառայ քո. քանզի բանս կենաց յաւիտենականաց ունիս։ Խօսեաց ընդ իս՝ անձին իմոյ 'ի մխիթարութիւն, և վարուց իմոց յուղղութիւն, և քեզ 'ի փառս և 'ի գովեստ և 'ի պատիւ յաւերժական։

ԳԼՈՒԽ Գ

Թէ զբանս Աստուծոյ խոնարհութեամբ պարտ է լսել. և թէ բազումք ոչ ընկնին զնոսա.

Ա. Լուր, որդեակ, իմոց քաղցր բանից, որ 'ի վեր են քան զամենայն գիտութիւն փիլիսոփայից և իմաստնոց աշխարհիս։ Բանք իմ հոգի են և կեանք, և չեն մարդկային մտաւք կշռելի։ Չէ մարթ ճգել զնոսա 'ի սնոտի հաճոյս. այլ լուս-

թեամբ լսել արժան է, և ամենայն խոնարհութեամբ և մեծափափաք տենչմամբ ընդունել։

Բ. Եւ ասացի. Երանի՛ մարդոյ՝ զոր խրատես դու տէր, և յօրինաց քոց ուսուցանես դու նմա. զի ցաւուցես դու նմա զաւուրս չարութեան, և մի ապականեսցի յերկրի։

Գ. Ես, ասէ տէր, ուսուցի մարգարէից 'ի սկզբանէ, և մինչև ցարդ ոչ դադարեմ խօսել առ ամենեսին. բայց բազումք խուլ են առ ձայն իմ և խիստ։ Բազումք մտադիւր լսեն աշխարհի՝ քան Աստուծոյ. զիւրաքանչիւր զհետ երթան կամաց մարմնոյ իւրեանց՝ քան հաճոյիցն Աստուծոյ։ Խոստանայ աշխարհ զժամանակաւորս և զչնչինս, և ծառայեն նմա տարփմամբ սրտի. խոստանամ ես զմեծամեծս և զյաւիտենականս, և թմրեալ են սիրտք մահկանացուաց։ Ո՞վ այնպէս փութաջան ծառայէ և հնազանդի ինձ յամենայնի, որպէս ծառայեն աշխարհի և տեարց նորա։ Յամօթ լեր, Սիդոնն. ասէ ծով։ Եւ թէ զվասն էրն հարցանես, լուր։

վասն զոյգն շահավաճառի՝ երկար ճանապարհ հատանի. վասն յաւիտենիցն կենաց՝ բազում անգամ և ոչ քայլ ոտին փոխի։ Անարգ զինք խնդրին, վասն միոյ փողոյ երբեմն չարաչար կազեն. վասն անոտի իրաց և զոյգն խոստման՝ զցայգ և զցերեկ տաժանիլ յանձն առնուն։

Դ. Այլ աւաղ, զի վասն անվտփոխ բարւոյ և վասն անզին հատուցման, վասն ծայրագոյն պատուոյ և անզրաւ փառաց, առ սակաւ մի աշխատութիւն տաղտկան։ Ապա յամօթ լեր ծառայ հեղգ և զանգատաւոր. զի նոքա պատրաստագոյն զտանին 'ի կորուստ, քան թէ զու 'ի կեանս։ Առաւել խնդան նոքա ընդ ունայնութիւն, քան թէ զու ընդ ճշմարտութիւն։ Այն զի նոքա 'ի յուսոյ իւրեանց երբէք վրէպ զտանին. այլ խոստումն իմ՝ ոչ զոք խաբէ, և ոչ զյուսացեալս յիս արձակէ ունայն։ Զոր խոստացայն, տաց. զոր ասացի, լցուցից. միայն թէ իսպառ կացցէ մնասցէ որ հաւատարիմ 'ի սէր իմ։ Պարզևատու

եմ ես ամենայն բարեաց, և քաջ հանդիսաւոր ամենայն առաքինեաց։

Ե. Գրեա զբանս իմ 'ի սիրտ քո, և ուշի ուշով խոկա, զի 'ի ժամանակի փորձութեան պիտոյ եղիցին քեզ յոյժ։ Զոր յընթեռնուլդ չիմանաս, ծանիցես յաւուր այցելութեան։ Կրկնակի սովոր եմ այց առնել ի մոց սիրելեաց. փորձութեամբ և մխիթարութեամբ։ Եւ երկուս զասս տամ նոցա զօրհնանապազ. մի՝ զախտս նոցա կշտամբելով, երկրորդ՝ յաճումն առաքինութեանց զնոսա խրախուսելով։ Որ ունի զբանս իմ, և ոչ պահէ զնոսա, զոյ՝ որ զատի զնա յաւուրն յետնում։

Աղօթք 'ի հայցել զշնորհս առաքինական.

Զ. Տէր Աստուած իմ, դու ես ամենայն բարութիւն իմ։ Եւ ո՞ եմ ես, զի խմսեցիս խօսել ընդ քեզ։ Ես աղքատին ծառայ քո եմ և չնչին որդն, աղքատին և արհամարհ առաւել քան զոր գիտես և համար-

ձակիմն ասել։ Այլ դու տէր, յի-
շեա զի ոչինչ եմ, ոչինչ ունիմ, և
ոչինչ իմիք ձեռնհաս եմ։ Դու միայն
ես բարի, արդար, և սուրբ. դու ա-
մենայնի կարող ես, զամենայն շը-
նորհես, զամենայն լնուս, զմեղա-
ւորս միայն թողեալ թափուրս։ Յի-
շեա զգթութիւնս քո, և լցո զսիրտ
իմ շնորհօք քո. զի ոչ կամիս զոր-
ծոց քոց լինել թափուրս։

Է. Զիարդ կարող իցեմ տանել
ինձ յաստի կեանս, թէ ոչ զօրա-
ցուսցէ զիս ողորմութեան քո շնորհ։
Մի դարձուցաներ զերեսս քո յի-
նէն. մի յապաղեր զայցելութիւն
քո, և մի՛ ի բացէ առներ զմխիթա-
րութիւն քո. զի մի լիցի քեզ անձն
իմ որպէս երկիր անջրդի։ Տէր ուսո
ինձ առնել զկամս քո. ուսո ինձ
առաջի քո արժանապէս և խոնար-
հութեամբ գնալ. զի իմաստութիւն
իմ դու ես, որ ճշմարտութեամբ զիս
ճանաչես, և ծանեար յառաջ քան
զլինելն աշխարհի, և մինչչև ծնեալ
էր իմ յաշխարհ։

ԳԼՈՒԽ Դ

Թէ պարտ է ճշմարտութեամբ և խոնարհութեամբ գնալ առաջի Աստուծոյ.

Ա. Որդեակ, գնա առաջի իմ ճշմարտութեամբ, և միամտութեամբ սրտի խնդրեա զիս հանապազ։ Որ գնայ առաջի իմ ճշմարտութեամբ, անքոյթ լիցի յարշաւանաց չարաց. և ճշմարտութիւնն ազատեսցէ զնա 'ի մոլորեցուցչաց և 'ի բամբասանաց անիրաւաց։ Եթէ ճշմարտութիւնն զքեզ ազատեսցէ, ճշմարիտ ազատ լինիցիս. և ոչինչ փոյթ լիցի քեզ զսնոտի խօսիլ մարդկան։

Բ. Ճշմարտիւ այդ այդպէս է տէր. և ազաչեմ, զի որպէս ասեպ, նոյնպէս եղիցի ընդ իս։ Ճշմարտութիւն քո ուսուցցէ զիս. նա զիս պահեսցէ, և մինչև 'ի փրկական կատարումն հասուցցէ։ Նա զիս ապրեցուցցէ յամենայն ախորժակաց չա-

բաց, և յանկարգ սիրոյ. և գնացից ընդ քեզ յանդորր ազատութեան սրտի։

Դ. Եւ ուսուցից քեզ, ասէ ճըշմարտութիւնն, զուղիղն և զհաճոյն առաջի իմ։ Զմտաւ ած ըզմեզս քո բազում թախծութեամբ և տրամութեամբ. և մի երբէք հաճարեսցիս զանձն լինել ինչ 'ի սակս գործոց բարեաց։ Ահա մեզաւոր ես դու, և բազում կրիւք զդաձեալ և պաշարեալ։ Ինքնին միշտ 'ի չքութիւն գնաս. վաղ անկանիս, վաղվաղակի յաղթիս, վազվաղ խոռվիս, և 'ի նոյն լքեալ լուծանիս։ Զկայ ինչ քո՝ պարծել նովաւ. այլ բազում ինչ՝ յորմէ պարտիս խոնարհել. վասն զի տկար ես ուելի քան զկար իմանալոյ քոյ։

Դ. Ապա մի ինչ քեզ մեծ թուեսցի յամենայնէ զոր առնես։ Մի ինչ պատուական և սքանչելի և արժանայարգ քեզ երևեսցի. մի ինչ բարձրը, մի ինչ արժանագով և ցանկալի, բայց որ անանցն իցէ։ Քաղցրասցի քեզ քան զամենայն՝ ճշմարտու-

թիւնն յաւիտենական. զառնասցի քեզ հանապազ քո յետին անարգութիւն։ Մի լիցի քեզ ուստեք այն պէս երկնչել և խորշել և փախչել, որպէս յախտից քոց և 'ի մեղաց. յորոց առաւել պարտ է քեզ զգուշանալ՝ քան յամենայն վնասուց։ Են որք ոչ միամտութեամբ գնան առաջի իմ, այլ ընդվայրաքննութեամբ և յանդգնութեամբ կամին զգաղտնիս իմ զիտել, և զխորս Աստուծոյ իմանալ, թողեալ զանձանց և զփրկութեան իւրեանց զփոյթ։ Այսպիսիք բազում անգամ անկանին 'ի մեծամեծ փորձութիւնս և 'ի մեղս, վասն ամբարտաւանութեան իւրեանց և ընդվայրաքննութեան, 'ի դարձուցանել ինձ զերեսս իմ 'ի նոցանէ։

Ե. Երկիր 'ի զատաստանացն Աստուծոյ. զարհուրեսջիր 'ի ցասմանէ ամենակալին։ Մի քններ զգործս բարձրելոյն. այլ քննեա զանօրէնութիւնս քո, թէ քանի քանի յանցեար և 'ի գործոց բարեաց հեղգացար։ Ոմանք փոյթեռանդն են միայն

'ի գիրս, ոմանք 'ի պատկերս, և ոմանք յարտաքին նշանս և 'ի ձևս։ Ոմանց 'ի շրթունս եմ միայն, այլ ոչ նոյնպէս 'ի սրտի։ Են և այլք, որք մտօք լուսաւորեալք և սրտիւ մաքրեալք՝ հանապազ յաւիտենական գանձն փափաքեն։ Ծանր է նոցա լսել զերկրաւորաց, և դառն է նոցա կարեաց բնութեան ծառայել. սոքա իմանան զինչ հոգին ճշմարտութեան խօսի 'ի նոսա։ Չի ուսուցանէ նոցա զերկրաւորս արհամարհել, և զերկնայինս սիրել. զաշխարհէ անփոյթ լինել, և զցայգ և զցերեկ երկնից արքայութեանն փափաքել։

ԳԼՈՒԽ Ե

Յաղագս սքանչելի պտղոյ աստուածային սիրոյ.

Ա. Օրհնեմ զքեզ հայր երկնաւոր, հայր տեառն իմոյ Յիսուսի Քրիստոսի, որ հաճեցար յիշել զիս զոբանակս։ Հայր գթութեանց, և Աս-

տուած ամենայն մխիթարութեան, զոհանամ զքէն, զի զիս զանարժանս ամենայն մխիթարութեան՝ զօրացուցանես երբեմն մխիթարութեամբ քո։ Օրհնեմ զքեզ միշտ և փառաւորեմ ընդ միածնի որդւոյ քոյ և ընդ հոգւոյդ սրբոյ մխիթարչի յաւիտեանս յաւիտենից։ Եւ արդ տէր Աստուած մարդասէր, յեկաւորել քո 'ի սիրտ իմ, ցնծացեն ամենայն ոսկերք իմ։ Դու փառք իմ, և ցնծութիւն սրտի իմոյ. դու յոյս իմ և ապաւէն իմ յաւուր նեղութեան իմոյ։

Բ. Բայց քանզի դեռ տկար եմ 'ի սէր, և անկատար յառաքինութեան, հարկ է ինձ 'ի քէն քաջալերիլ և մխիթարիլ. վասն այսորիկ այց արա ինձ ստէպ, և ուստ ինձ իմաստս սուրբս։ Ապրեցո զիս յախտից չարաց, և բժշկեա զսիրտ իմ յամենայն անկարգ ըղձից. զի ներքոյ առողջացեալ և քաջ մաքրեալ, եղէց զիպող 'ի սիրել, արիացեալ 'ի համբերել, և անվեհեր 'ի հանապազորդել։

Գ. Մեծ է սէր, և մեծ բարի, որ միայն թեթևացուցանէ զամենայն ծանրաբեռն, և կրէ հաւասար զամենայն անհաւասար։ Զի զբեռնն բառնայ անբեռն, և զամենայն զառն՝ առնէ քաղցր և անոյշ։ Ազնուական է սէրն Յիսուսի. խրախուսէ՝ի գործել զմեծամեծս, և յորդորէ միշտ ըղձանալ կատարելագունից։ Սէրն կամի՝ի վեր բերել, և չառնու յանձն՝ի ստորինս փակիլ։ Սէրն կամի ազատ լինել, և յամենայն աշխարհային ախորժակաց օտար. զի մի ներքին նորա տեսութիւն խափանեսցի, մի անցաւոր ինչ զիւրութեամբ թակարթեսցի, կամ վշտաբ վտանկեսցի։ Քան զսէր չիք ինչ քաղցր, չիք ինչ զօրաւոր, չիք ինչ վսեմական, չիք ինչ անգորոր, չիք ինչ բերկրական, չիք ինչ պատարուն, չիք ինչ լաւ քան զնա յերկինս և յերկրի։ Զի սէր յԱստուծոյ ծնեալ է, և չիք նըմա հանգչել՝ բայց միայն յԱստուած՝ի վեր քան զամենայն արարածս։

Դ. Որ սիրէն, սրանայ ընթանայ

և խայտայ. ազատ է, և ոչ կալա-
նաւորի։ Ցայ զամենայն վասն ա-
մենայնի, և ունի զամենայն յամե-
նայնի. զի 'ի մի ինչ զերակայ 'ի
վեր քան զամենայն հանդչի, յորմէ
ամենայն բարութիւն հոսէ և բղխէ։
Ոչ հայի 'ի պարգևս, այլ 'ի պար-
գևիչ անդր բերի քան յամենայն
բարութիւնս։ Սէր յոլովակի ոչ զի-
տէ զպայման, այլ քան զամենայն
պայման եռանդագին է։ Սէր ոչ
իմանայ ինչ բեռն, ոչ համարի ինչ
զվաստակս. առաւել ճկտի քան
զիւր կար, և ոչ պատճառի ինչ
անհնարութիւն. զի համարի թէ
հնար և օրէն է նմա ամենայն։ Ա-
պա բաւական է առ ամենայն, և
բազում ինչ լնու, և ձեռներէց է 'ի
կատարումն. ուր որ ոչն սիրէ, լը-
քանի և անկեալ դնի։

Ե. Սէր արթուն է. 'ի ննջել իւ-
րում ոչ 'ի քուն երթայ։ Աշխա-
տեալ՝ ոչ պարտասի, նեղեալ՝ ոչ
տագնապի, զարհուրեալ՝ ոչ խռո-
վի. այլ որպէս բոց բորբոքեալ և
ջահ վառեալ 'ի վեր ցոլանայ. և ան-

վեհեր ընդ ամենայն անցանէ։ Եթէ զք սիրէ, իմանայ զինչ այս ձայն հնչէ. մեծ բարբառ յականջս Աստուծոյ է նոյն ինքն վառեալ իղձ սրտի, որ ասէ. Աստուած իմ, սէր իմ. դու իմ ես բոլորովին, և ես քո ամենևին։

Զ. Անդորր արա ինձ 'ի սէր. զի ուսայց բերանով սրտի ճաշակել թէ որպէս քաղցր է սիրել, և 'ի սէր անդ հալիլ և լուղիլ։ Կալանաւորեցայց սիրով, ելեալ ըստ սահման անձին առ կարի եռանդեան և հիացման։ Երգեցից զերգ սիրոյ, զհետ երթայց սիրելւոյդ իմոյ 'ի բարձունս, նուաղեսցի յօրհնութիւնս քո անձն իմ խանդաղակաթ սիրով։ Սիրեցից զքեզ առաւել քան զիս, և զիս՝ միայն վասն քոյ. և զամենեսին 'ի քեզ զճշմարտապէս սիրողս քո, որպէս հրամայեն օրէնք սիրոյ առ 'ի քէն ծագեալք։

Է. Արագ է սէր և անկեղծ. բարեպաշտիկ, բերկրական և զուարճալի. զօրաւոր, համբերող, հաւատարիմ, իմաստուն, երկայնամիտ,

և արիական. որ ոչ երբէք խնդրէ զանձն։ Զի ուր խնդրէ զանձն, անդէն անկանի՝ի սիրոյ։ Շրջահայեաց է սէր, խոնարհ, և ուղիղ. ոչ թուլամորթ, ոչ թեթև, և ոչ անոտիաւէր. այլ զգաստ, ողջախոհ, հաստատուն, հանդարտ, և յամենայն զգայարանս զգուշաւոր։ Սէր հլու և հնազանդ է առաջնորդաց. յաչս անձին խոտան և արհամարհ, յաչս Աստուծոյ ջերմեռանդն և հաճոյարար. վստահացեալ և յուսացեալ միշտ՝ի նա, թէպէտ և ոչ քաղցրասցի նմա Աստուած. զի չէ ինչ անցաւ, որ կեայ՝ի սէր։

Ը. Որ ոչ է պատրաստ՝ի կրել զամենայն, և կալ՝ի կամս սիրելոյն, չէ արժանի կոչիլ սիրող։ Պարտ է սիրողի՝ զամենայն խըստութիւն և դառնութիւն վասն սիրելւոյն մտադիր յանձն առնուլ, և ոչ առ ճախող պատահարաց խոտորել՝ի նմանէ։

ԳԼՈՒԽ Զ

Յաղագս հանդիսի ձշմարիտ սիրողի.

Ա. Որդեակ, չես դու դեռ քաջ և խոհական սիրող։

Բ. Եւ զիա՞րդ տէր։

Գ. Զի վասն դոյզն ընդդիմութեան ձեռնթափ լինիս 'ի սկսելոց, և կարի իմն անձկանօք 'ի խնդիր ես մխիթարութեան։ Քաջ սիրողն պինդ կայ 'ի փորձութիւնս, և ոչ հաւատայ խորամանկ հրապուրանաց թշնամւոյն։ Որպէս հաճեալ է ընդ իս 'ի յաջողուածս, նոյնպէս չխոժոռի ընդ իս 'ի ձախորդութիւնս։

Դ. Խոհական սիրող ոչ այնչափ 'ի պարգևն հայի սիրողին, որպէս 'ի սէր տուողին։ Աւաւել հայի յիղձըս քան 'ի տուրս. և քան զսիրելին 'ի ստոր դասէ զամենայն ըստուեալս։ Ազնուական սիրող ոչ հանդչի 'ի պարգևն, այլ յիս 'ի վեր քան զամենայն պարգև։ Վասն այ-

սորիկ չէ սպառասպուռ կորուստ, և՝ թէ ուրեք երբէք ոչ որպէս կամէիրն քաղցրանաս յիս, կամ 'ի սուրբս իմ։ Ախորժակն այն բարի և քաղցր, զոր երբեմն յանձին զգաս, զործ է այժմու շնորհաց և առհաւատչեայ իմն երկնային զաւառին. յոր չէ մարթ կարի իմն վստահիլ, զի զայ և գնայ։ Պատերազմել ընդ չարաչար ամբոխմունս սրտի՝ որք դիպին, և զթելադրութիւնս արհամարհել զբանսարկուին, նշան է առաքինութեան և արժանեաց մեծաց։

Ե. Ապա մի խռովեսցեն զքեզ օտարոտի ցնորք, որ յինչևիցէ իրաց զան 'ի քեզ։ Հաստատուն կալ պառաջադրութիւն քո, և զուգիղ դիտաւորութիւն առ Աստուած։ Զեն պատրանք, եթէ երբեմն յանկարծ 'ի հիացումն յափշտակիս, և անդէն վաղվաղակի 'ի սովորական խակամտութիւն դառնաս. զի զայն ակամայ կրես՝ քան առնես։ Եւ ցորչափ անհաւան ես այնմ և դիմադարձիս, 'ի շահ են քեզ և ոչ 'ի 'ի կորուստ։

Զ. Գիտասջիր զի հին թշնամին ամենայնիւ հնարի խափանել զցանկութիւն քո 'ի բարին, և յամենայն ջերմեռանդն կրթութենէ վրիպեցուցանել, 'ի սրբոցն պաշտամանէ, յիմոց չարչարանացս յիշատակէ, 'ի մեղաց յօգտակար յիշատակութենէ, 'ի սրտի քոյ պահպանութենէ, և 'ի հաստատուն առաջադրութենէ յառաջադէմ լինելոյ յառաքինութեան։ Բազում խորհուրդս չարաչարս 'ի ներքս ածէ, զի զքեզ տաղտկացուսցէ և զարհուրեցուսցէ. և զի 'ի բաց արասցէ յաղօթից և 'ի սուրբ ընթերցուածոց։ Զէ նմա հաճոյ խոնարհ խոստովանութիւն. և թէ հնար էր, 'ի հաղորդութենէ իսկ հրաժարեցուցանէր։ Մի հաւատար նմա, և մի ինչ փոյթ լիցի քեզ վասն նորա, թէպէտ և յոլովակի որոգայթս լարեսցէ քեզ խաբէութեան։

Նմա զրեսջիր, յորժամ չարիս և պղծութիւնս քեզ յիշեցուցանէ։ Ասասջիր. երթ յետս իմ այսդ պիղծ, յամօթ լեր թշուառական. զարշելի

ես դու յոյժ, որ այդպիսի գարշանս
յականջս իմ հեղուս։ Ի բաց կաց
յինէն, մոլորեցուցիչդ չար. չիք քո
ընդ իս մասն, այլ Յիսուս եղիցի
ընդ իս որպէս քաջ պատերազմող.
և դու լիցիս ամաչեցեալ։ Առաւել
ընտրեմ մեռանել, և զամենայն
պատիժ պատուհասի յանձն առ-
նուլ, քան զիջանել քեզ 'ի հաւա-
նութիւն։ Լռեա և կարկեաց, ոչ
ես լսեմ քեզ, թէպէտ և բազում
աշխատութիւնս ինձ հնարեացիս։
Տէր լոյս իմ և կեանք իմ, ես յում-
մէ երկեայց։ Թէ յարիցէ 'ի վերայ
իմ ճակատամարտ, ոչ երկիցէ սիրտ
իմ։ Տէր օգնական իմ և փրկիչ իմ։

Է. Մարտիր որպէս քաջ զօրա-
կան. և թէ ուրեք երբէք 'ի տկա-
րութենէ անկանիս, անդրէն քա-
ջալերութիւն զգեցիր աւելի քան
զառաջինն, յուսացեալ յառաւե-
լութիւն շնորհաց իմոց. և զգոյշ լեր
յոյժ ի սնոտի հաճոյից, և յամբար-
տաւանութենէ։ Վասն այսորիկ
բազումք 'ի մոլորութիւն վարին, և
սահին երբեմն 'ի կուրութիւն իբր

անբժշկական։ Այլ քեզ 'ի զգաստութիւն լիցի և 'ի հանապազորդ խոնարհութիւն՝ այս կրծանումն ամբարտաւանից, որք անմտութեամբ վստահանան յանձինս։

ԳԼՈՒԽ Է.

Յաղագս ծածկելոյ զշնորհս ընդ պահպանողութեամբ խոնարհողական.

Ա. Որդեակ լաւ է քեզ և աներկեան ծածկել զշնորհս եռանդան, և չհպարտանալ յանձն. չառնել զնմանէ զրոյց բազում, և ոչ ստէպ մտաբերել. այլ լինել արհամարհ յաչս անձին, և որպէս անարժան այնմ պարգևի՝ երկնչել։ Մի կարի ապաւինիր յախորժակ, որ վաղ փոխի 'ի հակառակն։ Զմտաւ ած 'ի շնորհի անդ, քանի թշուառ և չքաւոր լինէիր առանց շնորհաց։ Զէ 'ի նմա այնչափ հոգևոր կենաց օգուտ, յորժամ զմխիթարութեան ունիցիս շնորհս. այլ յորժամ խո-

նարհութեամբ և անձին ուրացու-
թեամբ և համբերութեամբ ժուժկա-
լեսցես 'ի բառնալ նորա, մինչև
յայնժամ չթուլանալ քեզ 'ի փութոյ
աղօթից, և չլքանել ամենևին յայլ
սովորական քոյ գործոց. այլ մտա-
դիր 'ի քո կողմանէ առնել՝ որչափ
ինչ ձեռնհաս ես, և ոչ առ ցամա-
քութեան և նեղսրտութեան քո զոր
ղղաս՝ ամենևին հեղգալ։

Բ. Քանզի բազումք այնք են, որ
յորժամ ոչ յաջողէ նոցա, անդէն
կարճամտին և լքանին։ Զի ոչ միշտ
'ի ձեռս է մարդոյ ճանապարհ նո-
րա. այլ Աստուծոյ է տալ և մխի-
թարել երբ կամի, որչափ կամի, և
ում կամի, որպէս զիարդ հաճոյ է
նմա, և ոչ աւելի։ Անդրոյչք ոմանք
'ի սակս շնորհի եռանդան՝ կործա-
նեցին զանձինս. զի զործել կամե-
ցան աւելի քան զկար իւրեանց,
ոչինչ հայեցեալ յիւրեանց փանա-
քութեանն չափ. այլ զհետ երթեալ
յաւէտ յօժարութեան սրտի, քան
բանին դատաստանի։ Եւ զի ձեռ-
ներբէց եղեն 'ի մեծամեծս քան զոր

հաճոյն էր Աստուծոյ, վասն այսո-
րիկ վաղ կորուսին զՆորհս։ Եղեն
աղքատք և խոտանք և ընկեցիկք՝
որոց եղեալ էր յերկինս զբոյն իւր-
եանց. զի խոնարհեալք և չքաւո-
րեալք, ուսցին ոչ իւրեանց թեօք
թռչել, այլ 'ի հովանի թեոց իմոց
յուսալ։ Նորամուտքն և անհմուտք
ճանապարհի տեառն թէ ոչ խոր-
հրդով խոհականաց առաջնորդին,
զիւրաւ պատրին և զգետնին։

Դ. Ապա թէ կամիցին զիւրեանց
կարծեաց զհետ երթալ քան հմտա-
ցելոց հաւատալ, եղիցին ելք նոցա
վտանգաւորք, եթէ չառնուցուն
յանձն յիւրեանց մտաց 'ի բաց հրա-
ժարել։ Որք յաչս անճանաց են իմաս-
տունք, զժուարաւ խոնարհին ընդ
առաջնորդութեամբ այլոց։ Լաւ է
սակաւ ինչ գիտել խոնարհութեամբ
և փոքրիմաց մտօք, քան մեծագանձ
ունել գիտութիւն՝ հանդերձ սնոտի
հաճութեամբ։ Լաւ է թէ սակաւ ի-
ցէ քո քան բազում, ուստի մարթէ
քեզ ձգիլ յամբարտաւանութիւն։
Ոչ իմաստութեամբ գործէ, որ զբլ-

խովին զանձն ուրախութեան տայ, մոռացեալ զառաջին զիւր չքաւորութիւն, և զսուրբ երկիւղ տեառն՝ որ զառեալ չնորհն խիթայ կորուսանել։ Զէ և քաջախոհ, որ 'ի ժամանակի նեղութեան և ամենայն ծանրութեան կարի իմն լքանի, և ոչ որպէս արժանն է՝ քաջայոյս է յիս։

Դ. Որ 'ի ժամանակի խաղաղութեան անհոգանայ, յոլովակի 'ի ժամ սատերազմի կարի իմն լքեալ և վատասիրտ զտանի։ Եթէ զիտէիր հանապազ խոնարհ և արհամարհ լինել յաչս անձին, և ոգւոյ քում հանդարտութեամբ առաջնորդել, ոչ այդպէս վաղվաղակի անկանէիր 'ի վտանգ և 'ի խիղճ։ Քաջ խորհուրդ է 'ի լինել եռանդան սրտի՝ խորհել քեզ, թէ զինչ լինիցի 'ի հնանալ լուսոյ։ Որ թէ զիպեսցի, զայն խորհեաց թէ կայ հնար վերադարձի լուսոյ, զոր 'ի զգուշաւորութիւն քո և 'ի փառս իմ բարձի առ ժամանակ մի։

Ե. Լաւ է յոլովակի փորձ այդ-

պիսի ; քան հանապազ 'ի յաջողուածս լինել ըստ քոց կամաց : Զի յարգ առաքինութեանց ոչ ըստ այնմ ինչ է , թէ որ բազում տեսիլս կամ մխիթարութիւնս ունիցի , կամ քաջահմուտ զրոց իցէ , կամ 'ի գերակայ աստիճան տեղի ունիցի . այլ եթէ 'ի խոնարհութեան հաստատեալն իցէ , և աստուածային սիրով լցեալ . եթէ զփառս Աստուծոյ միայն յամենայնի խնդրեսցէ . եթէ զանձն ոչինչ համարեսցի և ճշմարտութեամբ արհամարհեսցէ , և յայլոց ևս զարհամարհանս և զոտնհարութիւն քան զպատիւ խնդամիտ ընկալցի :

ԳԼՈՒԽ Ը.

Յաղագս նուռաստ հաւատարման անձին առաջի Աստուծոյ .

Ա. Խօսեցայց ընդ տեառն իմում, բայց ես հող եմ և մոխիր : Եթէ առաւել ինչ զանձն համարեցայց , ա-

հա ընդդէմ դառնաս դու ինձ. և ճշմարտութեամբ վկայեն անօրէ-նութիւնք իմ, և չունիմ տալ պա-տասխանի։ Ապա եթէ անարդեցիս զիս և արհամարհեցիս, և յամենայն պարծանաց անձին կարճեցայց, և (որպէս եմս իսկ) հողոյ հաւասարե-ցայց, խնայեսցեն յիս շնորհք քո, և ծագեսցէ 'ի սիրտ իմ լոյս քո. և ամենայն յարդ անձին, թէպէտ և չնչին, 'ի ձոր չքութեան իմոյ սու-զեսցի և կորիցէ իսպառ։ Անդ ցու-ցանես զիս ինձ, զինչ եմ, զինչ էի, և ցոր վայր հասի։ Քանզի ոչ-ինչ եմ, և ոչ գիտացի։ Եթէ թողա-նամ յիս, ահա ոչինչ եմ և զլխո-վին ապիկար. ապա թէ յիս հայիս, անդէն զօրանամ և նոր խնդութիւն զգենում։ Եւ զարմանք մեծ այն են, զի այսպէս յանկարծ վերբերիմ, և 'ի մարդասիրէդ զրկալիր ողջունիմ, որ իմովս ծանրութեամբ միշտ 'ի ստոր բերիմ։

Բ. Զայս առնէ սէր քո, ձրի առ-իս կանխեալ, և 'ի բազմադէմ կա-ցիս ինձ 'ի թիկունս հասեալ, 'ի ծա-

նունց վչտաց զիս ապրեցուցեալ, և յանհամար չարեաց զերծուցեալ։ Իբր զի 'ի սիրել զիս չարաչար՝ զանձն իմ կորուսի. այլ իբրև զքեզ միայն խնդրեցի և սրբութեամբ սիրեցի, զիս և զքեզ միահաղոյն զտի. և 'ի սիրոյ անտի խորագոյն ես յիմ չքութիւն խոնարհեցայ։ Զի դու տէր քաղցր՝ առնես ընդ իս 'ի վեր քան զիմ արժանաւորութիւն, և աւելի քան զոր իշխեմ ակն ունել կամ խնդրել 'ի քէն։

Դ. Օրհնեալ ես տէր. զի թէպէտ և անարժան եմ ես ամենայն բարեաց, բայց քո առատութիւն և անբաւ բարութիւն ոչ երբէք կասի բարի առնել և ապաշնորհաց, և կարի իմն 'ի քէն օտարացելոց։ Դարձո զմեզ առ քեզ, զի լիցուք հաճոյք խոնարհք և եռանդնոտք. վասն զի դու ես մեր փրկութիւն և զօրութիւն և ամրութիւն։

ԳԼՈՒԽ Թ

Թէ զամենայն պարտ է վերաբերել յԱստուծած իբրև 'ի վերջին փախճան։

Ա։ Որդեակ, զիս կալ քո դերակայ և վերջին վախճան, եթէ ճշմարտութեամբ ցանկաս լինել երանելի։ Սովին դիտաւորութեամբ մաքրեսցի քո իղձ, որ յոլովակի 'ի քեզ և յարարածս միտէ չարաչար։ Զի թէ զանձն յիմիք խնդրես, անդէն 'ի քեզ նուազիս և ցամաքիս։ Ապա զամենայն նախ առաջին ինձ ընծայեսջիր. զի ես եմ, որ ետու զամենայն։ Այսպէս համարեսջիր զմի մի յայնց՝ որպէս զերակայ բարւոյն բղխմունս. վասն այսորիկ յիս՝ իբրև 'ի սկիզբն իւրեանց վերածել պարտ է զամենայն։

Բ։ Ցինէն փոքունք և մեծամեծք, աղքատք և մեծատունք, որպէս 'ի կենդանի աղբերէ առնուն ջուր կենդանի. և որք ինձ կամակար և մտա-

դիւր ծառայեն, շնորհս փոխանակ շնորհաց ընկալցին։ Իսկ որ առանց իմ պարծել կամի, կամ յառանձնական բարի ինչ բերկրել, մի հաստատեսցի 'ի ճշմարիտ խնդութեան, և մի 'ի սիրտ իւր ընդարձակեսցի. այլ բազմօրինակ խափանեսցի և տագնապեսցի։ Ապա մի ինչ 'ի բարեաց՝ անձին գրեսցես, և մի յաւաքինութեանց ինչ՝ մարդոյ ընծայեսցես. այլ զամենայն տուր Աստուծոյ, առանց որոյ ոչինչ ունի մարդ։ Ես եմ զամենայն, և բովանդակ զքեզ իմ լինել կամիմ, և բազում ճշդիւ շնորհակալութիւն պահանջեմ։

Գ. Այս է ճշմարտութիւն, յորմէ ինքնահաստատ լինի սնափառութիւն. և թէ 'ի ներքս մտանէ շնորհըն երկնային և ճշմարիտ սէր, այնուհետև ոչ եղիցի ինչ նախանձ, և ոչ նեղսրտութիւն և անձնասիրութիւն ունիցին տեղի։ Զի յաղթէ ամենայնի սոցա աստուածային սէրն, և դիւրէ ամենայն զօրութեանց հոգւոյ։ Թէ ուղիղ խորհիս, յիս միայն

ուրախ եղիցիս, և յիս միայն յու-
սացիս. զի չիք զք բարի, բայց
միայն Աստուած. որ քան զամե-
նայն է զովելի, և յամենայնի օրհ-
նեալ։

ԳԼՈՒԽ Ժ

*Թէ արուեստարհեստիւն զաշխարհ քաղցր
է ծառայել Աստուծոյ.*

Ա. Արդ միւսանգամ խօսեցայց
տէր, և ոչ լռեցից. բարբառեցայց
յականջս Աստուծոյ իմոյ, տեառն
իմոյ, և թագաւորի իմոյ, որ էն 'ի
բարձունս։ Որպէս զի մեծ է օրհ-
նութիւն քաղցրութեան քո տէր,
զոր պահեցեր երկիւղածաց քոց։
Զինչ ես սիրողաց քոց, և որոց յա-
մենայն սրտէ ծառայեն քեզ։ Ահա
անճառելի է ճաշակ քաղցրութեան
քո, զոր առատաձեռնես 'ի սիրելիս
քո։ Ցայսմ առաւելապէս ցուցեր
առ իս զքաղցրութիւն սիրոյ քոյ,
զի որ ոչն էի՝ արարեր զիս. և որ

օտարացեալն էի 'ի քէն՝ դարձուցեր զիս ծառայել քեզ, և հրամայեցեր ինձ սիրել զքեզ։

Բ. Ո՛վ աղքիւր անսպառ սիրոյ, զինչ ասացից զքէն։ Զիարդ իշխեցից մոռանալ զքեզ, որ հաճեցար յիշել զիս՝ ես և յորժամ հիւծեալն էի և 'ի կորուստ մատնեալ։ Ի վեր քան զամենայն ակնկալութիւն՝ ապրարեր ընդ ծառայի քում ողորմութիւն, և քան զամենայն արժանաւորութիւն՝ ցուցեր առ իս շնորհ և բարեկամութիւն։ Զինչ տայ քեզ տրիտուր փոխանակ շնորհիս։ Զի ոչ ամենեցուն տուեալ է, թողեալ զամենայն՝ յաշխարհէ հրաժարել, և միանձնական կեանս յանձն առնուլ։ Մեծ ինչ իցէ՝ ծառայել ինձ քեզ, որում ամենայն արարածք պարտապան են ծառայել։ Ոչ մեծ ինչ թուի ինձ՝ ծառայել քեզ. այլ այն թուի մեծ և զարմանալի, զի զայսպիսի աղքատ և անարժան հաճեցար ընդունել 'ի ծառայութիւն, և սիրելեաց քոց ծառայից դասակցեցեր։

Դ. Ահա քո է ամենայն, զոր ունիմ, և որով քեզն ծառայեմ։ Բայց տակայն դու ինձ ծառայես, քան ես քեզ։ Ահա երկինք և երկիր, զորս 'ի սպասաւորութիւն մարդկան արարեր, 'ի պատրաստի կան. և օրըստօրէ զքո հրամայեալսդ կատարեն։ Եւ ոչ այսչափ միայն, այլ և զհրեշտակս 'ի սպասաւորութիւն մարդոյ կարգեցեր։ Եւ որ վերագոյնն է քան զամենայն, դու ինքն հաճեցար մարդկան ծառայել, և զանձն քո տալ նոցա խոստացար։

Դ. Զինչ տաց տրիտուր ընդ բիւրուց բարեացս։ Ո՞ տայր ինձ ծառայել քեզ զամենայն աւուրս կենաց իմոց։ Ո՞ տայր ինձ զէթ օր մի արժանի պաշտօն քեզ մատուցանել, որ արժանիդ ես ամենայն պաշտաման և պատուոյ և անվախճան փառատրութեան։ Ճշմարտապէս տէր իմ ես դու, և ես քո չնչին ծառայ, որ յամենայն զօրութենէ պարտապան եմ քեզ ծառայել, և ոչ երբէք լռել 'ի քումմէ փառատրութենէ։ Ընդ այս հաճեալ եմ, և այսմ

ցանկամ. և որ ինչ թերին է, զայն զու հաճեսցիս լնուլ։

Ե. Մեծ պատիւ և մեծ փառք են՝ քեզ ծառայել, և զամենայն վասն քոյ արհամարհել։ Զի մեծ շնորհս ստացին, որք կամակար մտօք՝ քոյ սուրբ ծառայութեանդ ընդ լծով մըտանիցեն։ Զքաղցր մխիթարութիւն սուրբ հոգւոյն գտցեն, որք վասն սիրոյ քո յամենայն մարմնական բերկրութեանց 'ի բաց կացցեն։ Եւ 'ի մեծի ազատութեան մտաց վայելեսցեն, որք վասն անուան քո յանձուկ ճանապարհ մտանիցեն, և յամենայն աշխարհային հոգոց հրաժարեսցին։

Զ. Ո՛վ հաճելի և քաղցր ծառայութեանն Աստուծոյ, որով լինի մարդ ճշմարտապէս սուրբ և ազատ։ Ո՛վ սրբանուէր պաշտաման կրօնաւորական կարգի, որ առնէ զմարդ հրեշտակաց հաւասար, Աստուծոյ հաճոյ, դիւաց ահաւոր, և ամենայն հաւատացելոց գովելի։ Ո՛վ փարելի և յաւէտ ըղձալի ծառայութեանս, որով լինի արժանանալ դերակայ

բարութեան, և ստանալ զանվախ-
ճան խնդութիւն։

ԳԼՈՒԽ ԺԱ.

Թէ զիղձս սրտի քննել պարտ է, և կարգաւորել։

Ա. Որդեակ, պարտ է քեզ դեռ ուսանել բաղում ինչ, զոր չև է քոյ քաջ ուսեալ։

Բ. Եւ ո՞ր իցեն այնք, տէր։

Գ. Զիղձս քո զլխովին կարգել ըստ հաճոյից իմոց. և չլինել անձնասէր, այլ կամաց իմոց խնամոտ նախանձախնդիր։ Իղձք յոլովակի զքեզ բորբոքեն, և բուռն վարեն. բայց դու տես եթէ վասն փառաց իմոց յայն բերիս, թէ սակս զիւրութեան քոյ։ Եթէ 'ի սակս իմ, զոհացող լիջիր, որպէս և կարգիցեմ. ապա եթէ 'ի քոց ըղձանաց ինչ զօրեալ կայցէ, ահա այն իսկ է՝ որ խափանէ զքեզ և ծանրացուցանէ։

Դ. Ասա զգոյշ լեր, մի կարի իմն յարել յիղձս որ գան 'ի քեզ, առանց ցիս հարցանելոյ. զուցէ յետոյ զղջասցիս, կամ ոչ հաճեսցիս, որում յառաջն հաճ և հաւան էիր, և որպէս լաւագունի իմն նախանձ կալար։ Զի ոչ ամենայն յօժարութեան, որ բարւոք թուիցի, իսկ և իսկ արժան է երթալ զհետ. և ոչ յամենայն հակառակաց յօժարութեան՝ անդէն իսկ խուսել։ Լաւ է երբեմն սանձ արկանել ևս և բարեաց երկասիրութեանց և ըղձից. զի մի 'ի թախանձանս նոցա զբաղեսցին քո միտք, և 'ի շփոթելոյ քոյ՝ գայթակղութիւն յայլս արկանիցես, կամ 'ի դիմադարձիլ այլոց՝ անդէն խռովեսցիս և կործանեսցիս։

Ե. Բայց պարտ և պատշաճ է երբեմն բռնանալ, և արիաբար ընդդէմ դառնալ զգայական բաղձանաց, և չհայել յայն՝ թէ զինչ կամք են մարմնոյ և զինչ ոչ. այլ այսմ ջանա, զի և յակամայսն հնազանդիցէ հոգւոյ։ Եւ այնչափ ընկճեա զնա և 'ի ծառայութիւն նուաճեցո,

մինչև պատրաստ լիցի առ ամենայն, սակաւուք ուսցի շատանալ, ընդ անպատճոյնս հաճ լինել, և ընդ անդէպս ինչ ոչ քրթմնջել։

ԳԼՈՒԽ ԺԲ

Յաղագս օրինակի համբերութեան, և մարտնչելոյ ընդդեմ ցանկութեանց.

Ա. Ցէր տէր, պիտոյ է ինձ յոյժ համբերութիւն. զի շատք յաստի կեանս պատահեն հակառակութիւնք։ Զի որպէս և յարդարեցիս զիմ խաղաղութիւն, անհնար է կենաց իմոց լինել անվիշտ և անպատերազմ։

Բ. Այդ այդպէս է, որդեակ։ Բայց կամիմ ոչ զայնպիսի խնդրել քեզ խաղաղութիւն, յոր ոչ կայցէ ինչ փորձութիւն, կամ ոչ զդայցես ինչ հակառակութիւն. այլ և յայնժամ համարեսջիր զանձն վայելել 'ի խաղաղութեան, յորժամ 'ի պէս-պէս փորձութիւնս հանդիսացեալ

զտանիս, և՝ի բաղմադէմ հակառակութիւնս փորձ։ ԵԹԷ ասես, չեմ կարող բազմաց տանիլ վշտաց. իսկ զիարդ հանդուրժեսցես հրոյ քաւարանին։ Յերկուց չարեաց՝ յամենայնի փոքրն է ընտրելի։ Ապա զի ապրեսցիս՝ի հանդերձեալ տանջանացն յաւիտենից, ասասի չարեաց փոյթ կալջիր վասն Աստուծոյ արիաբար տանել։ ԹԷ համարիցիս, թէ աշխարհիկք ոչինչ կամ սակաւ չարչարանս չարչարիցին։ Զայդ ոչ զտցես, թէպէտ և՝ի կարի իսկ փափկակեացս խոյզ և խնդիր առնիցես։

Գ. Բայց վայելեն, ասես, ՝ի բազում գրգանս, և զիւրեանց զհետ երթան կամաց. վասն այնորիկ ոչ համարին ինչ զիւրեանց նեղութիւնս։

Դ. Դիցուք թէ ունին, որ զինչ և կամին. իսկ ցո՞ր վայր տեսեսցէ։ Ահա որպէս ծուխ պակասեսցին յըղփացեալքն յաշխարհի, և ոչ մնասցէ ինչ յիշատակ անցելոց խնդութեանց։ Այլ և առ կենդանութեամբ՝

ոչ առանց դառնութեան և տաղտ-
կութեան և երկիւղի հանդչին 'ի նո-
սա։ Զի ուստի հեշտանան, անտի
պատուհաս ցաւոց յոլովակի յան-
ձինս ընդունին։ Կարի յիրաւունս,
զի որ անկարգ հեշտութեանց 'ի խըն-
դիր են և զհետ երթան, մի առանց
ամօթոյ և դառնութեան զայն վճա-
ռեսցեն։ Ո՛վ, որպէս սուղ և սնո-
տի, որպէս անկարգ և զարշելի է
ամենայնն։ Բայց առ արբեցու-
թեանն և կուրութեան ոչ իմանան.
այլ որպէս անխօս անասուն վասն
դոյզն ապականացու կենցաղոյս
հեշտութեան, զոգի 'ի մահ մատ-
նեն։ Այլ դու, որդեակ, զհետ ցան-
կութեանց քոց մի գնար. և 'ի կա-
մաց քոց հրաժարեաց։ Ցտեսա 'ի
տեառնէ, և նա տացէ քեզ զխընդ-
րուածս սրտի քոյ։

Ե. Զի թէ ճշմարտութեամբ կա-
միս 'ի բերկրանս վայելել, և յորդ
մխիթարութիւն յինէն ընդունել,
ահա յարհամարհութեան ամենայն
աշխարհայնոց, և 'ի հրաժեշտ ամե-
նայն ստորային բերկրութեանց և-

ղիցի օրհնութիւն քո, և բազում մխիթարութիւն տացի քեզ։ Եւ որչափ յամենայն արարածական սփոփանաց 'ի բաց կացցես, այնչափ առաւել յիս քաղցրագոյն և զօրագոյն մխիթարութիւն զտցես։ Բայց 'ի սկզբան անդ՝ ոչ առանց ինչ տըրտմութեան և վաստակոց ճգանց լինի քեզ յայդ ժամանել։ Ընդդէմ դարձցի անընտել սովորութիւնն, այլ 'ի լաւ ևս սովորութենէ յաղթեսցի։ Թրթռիջեսցէ մարմինն, այլ եռանդեամբ հոգւոյն սանձեսցի։ Զգըրգռեսցէ և դառնացուսցէ զքեզ օձն հին, այլ աղօթիւք հալածական լիցի, այլ և վաստակօք պիտանեօք խցցի նորա մուտ։

ԳԼՈՒԽ ԺԳ

*Յաղագս հնազանդութեան խոնարհ հը-
պատակի ըստ օրինակին Յիսուսի
Քրիստոսի.*

Ա. Որդեակ, որ ջանայ 'ի բաց
կալ 'ի հնազանդութենէ, անձամբ
զանձն վրիպեցուցանէ 'ի շնորհաց.
և որ խնդրէ ունել զառանձնականս,
կորուսանէ զհասարակացն։ Որ ոչ
մատղիւր և կամաւորութեամբ հնա-
զանդի իւրում մեծաւորի, նշան է՝
թէ մարմին նորա չև է նմա լիով
հնազանդեալ, այլ բազում անգամ
անկուշէ և քրթմնջէ։ Ապա ուսիր
արագ հնազանդել քում մեծաւորի,
եթէ ցանկաս զմարմինդ քեզ հնա-
զանդել։ Զի դիւրաւ յաղթի արտա-
քին թշնամին, եթէ ներքին մարդն
չէ աւար հարեալ։ Զիք դժնդակա-
գոյն և չար թշնամի անձինդ՝ իբրև
զքեզ, յորժամ չես համախոհ ընդ
հոգւոյ։ Պարտ է քեզ յամենայնի

ստանալ զճշմարիտ արհամարհութիւն անձին, եթէ կամիս յաղթել մարմնոյ և արեան։ Եւ զի դեռ կարի իմն անկարգ բերիս 'ի սէր քո, վասն այնորիկ լիով յանձն լինել 'ի կամս այլոց՝ զանգիտես։

Բ. Բայց զինչ մեծ է, թէ դու հողդ չնչին՝ վասն Աստուծոյ լիցիս մարդկան հպատակ. ուր ես բարձրեալս ամենակալ, որ զամենայն արարի յոչնչէ, վասն քո խոնարհութեամբ եղէ մարդկան հնազանդ։ Եղէ քան զամենեսին խոնարհ և ստորին, զի քումդ հպարտութեան իմով խոնարհութեամբ յաղթեսցես։ Ուսիր հնազանդել, ուսիր ըզքեզ խոնարհել՝ հող և մոխիր, և ամենեցուն ընդ ոտիւք լինել։ Ուսիր զքո կամս խորտակել և առ ամենայն հնազանդութիւն լինել անձնատուր։

Գ. Զայրացիր 'ի վերայ քո, և մի թողուր ամբարտաւանութեան տիրել քեզ. այլ այնպէս հնազանդ և կրտսեր զանձն ընծայեցո, մինչև ամենեցուն գնալ 'ի վերայ քո, և

որպէս կաւ գոհեմաց կոխել զքեզ։ Զի՞ է քեզ, չնչինդ զու՝ զանգատել։ Զիարդ իշխիցես զարշելի մեղաւորդ ընդդէմ դառնալ նախատչաց քոց, որ բիւրիցս զԱստուած բարկացուցեր, և զժոխոց բաղում անգամ եղեր արժանի։ Այլ խնայեաց 'ի քեզ ակն իմ, զի պատուական եղև անձն քո յաչս իմ. զի ծանիցես զսէր իմ, և առ երախտիս իմ միշտ զոցիս շնորհակալու. և զի ճշմարիտ հնազանդութեան և խոնարհութեան յամենայնի տացես զանձն, և համբերութեամբ տարցիս արհամարհանաց քոց։

ԳԼՈՒԽ ԺԴ

Յաղագս խոկման գաղտնի դատաստանացն Աստուծոյ, զի մի մեծամտեսցուք ընդ բարդիւնս.

Ա. Որոտաս յիս զդատաստանս քո, տէր. և ահիւ և զողութեամբ սասանեցուցանես զամենայն ոս-

կերս իմ. և զարհուրեալ է անձն իմ յոյժ։ Ցասուչ հարեալ կամ, ա-ծեալ զմտաւ՝ զի երկինք ոչ են սուրբ առաջի քո։ Եթէ՝ի հրեշտակս զտեր թիւրութիւն, և ոչ խնայեցեր, ընդ իս զինչ լինիցի։ Անկան աստեղք յերկնից, և ես հոգս յինչ յուսա-ցեալ իցեմ։ Որոց գործք գովելի թուէին, անկան՝ի ստորինս. և որք ուտէին զհաց հրեշտակաց, տեսի՝ զի քաղցրացան նոցա եղջերք խոզից։

Բ. Ապա չիք ինչ սրբութիւն, թէ զձեռն քո տէր ամփոփես։ Ոչինչ օգուտ է իմաստութիւն, եթէ յա-ռաջնորդութենէ կասիս։ Ոչինչ օգ-նէ արիութիւն, եթէ՝ի պահպանու-թենէ լռես։ Չիք աներկեան ողջա-խոհութիւն, թէ ոչ այնմ լինիս հո-վանի։ Ոչինչ օգտէ անձին պահ-պանութիւն, թէ ոչ մերձ կայ քո սուրբ հսկողութիւն։ Զի թէ թո-ղուս, ընկղմիմք և կորնչիմք. և թէ այց առնես, կանգնիմք և կենդա-նանամք։ Իբր զի յողողդ եմք, այլ քև հաստատիմք. զաղջանամք, այլ քև բորբոքիմք։

Դ. Ո՞վ, զրպէս պարտ է ինձ խոնարհ և արհամարհ լինել յաչս անձին, և համարել զանձն չնչին, եթէ երևեսցի յիս ինչ բարի։ Քանի՞ արժան է ինձ 'ի խոր խոնարհել ընդ անքննին զատաստանաց քո, տէր. ուր ոչ այլ ինչ զտանեմ զիս, բայց ոչինչ։ Ո՞վ անչափ ծանրութեանս, ո՞վ անսահման ծովուս, ուր ոչինչ զտանեմ յիմոցս՝ բայց զչքութիւն։ Իսկ արդ ո՞ւր իցեն խորշք ծածկութեան փառաց, ո՞ւր վստահութիւն 'ի կարծեցեալ առաքինութիւն։ Ընկլան ամենայն սնոտի պարծանք 'ի խորոց զատաստանաց քոց 'ի վերայ իմ։

Դ. Զինչ է ամենայն մարմին առաջի քո. միթէ պարծեսցի կաւ առաջի բրտի։ Զիարդ իշխեսցէ յողն կալ մեծաբանութեամբ, որոյ սիրտ ընդ ձեռամբ է Աստուծոյ՝ ճշմարտութեամբ։ Մի՛ հպարտացուսցէ զնա աշխարհ ամենայն, զոր ճշմարտութիւնն ընդ բռամբ ունի. և մի՛ յամենայն գովչաց բերանոյ շարժեսցի, որ զամենայն յոյս իւր յԱս-

տուած հաստատեալ իցէ։ Քանզի և որք խօսին ինչ՝ ամենեին ոչինչ են, զի ընդ բարբառոյ բանից պակասին։ Այլ ճշմարտութիւն տեառն մնայ յաւիտեան։

ԳԼՈՒԽ ԺԵ

Թէ զիաՀրդ պարտ է մեզ կալ և զինչ ասել յամենայն ցանկալիս.

Ա. Որդեակ, այսպէս ասասջիր յամենայնի։ Տէր եթէ հաճոյ է քեզ, այդ այդպէս եղիցի։ Տէր, եթէ փառք են քեզ, եղիցի այդ անուն քո։ Տէր, եթէ թուի յաչս քո՝ թէ օգուտ է ինձ և պիտանի, տուր ինձ յայդմ վայելել 'ի պատիւ քո։ Այլ եթէ գիտասակար ինձ ճանաչես, և փերկութեան հոգւոյ իմոյ ոչ յօգուտ, 'ի բաց արա յինէն զցանկութիւն զայդպիսի։ Զի ոչ ամենայն ցանկութիւն է 'ի հոգւոյն սրբոյ, թէ պէտ և յաչս մարդկան ուղիղ թուիցի և բարի։ Դժուարին է ստուգու-

թեամբ ընտրել, արդեօք յոգւոյ բարւոյ թէ յօտարէ է քո բերումն այսմ կամ այնմ ըղձանալոյ, թէ բնաւ իսկ 'ի հոգւոյ քումմէ։ Բազումք 'ի կատարածի խաբեցան, որք յառաջն համարէին զանձինս 'ի հոգւոյ բարւոյ առաջնորդեալ։

Բ. Ապա յամենայնի երկիւղիւ Աստուծոյ և խոնարհութեամբ սրտի պարտ է ցանկալ և խնդրել, որ ինչ ցանկալի պատահէ մտաց. նա՝ 'ի սեպհական կամաց հրաժարմամբ՝ յիս յանձնել պարտ է զամենայն, ասելով. Տէր դու գիտես որ լաւ է՝ ցէ. եղիցի ամենայն, որպէս և կամիս։ Տուր զոր կամիս, և որչափ կամիս, և յորժամ կամիս։ Ամբարձ ընդ իս որպէս գիտես, և որպէս հաճոյ է քեզ, և առաւելու պատիւ քո։ Դիր զիս ուր և կամիս, և համարձակ արա ընդ իս յամենայնի. 'ի ձեռս քո եմ, շրջեա և յածեցո զիս շուրջանակի։ Ահա ծառայ քո եմ ես, առ ամենայն պատրաստական. զի ոչ ցանկամ յիս կենդանի լինել, այլ 'ի քեզ. և երանի՜ թէ լիով և արժանապէս։

Աղօթք վասն զհաճոյսն Աստուծոյ կատարել.

Գ. Շնորհեա ինձ քաղցրագութ փրկիչ, զշնորհս քոյ. զի ընդ իս լիցի, ընդ իս գործեսցէ, և ընդ իս մինչ իսպառ կացցէ մնասցէ։ Տուր ինձ հանապազ այնմ ցանկալ և փափաքել, որ առաւել հաճոյ է քեզ և ընդունելի։ Քո կամք՝ իմ լիցին, և իմ կամք՝ քոց կամաց միշտ զհետ երթիցեն, և քաջ ընդ այնմ միաբանեսցին։ Իմ կամել և չկամել ընդ քոյդ եղիցի մի. և մի խշխեցից այլ ինչ կամել կամ չկամել, բայց զոր դու կամիս կամ ոչ կամիս։

Դ. Տուր ինձ մեռանել ամենայնի՝ որ ինչ է յաշխարհի, և վասն քոյ սիրել զարհամարհանս և զանծանօթն լինել յաստի կեանս։ Տուր ինձ 'ի վեր քան զամենայն ցանկալիս 'ի քեզ հանգչել, և զսիրտ իմ 'ի քեզ խաղաղել։ Դու ճշմարիտ խաղաղութիւն սրտի, դու միայն հանգիստ. արտաքոյ քո խիստ է ամե-

նայն և խառվական։ Յայսմ և 'ի սոյն խաղաղութեան, այս է, 'ի քեզ որ միայնդ ես զերակայ բարի անվախճան, ննջեցից և հանգեայց. Ամէն։

ԳԼՈՒԽ ԺԶ

Թէ ձշմարիտ սփոփանս խնդրել պարտ է միայն յԱստուծած.

Ա. Ամենայնի, որում ցանկալ կամ զոր խորհել հնար է ինձ 'ի սփոփանս իմ, ոչ այժմ ինչ ակնունիմ, այլ առ յապայ։ Եթէ զամենայն սփոփանս աշխարհի միայն ունէի, և յամենայն զրգանս վայելել 'ի ձեռս էր, յայտ է թէ չտեսէին ինչ յերկար։ Վասն այսորիկ անհնար է քեզ, անձն իմ, լիով մխիթարիլ և ամենայնիւ հանգչել, բայց եթէ յԱստուած որ մխիթարիչն է աղքատաց և ընդունող խոնարհաց։ Համբեր վայր մի, ակնկալեալ աստուածային խոստմանն, և զտցես

գլխութիւն ամենայն բարեաց յերկինս։ Եթէ կարի իմն անձկանօք 'ի խնդիր լինիս առօրէիցս, կորուսանես զանանցան և զերկնաւորս։ Եղիցին ժամանակաւորքս 'ի պէտս, այլ ըղձից քոց բերումն եղիցի առանանցս։ Անհնար է քեզ անցաւոր ինչ բարեօք յագենալ. զի ոչ հաստեցար վայելել 'ի սոսա։

Բ. Թէպէտ և ամենայն ստեղծեալ բարիք քո էին, անհնար էր քեզ լինել երջանիկ և երանեալ. այլ յԱստուած յարարիչն ամենայնի գլխովին հաստատեալ է քո երանութիւն և երջանկութիւն. ոչ զորպիսի կարծեն անմիտ աշխարհասէրք, այլ որպիսում՝ ակնունին բարեպաշտ Քրիստոսի հաւատացեալք, և զորոյ առնուն երբեմն զճաշակ հոգեսէրքն և սուրբքն սրբոտիք, որոց առաքինութիւն յերկինս է։ Անոտի և սուղ են ամենայն մարդկային սփոփանք։ Երանաւէտ և ճշմարիտ սփոփումն այն է, զոր 'ի ներքս 'ի մեզ 'ի ճշմարտութենէ ընդունիմք։ Այր առաքինի ամե-

նայն ուրեք ընդ իւր ունի զմխիթա-
րիչ իւր Յիսուս, առ որ ասէ. Մերձ
լեր ինձ, տէր Յիսուս, յամենայն
ժամանակի։ Այս եղիցի իմ մխի-
թարութիւն, մոռացիւր վրէպ լինել
յամենայն մարդկային սփոփանաց։
Եւ եթէ քոյդ պակասեսցի մխիթա-
րութիւն, կամք քո և արդար փորձդ
եղիցին ինձ սփոփումն մեծ։ Զի ոչ
խսպառ բարկանաս դու տէր, և ոչ
յաւիտեան պահես ոխս։

ԳԼՈՒԽ ԺԷ

*Թէ զամենայն հոգս ընկենուլ պարտ է
յԱստուած.*

Ա. Որդեակ, թող ինձ առնել ընդ
քեզ որպէս և կամիմ. ես գիտեմ,
որ լաւ իցէ քեզ։ Դու խորհիս որպէս
մարդ, և խոկաս յոլովակի ըստ
հրապուրելոյ մարդկայինդ ախոր-
ժակի։

Բ. Տէր, ճշմարիտ է զոր ասես.
մեծ է հոգ քո 'ի վերայ իմ, քան

զամենայն զիմ առ իս հոգ և խնամ։ Չի կարի իմն յորոգայթի կայ, որ ոչ ընկենու զամենայն հոգս իւր 'ի քեզ։ Միայն թէ կամք իմ ուղիղ և հաստատուն առ քեզ կացցեն, ապրա ընդ իս որ ինչ հաճոյ է քեզ։ Չի անհնար է անբարի լինել, զինչ և արասցես ընդ իս։ Եթէ կամիս լինել ինձ 'ի խաւարի, եղիցիս օրհնեալ. և եթէ կամիս լինել ինձ 'ի լոյս, եղիցիս օրհնեալ։ Եթէ հաճիս մխիթարել զիս, եղիցիս օրհնեալ. և եթէ կամիս լինել ինձ 'ի նեղութեան, նոյնպէս յամենայնի եղիցիս օրհնեալ։

Գ. Որդեակ, այսպէս պարտ է քեզ կալ, եթէ կամիս հաճոյ լինել ինձ։ Այնպէս պատրաստական պարտ է քեզ լինել 'ի նեղութիւն, որպէս 'ի խնդութիւն. այնպէս յօժարամիտ 'ի չքաւորութիւն և յաղքատութիւն, որպէս 'ի լիութիւն և 'ի մեծութիւն։

Դ. Տէր, մտադիր յանձն առնում վասն քոյ որ զինչ և կամիս թէ եկեսցէ 'ի վերայ իմ։ Անխտիր

կամիմ ընդունել 'ի քոց ձեռաց ըղ-
բարի և դշար, զբաղցր և զդառն,
զուրախականն և զտրտմալին, և
զոհանալ վասն ամենայնի որ ինձ
դիպեսցի։ Պահեա զիս յամենայն
մեղաց, և ոչ երկեայց 'ի մահուանէ
և 'ի դժոխոց։ Որ ինչ նեղութիւն
գայցէ 'ի վերայ իմ, ինձ ինչ ոչ վը-
նասեսցէ. միայն թէ մի խսպառ
մերժեսցես զիս, և մի ընջեսցես ի
դպրութենէ կենաց։

ԳԼՈՒԽ ԺԸ.

*Թէ ժամանակեան թշուառութեանց
ըստ օրինակին Քրիստոսի պարտ է
երկայնմտութեամբ համբերել.*

Ա. Որդեակ, ի՞նչ ես յերկնից
վասն փրկութեան քոյ. յանձն առի
զքո թշուառութիւն, ոչ առ հարկի,
այլ 'ի սիրոյ ձգեալ. զի զհամբերու-
թիւն ուսցիս, և ժամանակեան թը-
շուառութեանց մի դժուարակիր
գտցիս։ Քանզի 'ի ժամէ ծննդեան

իմոյ մինչև 'ի խաչ ելանել՝ ոչ պա-
կասեցին ինձ չարակրութիւնք։ Մեծ
եղեն իմ կարօտութիւնք, տրտուն-
ջըս բազումս բազում անգամ զի-
նէն լուայ, ամօթոյ և նախատանաց
քաղցրութեամբ տարայ, փոխա-
նակ երախտեաց՝ ապերախտու-
թիւնս ընկալայ, փոխանակ սքան-
չելեաց՝ հայհոյութիւնս, և փոխա-
նակ վարդապետութեան՝ կշտամ-
բանս։

Բ. Ցէր, վասն զի զու համբերող
եղեր 'ի կեանս քո, զովին առաւե-
լապէս կատարելով զպատուիրան
հօր քոյ, արժան է ինձ թշուառա-
ցեալ մեղաւորիս ըստ կամաց քոց
երկայնմտութեամբ համբերել, և
ցորչափ կամիս՝ զրեան ապականա-
ցու կենցաղոյս 'ի փրկութիւն իմ
բառնալ։ Քանզի թէպէտ և ծան-
րաբեռն թուին աստի կեանք, բայց
չնորհօք քո եղեն յոյժ շահեկանք.
և քոյին օրինակաւ և սրբոց քոց
շաւղօք, տանելիք եղեն տկարաց և
պանծալիք։ Այլ և առաւել զուար-
թարարք քան 'ի նախնումն 'ի հին

օրէնս, յորժամ փակեալ էր զուռն երկնից, և մթին ևս թուէր ճանապարհ երկնից. յորժամ սակաւք փոյթ ունէին 'ի խնդիր լինելոյ արքայութեան երկնից։ Այն զի և ոչք յայնժամ արդարքն էին և փրկութեան պահեալք, յառաջ քան ըզչարչարանս քո և զմահ՝ ոչ ունէին մուտ յարքայութիւնն երկնից։

Գ. Ո՛վ, քանի՛ պարտապան եմ զոհանալոյ զքէն. զի ճանապարհ ուղիղ և բարի ինձ և ամենայն հաւատացելոց ցուցեր՝ յարքայութիւն քո անվախճան։ Քանզի վարք քո ճանապարհ են մեզ, և սուրբ համբերութեամբ մատչիմք առ քեզ՝ որ պատկեր ես մեր։ Եթէ չէր քո յառաջեալ և ուսուցեալ մեզ, ո՞ւմ փոյթ էր զհետ զալ։ Բա՛ւական, քանի՛ք բացական և յետնեալ մնային, թէ ոչ 'ի քո պանծալի օրինակս հայէին։ Ահա և 'ի լուր քոց այսչափ նշանաց և վարդապետութեանց դեռ հեղգամբ. զինչ անցք ընդ մեզ անցանէին, եթէ յայսպիսոյ լուսոյ զհետ քո եկաւորութեան լինէաք վրէպ։

ԳԼՈՒԽ ԺԹ

Ցաղագս տանելոյ անիրաւոթեանց, և ցոյց ճշմարիտ համբերողի.

Ա. Զինչ է զոր խօսիսդ, որդեակ. լուեա՛ի քրթմնջելոյ, յիմ և յայլոց սրբոց չարչարանս հայեցեալ։ Զև ես արեամբ չափ հակառակ կացեր. թեթև ինչ է զոր դուդ կրես, առ այնոքիւք՝ որք բազումս կրեցին, ուժգին փորձեցան, ծանուցս նեղեցան, և բազմօրինակ հանդիսացան՝ի փորձ։ Ապա յուշ լիցին քեզ այլոց ծանր ծանր չարակրութիւնք, զի թեթևազոյն տարցիս քոց փոքունց։ Եւ թէ ոչ թուին քեզ փոքունք, զգոյշ լեր, դուցէ և այդ՝ի քումմէ կարճմտութենէ իցէ։ Բայց թէ մեծ իցեն և թէ փոքր, ջանա ամենայնի ժուժկալութեամբ համբերել։

Բ. Որչափ քաջ պատրաստիս՝ի համբերութիւն, այնչափ իմաստու-

թեամբ գործես, և առաւել վարձուց լինիս արժանի. և դիւրագոյն ես տանիս, եթէ քո սիրտ և գործք 'ի դոյն քաջութեամբ պատրաստեալ իցեն։ Մի ասեր թէ չեմ կարող զայդ ամենայն յառնէ այդպիսւոյ կրել, և իրք այդպիսի չեն ինձ տանելի, զի վնաս մեծ հասոյց ինձ, և մեղ 'ի վերայ իմ զնէ զոր չիք իմ խորհեալ բնաւ. այլում մտաղիւր տարայց որպէս զիարդ տանելի թուիցի։ Անմիտ է խորհուրդ այդպիսի, որ 'ի համբերութեանն առաքինութիւն ոչ հայի, և ոչ թէ յումմէ պսակի. այլ զանձինս կշռէ, և զնախատինսն՝ որ 'ի վերայ զան։

Գ. Զէ ճշմարիտ համբերող, որ համբերել ոչ կամի, բայց եթէ որչափ անձին բարւոք թուի, և յումմէ հաճոյ է նմա։ Ճշմարիտ համբերողն ոչ հայի թէ վիշտն յումմէ զայ, արդեօք յիւրմէ առաջնորդէ՞, 'ի հաւասարակցէ՞, թէ 'ի ստորակայէ. արդեօք 'ի բարի՞ և 'ի սուրբ առնէ, թէ 'ի խեղաբարոյէ և յանարժանէ։ Այլ անխտիր յամենայն

արարածոց որչափ և քանիցս ան-
գամ վիչտ ինչ նմա պատահէ, զայն
ամենայն 'ի ձեռանէ Աստուծոյ զո-
հութեամբ ընդունի, և մեծ չահ հա-
մարի. վասն զի ոչինչ, թէպէտ և
փոքր իցէ՝ բայց վասն Աստուծոյ
յանձն առեալ, մեայ առաջի Աս-
տուծոյ անվարձ։

Դ. Ապա պատրաստ լեր 'ի պա-
տերազմ, եթէ կամիս ունել զյաղ-
թութիւն։ Առանց մարտի ոչ կա-
րես ժամանել պսակի համբերու-
թեան։ Եթէ կրել ինչ ոչ կամիս,
'ի պսակէ հրաժարես։ Ապա թէ
պսակիլ կամիս, մարտիր արիա-
բար, և համբեր երկայնմտութեամբ։
Առանց ճգանց ոչ լինի դիմել 'ի
հանդիստ, և ոչ առանց պատե-
րազմի ժամանէ ոք յաղթութեան։

Ե. Հնարաւոր լիցի ինձ տէր՝ հնար-
հօք, որ ինչ անհնար թուի բնու-
թեամբ։ Դու գիտես զի տկար եմ
'ի համբերել, և վաղ լքանիմ 'ի յառ-
նել դոյզն վշտաց։ Եղիցի ինձ ամե-
նայն վշտակրութիւն վասն անուան
քո սիրելի և ըղձալի։ Զի կրել և

չարչարիլ վասն քոյ՝ կենսաբեր են հոգւոյ իմոյ։

ԳԼՈՒԽ Ի

Յաղագս խոստովանութեան անձին տկարութեան. և կենցաղոյս թշուառութեանց.

Ա. Խոստովան եղէց զինէն զանիրաւութիւն իմ. խոստովան եղէց քեզ, տէր, զտկարութիւն իմ։ Բազում անգամ խաւն ինչ իրք են, որ նկուն առնեն զիս և տխրեցուցանեն։ Աւանաջաղրեմ արիանալ, այլ 'ի զալ գոյզն փորձութեան՝ անձկութիւն մեծ ունի զիս։ Ի չնչին իմն իրաց երբեմն ծանր փորձութիւն գայ 'ի վերայ։ Եւ 'ի կարծել զիս առ վայրս մի յապահովի, յանկարծ գտանիմ 'ի գոյզն փչմանէ որպէս թէ յաղթեալ։

Բ. Եւ արդ տես, տէր, զխոնարհութիւն իմ և զտկարութիւն՝ որում ամենայնիւ իրաղէտդ ես։ Ողոր-

մեա, և ապրեցո զիս 'ի կաւոյ, զի մի ընկղմայց և մի մնացից անկեալ կործանեալ իսպառ։ Այս է որ յո-լովակի գանէ զիս, և առաջի քո յամօթ առնէ. զի զիւրասահ եմ, և տկար 'ի կալ հակառակ կրից։ Թէպէտ և ոչ զլխովին բերիմ 'ի հաւանութիւն, բայց և վանել զնո-սա տաղտկալի է ինձ և ծանր. և ճանձրանամ յոյժ հանապազ լինել ընդ նոսա 'ի կռուի։ Եւ յայսմանէ իմանամ զիմ տկարութիւն, զի զիւ-րազոյն յիս յարձակին զարշ ցնորք քան թէ մեկնին։

Գ. Երանի թէ Աստուածդ Իս-րայէլի հզօր, որ նախանձաւորդ ես հոգւոց հաւատացելոց, հայէիր 'ի ծառայի քո յաշխատութիւնս և 'ի ցաւս, և օգնէիր սմա յամենայնի՝ յոր վայր և երթայր։ Զօրացո զիս երկնաւոր զօրութեամբդ, զի մի մարդն հին՝ տառապեալ մարմինն՝ ոչ լիով հնազանդեալ հոգւոյ, իշ-խեսցէ տիրել. ընդ որում հարկ լի-ցի մաքառել, ցորչափ է յիս շունչ 'ի թշուառ կենցաղումս։ Բարի է,

որպիսի ինչ են այս կեանք, ուր ոչ պակասեն նեղութիւնք և տառապանք, ուր լի է ամենայն որոգայթիւք և թշնամեօք։ Զի 'ի մեկնել միոյ նեղութեան կամ փորձութեան՝ միւս այլ 'ի վերայ գայ։ Նա՝ 'ի մղել անդ առաջնոյ մարտի, այլք բազումք 'ի վերայ հասանեն յանկարծակի։

Դ. Եւ զիարդ հնար իցէ սիրել զկեանս, որ այսպիսիս ունի դառնութիւնս, և այսչափ չարիք և թշուառութիւնք են 'ի նմա։ Զիարդ կոչիցի և կեանք, որ այսպիսիս ծնանի մահունս և ժանտախտս. բայց սակայն սիրի, և բազումք խնդրեն 'ի զրդանս նորա վայելել։ Յանդիմանի յոլովակի աշխարհ, թէ խաբեբայ է և սնոտի. բայց ոչ դիւրաւ թողուն զնա, զի ցանկութիւնք մարմնոյ զօրացեալ են յոյժ։ Է ինչ 'ի նմա, որ ձգէ 'ի սէր. և է ինչ, որ յարհամարհութիւն։ Զգեն 'ի սէր աշխարհի ցանկութիւն մարմնոյ, ցանկութիւն աչաց, և ամբարտաւանութիւն աստի կենաց։ Բայց

պատիժք և թշուառութիւնք, որք իրաւամբք զհետ գան այնց, ատելութիւն բերեն աշխարհի և տաղտկութիւն։

Ե. Ա.յլ ո՞վ աղէտիցս, յաղթէ թիւր հեշտութիւն՝ աշխարհասէր մտաց, և զլինելն ընդ փշովք՝ փափկութիւնս համարի. զի զԱ.ստուծոյ քաղցրութիւն և զներքին առաքինութեանն զուարճութիւն ոչ ետես և ոչ ճաշակեաց։ Բայց որք զաշխարհ կատարելապէս արհամարհեն, և ըստ սուրբ խրատու յԱ.ստուած կեալ կամին, այնք զԱ.ստուծոյ քաղցրութիւնն զխոստացեալն ճշմարիտ հրաժարողաց ոչ անգիտանան. և թէ քանի՞ սխալէ աշխարհ և խաբի, յայտնի տեսանեն։

ԳԼՈՒԽ ԻԱ.

Թէ պարտ է հանգչել յԱստուծած, քան յամենայն բարութիւնս և 'ի պարգևս.

Ա. Ի վեր քան զամենայն և յամենայնի հանդիր անձն իմ 'ի տէր հանապազ, զի նա է անվախճան հանդիստ սրբոց։ Տո՛ւր ինձ, քաղցր և սիրելի փրկիչ իմ, 'ի քեզ հանգչել քան յամենայն արարածս, քան յամենայն փրկութիւն և զեղեցկութիւն, քան յամենայն փառս և պատիւ, քան յամենայն զօրութիւն և իշխանութիւն, քան յամենայն զիտութիւն և նրբութիւն, քան յամենայն մեծութիւն և ճարտարութիւն, քան յամենայն ուրախութիւն և ցնծութիւն, քան յամենայն քաղցրութիւն և մխիթարութիւն, քան յամենայն յոյս և խոստումն, քան յամենայն արժանաւորութիւն և ցանկութիւն, քան յամենայն պարգևս և տուրս՝ զոր կարող ես

տալ և հեղուլ, քան յամենայն խըն-
դութիւն և հրճուանս՝ մտաց ըմբռ-
նելի և իմանալի, քան 'ի հրեշտակս
'ի հրեշտակապետս և յամենայն
երկնային զօրութիւնս, քան յամե-
նայն երևելիս և աներևոյթս, և քան
յամենայն՝ որ չես դու Աստուած իմ։

Բ. Զի դու, տէր Աստուած իմ,
բարի ես քան զամենայն. դու միայն
բարձրեալ, դու միայն ամենազօր,
դու միայն ամենաբաւական և ամե-
նալիր, դու միայն անուշակ և զբ-
աւարթարար, դու միայն ամենագե-
ղեցիկ և ամենասիրելի, դու միայն
ազնուական և փառաւորեալ քան
զամենայն, յոր ամենայն բարու-
թիւնք միանգամայն լիով կան և
միշտ եղեն և եղիցին։ Վասն այսո-
րիկ փոքր է և անբաւական, զոր
ինչ բաց 'ի քէն ինձ պարգևես կամ
զքէն յայտնես կամ խոստանաս,
ցորչափ չէ իմ զքեզ տեսեալ և ոչ
լիով ժառանգեալ։ Զի անհնար է
սրտի իմոյ ճշմարտութեամբ հանգ-
չել և գլխովին հաճ լինել, թէ ոչ
հանգիցէ 'ի քեզ, անցեալ զան-

ցեալ զամենայն սարգևօք և զամենայն արարածովք։

Դ. Ո՛վ սիրելի փեսայդ իմ Քրիստոս Փրկիչտոս, զերամաքուր սիրող, որ տէրդ ես ամենայն արարածոց. ո՞տայր ինձ թեւս ճշմարիտ ազատութեան, թռչել և հանգչել 'ի քեզ։ Ե՞րբ լիով տացի ինձ ճաշակել և տեսանել, զի քաղցր ես տէր Աստուած իմ։ Ե՞րբ լիով պատսպարեցայց 'ի քեզ, մինչև վասն սիրոյ քոյ չխորհել ինչ զիս, այլ զքեզ միայն 'ի վեր քան զամենայն միտս, օրինակաւ՝ որ չէ ամենեցուն յայտնի։ Ա՛ռ այժմ ստէպ յոգւոց հանեմ, և թշուառութեան իմում ցաւազին տանիմ. զի բազում չարիք յայսմ հովտի տառապանաց պատահեն, որ զիս յոլովակի խռովեն, տրտմեցուցանեն, և մեռայլ զինև արկանեն. բազում անգամ խափանեն և զբաղեցուցանեն, խոտորեցուցանեն և թակարդեն. զի մի ազատ մուտ ունիցիմ առ քեզ, վայելել 'ի քաղցր զրկախառնութիւնսն՝ յոր վայելեն միշտ երանե-

լեացն զասք։ Զուտ արկցէ 'ի քեզ հեծութիւն իմ, և բազմադէմ ամայութիւն իմ յերկրի։

Դ. Յիսուս ճառագայթ յաւիտենական փառաց, սփոփութիւն պանդխտեալս հոգւոյ. առ քեզ է բերան իմ անբարբառ, և լռութիւն իմ խօսի ընդ քեզ։ Մինչև ցերբ յամէ տէր իմ 'ի զալ։ Եկեսցէ առ իս յաղթատիկ իւր, և ուրախ առասցէ։ Զգեսցէ զձեռն իւր, և փրկեսցէ զտառապեալս յամենայն նեղութենէ։ Ե'կ եկ, զի առանց քոյ չիք ինչ օր կամ ժամ ուրախութեան։ Վասն զի զու ես ուրախութիւն իմ, և առանց քո թափուր է սեղան իմ։ Ցառապեալ եմ ես, և որպէս թէ 'ի բանտ արկեալ և յոտնակապս պնդեալ, մինչև լուսով երեսաց քոց հանդուսցես զիս, և յաղատութիւն հանցես, և զսխրալի զէմս քո ցուցցես։

Ե. Խնդրեսցեն այլք փոխանակ քոյ, որ զինչ հաճոյ իցէ նոցա։ Ինձ ոչ է և ոչ եղիցի ինչ հաճոյ, բայց միայն զու Աստուած իմ, յոյս

իմ և փրկութիւն յաւիտենական։ Ոչ լուեցից, և ոչ դադարեցից աղաչել, մինչև շնորհ քո դարձցի յիս, և դու ինքնին խօսեսցիս ընդ իս։

Զ. Ահաւասիկ մերձ եմ, աւասիկ առ քեզ եմ, զի կոչեցեր զիս։ Արտասուք քո և ցանկութիւն անձին քոյ, խոնարհութիւն քո և զղջումն սրտի խոնարհեցուցին զիս, և ածին առ քեզ։

Է. Եւ ասացի. Տէր կոչեցի ըզքեզ, և անձկացայ վայելել 'ի քեզ. պատրաստ եմ զամենայն արհամարհել վասն քոյ։ Զի դու յառաջ զարթուցեր զիս 'ի խնդրել զքեզ։ Օրհնեալ ես տէր, որ արարեր այսպիսի բարութիւն ընդ ծառայի քում ըստ բազում ողորմութեան քում։ Զինչ այլ ունիցի ասել ծառայ քո առ քեզ, բայց խոնարհել յոյժ առաջի քոյ, յիշելով յաւէտ զիւր անօրէնութիւն և զգծութիւն։ Զի չիք ինչ նման քեզ յամենայն աքանչելիս երկնի և երկրի. գործք քո բարի են յոյժ, և դատաստանք քո ճշմարիտք, և տեսչութիւն քո դար-

մանէ զամենայն։ Քեզ գովութիւն և փառք, որ իմաստութիւնդ ես հօր. զքեզ գովեսցէ և օրհնեսցէ բերան իմ, անձն իմ, և ամենայն արարածք միանգամայն։

ԳԼՈՒԽ ԻԲ

Յաղագս յիշատակի բազմապատիկ բարերարութեանց Աստուծոյ.

Ա. Բայց տէր զսիրտ իմ յօրէնս քո, և ուստ ինձ գնալ 'ի պատուիրանս քո։ Յուր ինձ իմանալ զկամս քո, և բազում պատկառանօք և զգուշաւոր քննութեամբ յիշատակել զերախտիս քո զհանրականս և զառանձնականս. զի կարող եղէց յայսմհետէ արժանաւոր գոհութիւն քեզ մատուցանել։ Գիտեմ և խոստովան լինիմ, զի և ոչ մասամբ ինն բաւական եմ արժանաւոր փառատրութիւն փոխատրել։ Փոքր եմ ես քան զամենայն բարութիւն ինձ պարգևեալ. և 'ի քո ազնուութիւնդ

նայեցեալ, յերեսաց մեծութեան քո նուազի հողի իմ։

Բ. Զամենայն զոր ունիմք 'ի հոգի և 'ի մարմին, և զոր ինչ ներքոյ կամ արտաքոյ բնաւորապէս կամ գերբնապէս ստացեալ ունիմք, քո են երախտիք, և զքեզ քարոզեն բարերար զթած և բարի, յորմէ ընկալաք զամենայն բարութիւն։ Թէպէտև ոմն շատ և ոմն սակաւ էառ, բայց ամենայնն քո է, և առանց քո չիք ստանալ և ոչ խուն ինչ։ Որ շատ էառ, մի պարծեսցի յարժանաւորութիւն իւր, մի փքասցի 'ի վերայ այլոց, և մի մեծաբանեսցէ 'ի վերայ փոքունց։ Քանզի նա է երիցագոյն և լաւագոյն, որ անճին ինչ ոչ գրէ. և 'ի շնորհակալիս խոնարհագոյն է և ջերմագոյն։ Եւ որ քան զամենեսին անարգ զանճն վարկանի և անարժան համարի, նմա է յաջողեալ զմեծամեծս ընդունել։

Գ. Իսկ որ սակաւ էառ, մի ինչ տրտմեսցի, մի խոժոռեսցի, և մի բարգաւաճելոյն չարակնեսցէ. այլ

'ի քեզ նայեսցի, և զքո բարութիւնդ մեծապէս օրհնեսցէ, որ այնպէս լիաբաշխ ձրի և մտադիր, առանց ինչ աշառութեան զքո պարգևսդ առատաձեռնես։ Ի քէն է ամենայն, վասն այսորիկ յամենայնի ես գովելի։ Դու զիտես զինչ իւրաքանչիւրում պարգևել լաւ իցէ, և զիարդ սա սակաւ և նա աւելի ունիցի։ Ոչ մեզ, այլ քո է զայս ընտրել, առ որում սահմանեալ է իւրաքանչիւրոց արժանաւորութիւն։

Դ. Վասն այսորիկ և մեծ երախտիս համարիմ, տէր, զչունելն բազում. յորմէ արտաքոյ և ըստ մարդկան զովութիւն և պարծանք 'ի վեր երևին. մինչև յածել ուրուք զմտաւ զանձին իւրոյ աղքատութիւն և անարգութիւն, պարտ է նմա փոխանակ ծանրութեան և տրտմութեան և վհատութեան՝ յանձին զգալ մխիթարութիւն և զուարթութիւն յոյժ. զի դու տէր զաղքատս և զխոնարհս և զարհամարհեալս յաշխարհէ՝ ընտրեցեր քեզ մտերիմս և ընտանիս։ Վ. կայ են քո իսկ առաքեալք,

զորս իշխանս կացուցեր 'ի վերայ ամենայն երկրի. սակայն և այնպէս անարատ քաղաքավարեցան յաշխարհի։ Զի խոնարհք եղեն և պարզամիտք, առանց ինչ չարութեան և նենգութեան. մինչ զի և ընդ անարգիլ իւրեանց՝ խնդային վասն անուան քո, և յորոց խորշի աշխարհ, նոքա տարփմամբ փարէին զնոքօք։

Ե. Ապա ոչինչ այնպէս ուրախ արասցէ զսիրող քո և զերախտագէտ, որպէս կամք քո 'ի նմա, և հաճոյք կարգադրութեան քո յաւիտենից. ընդ որ այնպէս հաճ և հաւան պարտ է նմա լինել, և մխիթարեալ, մինչև մտադիւր ընտրել նմա լինել փոքր, որպէս ըղձանայր ոք լինել մեծ. և այնպէս անխռով և զոհ 'ի յեսին տեղւոջ, որպէս յառաջին բարձին. և այնպէս մտադիւր արհամարհ ընկեցիկ և անուանարկ, որպէս պատուաւոր և մեծարգի յաշխարհի։ Զի կամք քո և սէր պատուոյ քո պարտին անցանել զանցանել քան զամենայն, և

առաւել մխիթարել զնա և հաճոյ լինել նմա, քան զամենայն երախտիս՝ որք տուան կամ տացին նմա։

ԳԼՈՒԽ ԻԳ

Յաղագս չորից, որք 'ի ներքս ածեն խաղաղութիւն մեծ.

Ա. Արդ ուսուցից քեզ, որդեակ, զճանապարհ խաղաղութեան և ճշմարիտ աղատութեան։

Բ. Արա զոր ասեսդ, տէր. զի քաղցր է ինձ լսել զայդ։

Գ. Ջանա, որդեակ, զայլոց կամս կատարել քան զքոյդ։ Ընտրեա յաւէտ սակաւս ունել քան բազումս։ Խնդրեա միշտ զյետին տեղին, և ստոր լինել քան զամենեսին։ Ցանկա հանապազ և աղօթիւք հայցեա, զի կամք Աստուծոյ լիով 'ի քեզ կատարեսցին։ Այր այդպիսի մտանէ 'ի սահման խաղաղութեան և հանդստեան։

Դ. Տէր, այս բան քո համառօտ

'ի ներքս փակէ զբազում կատարելութիւն։ Սակաւ է ասիւք, այլ լի է իմաստիւք և առատ պտղովք։ Զոր թէ պահէի սրտի մտօք, ոչ վաղվաղակի 'ի վեր երևէին յիս խոռվութիւնք։ Զի քանիցս անգամ ամբոխեալ տեսանեմ զանձն և ծանրացեալ, յիմաստից աստի զիս հեռացեալ զտանեմ։ Այլ զու որ ամենայնի ես կարող, յամենայնի զօգուտ հոգւոց սիրես, յաւել յիս զչնորհս. զի կարող եղէց զբան քո լնուլ, և զիմ փրկութիւն կատարել։

Աղօթք ընդդեմ խորհրդոց չարաց.

Ե. Տէր Աստուած իմ, մի հեռի լինիր յինէն. Աստուած յօգնել ինձ նայեաց. զի յարեան 'ի վերայ իմ պէսպէս խորհուրդք և մեծամեծ արհաւիրք, որք նեղեն զանձն իմ։ Զիարդ անցանիցեմ անվնաս, կամ զիարդ լիցի ինձ ցրել զնոսա։

Զ. Ես, ասէ, երթայց առաջի քո. և զփառաւորս երկրի խոնարհեցուցից։ Բացից զդրունս բանտի,

և զխորս զաղաՀնեաց յայտնի արա-
րիչ քեզ։

Ի. Ամրա, տէր, որպէս և խօսե-
ցար. և հաստատեցին յերեսաց քոց
ամենայն անօրէն խորհուրդք։ Այս
է յոյս և մի միայն մխիթարութիւն
իմ. յամենայն նեղութիւնս առ քեզ
դիմել, 'ի քեզ յուսալ, 'ի սրտէ կար-
դալ, և երկայնմտութեամբ մխիթա-
րութեան քում մնալ։

Աղօթք վասն յուսահատութեան մտաց.

Ը. Պայծառացո զիս, բարերար
Յիսուս, պայծառութեամբ ներքին
լուսոյ. և փարատեա 'ի սենեկէ
սրտիս զամենայն խաւար։ Արգել
զբազմօրինակ ցնդմունս. և 'ի բաց
արա զբուռն փորձութիւնս։ Մար-
տիր քաջութեամբ փոխանակ իմ,
և 'ի բաց վանեա զչար զաղանն,
զցանկութեանն ասեմ հրապոյրս.
զի եղիցի խաղաղութիւն 'ի զօրու-
թեան քում, և յաճախեսցէ օրհ-
նութիւն քո 'ի զաւիթս սրբութեան
'ի մաքուր խիղճ մտաց։ Սատեա

հողմոց և մրրկաց. ասա ծովու՝ դադարեաց, և հիւսիսոյ՝ թէ մի՛ շնչեր. և եղիցի խաղաղութիւն մեծ։

Թ. Աստաքեա զլոյս քո և զճշմարտութիւն քո, լուսատու լինել յերկիր. զի երկիր եմ ունայն և թափուր, մինչև լուսաւոր արասցես զիս։ Հե՛ղ զառ՝ի վերուստ զշնորհդ. ցօղեա՛ի սիրտ իմ զցօղդ երկնային. անձրևեա ջուր եռանդեան՝ ոռոգանել զերեսս երկրի, ՝ի պտղաբերել զբարին և զլաւն։ Ամբարձ զմիտս իմ ճմլեալ ծանրութեամբ մեղաց, և զամենայն իղձս իմ յերկնայինսն ձկտեցո. զի ճաշակեալ զքաղցրութիւն վերնոյն երջանկութեան, տաղտկասցի խորհել զերկրաւորս։

Ժ. Յափշտակեա զիս և զերծո յամենայն անցաւոր մխիթարութենէ արարածոց. զի ոչ ինչ արարած զիտէ զբաղձանս իմ լիով հանգուցանել և մխիթարել։ Միացո զիս ընդ քեզ անքակ կապանօք սիրոյ. զի զու միայն չատ ես սիրողին, և առանց քո անոտի է ամենայն։

ԳԼՈՒԽ ԻԴ

Յաղագս խորշերոյ յրնդվայրաքնին հետազօտուրեանէ վարուց այլոց.

Ա. Ողբեակ, մի լինիր ընդվայրաքնին, և մի պատաղիր 'ի հոգս սնոտիս։ Չի կայ քոյ և այլոց, զու եկ զկնի իմ։ Չի փոյթ է քեզ թէ այն որ այսպիսի իցէ կամ այնպիսի, կամ այս որ այսպէս և այնպէս գործիցէ կամ խօսիցի։ Ոչ քոյ է տալ պատասխանի վասն այլոց, այլ վասն անձին տալոց ես համարս. ապա զիաՀրդ յայլոց իրս խառնիս։ Ահա ես զամենայն ճանաչեմ, և որ ինչ ընդ արեգակամբ լինի՝ տեսանեմ. և գիտեմ զինչ անցք են միոյ միոյ, զինչ խորհի, զինչ կամի, և յինչ վախճան բերի նորա գիտումն։ Ապա յիս յանձն արա զամենայն, և զու պահեա զքեզ 'ի բարիոք խաղաղութեան. և թող յուզողին յուզել որչափ և կամի։ Եկեսցէ 'ի զր-

լուսն նորա, զինչ և արասցէ կամ ասասցէ. քանզի խաբել զիս ոչ կարէ։

Բ. Մի փոյթ լիցի քեզ զմեծանունութեան շքոյ, մի զբազմաց ընտանութենէ, և մի զառանձնական սիրոյ մարդկան։ Զի սոքա ցնդմունքս բերեն, և մեայլ 'ի սիրտ արկանեն։ Մտադիր խօսէի ընդ քեզ զիմ բանս, և յայտնէի զխորս, եթէ իմում եկաւորութեան դէտ ակն կալեալ սպասէիր, և զդուռն սրտիդ ինձ բանայիր։ Լեր յառաջատես, և կանխեա յաղօթս, և խոնարհեցո զքեզ յամենայնի։

ԳԼՈՒԽ ԻԵ

Թէ յինչ հաստատեալ իցէ անխռով խաղաղութիւն սրտի, և ձշմարիտ յառաջադիմութիւն.

Ա. Որդեակ, խօսեցայ ես և ասեմ. Զխաղաղութիւն թողում ձեզ, զխաղաղութիւն զիմ տամ ձեզ. ոչ

որպէս աշխարհս տայ, տամ ես ձեզ։ Ամենեքին ցանկան խաղաղութեան. բայց թէ զինչ պիտի առ ճշմարիտ խաղաղութիւն, ոչ ամենեքին հոգան։ Խաղաղութիւն իմ ընդ խոնարհս է և ընդ հեզս սրտիւ. քո խաղաղութիւն եղիցի՝ի բազում համբերութեան։ Թէ ինձ լսես, և ձայնի իմում զհետ դաս, ՝ի բազում խաղաղութեան վայելեսցես։

Բ. Եւ զինչ գործեցից։

Դ. Ցամենայնի մլտա զիր անձին, թէ զինչ առնես, և զինչ ասես. և զամենայն զիտուսն քո յայն ուղղեա, զի ինձ միայն հաճոյ լիցիս, և արտաքոյ իմ ինչ ոչ խնդրեսցես և ցանկասցիս։ Այլ և զայլոց բանս և զգործս մի յանդուգն դատեր. և որ ինչ ոչ է քեզ յանձն, յայն մի մխիր. զի այսպէս սակաւ, կամ դուն ուրեմն լիցի քեզ խռովիլ։ Բայց ոչինչ խռովութիւն երբէք զգալ և ոչ նեղութիւն ինչ կրել սըրտի կամ մարմնոյ՝ ոչ այժմու ժամանակիս է, այլ վիճակ յաւիտենից հանգստեան։ Այս մի կարծեր թէ

գտեալ իցէ քո զճշմարիտ խաղաղութիւն, եթէ ոչինչ զգաս ծանրութիւն. և մի, թէ ամենայնն իցէ բարի, յորժամ չկայ ինչ քո ոսոխ. և մի կատարելութիւն զայն, եթէ ամենայն ինչ լինիցի ըստ ըղձից քոց։ Եւ մի մեծ ինչ զրեր զանձն, կամ առանձինն իմն սիրելի, եթէ առաւելուցու քո եռանդն և քաղցրութիւն. զի ոչ սոքօք ճանաչի ճըշմարիտ առաքինասէրն, և ոչ 'ի սոսին հաստատեալ է յառաջադիմութիւն և կատարելութիւն մարդոյ։

Դ. Իսկ յինչ տէր։

Ե. Յայն՝ զի մատուցես զքեզ յամենայն սրտէ քումմէ կամացն Աստուծոյ, ոչ խնդրելով զքոյն, ոչ 'ի փոքունս և ոչ 'ի մեծամեծս, ոչ առ ժամանակ մի և ոչ յաւիտեան. մինչև միօրինակ կալ մնալ քեզ 'ի զոհութեան՝ եթէ 'ի յաջողութիւնս և եթէ 'ի վիշտս, ամենայնի հաւասարաթաթ կշռութեամբ։ Եւ եթէ այնչափ արի և քաջայոյս լինիցիս, մինչ և բարձմամբ ներքին մխիթարութեան՝ առաւելագունից ևս համբե-

բելոյ զսիրտ քո պատրաստեսցես. և ոչ զանձն արդարացուսցես՝ որպէս թէ չէր արժան քեզ զայդ ամենայն կրել, այլ զիս յամենայն կարգաւորութիւնս արդարացուսցես և սուրբ արասցես. յայնժամ ընդ ճըշմարիտ և ուղիղ ճանապարհ խաղաղութեան գնաս, և յոյս եղիցի քո աներկեան՝ թէ անդրէն խնդութեամբ զերեսս իմ տեսցես։ Ապա եթէ 'ի կատարեալ արհամարհութիւն անձին ժամանեսցես, գիտասջիր զի յայնժամ 'ի բաղում խաղաղութեան վայելեսցես, ըստ մարթելոյ պանդխտութեան քոյ։

ԳԼՈՒԽ ԻԶ

Յաղագս վանմոռքեան ազատական մը-տաց. որոշմ արժանաւորք՝ առաւել խոնարհական աղօթիւք՝ քան ուսմամբ.

Ա. Ցէր, այս գործ է առն կատարելոյ, ոչ երբէք լքանել 'ի խոկմանէ երկնայնոց, և ընդ բաղում

հոգս անցանել իբր անհոգ. ոչ որ-
պէս թմրեալ ոք, այլ վսեմութեամբ
իմն ազատական մտաց, ոչ և 'ի մի
ինչ յարարածոց անկարգ բերումն
ունելով։

Բ. Աղաչեմ զքեզ, մարդասէր
տէր, պահեա զիս 'ի հոգոց կենցա-
ղոյս, զի մի կարի իմն ընկալայց 'ի
նոսա. 'ի բազմաղէմ կարեաց մար-
մնոյ, զի մի 'ի հեշտութիւնս ըմբռ-
նեցայց. և յամենայնէ՝ որ ոտնա-
ռու է հոգւոյ, զի մի վաստակաբեկ
լքայց։ Զասեմ յայնց իրաց, զո-
րովք սրտի մտօք փարի աշխար-
հային ունայնութիւն. այլ յայնց
թշուառութեանց, որք զոգի ծա-
ռայի քո հասարակաց մեռելութեան
անիծաղրութեամբ դառն ծաներա-
ցուցանեն. և չթողուն նմա մուտ ու-
նել յազատութիւն հոգւոյ, որչափ
կամք իցեն։

Գ. Աստուած իմ, անճառ քաղց-
րութիւն, դարձո ինձ 'ի դառնու-
թիւն զամենայն մարմնական մխի-
թարութիւն որ 'ի բաց դարձուցանէ
զիս 'ի սիրոյ անանց բարեաց, և

յինքն չարաչար յանկուցանէ հրա-
պուրանօք կենցաղական հեշտու-
թեանց։ Մի յաղթեսցէ ինձ տէր,
մարմին և արիւն. մի խաբեսցէ զիս
աշխարհ, և սնոտի փառք նորա. մի
պատրեսցէ զիս սատանայ, և խո-
րամանկութիւն նորա։ Տուր ինձ զօ-
րութիւն ընդդէմ կալոյ, համբերու-
թիւն տանելոյ, արիութիւն հանա-
պազորդելոյ։ Տուր փոխանակ ամե-
նայն մխիթարութեանց աշխարհի՝
զհոգւոյ քոյ զանուշակ օծութիւն,
և փոխանակ մարմնական սիրոյ՝
հեղ յիս զսէր անուան քո։

Դ. Ա.հա կերակուր և ըմպելի, ձորձ
և այլոց կարեաց մարմնոյ պէտք՝
բեռն են ջերմեռանդն հոգւոյ։ Շնոր-
հեա այսպիսեօք չափով տածիլ, և
մի անչափ ըղձմամբ յայնս պատա-
ղիլ։ Զամենայն յանձնէ մերժել չէ
արժան, զի պարտ է զբնութեան
պէտս մատակարարել. այլ աւելոր-
դացն և հեշտալեաց՝ ի խնդիր լինել՝
արգելուն սուրբ օրէնք. զի մի մար-
մինն ընդդէմ հոգւոյն լրբեսցի։
Յայսմ ամենայնի ձեռն քո ինձ ա-

ռաջնորդեսցէ և ուսուսցէ, զի մի ինչ լիցի աւելազանցութիւն։

ԳԼՈՒԽ ԻԷ

Թէ առանձնական սէրն 'ի գերագոյն բարոյ մնծապէս յետս ընկրկէ.

Ա. Որդեակ, պարտ է քեզ տալ զամենայն փոխանակ ամենայնի, մինչև չմնալոյ ինչ անձին։ Գիտասջիր, զի սէր անձին առաւել վնասէ քեզ քան աշխարհի իրք։ Ըստ սիրոյ և ըստ ըղձման՝ զոր յանձին ունիս, յաւէտ կամ նուազ յարին 'ի քեզ իրք։ Եթէ սէր քո մաքուր է և անխառն և կարգաւորեալ, ոչ 'ի գերութիւն զրաւիս նոցա։ Մի ցանկար այնմ՝ զոր չէ արժան ստանալ. և մի ստանար զայն ինչ՝ որ խոչ է քեզ, և 'ի ներքին ազատութենէ վրէպ զքեզ կացուցանէ։ Զարմանք են, զի ոչ յամենայն սրտէ յիս յանձն լինիս, ամենայնիւ հանդերձ՝ որում ցանկալ կամ զոր ըստանալ մարթիս։

Բ. Զիարդ սնոտի տրամութեամբ հաշիս, զի՞ աւելորդ հոգովք տաժանիս. կալ զհաճոյս իմ, և ոչ ինչ տուժեսցիս։ Եթէ զայս ինչ կամ զայն ինչ խնդրես, և ասա կամ անդ լինել կամիս վասն անձին զիւրութեան և վասն քոց հաճոյից, ոչ երբէք եղիցիս 'ի հանգստի, և ոչ զերծ 'ի հոգոց. զի յամենայնի զբաց ինչ յոռութիւն, և ամենայն ուրեք լիցի ինչ քեզ դիմադարձ։

Գ. Ապա լաւ է՝ ոչ զամենայն արտաքին՝ որ զինչ և իցէ՝ ստանալ կամ մթերել. այլ արհամարհել և խլել 'ի սրտէ արմատաքի։ Զոր մի իմանար միայն զզանձուց և զմեծութենէ, այլ և զպատուասիրութենէ և զցանկութենէ սնոտի զովութեան, որք համօրէն անցանեն ընդ աշխարհի։ Ոչինչ օգնէ տեղին, եթէ չկայ եռանդն հոգւոյ. և ոչինչ յերկար տեւէ խաղաղութիւնն խնդրեալ արտաքոյ, եթէ խարխուլ է հիմն սրտի. այս է, եթէ ոչ յիս հաստատեալ իցես։ Հնար է թէ փոխեսցիս, այլ ոչ 'ի լաւ անդր։ Զի 'ի դի-

պել վտանգի, զացես՝ յորմէ խորշեցար, և աւելի ևս։

Աղօթք յաղագս մարդուբեան արտի և երկնային իմաստուբեան.

Դ. Հաստատեա զիս, տէր, շնորհօք սուրբ հոգւոյդ։ Ցուր զօրութիւն, զօրանալ ինձ ըստ ներքին մարդոյն. և զսիրտ իմ յամենայն անպիտան հողոց և անձկութեանց դատարկեա, չձգիլ ինձ 'ի պէսպէս ցանկութիւնս ամենայնի՝ որ անարգ իցէ և որ պատուական. այլ յամենայն հայել՝ որպէս յանցաւոր ինչ, և յիս իսկ ընդ նոսին անցաւորակից։ Զի չիք ինչ մշտամնայ ընդ արեզակամբ, ուր ամենայն ինչ ունայնութիւն է և տառապանք հոգւոյ։ Ո՞վ որպէս իմաստուն է, որ զայս խորհի։

Ե. Ցուր ինձ, տէր, զիմաստութիւն երկնային, զի ուսայց քան զամենայն զքեզ խնդրել և գտանել, քան զամենայն զքեզ խորհել և սիրել, և զայլն ամենայն՝ ըստ կարգի

իմաստութեան քո իմանալ որպէս և են։ Յուր հանճարով խոտորել 'ի մարդելուզաց, և համբերութեամբ տանել հակառակորդաց. զի մեծ իմաստութիւն է՝ չտատանել յամենայն հողմոյ բանից, և ոչ ունկն մատուցանել հրապուրանաց յուշկապարկի։ Ընդ ճանապարհ, զոր այսպէս սկսանիմք, աներկեան զընամք։

ԳԼՈՒԽ ԻԸ

Ընդդէմ չեզուաց բամբասողաց.

Ա. Որդեակ, մի խոժոռիր եթէ ոմանք քրթմնջեն զքէն, և խօսին ինչ զժուարահաճ։ Դու յոռեգոյն ևս զանձն համարեա, և մի զոք կարծեր քան զքեզ տկար։ Եթէ ըստ ներքնոյն գնաս, ոչ մեծ ինչ զրես զբանս՝ որք ցնդին ընդ օդս։ Ոչ փոքր իմաստութիւն է՝ լռել 'ի չար ժամանակի, 'ի սրտէ առ իս դառնալ, և ոչ ընդ մարդկան դատաստան խառնիլ։

Բ. Մի՛ լիցի խաղաղութիւն քո 'ի բերան մարդկան. զի եթէ 'ի բարին մեկնեն և եթէ 'ի չարն, ոչ վասն այդր լինիս այլ մարդ։ Ո՞ւր իցէ ճշմարիտ խաղաղութիւն և ճըշմարիտ պարծանք, ո՞չ ապաքէն յիս։ Որ ոչ անձկայ մարդկան հաճոյ լինել, և ոչ երկնչի յաչաց ելանել, վայելէ 'ի բազում խաղաղութեան։ Յանկարգ սիրոյ և 'ի սնոտի երկիւղէ յառաջ գայ ամենայն աղմուկ սրտի և ցնդումն մտաց։

ԳԼՈՒԽ ԻԹ

Թէ որպէս 'ի նեղութեան պարտ է կարդալ առ Աստուած, և օրհնել զնա։

Ա. Եղիցի անուն քո տէր օրհնեալ յաւիտեան, զի թողացուցեր այսմ փորձութեան և նեղութեան դալ 'ի վերայ իմ։ Զեմ բաւական զերծանել 'ի նմանէ, այլ հարկ է ինձ առ քեզ ապաւինել, զի լիցիս իմ օգնական, և շրջեսցես ինձ յո-

զուտ։ Ահա 'ի վիշտս եմ տէր, և չիք զիւր սրտի իմոյ. այլ նեղեալ եմ յոյժ 'ի կրից աստի։ Եւ արդ, Հայր սիրելի, զինչ ասացից. ըմբռնեցայ յանձկութիւնս, ապրեցո զիս 'ի ժամէ աստի յայսմանէ։ Այլ վասն այնորիկ եկի ես 'ի ժամս յայս, զի դու փառաւորեսցիս 'ի խոնարհիլ իմում յոյժ, և յելանել իմում քև յաղատութիւն։ Կամեաց տէր փրկել զիս, զի ես աղքատ յինչ ձեռնհաս եմ, և յոմ երթայցեմ առանց քոյ։ Ցուր, տէր, համբերութիւն և յայսմ նուապի. օգնեա ինձ Աստուած իմ, և ես ոչ երկեայց, որչափ և ծանրացայց։

Բ. Եւ արդ զինչ ասացից յայսմ ամենայնի. Ցէր, եղիցին կամք քո։ Արժանի էի նեղութեան և չարակրութեան. այո՝ պարտ է ինձ ժուժկալել, և երանի՜ թէ համբերութեամբ, մինչև անցցէ սրրիկս և աջողեսցի։ Այլ կարող է ամենազօր ձեռն քո և զայս ևս փորձութիւն բառնալ յինէն, և զբռնութիւն նորա ցածուցանել, զի մի խսպառ վը-

տանկեցայց. որպէս և յառաջն բաղում անգամ արարեր ընդ իս ողորմութիւն, Աստուած իմ։ Ինձ դրժուարին, այլ քեզ դիւրին է այս նորոգումն աջոյ բարձրելոյդ։

ԳԼՈՒԽ Լ.

Յաղագս խնդրելոյ զօգնականութիւնն Աստուծոյ, և յաղագս յուսոյ վերջապահն ընդունելութեան շնորհաց.

Ա. Որդեակ, ես եմ տէր՝ որ զօրացուցանեմ յաւուր նեղութեան։ Ե՛կ առ իս, յորժամ ոչ յաջողէ քեզ։ Այս է, որ մեծապէս խափանէ զմխիթարութիւն երկնային. զի յամր բերիս յաղօթս։ Քանզի մինչչև է քո մատուցեալ առ իս յաղերս, բաղումս խնդրես սփոփանս, և ըզբօսեցուցանես զքեզ յարտաքինս։ Վասն այսորիկ ոչինչ օգտէ քեզ այն ամենայն, մինչև 'ի միտ առցես՝ թէ ես եմ, որ փրկեմ զյուսացեալս յիս. և արտաքոյ իմ չիք օգ-

նութիւն զօրաւոր, և ոչ խորհուրդ պիտանի, և ոչ դեղ հաստատուն։ Այլ արդ ոգի առեալ յետ մրրկի, զօրացիր 'ի լոյս զթութեանց իմոց. զի մերձ եմ ես, ասէ տէր, 'ի նորոգել զամենայն, ոչ անթերի միայն, այլ և լիուլի առաւելութեամբ։

Բ. Եթէ կայցէ՞ ինչ ինձ դժուարին, կամ թէ յա՞յնց իցեմ, որ ասեն և ոչ առնեն։ Ո՞ւր են հաւատք քո։ Կա՛ց մնա զու հաստատուն համբերութեամբ։ Լեր երկայնամիտ և այր զօրութեան. եկեսցէ հասցէ քեզ մխիթարութիւն յիւրում ժամանակի։ Սպասեա և դարձեալ սպասեա, ես եկից և բժշկեցից զքեզ։ Փորձութիւն է, որ չարչարէ զքեզ. և ահ սնոտի, որ զարհուրեցուցանէ զքեզ։ Չի՞նչ օգտեն քեզ հոգք զսպագայից՝ թէ զուցէ պատահեսցին, բայց զի ունիցիս տրտմութիւն 'ի տրտմութեան վերայ։ Շատ է աւուրն չար իւր. սնոտի է և անօգուտ խռովել կամ խընդալ 'ի վերայ ապագայից, որք գուցէ ոչ երբէք լինիցին։

Գ. Մարդկային իմն է՝ այսպիսի ցնորիւք խաբիլ, և փոքրոգութեան է նշան՝ այդպէս հեշտեաւ համոզիլ 'ի հրապոյրս թշնամւոյն։ Քանզի չէ ինչ նմա փոյթ, թէ սուտեամբ կամ ճշմարտութեամբ զքեզ խաբեսցէ. և ոչ, թէ արդեաւս սիրով կամ ապագայից ահարկութեամբ՝ յերկիր զքեզ կործանեսցէ։ Ապա մի խուովեսցի սիրտ քո, և մի զանգիտեսցէ։ Հաւատա յիս, և յողորմութիւն իմ յուսա։ Ի կարծել քո զքեզ յինէն հեռի, բազում անգամ ես մերձ կամ։ Եւ յորժամ համարիս թէ զամենայն կորուսեալ է քո, յայնժամ յոլովակի մեծի հատուցման շահ 'ի վերայ կայ։ Զէ կորուսեալ ամենայնն, յորժամ իրք ոչ 'ի դէպ յաջողեն։ Մի դատեր ըստ այժմու կարծեացդ, և մի զծանրութիւն ինչ՝ ուստի և գայցէ՝ ըստանձներ, որպէս թէ ոչինչ յոյս կայցէ թօթափելոյ։

Դ. Մի համարիր զքեզ խպատ թողեալ, թէպէտ և առ վայր մի արկանիցեմ զքեզ նեղութիւն, կամ

'ի բաց առնուցում զքո ըղձալի մը-
խիթարութիւն. զի ընդ այս է մուտ
յարքայութիւնն երկնից։ Եւ այս
անտարակոյս առաւել օգուտ է քեզ
և այլոց իմոց ծառայից, մարզել
ձեզ 'ի վիշտս քան զամենայն ունել
ըստ հաճոյս։ Գիտեմ ես զգալտնի
խորհուրդս, թէ յոյժ օգուտ է վասն
փրկութեանդ մնալ քեզ վայր մի ա-
ռանց քաղցրութեան. մի գուցէ
վիրաստիս ընդ քաջաղէպ ելս, և
յաչս անձին բարուք թուիցիս յայն
ինչ՝ որ ոչ ես։ Զոր ետու՝ զիտեմ
բառնալ, և անդրէն չնորհել՝ յոր-
ժամ հաճոյ թուիցի ինձ։

Ե. Եթէ տամ, իմ է. և եթէ 'ի
բաց առնում, ոչ զքոյդ առնում։
Զի իմ են ամենայն տուրք բարիք,
և ամենայն պարգևք կատարեալք։
Թէ ծանրութիւն զքեզ արկանեմ,
կամ զինչ և իցէ ձախող պատա-
հար, մի խոժոռեսցիս և մի լքցի
սիրտ քո։ Գիտեմ ես վաղվաղակի
թեթևացուցանել, և զամենայն բեռն
'ի խնդութիւն փոխարկել։ Սակայն
և այնպէս արդար եմ և յոյժ գովե-

լի, զի զայդ այդպէս առնեմ ընդ քեզ։

Զ. Թէ ուղիղ խորհիս և'ի ճշմարտութիւն հայիս, ոչ երբէք պարտ է քեզ ընդ վիշտս սրտաթափ տրխրիլ. այլ առաւել խնդալ և գոհանալ. նա՝ զայն իսկ խնդութիւն համարել, զի'ի նեղել իմում զքեզ ցաւովք՝ ոչ խնայեմ'ի քեզ։ Որպէս սիրեաց զիս Հայր, և ես սիրեմ զքեզ, ասացի սիրելեաց իմոց աշակերտաց. զորս ոչ առաքեցի յանցաւոր խնդութիւնս, այլ'ի մեծամեծ պատերազմունս. ոչ'ի պատիւ, այլ յարհամարհանս. ոչ'ի դատարկութիւն, այլ յաշխատութիւն. ոչ'ի հանգիստ, այլ'ի բերել պտուղ յոյժ համբերութեամբ։ Ցուշ լիցին քեզ, որդեակ իմ, այս բանք։

ԳԼՈՒԽ ԼԱ.

Յաղագս զանց առնելոյ զամենայն աշխարհածովք, առ գտանելոյ զարարիչն.

Ա. Տէր, առաւելագոյն չնորհի պէտք են ինձ, առ ցայն վայր հասանելոյ, որ ոչինչ յարարածոց լիցի ինձ խափան։ Զի ցորչափ յիրաց ինչ արգելեալ կամ, չիք ինձ համարձակ առ քեզ վերանալ։ Անձկայր համարձակ 'ի քեզ սլանալ, որ ասացն. Ո՛տայր ինձ թևս որպէս զաղաւնոյ, զի թռչէի վերանայի և հեռացեալ դադարէի։ Զինչ համարձակահայեաց քան զակն ամառատ, և զինչ համարձակագոյն քան զայն՝ որ ոչինչ խիք ցանկայ յերկրի։ Ապա պարտ է անցանել զանցանել զամենայն արարածովք, և զանձն իսկ զլիովին լքեալ թողուլ, և 'ի հիացման լեալ՝ տեսանել թէ արարչիդ ամենայնի ընդ արա-

բածս չկք ինչ նմանութիւն։ Եւ եթէ չէ ոք զերծ յամենայն արարածոց, ոչ զօրէ համարձակ նայել յաստուածայինս։ Վասն այսորիկ սակաւք զտանին աստուածախոհք, զի սակաւք զիտեն 'ի կորստական և յեղականաց լիով զանձինս ճողոպրել։

Բ. Ա. այս պիտին չնորհք մեծ, տա վերացուցանելոյ զոգի, և քան զինքն 'ի վեր յափշտակելոյ։ Եւ թէ չէ ոք հոգւով վերառեալ, և յամենայն արարածոց զերծ, և ընդ Աստուծոյ բոլորովին միաւորեալ, որ զինչ զիտէ, որ զինչ և ունի, չէ ինչ մեծարգի։ Փոքր մնայ և ստորաքարշ, որ բաց 'ի միոյ միայնոյ անչափ և յափտենական բարւոյ՝ համարի ինչ մեծ։ Որ ինչ ոչ է Աստուած, ոչինչ է և յոչինչ համարելի։ Բազում՝ ինչ ընդ մէջ է իմաստութեան առն լուսաւորելոյ և առաքինւոյ, և զիտութեան ուսուցմասէր կղերիկոսի՝ զրոց աշակերտելոյ։ Ընտրելագոյն է ուսումն որ 'ի վերուստ յաստուածային հոսմա-

նէ գայ, քան որ մարդկային երկաս-
սիրութեամբ ստացանի։

Գ. Բազումք զտանին փափա-
քողք վերնական խոկման. բայց
զորս պիտին առ այն՝ ոչ ջանան 'ի
գործ արկանել։ Մեծ խոչ այն է,
զի 'ի նշանս և 'ի զգալիս զկայ առ-
նումք, և զկատարեալ մեռելութենէ
չնչք մեր փոյթ։ Ոչ գիտեմ զինչ իրք
են, յորմէ հոգւոյ առաջնորդիմք, և
յինչ ճկտիմք մեք՝ որք հոգևոր ա-
նուանեալս եմք. զի այնչափ աշ-
խատութիւն և առաւելագոյն փոյթ
յանձին ունիմք վասն անցաւոր և
չնչին իրաց, իսկ 'ի խոկալ զներքինս
մեր՝ սակաւ երբէք լիով զմիտս ամ-
փոփեմք։

Դ. Բա՞ր է, յետ սակաւ մի զմիտս
ամփոփելոյ՝ անդէն վազվազակի 'ի
զուրս յարձակիմք, և զգործս մեր
ոչ անաչառ քննութեամբ կշռեմք։
Թէ յո՞ր վայր ճգին մեր ախորժակք,
միտ ոչ դնեմք. և թէ ո՞րպէս ան-
սուրբ է ամենայն ինչ մեր, զայն
ոչ ողբամք։ Զի ամենայն մարմին
ապականեալ էր զճանապարհ իւր,

վասն այնորիկ զհետ զայր ջրհեղեղն ահագին։ Եւ քանզի ախորժակ մեր ներքին յոյժ է ապականեալ, հարկ է և զհետ եկեալ զործոյն՝ որ զուշակն է ներքին լուծութեան՝ ապականիլ։ Ի մաքուր սրտէ յառաջ զայ պտուղ կենաց բարեաց։

Ե. Թէ որչափ ինչ արար զք, այդմ 'ի խնդիր լինին. այլ թէ քանի առաքինութիւնքն, ոչ ժրաջան խորհին։ Թէ է հզօր, մեծատուն, զեղեցիկ, աջողաձեռն, կամ քաջ մատենագիր, քաջ երգեցիկ, քաջ վաստակաւոր, զայն զննեն. թէ քանի աղքատ է հոգւով, քանի համբերող և հեզ, քանի փոյթեռանդն և ներանձնաւոր, զայն բազումք լռեն։ Բնութիւնն յարտաքինս հայի մարդոյ, այլ շնորհն 'ի ներքինս ակնարկէ։ Նա ստէպ խաբի. սա յԱստուած յուսայ, զի մի պատրեսցի։

ԳԼՈՒԽ Լ Բ

Յաղագս ուրանալոյ զանձն, և հրաժարելոյ յամենայն ցանկութենէ.

Ա. Որդեակ, ոչ կարես ստանալ զկատարեալ ազատութիւն, թէ ոչ բոլորովին ուրանաս զանձն։ Ստնակապեալ են ամենայն իւրեանցասէրք և անձնասէրք, ցանկացողք, ընդվայրաքննիչք և դատարկաշրջիկք. որք խնդրեն յամենայնի ըզհեշտալիս, և ոչ զՔրիստոսին. բայց զայս առնեն յոլովակի կեղծեօք և պատճառանօք, որոց չիք տեղի։ Զի կորիցէ ամենայն, որ ոչ զայ յԱստուծոյ։ Կալ յանձին ըզբանն համառօտ և հակիրճ. Թող զամենայն, և գտցես զամենայն. թող զցանկութիւն, և գտցես զհանգիստ։ Այսմ ստէպ լեր մտախորհ. և իբրև կատարեսցես, 'ի միտ առցես զամենայն։

Բ. Տէր, ոչ է գործս միոյ աւուր կամ տղայական խաղալիկ. զի յայս

բան համառօտ փակի ամենայն կա-
տարելութիւն կրօնաւորաց։

Գ. Որդեակ, ոչ է պարտ քեզ 'ի
բաց դառնալ, և ոչ անդէն վաղվա-
զակի լքանել՝ 'ի լսել զճանապարհ
կատարելոց. այլ առաւել ևս 'ի
բարձրագոյնս բերիլ, և զէթ փա-
փաքմամբ այնց անձկալ։ Եթանէ՛
թէ այնպիսի լինէիր, և ցայն վայր
ժամանէիր, մինչև չլինել քեզ անձ-
նասէր, այլ հրամանի իմում ճնալ
և հրամանի հօր իմոյ, զոր քեզն ա-
ռաջի արարի. յայնժամ ինձ հաճոյ
լինէիր յոյժ, և զամենայն կեանս
քո խնդութեամբ և խաղաղութեամբ
կատարէիր։ Դեռ 'ի բաղում ինչ
իրաց ունիս հրաժարել, զորս թէ
ոչ բոլորովին յիս յանձն առնես,
ոչ ստացիս զոր խնդրես։ Խրատ
տամ քեզ գնել յինէն ոսկի ընտիր,
զի ճոխասցիս. զիմաստութիւն ա-
սեմ զերկնային, որ զստորայինս
ամենայն առ ոտն հարկանէ։ Ար-
համարհեա զիմաստութիւն երկրա-
ւոր, և զամենայն զմարդկային և
զանձնական հաճոյս։

Դ. Ասացի զնել քեզ զանարգն՝ փոխանակ պատուականացն և բարձրականաց 'ի մարդկային իրս. քանզի յոյժ անարգ և զուզնաքեայ և զրեթէ մոռացեալ իմն երևի ճշմարիտ իմաստութիւնն երկնային, որ ոչ մեծամեծս խորհի զանձնէ, և ոչ մեծանալ խնդրէ յերկրի. զոր բազումք քարոզել քարոզեն բերանով, բայց վարուք օտար են յոյժ։ Եւ սակայն պատուական մարգարիտ է նա՝ ծածկեալ 'ի բազմաց։

ԳԼՈՒԽ ԼԳ

Յաղագս անհաստատութեան արտի, և յաղագս փախճանական դիտման զոր պարտ է ունել առ Աստուած.

Ա. Որդեակ, մի հաւատար քում ախորժակի. որ առ այժմ է, և վաղվաղակի փոխի յայլ։ Յորչափ կենդանի ես, ընդ փոփոխութեամբ ես, ևս և ակամայ. մինչև զտանիլ քեզ երբեմն ուրախ, և երբեմն տրտում.

երբեմն հանդարտեալ, և երբեմն խռովեալ. երբեմն փոյթեռանդն, և երբեմն գաղջ. երբեմն ժրաջան, և երբեմն անջան. երբեմն ծանր, և երբեմն թեթև։ Այլ յաղթէ փոփոխականացս իմաստունն և հոգէխրատն, ոչինչ հայեցեալ թէ զինչ յանձին զգայ, կամ ուստի՞ ընչէ փոփոխականութեանն հոգմ. այլ յայն, զի ամենայն գիտումն մըտաց իւրոց բերիցի 'ի պատշաճաւոր նպատակն՝ որում անձկայ։ Զի այսպէս հնար է նմա կալ մնալ անսասան, յստակահայեաց գիտմանն աչօք յայնչափ բազմագիմի անցս՝ անթարթ յիս յառեալ։

Բ. Արդ որչափ յստակագոյն են գիտմանն աչք, այնչափ անդրդուելի լինին գնացք ընդ պէսպէս ծփանըս։ Այլ 'ի բազումս մթագնին յըստակ գիտմանն աչք. զի անդէն վաղվաղակի ուղղին 'ի հեշտալի ինչ, որ ելանէ ընդ առաջ. որովհետև գժուարին է թէ գտցի ոք բոլորովին զերծ յարատոյ իւրոյին շահասիրութեան։ Որպէս հրէայք եկին

երբեմն 'ի Բեթանիա առ Մարթա և Մարիամ. ոչ միայն վասն Յիսուսի, այլ զի և զՂազար տեսցեն։ Ապա սրբել պարտ է զդիւամանն աչս, զի յստակատես իցէ և ուղիղ. այլ և առ իս ուղերձել, զանց զայլովք արարեալ միջնորդօք։

ԳԼՈՒԽ ԼԴ

Յաղագս թէ սիրողին քաղցր է Աստուած 'ի վեր քան զամենայն և յամենայնի.

Ա. Ահա Աստուած իմ, և ամենայն ինչ։ Զի՞նչ այլ կամիմ, և որո՞ւմ իմիք լաւագունի ընդանալ մարթիմ։ Ո՞վ անուշակ և քաղցր բան, բայց սիրողին զբանն՝ և ոչ զաշխարհ, և զորս յաշխարհի են։ Աստուած իմ, և ամենայն ինչ։ Ի միտ առողին շատ է ասացեալս, և սիրողին քաղցր է ստէպ կրկնել զայն։ Ապաքէն ուր դու կաս, քաղցր է ամենայն, բայց թէ 'ի բացէ

ես, զաւն է ամենայն։ Դու տաս սրտի հանդարտութիւն, մեծ խաղաղութիւն, և ցնծալիս ուրախութիւն։ Դու տաս ուղիղ խորհել զամենայն, և օրհնել զքեզ յամենայնի. և առանց քո ոչ ինչ հաճոյ թուի ընդ երկար. այլ առ հաճոյ լինել և քաղցրանալ՝ պարտ է նմա զնորհ քո առընթեր ունել, և համեմիւք իմաստութեան քո համեմել։

Բ. Որում քաղցր ես դու, զինչ ոչ քաղցրանայ նմա. և որում չես դու քաղցր, զինչ քաղցրասցի նըմա։ Բայց վրէպ են յիմաստութենէ քումմէ իմաստունք աշխարհի, և որոց քաղցր է մարմին։ Զի անդ է բազում ունայնութիւն, և ասա մահ։ Բայց որք արհամարհութեամբ աշխարհայնոց և մեռելութեամբ մարմնոյ զհետ երթան քոյ, ճշմարտապէս իմաստուն ճանաչին. զի 'ի նանրութենէ 'ի ճշմարտութիւն, և 'ի մարմնոյ 'ի հոգի փոխադրին։ Այսպիսեաց քաղցր է Աստուած. և որ ինչ բարութիւն զտանի յարարածս, զամենայնն 'ի զովեստ մա-

տուցանեն իւրեանց արարչի։ Այլ աննման և յոյժ աննման է քաղցրութիւն արարչին և արարածոց, յաւիտենից և ժամանակի, լուսոյն անստեղծի և լուսոյն լուսաւորելոյ։

Գ. Ո՛վ լոյս մշտնջենաւոր, որ 'ի վերդ ես քան զամենայն լոյս եղակն, փայլեա զփայլատակունս 'ի բարձանց՝ մտանել 'ի շտեմարանս սրտի իմոյ։ Մաքրեա, ուրախացո, պայծառացո, և կենդանարարեա զհոգի իմ և զզօրութիւնս սորա, յարիլ 'ի քեզ հրճուողական հիացմամբ։ Երբ եկեսցէ այն երանաւէտ ժամ ցանկալի, զի տեսցեմք քո զիս յաղեցուսցես և լիցիս ինձ ամենայն յամենայնի։ Մինչչև է տուեալ այս, ոչ լինի լիուլի խընդութիւն։ Բա՛ր է, զեռ կենդանի է յիս հին մարդն. չև է բոլորովին խաչելեալ, և ոչ կատարելապէս մեռեալ։ Դեռ բուռն ցանկայ հակառակ հոգւոյ, պատերազմունս յարուցանէ ներքինս, և չթողու թագաւորութեան հոգւոյ կալ յանդորրու։

Դ. Այլ դու որ տիրես զօրութեան ծովու, և զձայն ալեաց նորա ցաւ ծուցանես, արի, օգնեա ինձ։ Յարութեան զհեթանոսս, որք կամին ընդ պատերազմ. խորտակեա զնոսա զօրութեամբ քով։ Յոյց զմեծամեծս քո, և փառաւորեսցի ալ քո։ Զի չիք իմ այլ յոյս և ապաւէն, բաց ի քէն տէր Աստուած իմ։

ԳԼՈՒԽ ԼԵ

Թէ ցիր ապահովութիւն ի փորձութիւնսն յաստի կեանս.

Ա. Որդեակ, չես երբէք ապահով յաստի կեանս. այլ ցորչափ կենդանի ես, հանապազ հոգևորական զէնք պիտին քեզ։ Ի մէջ թշնամեաց կաս, և յաջմէ և յահեկէ պատերազմ մղի. արդ թէ ոչ պատրաստարեաս զանձն վահանաւ համբերութեան, ոչ ընդերկար կացցես անխոց։ Եւ թէ ոչ հաստատես զսիրտ քո յիս, յանձն առեալ համ-

բերել ամենայնի վասն իմ, ոչ կա-
բասցես տոկալ այսմ տաղնապի,
և ոչ երանելեացն յաղթութեան լի-
ցիս ժամանող։ Ապա պարտ է քեզ
քաջութեամբ անցանել ընդ ամե-
նայն, և հզօր ձեռամբ 'ի զիմի հար-
կանիլ ախոյանին։ Զի յաղթողին
տուեալ լինի մանանայ, իսկ թմրե-
լոյն մնայ բազում թշուառութիւն։

Բ. Եթէ խնդրես յաստի կեանս
հանդիստ, զիաւրդ յայնժամ 'ի յա-
վիտենականն ժամանեսցես։ Մի
պատրաստեր զանձն բազում հան-
դըստեան, այլ մեծի համբերու-
թեան։ Խնդրեա զճշմարիտ խաղա-
զութիւն, մի յերկրի, այլ յերկինս.
մի 'ի մարդիկ և մի յայլ արարածս,
այլ յԱստուած միայն։ Վասն Աս-
տուծոյ սիրոյն մտաղիւր յանձն առ
զամենայն, զաշխատութիւնս, ըզ-
ցաւս, զփորձութիւնս, զչարչա-
րանս, զանձկութիւնս, զվիշտս,
զհիւանդութիւնս, զզրկանս, զչա-
րախօսութիւնս, զկշտամբանս, ըզ-
կորանս, զամօթ, զյանդիմանու-
թիւնս, և զարհամարհանս։ Այս

ամենայն օգնէ առաքինութեան, այս ամենայն ընտիր ընծայեցուցանէ զհամբակ Քրիստոսի, այս ամենայն յօրինէ զպսակ երկնային։ Ես հատուցից զվարձս անվախճան ընդ սուղ վաստակոց, և զփառս անանց ընդ անցաւոր ամօթոց։

Գ. Կարծիցես յամենայն ժամ ունել քեզ ըստ կամս քո զմխիթարութիւնս հոգևորս։ Սուրբք իմ ոչ յամենայն ժամ ունէին այդպիսիս. այլ բազում ծանրութիւնս, և պէս-պէս փորձութիւնս, և մեծամեծ լքմունս։ Բայց երկայնմտութեամբ տարան ամենայնի, և առաւել յիս յուսացան քան յանձինս. զի զիտէին թէ չեն արժանի չարչարանք ժամանակիս հանդերձելոցն փառաց։ Եւ զու առ օրին կամիս ունել, զոր բազումք յետ բազում արտասուաց և մեծամեծ ճգանց հազիւ ստացան։ Համբեր տեառն, քաջալերեաց և զօրացիր. մի վհատիր, մի լքանիր, այլ մարմնով և հոգւով արիաբար շահատակեա 'ի փառս իմ։ Ես հատուցից լիուլի, ես ընդ քեզ եղէց յամենայն 'ի վիշտս։

ԳԼՈՒԽ ԼԶ

Ի վերայ ուսայն դատողութեան մարդկան.

Ա. Որդեակ, հաստատեա զսիրտ քո 'ի տէր, և 'ի մարդկային դատողութենէ մի ինչ զանգիտեր, ուր անըստգիտ է քո խիղճ մտաց։ Բարւոք է և երանելի՝ կրել ինչ այդպիսի. և չէ ինչ այդ ծանր՝ խոնարհ սրտի, որ յԱստուած և ոչ յանձն յուսացեալ իցէ։ Բազումք բազում ինչ խօսին, վասն որոյ և չեն ինչ արժանահաւատ։ Այլ և զամենեցուն զմիտս հաճել՝ չէ ինչ հնարաւոր։ Թէպէտ և ամենեցուն ջանացաւ Պօղոս հաճոյ լինել 'ի տէր, և ընդ ամենայնի ամենայն եղև, բայց և զդատիլն 'ի մարդկանէ՝ ինչ ոչ համարեցաւ։

Բ. Գուն զարծեաց վասն այլոց չինութեան և փրկութեան յիւրմէ կողմանէ ըստ կարի, բայց զդատիլ

և զանգոսնիլ իւր յայլոց՝ չկարաց խսպառ խափանել։ Վասն որոյ զամենայն յանձն արար Աստուծոյ, որ իրագէտն էր ամենայնի. և երկայնմտութեամբ և խոնարհութեամբ 'ի ժանեաց չարախօսաց և նանրախոհից և ըստ հաճոյս իւրեանց պարծելոց՝ կորզեաց զանձն։ Սակայն ձեռն էարկ երբեմն և 'ի պատասխանատուութիւն, զի մի 'ի տկարս 'ի լռութենէ իւրմէ ծնցի գայթակղութիւն։

Գ. Զի՞ է քեզ երկնչել 'ի մարդոյ մահկանացուէ. այսօր է, և վաղիւ չերևի։ Յաստուծոյ երկիր, և յահէ մարդկան մի՛ ինչ զարհուրիր։ Զինչ ձեռնհաս է ոք 'ի քեզ բանիւք կամ թշնամանօք. անձին վնասէ, և ոչ քեզ. և ոչ է կարող 'ի դատաստանացն Աստուծոյ զերծանիլ, ո՛ ոք և իցէ նա։ Կա՛լ դու զԱստուած առաջի աչաց, և մի՛ կապեր զժտութեամբ։ Ապա եթէ առ ժամն երևիս նկուն լինել և զսմօթ կրել, որ չէր արժան, մի՛ վասն այդր խոժոռիր, և մի՛ կարճմտութեամբ նուազեր զքո

պսակդ, այլ յիս հայեաց յերկինս, որ կարող եմ զերծուցանել յամենայն ամօթոյ և 'ի նախատանաց, և հատուցանել իւրաքանչիւր ըստ գործս իւր։

ԳԼՈՒԽ ԼԷ

Յաղագս անիրառն և ողջիկ յանձնարարութեան անձին, առ ստանաւոյ զազատութիւն սրտի.

Ա. Որդեակ, թող զքեզ, և զբացեաս զիս։ Կայց առանց ինչ խտրանաց և սեպհականութեան, և չահեսցիս միշտ։ Զի յաւելցին քեզ առաւել ևս շնորհք, վաղվաղակի իբրև յիս յանձն լիցիս և ոչ նահանջեսցիս։

Բ. Ցէր, երբ յանձն եղէց 'ի քեզ, և յորս թողից զիս։

Գ. Միշտ և յամենայն ժամ, եթէ 'ի փոքունս և եթէ 'ի մեծամեծս։ Զթողում ինչ 'ի զատ. այլ յամենայնի կամիմ լինել քեզ մերկիկ։

Այլ թէ ոչ՝ զիարդ իմ լինիցիս, և ես քոյ, եթէ չլինիս յամենայն կամսց քոց ներքոյ և արտաքոյ հրաժարեալ։ Որչափ վաղագոյն զայդ առնես, լաւ ես լիցիս. և որչափ լրագոյն և անիսառն, այնչափ առաւել ինձ հաճոյասցիս, և առաւել ես օգտեսցիս։

Դ. Են՝ որք յիս յանձն լինին, բայց և թողուն ինչ անձանց պահեստ. զի ոչ լիով յԱստուած ապաւինին, վասն այնորիկ անձանց հոգատարութեան խնամ ունին։ Եւ են ես՝ որք զառաջինն զամենայն մատուցանեն, բայց 'ի բաղխել փորձութեան՝ առ իւրեանցն դարձ առնեն. վասն այսորիկ ոչինչ յառաջադէմ լինին յառաքինութիւնս։ Այսպիսիք 'ի ճշմարիտ ազատութիւն մաքուր սրտի, և 'ի չնորհս իմոյ բերկրական ընտանութեան ոչ ժամանեն, թէ ոչ նախ առնեն ողջիկ յանձնարարութիւն և անձանց զօրհանապազ զենումն. առանց որոյ չլինի խանդաղակաթ միաւորութիւն։

Ե. Ասացի քեզ բաղում անգամ և արդ դարձեալ ասեմ. թող զքեզ, յանձն արա զքեզ, և վայելեսցես 'ի բաղում խաղաղութեան սրտի։ Տուր զամենայն վասն ամենայնի, մի՛ ինչ խնդրեր, մի՛ ինչ 'ի բաց պահանջեր։ Կաց յիս անդրդուելի, և ես եղէց քո. ազատ լիցիս 'ի սրտի, և խաւար զքեզ ոչ ծածկեսցէ։ Ասյամ փոյթ կալ, վասն այսր կաց յաղօթս, և այսմ ցանկա, ամենայնիւ մերկանալ քեզ 'ի քոյոցդ, և մերկոյն Յիսուսի մերկ զհետ երթալ. անձին մեռանել, և յիս յաւիտեան կենդանի լինել։ Յայնժամ 'ի բաց փարատեսցին ամենայն սնոտի ցնորք, անօրէն յոյզք, և աւելորդ հոգք։ Յայնժամ 'ի բաց լիցի և տարապայման երկիւղ, և մեռցի անկարդ սէր։

ԳԼՈՒԽ Լ.Ը

Յաղագս քաջ կառավարուրքեան յարտուաքինս, և դիմել առ Աստուած 'ի վտանգս.

Ա. Որդեակ, յայն հայեաց սրտի մտօք, զի ամենայն ուրեք և յամենայն արտաքին գործս կամ 'ի ըզբաղմունս, ներքոյ ազատ իցես և ինքնիշխան, և զի ամենայնն ընդ քեզ իցէ, և մի զու ընդ նոքօք։ Որպէս զի լիցիս գործոց քոց տէր և առաջնորդ, և մի ծառայ կամ արծաթագին, այլ ազատազգի և ճըշմարիտ հեբրայեցի, ժառանգորդ վիճակի և ազատութեան որդւոցն Աստուծոյ։ Որք 'ի վեր են քան զառժամայքս, և զիտեն զյաւիտենականս. որք յանցաւորս ձախոյ ակամբ հային, և աջոյ ակամբ յերկնաւորս։ Որք ոչ ձգին զհետ երթալ ժամանակաւորաց, այլ ինքեանք ձգեն զնոսա 'ի քաջ արբանեկու-

թիւն, որպէս զիարդ կարդեցան յԱստուծոյ և հաստատեցան յա-
ւարշապետէն, որ ոչինչ անկարդ թողացոյց յիւր արարածս։

Բ. Եւ եթէ յամենայն անցս որ անցանեն՝ պինդ կաս, և ոչ ըստ ար-
տաքին երևութին կամ մարմնոյ աչօք զննես զոր ինչ տեսերն կամ լուար, այլ անդէն յինչ և ի ցէ դատս ընդ Մովսեսի 'ի խորանն մտանես հարցանել 'ի տեառնէ, լուիցես երբեմն յաստուածակոյս կողմանէ պատասխանի, և դարձցիս յետս՝ տեղեկացեալ բաղում ինչ իրաց արդեաց և ապագայից։ Զի յամենայնի զիմէր Մովսէս 'ի խորանն վկայութեան, առ խնդրոց և տարակուսանաց լուծումն, և յաղօթից օգնութիւն էր ապաստան, 'ի բառնալ զվիշտ վտանգի և զմարդկան խեռութիւնս։ Նոյնպէս և դու խոյս տուր 'ի խորան սրտի քոյ, սրտի մտօք կարդալով զաստուածային օգնութիւն։ Զի յայս սակս Յեսու և որդիքն Իսրայելի խաբեցան 'ի գաբաւոնացւոց անտի, վասն զի զբե-

բան տեառն նախ ոչ հարցին. այլ կարի իմն հաւատացեալ ողոք բանիցն՝ի սուտ զթութեան պատրանս ընդունեցան։

ԳԼՈՒԽ ԼԹ

Թէ չէ պարտ մարդոյ տագնապել յիրողոշիւնս.

Ա. Որդեակ, յիս յանձն արա զամենայն ինչ զքո. ես տնօրինեցից յիւրում ժամանակի։ Մնա իմում կարգաւորութեան, և զտցես օգուտ։

Բ. Տէր, մտադիւր քեզ յանձն առնեմ զամենայն. զի խորհուրդք իմ սակաւ օգտեն։ Ո՛ տայր ինձ, չհայել յանցս՝ որ հանդերձեալ են անցանել. այլ՝ի հաճոյս քո անյապաղ բերիլ։

Գ. Որդեակ, սովոր է մարդ կարի իմն պնդել զհետ իրաց ինչ՝ ուրում ցանկայ. այլ իբրև յայն հասանէ, սկիզբն առնէ այլազգ խոր-

հել. զի իղձք առ նոյն չեն մնայուն, այլ մղեն 'ի միոջէ յայլ։ Ապա չէ փոքր և 'ի փոքունս թողուլ զանձն։

Դ. Ճշմարիտ յառաջադիմութիւն մարդոյ՝ է ուրացութիւն անձին, և անձնուրացն ազատ է յոյժ և անհոգ։ Բայց բարեատեաց հին թշնամին ոչ դադարէ 'ի փորձելոյ, այլ զցայգ և զցերեկ ծանր ծանր նեղութիւնս մեքենայէ. զի թերևս յորոգայթ պատրանաց արկցէ զանըզգոյշս։ Աբթուն կացէք և աղօթս արարէք, ասէ տէր. զի մի մտանիցէք 'ի փորձութիւն։

ԳԼՈՒԽ Խ

Թէ մարդ չռնի ինչ բարի յիւրմէ, և չէ կարող պարծել յիրս ինչ.

Ա. Ցէր, ով է մարդ, զի յիշես զու զնա. կամ որդի մարդոյ, թէ այց արասցես նմա. զինչ արժանի է մարդ, թէ զչնորհս քո տացես նմա։ Զիարդ իշխիցեմ զանգատել,

եթէ մերժես զիս. կամ զինչ իրաւունք իցեն իմ ժտելոյ, եթէ զոր հայցեմն՝ չշնորհես։ Ճշմարտութեամբ զայս 'ի դէպ է ինձ խորհել և ասել. Տէր, ոչինչ եմ, ոչինչ իմիք զօրեմ, ոչինչ բարի յինէն ունիմ. այլ յամենայնէ յետնեալ եմ, և միշտ յոչինչ բերիմ։ Եւ թէ ոչ 'ի քէն օգնիմ և խելամտիմ, զլխովին զաղջանամ և 'ի ցոփութիւն լուծանիմ։

Բ. Այլ դու, տէր, միշտ նոյն ինքն ես, և կաս և մնաս յաւիտեան միշտ բարի, արդար, և սուրբ. զամենայն բարութեամբ արդարութեամբ և սրբութեամբ առնես, և իմաստութեամբ տնօրինես։ Իսկ ես որ 'ի պակասութիւն յաւէտ միտեմ, քան 'ի յառաջադիմութիւն, ոչ միշտ կամ մնամ 'ի նմին կայի, այլ եօթն ժամանակք փոխին 'ի վերայ իմ։ Սակայն և այնպէս վաղ յաջողէ ինձ 'ի բարի, յորժամ հաճեսցիս և ձեռն տացես յօգնութիւն։ Զի դու միայն առանց մարդկային ձեռնտուութեան կարող ես օգնել, և այնպէս

կազդուրացուցանել, մինչ երեսաց իմոց ոչ ևս ասա անդ տատանիլ, այլ առ քեզ միայն դառնալ սրտի իմոյ և հանգչել։

Գ. Վասն այսորիկ եթէ քաջ զիտէի զամենայն մարդկային մխիթարութիւն մերժել յանձնէ, եթէ վասն եռանդն ստանալոյ, և եթէ վասն հարկի քեզ 'ի խնդիր լինելոյ, առ 'ի չգոյէ այլոյ՝ որ մխիթարիցէ զիս, յայնժամ իշխէի իրաւամբք յուսալ 'ի շնորհս քո, և ընդ պարգև նորոյ մխիթարութեանն ուրախ լինել։

Դ. Շնորհ ունիմ զքէն, յորմէ զայ ամենայն՝ որ ինչ յաջողէ ինձ 'ի բարի։ Այլ ես ունայն եմ և չնչին առաջի քո, այր մի յողդողդ և տըկար։ Արդ յինչ պարծիցիմ, կամ զիաՀրդ ըղձանայցեմ մեծարգի լինել։ Թերևս ընդ չքութիւն իմ. և ահա ընդունայնութիւն է։ Ապաքէն սնափառութիւն ժանտախտ է և ունայնութիւն մեծ. զի 'ի ճշմարիտ փառաց վրիպեցուցանէ, և յերկնային շնորհաց կողոպտէ։ Զի

'ի լինել մարդոյ հաճոյ յաչս անձին, անհաճոյ լինի քեզ. և յանձկալ մարդկային զովութեանց՝ զրկի 'ի ճշմարիտ առաքինութեանց։

Ե. Այլ ճշմարիտ պարծանք և ցնծութիւն սուրբ է պարծել 'ի քեզ, և ոչ յանձն. խնդալ յանուն քո, և ոչ յիւր զօրութիւն. և ոչ ուրախ լինել յարարած ինչ, բայց միայն վասն քո։ Գովեսցի անուն քո, և ոչ իմ. մեծ եղիցին գործք քո, և ոչ իմ. օրհնեսցի անուն սուրբ քո, և ինձ մի ինչ ընծայեսցի 'ի մարդկային գովութեանց։ Դու փառք իմ, դու ցնծութիւն սրտի իմոյ. 'ի քեզ պարծեցայց և ցնծացայց զօրհանապազ. այլ վասն անձին ինձ ոչ պարծեցայց, բայց եթէ 'ի տկարութիւնս իմ։

Զ. Խնդրեսցեն Հրէայք փառս զառ 'ի միմեանց. ես զփառս խնդրեցից զառ 'ի միոյն Աստուծոյ։ Ամենայն փառք մարդկային, ամենայն պատիւ ժամանակեան, ամենայն բարձրութիւն աշխարհական, առ յաւիտենական քո փառաւք՝ ու-

նայնութիւն է և անմտութիւն։ Ո՛ճշմարտութիւն և ողորմութիւն իմ, Աստուած իմ, երբորդութիւն սուրբ, քեզ միայնոյ զովութիւն, պատիւ, զօրութիւն և փառք յանսպառ յաւիտեանս յաւիտենից։

ԳԼՈՒԽ ԽԱ.

Յաղագս արհամարհուրեան ամենայն ժամանակաւոր պատուոյ.

Ա. Որդեակ, մի զժդմնեսցիս, տեսեալ թէ այլք պատուին և բարձրանան, և դու անարգիս և խոնարհիս։ Այլ բարձ զսիրտ քո առ իս յերկինս, և ոչ տխրեցուսցէ զքեզ արհամարհութիւն մարդկան յերկրի։

Բ. Տէր, Ի կուրութեան եմք, և յունայնութենէ փութով պատրիմք, Եթէ ուղիղ յիս հայիմ, չէ երբէք լեալ առ իս անիրաւութիւն յարատածոց. ուստի և չունիմ իրաւունս բողոք ունելոյ առ քեզ։ Եւ վասն զի բազում անգամ մեծապէս մե-

զուցեալ է իմ առ քեզ, յիրաւի զի-
նին ընդդէմ ինձ ամենայն արա-
րածք։ Ապա ինձ յիրաւի վայելեն
ամօթ և արհամարհանք. իսկ քեզ
զովութիւն պատիւ և փառք։ Եւ թէ
ոչ պատրաստեմ զանձն իմ, մտա-
դիւր յանձն առեալ յամենայն արա-
րածոց անարգիլ, ընդ վայր հար-
կանիլ, և ամենեին յոչինչ համա-
րիլ, չէ հնար ինձ ներքուստ խա-
զաղանալ և հաստատուն կալ, և ոչ
հոգևորապէս լուսաւորիլ և լիով ընդ
քեզ միանալ։

ԳԼՈՒԽ ԽԲ

*Թէ չէ պարտ դնել զխաղաղութիւն
'ի մարդիկ.*

Ա. Որդեակ, եթէ դնես զխաղա-
զութիւն քո 'ի մարդ, վասն համա-
բարոյ և կենակից լինելոյ նորա ընդ
քեզ՝ լիցիս 'ի ծուխս և 'ի տոռունս։
Այլ թէ դիմես 'ի մշտամնայ ճշմար-
տութիւնն, ոչ տրտմեցուսցէ զքեզ

հեռանալ կամ մեռանել բարեկամի։ Յիս պարտի զաղարել սէր բարեկամիդ. և վասն իմ է սիրելի, որ զբարեղ թուի քեզ և անձկալի յաստի կեանս։ Առանց իմ ոչ զօրէ ինչ և ոչ տեսէ բարեկամութիւն. և սէր, զոր իմ չէ յօդեալ, չէ ճըշմարիտ և սուրբ։ Այնպէս լիջիր մահացեալ յայսպիսի իղձս սիրելեաց, մինչև 'ի քոյ կողմանէ ըղձանալ քեզ լինելոյ առանց ինչ ընկերութեան մարդկան։ Այնչափ առաւել մերձենայ մարդ առ Աստուած, որչափ յամենայն երկրաւոր սփոփանաց հեռանայ։ Եւ այնչափ բարձրագոյն ելանէ առ Աստուած, որչափ խորագոյն յինքն իջանէ և յաչս անձին լինի խոտան։

Բ. Այլ որ բարի ինչ անձին ընծայէ, զչնորհացն Աստուծոյ յինքն եկաւորութիւն խափանէ։ Զի չնորհ Հոգւոյն սրբոյ՝ միշտ զխոնարհ սիրտ խնդրէ։ Եթէ զիտէիր զանձն լիով նանրացուցանել, և յամենայն եղակնանաց սիրոյ զատարկել, ճոխագոյն և ես հեղուի 'ի քեզ զչնորհս։

Յակնարկել քո յարարածս, բառնի արարչին 'ի քեզ ակնարկութիւն։ Ուստի յաղթել քեզ յամենայնի վասն արարչին. և յայնժամ կարող լիցիս ժամանել 'ի ճանաչումն աստուածային։ Որչափ և փոքր իցէ ինչ, եթէ անկարդ է քո առ այն սէր և աչարձակութիւն. խափանէ 'ի զերազունէն և յոռացուցանէ։

ԳԼՈՒԽ ԽԳ

Յաղագս սնուտի և աշխարհային գիտութեան.

Ա. Որդեակ, մի շարժեսցեն ըզքեզ զեղեցիկ և նուրբ ասացուածք մարդկան. զի ոչ է արքայութիւնն Աստուծոյ 'ի զրոյցս, այլ յառաքինութեան։ Հայեաց 'ի բանս իմ, զի վառեն զսիրտս, և լուսաւորեն ըզմիտս. բերեն զդղջումն, և 'ի ներքս ածեն պէսպէս մխիթարութիւնս։ Մի յայն սակս երբէք ընթերցցիս զբանս, զի երևեսցիս զիտնաւոր

կամ իմաստուն։ Փոյթ կալ մեռուց-
ման ախտից. զի այն առաւել օգուտ
է քեզ, քան զծանօթութիւն բա-
զում գժուարին խնդրոց։

Բ. Ցընթեռնուլ քո բազում ինչ
և յառնուլ 'ի միտ, զամենայն 'ի մի
սկիզբն դարձուսջիր։ Ես եմ որ ու-
սուցանեմ մարդոյ զգիտութիւն, և
տամ տղայոց լուսաւոր հանճար.
զոր 'ի մարդոյ ուսանել չէ հնար։
Ընդ որում են խօսիմ, անդէն ի-
մաստնանայ, և հոգւով օգտի յոյժ։
Վայ է նոցա, որք ընդվայրաքնին
'ի մարդկանէ խնդրեն, և վասն ճա-
նապարհի իմումն ծառայութեան չէ
ինչ նոցա փոյթ։ Եկեսցէ ժամա-
նակ, յորում յանդիման երևեսցի
վարդապետն վարդապետաց Քրիս-
տոս և հրեշտակացն տէր, զամենե-
ցուն լսել զդատ. այս է, զմիոյ միոյ
քննել զմտացն խիղճ։ Եւ յայնժամ
քննեսցի Երուսաղէմ ճրագաւ, և
յայտնի լիցին զաղտնիք խաւարի,
և լռեսցեն ճառատանք լեզուաց։

Գ. Ես եմ որ զխոնարհ միտս առ
քթթել ական ամբառնամ, հաստ

լինել նմա բազմապատիկ խմաստից յաւիտենական ճշմարտութեան, զոր տանամեայ ժամանակաւ չէր հնար ուսանել 'ի զպրոցս։ Ես եմ որ ուսուցանեմ, ոչ աղաղակաւ բանից, ոչ շփոթիւք կարծեաց, ոչ պերճութեամբ պատուոյ, և ոչ զբաժտութեամբ ձեռնարկութեանց։ Ես եմ որ ուսուցանեմ զերկրաւորս արհամարհել, յաստեացս տաղտկալ, զյաւիտենականն խնդրել, զանանցս խմաստասիրել, 'ի պատուոյ խորշիլ, գայթագղութեանց համբերել, զամենայն յոյս յիս հաստատել, բաց յինէն ոչինչ իմիք ցանկալ, և քան զամենայն՝ զիս սրտեռանդն սիրել։

Դ. Քանզի ոմն 'ի սիրել զիս սրտի մտօք, ուսաւ զաստուածայինս, և խօսէր զսքանչելիս։ Ասուել օգտեցաւ 'ի թողուլ զամենայն, քան յուսանել զնրրինս։ Բայց ոմանց զհասարակացն խօսիմ, և ոմանց զառանձնաւորն։ Ոմանց նշանօք և նըմանութեամբ քաղցր երևիմ, և ոմանց բաղում լուսով յայտնեմ ըզ-

խորհուրդս։ Մի ձայն է գրոց, բայց ոչ զամենեսին միօրինակ հրահանգէ. զի ներքոյ՝ ես եմ ուսուցիչ ճշմարտութեան, քննող սրտից, զիտակ խորհրդոց, յառաջացուցիչ գործոց, և բաշխող իւրաքանչիւր ումեք՝ որպէս և արժան թուիցի ինձ։

ԳԼՈՒԽ ԽԳ

Յաղագս չձգելոյ յանձն զարտաքին։

Ա. Որդեակ, պարտ է քեզ 'ի բազումս անգիտող լինել, և համարել զանձն որպէս մեռեալ 'ի վերայ երկրի, և որում աշխարհ ամենայն 'ի խաչ ելեալ իցէ։ Պարտ է և առ բազում ինչ լինել որպէս խուլ, և զբո խաղաղութենէդ խորհիլ։ Լաւ է զաչս յոչ հաճոյից 'ի բաց դարձուցանել, և իւրաքանչիւրում զիւր կարծիս թողուլ, քան բանակռիւ լինել։ Եթէ բարւոք ես ընդ Աստուծոյ, և 'ի դատաստան նորա հայիս, զիւրին լիցի քեզ պարտութիւն յանձն առնուլ։

Բ. Տէր, ցորվայր հասեալ է մեր։ Ահա զայժս ողբամք զժամանակաւորս. վասն զոյզն չահավաճառի աշխատիմք և ընթանամք, և զհոգեւոր տայժս 'ի մոռացօնս արկեալ՝ հազիւ անաղան ուրեմն մտաբերեմք։ Որ սակաւ կամ ոչ ինչ օգտէ, յայն հայիմք. և զկարի-ին պիտանեօք հեղգութեամբ հարեանցիկ առնեմք։ Զի բոլորովին մարդ յարտաքինս հոսի. և թէ ոչ վաղ զգաստանայ, մտաղիւր յարտաքինս անդ անկեալ մնայ։

ԳԼՈՒԽ ԽԵ

Թէ վ պարտ հաւատալ ամենեցուն, և յաղագս դիւրասահուրեան 'ի բանս.

Ա. Ցուր ինձ, տէր, օգնութիւն 'ի նեղութեան. զի ընդունայն է փրկութիւն մարդոյ։ Քանիցս անգամ չգտի հաւատարմութիւն անդ՝ ուր կարծէի գտանել, և քանիցս անգամ գտի անդ՝ ուր ոչ կարծէի։

Ապա ընդունայն է յուսալ 'ի մարդիկ, և փրկութիւն արդարոց 'ի քէն է տէր։ Օրհնեալ ես տէր Աստուած յամենայնի, որ ինչ անցանէ ընդ մեզ։ Ցկար եմք և յողողդ, վաղվաղակի խաբիմք և փոփոխիմք։

Բ. Ո՞վ է մարդ, որ այնպէս ըզգուշաւոր և աչալուրջ յամենայնի անձնասահ իցէ, մինչ ոչ երբէք անկանել նմա 'ի պատրանս ինչ կամ 'ի տարակոյս։ Այլ որ 'ի քեզ տէր յուսացեալ է, և միամիտ սըրտիւ զքեզ խնդրէ, ոչ դիւրաւ սասի։ Եւ թէ անկանի 'ի նեղութիւն ինչ, թէպէտ և շուրջ պատեալ պաշարեսցի, վաղվաղակի քեւ փրծանի, կամ մխիթարութիւն 'ի քէն ընդունի. զի ոչ անտես առնես ըզյուսացեալս 'ի քեզ խսպառ։ Ո՞ւր իցէ մտերիմ բարեկամ, որ յամենայն 'ի վիշտս առ բարեկամի իւրում կացցէ մնասցէ։ Դու տէր, դու միայն ես մտերիմ յամենայնի. և բաց 'ի քէն չիք ոք այլ։

Գ. Ո՞վ որպէս քաջ խնաստասիրեաց երանելին այն, որ ասաց.

միաք իմ 'ի Քրիստոս հաստատեալ են և հիմնեալ։ Եթէ և ինձ լինէր այդմ վիճակիլ, ոչ այդպէս վաղ-վաղակի երկիւղ մարդկային դիս տագնապէր, և ոչ սլաքք բանից դիս խռովէին։ Ո՞վ բաւական իցէ յառաջատես լինել ամենայնի, և զգուշանալ 'ի չարէ որ հանդերձեալն է գալ։ Եթէ և յառաջատես իրք բաղում անդամ ինաս մեզ հասուցանեն, որչափ ևս յանկարծագէպք ծանր խոցոտեն։ Եւ զիարդ տառապեալս ոչ բարւոք զգուշացայ. զիարդ և այլոց զիւրաւ հաւատացի։ Բայց մարդիկ եմք տկարք, թէպէտ և 'ի բազմաց հրեշտակ համարիմք և անուանիմք։ Ո՞մ հաւատացից, տէր, ո՞մ, բաց 'ի քէն։ Ճշմարտութիւն ես, որ ոչ խաբես, և ոչ խաբիս։ Այն զի ամենայն մարդ սուտ է, տկար և յողղողդ և զթոտ՝ մանաւանդ 'ի բանս, մինչև ոչ վաղ-վաղակի հաւատալ արժան է, թէպէտ և 'ի սկզբան անդ ուղիղ թըւիցի։

Դ. Ո՞րպէս խմաստութեամբ յա-

ռաջադոյն յիշեցուցեր մեզ՝ զգոյշ լինել 'ի մարդկանէ, և թէ թշնամիք առն ընտանիք իւր, և թէ մի հաւատայք՝ եթէ զբ ասիցէ ձեզ թէ ահաւասիկ աստ է կամ անդ։ Ուստ յիմովք վնասուք, և երանի թէ առ առաւել զգուշաւորութիւն իմ և ոչ յանմտութիւն։ Զգոյշ լեր, ասաց զբ ցիս, զգոյշ լեր. պահեա առ քեզ, զոր ասեմս։ Եւ այն ինչ ես լուէի, և ծածկեալ կարծէի, նա ինքն ոչ հանդուրժեաց լռել, զոր խնդրեացն չասել. այլ անդէն զիս և զինքն մատնեաց, և զնաց։ Յայսպիսի զրուցաց և յանզգոյշ մարդկանէ ապրեցո զիս, տէր, զի մի 'ի ձեռս անկայց նոցա, և մի այսպիսի ինչ գործեցից երբէք։ Զբան ճշմարիտ և հաստատուն տուր բերանոյ իմոյ, և զլեզու նենգաւոր 'ի բաց արա յինէն։ Զոր ինչ կրել չառնում յանձն, յայնմանէ ամենայնիւ զգուշանալ պարտ է ինձ։

Ե. Ո՛վ որպէս բարւոք է և խաղաղական զայլոց լռել, ոչ անխտիր ամենայնի հաւատալ, ոչ բերանա-

լոյծ 'ի խօսս լինել, սակաւուց զսիրտ իւր յայտնել, զբեզ զքննողդ սրտից յամենայնի խնդրել, և ոչ յամենայն հոգւոյ բանից տատանիլ, այլ զամենայն զնեբբինս և զարտաքինս ըստ հաճոյից կամաց քոց կատարել։ Քանի՛ աներկեան է առ պահպանութիւն երկնային շնորհաց՝ 'ի մարդկայնոց փախչել ցուցակութեանց, և ոչ հետամուտ լինել իրաց՝ որք արտաքոյ երևին զարմանագործութիւնք. այլ փութաջան զհետ վարել այնց՝ որք ուղղութիւն վարուց բերեն և եռանդն։ Քանի՛ վնաս զործեաց բազմաց՝ յայտնութիւն առաքինութեանց և տարաժամ հուչակ։ Քանի՛ օգտեցին լուռելեայն շնորհք յաղցաւոր կենցաղումս, որ զլխովին փորձութիւն կոչի և պատերազմ։

ԳԼՈՒԽ ԽԶ

Քարոզս ապաւինելոյ յԱստուծոյ, յորժամ 'ի վերայ յարձակիւն պաքէ բանից.

Ա. Որդեակ, զօրացիր և յուսա յիս։ Զի զինչ են բանք, բայց եթէ զրոյցք. ընդ օդս թռչին, բայց քարի ինչ ոչ վնասեն։ Թէ պարտաւոր ես, խորհեա սրտի մտօք ուղղել զքեզ. թէ ոչինչ զիտես անձին քոյ, խոկա մտաղիւր վասն Աստուծոյ այդմ համբերել։ Փոքր ինչ է քեզ՝ լոկոյ բանի երբեմն համբերել, որ սաստիկ զանից չև ես կարող եղեր տանել։ Եւ զի՞ է, զի դոյզն բանք կարեվէր խոցեն զքեզ. բայց զի զեռ մարմնաւոր ես, և 'ի մարդկանէ առաւել քան զարժանն ակնածես։ Քանզի երկուցեալ յարհամարհանաց՝ յանդիմանիլ վասն յանցուածոց ոչ կամիս, և պատճառանօք քօղարկութիւն խնդրես։

Բ. Բայց լաւ ես հայեաց 'ի քեզ, և ծանիցես թէ դեռ կենդանի է 'ի քեզ աշխարհ, և անոտի սէր հաճոյ լինելոյ մարդկան։ Զի 'ի խուսափելդ 'ի կորանաց և յամօթոյ որ վասն պակասութեանց՝ յայտ է թէ ոչ ճշմարիտ խոնարհ ես, և ոչ ճըշմարտապէս մեռեալ աշխարհի, և չէ աշխարհ քեզ 'ի խաչ ելեալ։ Այլ դու լուր իմոց բանից, և ոչ փոյթ լիցի քեզ զբիւրուց բանից մարդկան։ Եթէ ասէին զքէն զամենայն՝ խորամանկեալ չարութեամբ, զինչ վնաս էր քեզ, եթէ ստունկանէիր, և չիւղ համարէիր. միթէ կարո՞ղ ինչ էին զէթ մազ մի խլել 'ի քէն։

Գ. Այլ որ ոչ ունի սիրտ ամիտոփ, և ոչ զԱստուած առաջի աչաց, վաղվաղակի խռովի ընդ բանս նախատանաց։ Իսկ որ յիս յուսացեալ է, և ոչ իւրում դատաստանի անսայ, աներկիւղ է 'ի մարդկանէ։ Զի ես եմ դատաւոր ծածկագէտ ամենայնի, զիտեմ զիաւրդ զործեցան իրք, զիտեմ զհարստահարողն և զհարբս-

տահարեալն։ Ցինէն եղև բանդ այդ, իմովթոյլտուութեամբ պատահեաց, զի յայտնեսցին 'ի բազմաց սրտից խորհուրդք։ Ինձ հասանէ դատել զպարտաւորն և զանպարտն. բայց զաղտնի դատաստանաւ զերկաքանչիւրն յառաջ փորձել կամեցայ։

Դ. Վ կայութիւն մարդկան յոլովակի խաբէ. իմ դատաստան ճշմարիտ է, հաստատուն կայ, և ոչ հրջի. ծածկեալ է 'ի բազմաց, և սակաւուց յայտնի։ Բայց սակայն ոչ երբէք սխալէ, և ոչ սխալել կարէ. թէպէտ և յաչս անզգամաց ոչ ուղիղ թուիցի։ Ասա յիս զիմել արժան է յամենայն դատս, և ոչ ապաստանել մարդոյ յիւր կարծիս։ Ոչ խոռովի արդարն, որ ինչ և եկեսցէ նմա առ յԱստուծոյ։ Թէպէտ և անիրաւութեամբ ինչ խոսեսցին զնմանէ, ինչ ոչ հոգայ. այլ և ոչ 'ի սնոտիս ցնծայ, եթէ այլք իրաւացի արդարացուսցեն զնա։ Քանզի գիտէ, թէ ես եմ որ քննեմ զսիրտս և զերիկամունս. և ոչ ըստ աչս դատեմ, կամ ըստ կար-

ծեաց մարդկան։ Քանզի յոլովակի յաչս իմ զտանի մեղադրելի, որ ըստ մարդկան կարծեաց համարի զովելի։

Ե. Տէր Աստուած զատաւոր արդար հզօր և երկայնամիտ, որ զիտես զմարդկան տկարութիւն և ըղթիւրութիւն. լեր իմ զօրութիւն և յոյս ապաւինի, զի չէ ինձ բաւական խիղճ մտաց իմոց։ Դու զիտես զոր ոչն զիտեմ ես. վասն այսորիկ յամենայն յանդիմանութիւնս մեայ ինձ խոնարհել և հեղութեամբ համբերել։ Թող ինձ զթութեամբ, թէ ուրեք երբէք չարարի այդպէս. և պարգևեա միտանգամ շնորհս առաւելագոյն համբերութեան։ Քանզի լաւ է ինձ քո առատ ողորմութիւնդ՝ առ հասանելոյ թողութեան, քան զիմ կարծեցեալ արդարութիւն՝ առ ջատագովութիւն զաղտնի խղճի։ Թէպէտ և ոչինչ զիտեմ անձին իմոյ, բայց ոչ եթէ այսու արդարանամ։ Զի 'ի հեռանալ քո ողորմութեանդ՝ ոչ արդարանայ առաջի քոյ ամենայն կենդանի։

ԳԼՈՒԽ ԽԷ

Թէ պարտէ տանել ամենայն ծանուցեալ՝ վասն յաշխարհիցն կենաց.

Ա. Որդեակ, մի վհատեցուսցեն զքեզ վաստակք, զորս յանձն առեր վասն իմ. և մի լքուսցեն զքեզ նեղութիւնք իսպառ։ Այլ խոստմունք իմ յամենայն անցս զօրացուսցեն զքեզ և մխիթարեսցեն։ Բաւական եմ ես 'ի հատուցանել 'ի վեր քան զամենայն պայման և չափ։ Ոչ ընդերկար ինչ վաստակեսցիս յաստիս, և ոչ միշտ ծանրասցիս ցաւօք։ Համբեր սակաւ մի, և տեսցես զերազահաս վախճան չարեաց։ Եկեսցէ ժամ, յորում լռեսցեն ամենայն վաստակք և խռովութիւնք։ Խուն ինչ է և սուղ ամենայն, որ անցանէ ընդ ժամանակի։

Բ. Այրա զոր առնես, աշխատեա հաւատարմութեամբ յայգւոջ ի-

մում, ես եղէց վարձք քո։ Գրեա, ընթերցիր, երդեա, հառաչեա, լռեա, աղօթս արա, և արիաբար համբեր հակառակաց. զի արժանի են այսմ ամենայնի և մեծամեծ ես ճգանց, կեանք յաւիտենականք։ Եկեսցէ օր մի խաղաղութեան յայտնի տեառն, ոչ տիւ իցէ և ոչ գիշեր ժամանակեան. այլ լոյս մշաբնաջենաւոր, պայծառութիւն անվախճան, խաղաղութիւն հաստատուն, և հանդիստ աներկեան։ Զասասցես յայնժամ. Ո՞վ ապրեցուսցէ զիս 'ի մարմնոյ աստի մահու։ Եւ ոչ զոչեսցես. Վա՛յ ինձ, զի ընդերկար եղև պանդխտութիւն իմ։ Զի ընկլցի մահ, և եղիցի փրկութիւն աննիստ. անձկութիւն և ոչ մի, զուարճութիւն երանական, ընկերութիւն քաղցր և վայելչական։

Գ. Բա՛ր է, եթէ տեսանէիր զսքրբոց յերկինս զանթառամ պսակս, և թէ քանի՛ ցնծան արդ 'ի փառս, որք յաշխարհի երբեմն համարէին խոտան և կենաց իսկ անարժան, խոնարհէիր արդեօք վաղվաղակի

մինչ 'ի զետին, և ախորժէիր ընդ ոտիւք լինել ամենեցուն, քան իշխել միում ումեք. և ոչ կենցաղոյս ուրախութեան աւուրց ցանկայիր, այլ վասն Աստուծոյ խնդամիտ նեղութիւն յանձն առնուիր. և զլինելդ յաչս մարդկան չնչին՝ մեծ շահ համարէիր։

Դ. Ո՛վ, եթէ այս ամենայն քեզ քաղցրանայր և 'ի սիրտ քո տարրանայր, զիա՞րդ իշխէիր՝ զէթ առ անգամ մի քրթմնջել։ Ո՞չ վասն յաւիտենիցն կենաց՝ ամենայն տարժանաւորք տանելիք իցեն։ Չէ փոքր ինչ կորուսանել կամ շահել զարքայութիւնն Աստուծոյ։ Ապա ամբարձ զաչս քո յերկինս։ Ահա ես, և ամենայն սուրբք իմ ընդ իս, որք յաշխարհի աստ մեծամեծ ճգանց տարան. արդ խնդան, արդ մխիթարին, արդ անհոգ են, արդ հանգչին, և անվախճան ընդիս զարքայութիւն հօր իմոյ ժառանգեսցեն։

ԳԼՈՒԽ ԽԸ

Յաղագս առուրն յաւիտենից, և կենցաղոյս անձկութեանց.

Ա. Ո՞վ վերնոյ քաղաքի երանաւէտ օթեւանացն։ Ո՞վ մեծապայծառ աւուրն յաւիտենից. զոր զի՞չեր ոչ նեմացուցանէ, այլ գերակայ ճշմարտութիւնն 'ի նմա միշտ ճառագայթէ. օր մշտազուարճ, միշտ աներկեան, որոյ ոչ երբէք փոխի վիճակ 'ի հակառակն։ Ո՞ տայր թէ օրն այն ծագէր, և ժամանակեայքս ամենայն առնուին վախճան։ Լուսաւորէ ապաքէն զսուրբս մշտապայլ պայծառութեամբ, այլ զպանդղխտեալս յերկրի իբրև 'ի հեռաստանէ և ընդ հայելի։

Բ. Գիտեն երկնաքաղաքացիք, քանի՞ զուարթարար է նա։ Հեծեն աքսորեալ որդիք Եւայի, զի դառն և տագնկալի է սա։ Աւուրք ժամանակիս փոքր են և չար, լի ցա-

ւոք և անձկութեամբ. ուր մարդ 'ի բազում մեղս շաղախի, բազում կրիւք թակարթի, բազում երկիւղիւ ճնշի, բազում հոգովք զբաղնու։ Բազում ընդվայրաքննութեամբք ցնդի, բազում ունայնութեամբք պատի, բազում մոլորութեամբք պաշարի, բազում վաստակօք հիւծի, փորձութեամբք ծանրանայ, փափկութեամբք թօշնի, կարօտութեամբ տանջի։

Գ. Եթէ երբ եղէ վախճան չարեացս, երբ ազատեցայց 'ի թշուառ ծառայութենէ ախտից, երբ յիշեցից տէր զքեզ միայն, երբ լիով ուրախ եղէց 'ի քեզ։ Եթէ երբ եղէց անարգել 'ի ճշմարիտ ազատութեան, առանց ինչ ծանրութեան մտաց և մարմնոյ։ Եթէ երբ եղիցի խաղաղութիւն հաստատուն, խաղաղութիւն անխռով և անքոյթ, խաղաղութիւն ներքին և արտաքին, խաղաղութիւն ամենայնիւ անդրդուելի։ Բարերար փրկիչ, երբ յանդիման եղէց տեսանել զքեզ. երբ վայելեցից 'ի փառս արքայութեան քոյ,

երբ եղիցիս ինձ ամենայն յամենայնի. երբ եղէց ընդ քեզ յարքայութեան քում, զոր պատրաստեցեր սիրելեաց քոր յաւիտենից։ Թողեալ կամ աղքատ և աքսորեալ յերկրի թշնամեաց, ուր հանապազորդ պատերազմունք և աղէտք անհնարինք։

Դ. Մխիթարեա զաքսորանս իմ, մեղմեա զցաւս իմ. զի քեզ անձկայ ամենայն ցանկութիւն իմ։ Քանզի բեռն է ինձ ամենայն, զորինչ աշխարհս մատուցանէ 'ի սփոփանս։ Ցանկամ վայելել 'ի քեզ, այլ ոչ ժամանեմ։ Ըղձանամ յարիլ յերկնայինս, այլ ընկճեն զիս անցաւոր իրք և անմեռ կիրք։ Մտօք քան զամենայն 'ի վերոյ լինել կամիմ, այլ մարմնով ակամայ ներքոյ լինել բռնադատիմ։ Այսպէս տառապեալս ընդ իս մաքառիմ. և անձամբ անձին ծանրանամ, 'ի խնդրել հոգւոյ իմոյ վերանալ, և մարմնոյս վայրաբերիլ։

Ե. Ո՜վ զիարդ տառապի անձն իմ, յորժամ մտօք զերկնայինս խոր-

հիմ. և 'ի կալ իմում յաղօթս՝ անդէն յոյզք մարմնական խորհրդոց լինին ընդ առաջ։ Աստուած իմ, մի 'ի բացեայ առնիր յինէն. և մի խոտորիր բարկութեամբ 'ի ծառայէ քումմէ։ Փայլատակեա զփայլատակունս քո, և ցրուեա զնոսա. առաքեա զնետս քո, և խռովեսցին ամենայն ցնորք թշնամւոյն։ Ամփոփեա զզգայութիւնս իմ 'ի քեզ. տուր ինձ մոռանալ զամենայն զաշխարհայինս, վաղվաղակի 'ի բաց թօթափել և մերժել զախտից ցնորըս։ Հաս ինձ 'ի թիկունս, ճշմարտութիւնդ յաւիտենական. զի մի զրդուեցուսցէ զիս նանրութիւն։ Արի եկ քաղցրութիւնդ երկնային, և փախիցէ յերեսաց քոց ամենայն անմաքրութիւն։ Ներեա ինձ և թող զթութեամբ, թէ ուրեք երբէք խորհիմ ինչ յաղօթս բաց 'ի քէն։ Խոստովանիմ ճշմարտութեամբ, զի յոյժ ցնդեալ զանիմ 'ի նմա. քանզի բազում անգամ չեմ անդ, ուր մարմնով կամ, կամ նստիմ. այլ անդ, ուր խորհրդովք բերիմ։ Անդ եմ,

ուր է խորհուրդ իմ. և անդ է յոլովակի խորհուրդ իմ, ուր է զոր սիրեմն։ Այն ինչ վաղագոյն լինի ինձ ընդառաջ որ'ի բնէ ախորժ է, կամ 'ի սովորութենէ հաճոյ։

Զ. Վասն որոյ դու ճշմարտութիւն յայտնի ասացեր. Ուր է դանձ քո, անդ է և սիրտ քո։ Եթէ զերկինս սիրեմ, մտադիւր զերկնայնոց խորհիմ. եթէ զաշխարհ սիրեմ, ընդ աշխարհի յաջողուածս խնդամ, և ընդ ձախորդութիւնս նորա տրտմիմ։ Եթէ զմարմին սիրեմ, զմարմնոյսն ստէպ խոկամ. եթէ զհոգի սիրեմ, քաղցրանայ ինձ զհոգեղինաց խորհել։ Զի զոր ինչ սիրեմ, զայնց մտադիւր խօսիմ և լսեմ. և զայնպիսեաց պատկեր ընդ իս 'ի տուն տանիմ։ Այլ երանի՛ առն՝ որ վասն քոյ, տէր, ամենայն արարածոց հրաժեշտ տայ. որ բնութեան բուռն առնէ, և զցանկութիւնս մարմնոյ՝ հոգւոյն եռանդեամբ 'ի խաչ հանէ. զի ջինջ խղճիւ մտաց՝ մաքուր աղօթս քեզ մատուցէ, և արժանի լիցի պարակցիլ ընդ հրեշ-

տակս, երկրաւորացս ամենայնի ներքոյ և արտաքոյ զդուրս ընդդէմ եղեալ։

ԳԼՈՒԽ ԽԹ

Յաղագս փափաքելոյ յաւիտենական կենաց, և թէ քանի՞ բարիք խոստացեալ են պատերազմողաց.

Ա. Որդեակ, իբրև յանձին զգաս փափաք յաւիտենական երանութեան 'ի վերուստ 'ի քեզ հեղեալ, և ցանկաս 'ի մարմնոյ աստի ելանել՝ առ վայելելոյ 'ի փառս իմ, յորում չիք չրջելոյ ստուեր, ընդարձակեա զսիրտ քո, և ամենայն ըղձմամբ ընկալ զսուրբ զայս ազդեցութիւն։ Մատո բազում չնորհակալութիւն վերնում բարութեան, որ այսպէս առ քեզ զթասիրէ, զթութեամբ այց առնէ, բորբոքմամբ զարթուցանէ, հզօրեզսպէս օգնէ, զի մի քոյին ծանրութեամբ յերկրաւորս սահեսցիս։ Զի ոչ եթէ քոյին

խոկմամբ համ ջանիս զայդ ընդունիս, այլ լոկով հաճութեամբ վերնական շնորհաց և աստուածային ակնարկութեան. զի յառաքինութիւնս և յառաւել ևս խոնարհութիւն յառաջադէմ լիցիս, և՝ի մերցմունս որ առաջի կան՝ զանձն պատրաստեացես. և զի սրտի մտօք յիս յարիլ, և փոյթեռանդն կամօք ծառայել՝ փոյթ յանձին կալցիս։

Բ. Որդեակ, բազում անգամ վարի հուր, այլ ոչ անծուխ վերանայ բոցն։ Սոյնպէս և ոմանց ցանկութիւնք յերկնայինսն բորբոքին, սակայն՝ի փորձութենէ մարմնական ախորժակաց չեն ինչ զերծ։ Վասն այսորիկ և ոչ սոսկ՝ի պատիւ Աստուծոյ գործեն, յորժամ անձկանօք խնդրեն ինչ՝ի նմանէ։ Այսպիսի է յոլովակի և քոյդ ցանկութիւն, զորմէ ասացեր թէ յոյժ է թախանձական։ Զի չէ ինչ յատակ և կատարեալ, որ անձին դիւրութեամբ է շաղախեալ։

Գ. Հայցեա, ոչ զայն որ քեզ է հեշտալի և դիւր, այլ որ ինձ է ըն-

դունելի և 'ի պարծանս։ Չի թէ ու-
զիզ դատիս, պարտ է քեզ զիմ կար-
գաւորութիւն քան զքոյդ ցանկու-
թիւն և քան զամենայն ցանկալիս
վերադասել, և այնմ զհետ երթալ։
Գիտեմ զցանկութիւն քո, և լուայ
զհեծութիւնս քո անդադարս. այժ-
մէն կամէիր լինել յազատութեան
փառաց որդւոցն Աստուծոյ. այժ-
մէն ցանկալի են քեզ յարկքն յա-
ւիտենականք և դաւառն երկնային
լի խնդութեամբ։ Բայց չև է հա-
սեալ ժամն այն, այլ կայ դեռ ժա-
մանակ. այս է, ժամանակ պատե-
րազմի, ժամանակ վաստակոց և
հանդիսի։ Ըզճանաս վայելել 'ի զե-
րակայ բարին. այլ չես կարող այդմ
հասանել առ այժմ։ Ես ինքն եմ.
կաց մնա ինձ, ասէ տէր, մինչև և
կեսցէ արքայութիւնն Աստուծոյ։

Դ. Անայ քեզ դեռ փորձիլ յերկ-
րի, և մարզիլ 'ի մարզս բազումս։
Տացի քեզ երբեմն մխիթարութիւն
այլ ոչ կշտասցինդ յագուրդ։ Ապա զօ-
րացիր և քաջ լեր 'ի գործել և 'ի կրել
զհակառակս բնութեան։ Պարտ է

քեզ զգենուլ զնոր մարդն, և վտ-
խել յայր յայլ։ Պարտ է քեզ յոլո-
վակի առնել զոր ոչ կամիս, և թո-
ղուլ զոր կամիս։ Այլոց հաճոյք
յառաջ երթիցեն, և քոց հաճոյից
ոչ յաջողեսցի։ Այլոց բանք լսելի
լիցին, և քո բանք յոչինչ համա-
րեսցին։ Խնդրեսցեն այլք և առ-
նուցուն, դու խնդրեսցես և ոչ ըն-
կալցիս ինչ։

Ե։ Եղիցին այլք մեծարոյ 'ի բե-
բան մարդկան, այլ դքէն լռութիւն
լիցի։ Այլոց յանձն եղիցի այս ինչ
կամ այն ինչ, այլ դու համարեսցիս
անպիտան առ ամենայն։ Վասն
այսորիկ բնութիւնն երբեմն տըխ-
րեսցի. և մեծ իմն է, թէ անմոռանչ
տարցիս։ Յայսմ ամենայնի և յորս
սոցին նման են՝ փորձի հաւատա-
րիմ ծառայ տեառն, եթէ կարող
իցէ ուրանալ և մեռուցանել զանձն
յամենայնի։ Ոչ յիմիք այնպէս պի-
տոյ է քեզ մահանալ, որպէս 'ի տե-
սանել և 'ի կրել զհակառակն կա-
մաց քոց. ևս առաւել յորժամ հրա-
մայեալքն քեզ դժպատեհ և անպի-

սան թուիցին։ Եւ վասն զի չիշխես ընդդէմ կալ բարձրագոյն իշխանութեան՝ ընդ տէրութեամբ լեալ, վասն այսորիկ խիստ թուի քեզ ըստ հաճոյից այլոց գնալ, և զամենայն զքո կարծիս թողուլ։

Զ. Այլ յուշ լիցի քեզ, որդեակ, վաստակոդ այդոցիկ պատուղ, և վաղահաս վախճան, և հատուցումն մեծ յոյժ. և ոչ լիցի քեզ խոժոռութիւն, այլ համբերութեան քո արիական քաջալերութիւն։ Զի և փոխանակ դոյզն այս կամաց՝ յորմէ արդ կամակար հրաժարես, եղիցին միշտ կամք քո յերկինս։ Վասն զի անդ գտցես զամենայն՝ զոր կամիս, զամենայն՝ որում ցանկալ զօրես։ Անդ եղիցի քեզ ստացութիւն ամենայն բարեաց, առանց ինչ երկիւղի կորուսանելոյ։ Անդ կամք քո միաբան միշտ ընդ իմումս, ոչինչ իմիք ըղձանայցէ օտարի կամ առանձնաւորի։ Անդ ոչ զք քեզ ընդդէմ դարձցի, ոչ զք զքէն քրթմընջեսցէ, ոչ զք խափանեսցէ, ոչինչ խոչ լիցի. այլ ամենայն ցանկալիք

միանգամայն լիցին յանդիման, և զամենայն ախորժակս քո հանգուցցեն և լցուսցեն իսպառ։ Անդ հատուցից փառս՝ փոխանակ արհամարհանաց, հանդերձ պարծանաց՝ փոխանակ տրտմութեան, և փոխանակ յետին տեղւոյն՝ զգահոյս արքայութեան յաւիտեան։ Անդ երևեսցի պտուղ հնազանդութեան, ուրախ եղիցին ճգունք ապաշխարութեան, և խոնարհ հպատակութիւն պսակեսցի փառօք։

Է։ Ապա այսուհետև խոնարհեցո զքեզ հլութեամբ ընդ ամենեցուն ձեռամբ. և մի լիցի քեզ փոյթ թէ ո՞ է որ զայս ասէ կամ հրամայէ։ Այլ այսմ առաւելապէս փոյթ կալ՝ Ջիր, զի եթէ առաջնորդն և եթէ 'ի կրտսերաց ոք կամ 'ի հաւասարակցաց խնդրեսցէ ինչ 'ի քէն կամ ակնարկի արասցէ, զամենայն ընկալցիս 'ի բարի, և միամիտ սրտիւ Ջանասցիս կատարել։ Խնդրեսցէ ոք զայս ինչ, և այլ ոք զայն ինչ. պարծեսցի սա յայս ինչ, և նա յայն ինչ, և բիւրք յաճախեսցեն նմա գովու-

թիւնս։ Բայց զու ոչ յայս ինչ և ոչ յայն ինչ, այլ յարհամարհանս քո խնդա, և 'ի հաճոյս և 'ի պատիւ իմ միայն։ Այսմ ցանկա, զի եթէ 'ի կեանս և եթէ 'ի մահու միշտ փառաւորեսցի 'ի քեզ Աստուած։

ԳԼՈՒԽ Ծ

Թէ որպէս պարտ է լքեալն աւանդել զանձն 'ի ձեռս Աստուծոյ.

Ա. Տէր Աստուած հայր սուրբ, օրհնեալ ես այժմ և յաւիտեան. զի որպէս կամիս, նոյնպէս և եղև. և զոր առնես՝ բարի է։ Ուրախ լիցի 'ի քեզ ծառայ քո, ոչ յանձն իւր և ոչ յայլ ինչ. զի զու միայն ես ուրախութիւն ճշմարիտ, զու յոյս իմ և պսակ իմ, զու խնդութիւն իմ և պատիւ իմ, տէր։ Զինչ ունի ծառայ քո, բայց զոր 'ի քէն էառ, և զայն առանց ինչ իւրոյ արժանաւորութեան։ Քո է ամենայն, զոր ետուր և զոր արարեր։ Տնանկ և վաստա-

կատր եմ ես 'ի մանկութենէ իմմէ, և տրտմի անձն իմ ստէպ մինչև ցարտասուս. և երբեմն խռովի իսկ՝ վասն եկեալ հասեալ կրից։

Բ. Յանկամ խաղաղական իսն-դութեան. զխաղաղութիւն որդւոց քոց ժտիմ, որք լուսով մխիթարութեան 'ի քէն հովուին։ Եթէ խաղաղութիւն տաս, եթէ խնդութիւն սուրբ յիս հեղուս, եղիցի անձն ծառայի քո ցնծալից և Ջերմեռանդն յօրհնութիւնս քո։ Ապա եթէ հրաժեշտ տաս, որպէս բաղում անգամ սովորութիւն է քո, ոչ ես կարող լինի ընթանալ 'ի ճանապարհս պատուիրանաց քոց։ Այլ 'ի բաղխել զկուրծս՝ ծունկք նորա կթոտին. զի ոչ է նմա որպէս յերէկն և յեռանդն, յորժամ ճրագ քո լուսատու էր 'ի վերայ գլխոյ նորա, և ընդ հովանեաւ թևոց քոց ամրանայր 'ի փորձութեանց'ի վերայ յարուցելոց։

Գ. Հայր արդար և միշտ գովելի, հասեալ է ժամ փորձելոյ ծառայի քո։ Հայր սիրելի, արժան է՝ զի 'ի ժամուս յայսմիկ ծառայ քո կրեսցէ

ինչ վասն քո։ Հայր մշտապատիւ, հասեալ է ժամ՝ զոր յաւիտենից գիտէիր թէ գալոց է. զի առ վայր մի նկուն եղիցի արտաքոյ ծառայ քո, բայց ներքոյ միշտ կեցցէ՛ի քեզ։ Փոքր մի անարգեսցի, խոնարհեսցի, և անգոսնեսցի առաջի մարդկան. կրիւք և ախտիւք խոշտանգեսցի, զի միւսանգամ ընդ քեզ՝ի ծագել նորանշոյլ լուսոյ յարիցէ, և յերկնայինսն փառաւորեսցի։ Հայր սուրբ, զու այսպէս տնօրինեցեր և կամեցար, և եղև որպէս և հրամայեցեր։

Դ. Զի այս է շնորհ առ քո սիրելիս, շարշարիլ և նեղիլ յաշխարհի վասն սիրոյ քոյ, քանիցս անգամ և յումմէ և իցէ թողացուսցես այդմ լինել։ Առանց խորհրդոյ և տեսչութեան քո և վայրապար՝ ոչինչ լինի յերկրի։ Բարի է ինձ տէր, զի խոնարհ արարեր զիս, զի ուսայց զարդարութիւնս քո, և՝ի բաց արարիս յանձնէ զամենայն մեծամտութիւն և յանձնապաստանութիւն։ Լաւ է ինձ, զի ամօթ ծած-

կեաց զերեսս իմ. զի զքոյդ և ոչ զմարդկան խնդրեցից զմխիթարութիւն։ Դովին ուսայ և յանքնին զատաստանաց քոց երկնչել. որ խոշտանգես զարդարն ընդ ամպարըշտի, այլ ոչ առանց իրաւանց և արդարութեան։

Ե. Գոհանամ զքէն, զի ոչ նեղեցեր չարեաց իմոց. այլ չարագան մաշեցեր զիս, հարեալ զիս ցաւովք և վարակեալ վշտօք ներքոյ և արտաքոյ։ Զիք ինձ մխիթար յամենայնէ որ 'ի ներքոյ երկնից՝ բաց 'ի քէն, տէր Աստուած իմ, երկնաւոր բժիշկ հոգւոց, որ հարկանես և բժշկես, իջուցանես 'ի դժոխս և հանես։ Խրատ քո 'ի վերայ իմ, և գաւազան քո ուսուցէ զիս։

Զ. Ահա, հայր սիրելի, 'ի ձեռս քո եմ ես, խոնարհեալ ընդ զաւազանաւ կշտամբութեան քո։ Հար զթիկունս իմ և զպարանոց իմ, զի խոնարհեցից 'ի կամս քո զխեռութիւն իմ։ Այս զիս բարեպաշտօն և խոնարհ ուշակերտ, որպէս և սովորութիւն է քո. զի զնացից յամե-

նայն հրամանս քո։ Քեզ յանձն առ-
նեմ զիս, և զամենայն որ ինչ է
իմ՝ յուղղութիւն. զի լաւ է ասա-
խրատիլ, քան 'ի հանդերձեալն։
Դու զիտես զամենայն մի ըստ միո-
ջէ, և չիք ինչ 'ի քէն ծածկեալ 'ի
խիղճ մտաց մարդկան։ Մինչչև են
լեալ՝ զիտես որ ինչ լինելոց է առ-
յապայ. և չէ պիտոյ, թէ որ ու-
սուցցէ քեզ կամ յիշեցուցցէ որ ինչ
լինի յերկրի։ Դու զիտես որ լաւ
իցէ առ յառաջադիմութիւն իմ, և
քանի օգուտ իցէ նեղութիւն առ
մաքրելոյ զժանգ ախտից։ Արա ընդ-
իս ըստ յանկալի հաճոյից քոց, և մի
անտես առներ զմեղսասէր կեանս
իմ, որ ոչ ումեք բացերև է որպէս
քեզ միայնոյ։

Է. Տուր ինձ, տէր, զիտել զոր
զիտել պարտ է, սիրել զոր սիրել
արժան է, գովել զայն՝ որ մեծապէս
հաճոյ է քեզ, յարգել զայն՝ որ պա-
տուական թուի քեզ, և անարգել
զայն՝ որ խոտան է յաչս քո։ Մի թո-
ղուր ինձ ըստ տեսութեան աչաց
դատել, և մի ըստ լրոյ ականջաց

տղիտաց վճիռ հատանել. այլ ուղիղ դատաստանաւ երևելեաց և իմանալեաց ընտրութիւն առնել, և 'ի վեր քան զամենայն զհաճոյս կամաց քոց միշտ խնդրել։

Ը. Խաբին յոլովակի խորհուրդք մարդկան 'ի դատել զդատաստան. խաբին և աչխարհասէրք 'ի սիրել միայն զերևելիս։ Զինչ լաւութիւն իցէ մարդոյ յայնմանէ, զի մեծ համարի 'ի մարդկանէ։ Խաբեբայ զխաբեբայ, սնոտի զսնոտի, կոյր զկոյր, և տկար զտկար խաբէ՝ յորժամ բարձրացուցանէ. և առաւել յամօթ առնէ՝ յորժամ 'ի սնոտիս զովէ։ Զի որչափ ինչ է իւրաքանչիւր ոք յաչս քո, այնչափ է և ոչ աւելի, ասաց խոնարհ սուրբն Փրանկիսկոս։

ԳԼՈՒԽ ԾԱ.

Թէ պարտ է պատաղել 'ի խոնարհ գործս, յորժամ չեմք ժամանող բարձրագունից.

Ա. Որդեակ, չես կարող միշտ փոյթեռանդն ըղձմամբ առաքինութեանց կալ, և ոչ 'ի բարձրագոյն աստիճան խոկման զտեղի առնուլ։ Այլ հարկ է քեզ երբեմն վասն սկզբնական ապականութեան՝ 'ի ստորինս վայրաբերիլ, և զբեռն ապականացու կենաց՝ ես և ակամայ և տաղտկանօք՝ բառնալ։ Յորչափ ես 'ի մահկանացու մարմնի, տաղտկութիւն զգաս և ծանրութիւն սրտի։ Ապա պարտ է ստէպ 'ի մարմնի վասն ծանրութեան մարմնոյ հեծել, վասն ոչ զօրելոյ քոյ 'ի հոգևոր փոյթ և յաստուածային խոկումն անդադար պարապել։

Բ. Յայնժամ լաւ է քեզ 'ի խոնարհ և յարտաքին գործս դիմել, և

գործովք բարութեան զքեզ զբօսեցուցանել, իմում եկաւորութեան և վերնական այցելութեան հաստատուն ապաւինութեամբ սպասել, աքսորանաց քոց և ցամաքութեան մոտաց համբերութեամբ տանել, մինչև միւսանգամ քեզ այց լիցի, և յաւիտենական ճանձրութենէ լիցիս զերծ։ Զի տաց քեզ զվաստակսդ մոռանալ, և՝ի ներքին հանգստեան վայելել։ Պարզեցից առաջի քոյ զդաշտավայրս սուրբ զրոց, զի անդորր սրտիւ սկսցիս ընթանալ զճանապարհս պատուիրանաց իմոց, և ասասցես. Զեն արժանի չարչարանք ժամանակիս հանդերձելոցն փառաց, որք յայտնելոց են՝ի մեզ։

ԳԼՈՒԽ ԾԲ

Թէ չէ պարտ մարդոյ համարել զանձն արժանի միխիթարութեան, այլ յաւէտ պարտաւոր զանձից.

Ա. Տէր, չեմ արժանի քումդ միխիթարութեան, և ոչ հոգևոր ինչ այցելութեան. վասն այսորիկ իրաւամբք զործես ընդ իս, յորժամ զիս տնանկ և անտերունչ թողուս։ Զի թէպէտ և ծովու նման արտասուս հեղուի, սակայն միխիթարութեան քում չէի արժանի։ Վասն այսորիկ ոչինչ իմիք եմ արժանի, բայց հարուածոց և պատժոց, զի ծանունս և ստէպ զքեզ բարկացուցի, և բազում իւիք մեծապէս յանցեայ։ Վասն որոյ թէ արդար խորհիմ, և ոչ դոյզն միխիթարութեան եմ արժանի։ Այլ դու զթած և մարդասէր տէր, որ ոչ կամիս զկորուստ զործոց քոց, առ 'ի ցուցանել զմեծութիւն քաղցրութեան քոյ յանօթս

ողորմութեան՝ և առանց իսկ իմոյ արժանաւորութեան յանձն առնուս մխիթարել զծառայ քո առաւել քան զմարդկան եղանակ։ Զի քո մխիթարութիւնք չեն իբրև զմարդկան զրոյցս։

Բ. Զինչ գործեցի, ասէր, զի չնորհեսցես ինձ երկնային ինչ մխիթարութիւն։ Ոչ յիշեմ թէ գործեալ է իմ բարի ինչ, այլ միշտ 'ի մոլութիւնս դիւրամէտ, և առ ուղղութիւն հեզգ լեալ է իմ։ Ճշմարիտ է, և ոչ իշխեմ ժխտել. եթէ այլազգ ինչ ասէի, դու ինքն լինէիր իմ ոսոխ, և չլինէր ոք իմ ջատագով։ Ի՞մ իմիք արժանացայ վասն իմոց մեղաց, բայց զեհենի և հրոյն յաւիտենից։ Ճշմարտութեամբ խոստովանիմ, զի արժանի եմ ամենայն ծաղրու և արհամարհութեան, և չեմ արժանի յիշատակիլ 'ի մէջ ջերմեռանդն քոց ծառայից։ Դառն է ինձ զայս լսել, սակայն վասն ճշմարտութեան ես ինձէն յանդիմանեմ զմեզս իմ, զի դիւրաւ արժանացայց ընդունել զքո ողորմութիւնդ։

Դ. Զինչ ասացիս ամօթալիս մեղապարտս. չունիմ բերան խօսելոյ, բայց զայս եւթ. մեղայ, տէր, մեղայ. ողորմեա ինձ և քաւեա զիս։ Թոյլ արա ինձ սակաւ մի կոծել ըզցաւս իմ, մինչչև երթեալ իցեմ յերկիր խաւարին, ուր է մահու մառախուղ։ Զինչ այնպէս խնդրես՝ի թըշուառական մեղապարտ անձնէ, բայց զի զղջասցի և խոնարհեսցի վասն իւրոց յանցանաց։ Ի ճշմարիտ զղջմանէ և՝ի խոնարհութենէ սրտի ծնանի յոյս թողութեան, հաշտի ամբոխեալ խիղճ մտաց, Նոյոգին կորուսեալ շնորհք, պահի մարդ՝ի հանդերձեալ բարկութենէ. և ընդ առաջ լինին միմեանց՝ի համբոյր սրբութեան՝ Աստուած և ապաշխարող ոգի։

Դ. Խոնարհ զղջումն մեղաւորաց՝ պատարագ է քեզ, տէր, ընդունելի. անուշահոտ առաջի քո քանըզբուրումն կնդրկի։ Այս է և իւղն այն աղնիւ, որով կամեցար թէ սուրբ ոտք քո օծցին. զի զսիրտ զղջացեալ և խոնարհ ոչ երբէք արհ-

համարհես։ Անդ է տեղի ապաւի-
նի յերեսաց բարկութեան թշնամ-
ւոյն. անդ լուացեալ սրբի, որ ինչ
այլուստ աղտեղացաւ։

ԳԼՈՒԽ ԾԳ.

*Թէ շնորհն Աստուծոյ ոչ խառնի ընդ
այնս՝ որոց բաղդն են երկրաւորք.*

Ա. Որդեակ, պատուական է շն-
նորհ իմ, ոչ խառնի ընդ օտարոտի
իրս, և ոչ ընդ երկրաւոր մխիթա-
րութիւնս։ Ապա՝ի բաց սրա զա-
մենայն արգելս շնորհաց, եթէ ըղ-
ձանաս զհոսումն նորա ընդունել։
Խնդրեա քեզ առանձնութիւն, սի-
րեա միայն բնակել ընդ քեզ. մի՝ի
խնդիր լինիր զրուցաց մարդկան,
այլ ջերմեռանդն մատո աղօթս առ
Աստուած, զի ունիցիս միտս զղջա-
կանս և խիղճ մտաց մաքուր։ Զաշ-
խարհ ամենայն արհամարհեա. ըզ-
պարապիլն յԱստուած՝ քան զար-
տաքինս ամենայն վերադասեա։ Զի

անհնար է քեզ՝ յիս պատաղիլ, և միանգամայն անցաւորօքս բերկրիլ։ Ի ծանօթից և 'ի սիրելեաց լեր հեռի, և յամենայն ժամանակաւոր սփոփանաց ամփոփ կալ զմիտսդ։ Որպէս աղաչէ երանելի առաքեալն Պետրոս, լինել հաւատացելոց յաշխարհի աստ որպէս նժդեհս և պանդուխտս։

Բ. Ո՛վ քանի՛ համարձակութիւն է մահկանացուի, զոր ոչինչ իրաց խղճ կապեալ ունի ընդ աշխարհի։ Բայց զայսպիսի զատուցեալ սիրտ ունել յամենայնէ՝ խօթամիտն զեռ ոչ իմանայ, և ոչ շնչաւոր մարդ զներքին մարդոյ զաղատութիւն։ Սակայն եթէ ճշմարտութեամբ հոգեւոր լինել կամի, հրաժարել պարտ է նմա՝ եթէ 'ի հեռաւորաց և եթէ 'ի մերձաւորաց. և ոչ յումեքէ այնպէս անձնապահ լինել, որպէս յիւրմէ։ Եթէ անձին կատարելապէս յաղթես, զայն ամենայն զիւրաւ ընդ բռամբ նուաճեսցես։ Կատարեալ յաղթութիւն է 'ի վերայ անձին յաղթանակել։ Զի որ զանձն

հնազանդեալ ունի, մինչև զգայու-
թեանն անսալ բանի, և բանին լսել
ինձ յամենայնի, նա է ճշմարիտ
յաղթող անձին և տէր աշխարհի։

Գ. Եթէ յայս զգաթն վերանալ
տենչաս, պարտ է քեզ քաջութեամբ
ձեռն 'ի գործ առնել, և զտապարն
առ արմին դնել, 'ի խլել և 'ի յա-
տակել զզաղտնի զանկարգ միտումն
առ անձն քո և առ ամենայն ա-
ռանձնաւոր և նիւթական բարի։
Զայսմ ախտէ կարի խին անկարգ
ինքնասիրութեան կախեալ կայ զըլ-
խովին ամենայնի խսպառ յաղթա-
նակութիւն։ Ընդ յաղթիլ և ընդ նը-
կուն լինել ախտիս՝ եղիցի նոյնհե-
տայն մեծ խաղաղութիւն և հան-
դարտութիւն։ Բայց քանզի սա-
կաւք ճգնին կատարելապէս մահա-
նալ յանձինս, և ոչ լիով արտաքոյ
անձանց բերին, վասն այսորիկ յան-
ձինս պաշարեալ մնան, և ոչ 'ի վե-
րոյ քան զանձինս հոգւով վերանալ
ժամանեն։ Այլ որ ազատօրէն ըստ
հաճոյս իմ գնալ կամի, հարկ է նմա
զամենայն զթիւր և զանկարգ ա-

խորժակս իւր մեռուցանել, և ոչ ումեք 'ի ստեղծուածոց առանձնական սիրով և տարփանօք անձկալ։

ԳԼՈՒԽ ԾԴ

Յաղագս այլևայլ շարժմանց բնութեան և շնորհաց.

Ա. Որդեակ, զգուշութեամբ դիտեսջիր զշարժմունս բնութեան և շնորհաց. զի յոյժ նուրբ է սոցա ընդ հակառակս շարժումն, զոր հազիւ այր հոգեկիր և լուսաւորեալ զիտէ ընտրել։ Ամենեքեան բարւոյն բաղձան, և բարի ինչ 'ի բանս կամ 'ի գործս իւրեանց պատճառեն. վասն այսորիկ կերպարանօք բարւոյ բաղումք խաբին։

Բ. Բնութիւնն նենգաւոր է, և զբաղումս յինքն յանկուցանէ թակարթէ և պատրէ, և յամենայնի զինքն ունի վախճան։ Ամ շնորհն պարզմտութեամբ գնայ, յամենայն կերպարանաց չարաց խորշի. ոչ հնարի խաբէութիւնս, և զամենայն

առնէ վասն Աստուծոյ միայն, յո-
բում և խսպառ հանդչի։

Դ. Բնութիւնն ոչ կամի մահա-
նալ, ոչ ճնշիլ, ոչ յաղթահարիլ,
ոչ ընդ բռամբ նուաճիլ, և ոչ կա-
մովին ընդ լծով լինել։ Այլ շնորհն
փութայ ի մեռուցումն անձին, հա-
կառակ կայ զզայութեան, խնդրէ
հպատակ կալ, յօժարի յաղթիլ, և
ոչ զիւրն կամի վարել զազատու-
թիւն. ընդ առաջնորդութեամբ խը-
րատուի սիրէ կալ, և ոչ ախորժէ
ումեք տիրել. այլ յամենայնի ընդ
ձեռամբ Աստուծոյ լինել, և վասն
Աստուծոյ ամենայն մարդկեղէն
ստեղծուածոյ պատրաստ է հլու-
թեամբ խոնարհիլ։

Դ. Բնութիւնն առ զիւրութիւն
իւր աշխատի, և զինչ շահ յայլմէ
կարդիցէ՝ յայն հայի։ Իսկ շնորհն՝
ոչ զանձին օգուտ և զդիւրութիւն,
այլ զբազմաց օգտակարն խորհի։

Ե. Բնութիւնն մտազիւր պատիւ
և յարգ ընդունի։ Իսկ շնորհն զամե-
նայն պատիւ և զփառս հաւատար-
մութեամբ Աստուծոյ ընծայէ։

Զ. Բնութիւնն երկնչի յամօթոյ, և յարհամարհանաց։ Իսկ շնորհն խնդայ ընդ անարգիլն վասն անուանն Յիսուսի։

Է. Բնութիւնն սիրէ զգաստարկութիւն և զհանգիստ մարմնոյ։ Իսկ շնորհն անգործ կալ ոչ զիտէ, այլ մտադիւր զիրկս արկանէ զաշխատութեամբ։

Ը. Բնութիւնն խնդրէ ունել զընդվայրաքնինս և զգեղեցիկս, ատեայ զանարգս և զխոշորս։ Իսկ շնորհն զուարճանայ ընդ անպատճոյճս և ընդ խոնարհս. զխոշորս ոչ արհամարհէ, և ոչ խորշի 'ի զգենլոյ զհանդերձս հնոտիս։

Թ. Բնութիւնն հայի 'ի ժամանակաւորս, խնդայ ընդ շահս երկրաւորս, տխրի 'ի տոյժս, և բարկանայ ընդ դոյզն նախատինս։ Այլ շնորհն հայի 'ի յաւիտենականս, ոչ յարի 'ի ժամանակաւորս, ոչ ընդ կորուստ ընչից խռովի, և ոչ 'ի խիստ բանից դառնանայ. զի զգանճ իւր և զխնդութիւն եղ յերկինս, ուր ոչ կորնչի ինչ։

Ժ. Բնութիւնն շահախնդիր է, և մտադիւրազոյն առնու քան տայ. սիրէ զիւրսն և զառանձնականս։ Իսկ շնորհն զթած է, և զհասարակայն սիրէ. խորշի յառանձնականաց, շատանայ սակաւուք, երանելի ևս համարի զտալն քան զառնուլ։

ԺԱ. Բնութիւնն միտէ 'ի ստեղծուածս, 'ի մարմին իւր, յունայնութիւնս և 'ի զրոյցս։ Այլ շնորհն ձգի յԱստուած և յառաքինութիւնս. հրաժարէ 'ի ստեղծուածոց, փախչի յաշխարհէ, ատեայ զցանկութիւնս մարմնոյ, կարճէ զդեղերանս և ամաչէ երևել 'ի հրապարակս։

ԺԲ. Բնութիւնն մտադիւր բերի յարտաքին սփոփանս, յորս բերկրի ըստ զգայութեան։ Այլ շնորհն յԱստուած միայն խնդրէ մխիթարիլ, և 'ի գերակայ բարին քան յամենայն երևելիս բերկրիլ։

ԺԳ. Բնութիւնն զամենայն առնէ 'ի շահ և 'ի դիւրութիւն անձին. ոչինչ առնէ ձրի, այլ կամ զհատասարն և կամ զլաւագոյն, կամ զգո-

վութիւն և կամ զնպաստաւորութիւն փոխարէն երախտեացն ընդունել ակն ունի. և կամի թէ մեծարգի իցեն իւր արարք և պարգևք։ Իսկ շնորհն ոչինչ ժամանակաւորի լինի 'ի խնդիր. և ոչ այլ ինչ հատուցումն՝ բայց միայն զԱստուած խնդրէ 'ի վարձս։ Եւ առօրէից պիտոյից ինչ ոչ ցանկայ, բայց որչափ պիտին նմա առ ստանալոց զյաւիտենականսն։

ԺԴ. Բնութիւնն խնդայ ընդ բազում բարեկամս և ազգայինս, պարծի ընդ ազնուական տեղի և ընդ ծագումն տոհմի, մտահաճութեամբ գնայ ընդ հզօրս, շողոքորթէ զմեծատունս, զովէ զիւր նմանսն։ Իսկ շնորհն և զթշնամիս սիրէ, և ոչ ընդ հոյլս բարեկամաց փքանայ. ոչ համարի ինչ զտեղին և զծագումն տոհմի, բայց ուր առաւելութիւն իցէ առաքինութեան. նպաստէ առաւել աղքատի քան մեծատան, վրէժտակից լինի անմեղի քան հզօրի, խնդակից լինի ճշմարտախօսի քան ստասացի, յորդորէ միշտ զբարիս՝

նախանձաւոր լինել շնորհաց որք լաւքն են, և առաքինութեամբք՝ որդւոյն Աստուծոյ լինել նմանող։

ԺԵ. Բնութիւնն ընդ պակասութիւնս և ընդ նեղութիւն վաղվաղ տրտնջէ։ Շնորհն արիաբար տանի չքաւորութեան։

ԻԶ. Բնութիւնն զամենայն յինքն ձգէ, վասն իւր գժտի և դիմախօսէ։ Իսկ շնորհն զամենայն յԱստուած դարձուցանէ, յորմէ որպէս յաղբերէ բղխէ ամենայն. ոչինչ բարի անձին զրէ, և ոչ յանդուգն վստահի յանձն. ոչ վիճէ, և ոչ զիւր կարծիս քան զայլոցն վերադասէ. այլ յամենայն խորհուրդս և յիմաստս՝ յաւիտենական իմաստութեան և աստուածային քննութեան ներքոյ արկանէ զանձն։

ԺԷ. Բնութիւնն բաղձայ զիտել զգաղտնիս, և լսել զնորալուրս. կամի արտաքոյ երևիլ, և զբաղումս իրաց զգայութեամբ առնուլ զչափ. ցանկայ լինել ծանուցեալ, և ձեռնարկել 'ի գործ ուստի գովեստ և գարմանք քաղին։ Այլ շնորհաց չէ

ինչ փոյթ լսել զնորալուրս և զընդ-
վայրաքնինս. զի այդ ամենայն 'ի
հնութենէ ապականութեան է ծա-
գեալ, որովհետև չիք ինչ նոր և
մշտամնայ 'ի վերայ երկրի։ Ապա ու-
սուցանէ զուսպ ունել զզգայու-
թիւնս, խորշել յունայն հաճութե-
նէ և 'ի ցուցամոլութենէ, ծածկել
խոնարհութեամբ զգովելին և զըս-
քանչելին, և յամենայն իրողու-
թիւնս և 'ի գիտութիւնս զստուգն
խնդրել զօգտի և զգովութիւն և ըզ-
փառս Աստուծոյ։ Ոչ կամի թէ
ինքն և որ ինչ իւր է քարոզեսցի,
այլ անձկայ զի Աստուած 'ի պարգևս
իւր օրհնեսցի, որ զամենայն 'ի լո-
կոյ սիրոյ 'ի մեզ առատաձեռնէ։

ԺԸ. Այս չնորհ՝ լոյս է գերբնա-
կան, և մասնաւոր իմն պարգև աս-
տուածաձիր. սեպհական կնիք ընտ-
րելոց, և առհաւատչեայ փրկու-
թեան յաւիտենից. որ ամբառնայ
զմարդ 'ի սիրոյ երկրաւորաց 'ի սի-
րելութիւն երկնայնոց, և զչնչաւորն
գործէ հոգևոր։ Ապա որչափ առա-
ւել ճնչի բնութիւնն և յաղթի, այն-

չափ մեծագոյն շնորհ 'ի մեզ հեղա-
նի, և օրըստօրէ նորանոր այցելու-
թեամբք ներքին մարդն ըստ պատ-
կերի Աստուծոյ նորոգի։

ԳԼՈՒԽ ԾԵ

Յաղագս ապականուրեան բնուրեան,
և ազդուրեան աստուածային շր-
նորհաց.

Ա. Տէր Աստուած իմ, որ արա-
րեր զիս ըստ պատկերի քում և ըստ
նմանութեան, շնորհեա ինձ զշնոր-
հըդ զայդ՝ զոր ցուցեր այդչափ մեծ
և հարկաւոր առ փրկութիւն, զի
յաղթեցից իմում ապականեալ բը-
նութեանն՝ որ ձգէ 'ի մեղս և 'ի կո-
րուստ։ Զի տեսանեմ 'ի մարմնի ի-
մում զօրէնս մեղաց, որ հակառակ
կայ օրինաց մտաց իմոց, և գերէ
զիս 'ի հնազանդութիւն զգայութեան
'ի բազումս։ Եւ ոչ կարեմ ընդդէմ
դառնալ կրից նորա, թէ ոչ օգնէ
ինձ շնորհ քո սուրբ հրաձորան հե-
ղեալ 'ի սիրտ իմ։

Բ. Կարօտ եմ շնորհի քոյ, և մեծի շնորհի, առ յաղթելոյ բնութեան՝ որ հաստատեալն է միշտ ի խնամս չարին ի մանկութենէ իւրմէ։ Քանզի ի նախամարդն Ադամ սահեալ սորա և յոռացեալ մեղօք, այնուհետև յամենայն մարդիկ էջ պատիժ այսր արատոյ. մինչև բուն բնութեանն, որ ի քէն բարիոք և ուղիղ հաստեցաւ, յայնմ հետէ դնիլ փոխանակ ախտի և տկարութեան ապականեալ բնութեան. իբր զի ի թողուլ ի նա զբերումն իւր, ձգէ ի չարիս և ի ստորինս։ Քանզի սակաւ այն զօրութիւն՝ որ մնաց, է որպէս կայծ ինն զօղեալ ի գազախի։ Այն ինքն է բանն բնական՝ մածեալ մթին մառախլով. յորոյ դեռ ի ձեռս է ընտրութիւն բարւոյ և չարի, և որոշումն ճշմարտի ի ստոյ. թէպէտ և չէ ձեռնհաս ի գործ դնել զամենայն՝ որում հաւանի, և ոչ լիապատար ունի զլոյս ճշմարտութեան, և ոչ քաջառողջ է յախորժակս իւր։

Դ. Վասն այսորիկ հաճեալ եմ,

տէր, ընդ օրէնս քո ըստ ներքին մարդոյն, գիտելով թէ պատուիրանք քո բարի են և արդար և սուրբ, և թէ խորշել պարտ է յամենայն չարէ և 'ի մեղայ։ Բայց մարմնով ծառայեմ օրինաց մեղայ, առաւել անսացեալ զգայութեան քան բանի։ Վասն այսորիկ կամք առաջի կան ինձ, և առնել զբարին ոչ։ Բազում անգամ բազում բարիս առաջադրեմ, բայց առ 'ի չգոյէ շնորհայ օգնել իմումս տկարութեան 'ի զոյգն հակառակութենէ յետս ընկրկիմ և կասիմ։ Վասն այսորիկ դէպ լինի, զի զճանապարհ կատարելութեան ճանաչեմ. և թէ զիարդ արժան իցէ ինձ գործել, զայն քաջ տեսանեմ. բայց ծանրութեամբ իմոյ ապականութեան ճմլեալ, 'ի կատարելագոյնս անդր ոչ ժամանեմ։

Դ. Ո՛վ որպէս պիտոյ է ինձ տէր շնորհ քո 'ի սկսանել զբարին, 'ի յառաջ վարել, և 'ի կատարել։ Զի առանց նորա ոչ կարեմ առնել ինչ. այլ ամենայնի կարող եմ քև, 'ի զօրացուցանել զիս շնորհայ քոյ։

Ո՛վ երկնային շնորհի, առանց որոյ ոչինչ են մեր վաստակք, և ոչ ինչ ճիրք բնութեան են արդոյք։ Ոչինչ արուեստ, ոչինչ մեծութիւն, ոչինչ զեղեցկութիւն կամ քաջութիւն, ոչինչ ճարտարութիւն կամ ճոռոմութիւն արժեն ինչ առաջի քո, տէր, առանց շնորհաց։ Քանզի ճիրք բնութեան՝ բարեաց և չարաց են հաստատակք. այլ ընտրելոց սեպհական պարգև է շնորհն և սէր. որով պերճացեալքն արժանի համարին կենացն յաւիտենից։ Այնչափ զեր 'ի վերոյ է շնորհս, զի ոչ պարգև մարգարէութեան, ոչ նշանագործութիւն, և ոչ որոց և իցէ խորոց խորհրդածութիւն՝ համարին ինչ առանց սորա։ Այլ և ոչ հաւատք, ոչ յոյս, և ոչ այլ առաքինութիւնք ընդունելի են քեզ՝ առանց սիրոյ և շնորհաց։

Ե. Ո՛վ երանաւէտ շնորհ, որ զաղքատն հոգւով ճոխացուցանես առաքինութեամբք, և զճոխացեալն բաղում բարեաք՝ խոնարհ առնես սրտիւ։ Եկ էջ առիս, լից զիս յայ-

զուէ միսիթարութեամբ քով, զի մի նուաղեսցի 'ի վհատութենէ և 'ի ցամաքութենէ մտաց անձն իմ։ Տո՛ւր, տէր, զտանել ինձ շնորհս առաջի քոյ. զի շատ է ինձ շնորհ քո, թէպէտ և ոչինչ ունիցիմ 'ի ցանկալեաց բնութեան։ Եթէ փորձեցայց և տառապեցայց վշտօք բազմօք, ոչ երկեայց 'ի չարէ՝ 'ի լինել շնորհի քո ընդ իս։ Նա է իմ զօրութիւն, նա տայ ինձ խորհուրդ և օգնութիւն. քան զամենայն թշնամիս է զօրագոյն, և քան զամենայն իմաստունս իմաստնագոյն։

Զ. Վարդապետ է ճշմարտութեան, ուսուցիչ է խրատու, լոյս սրտի, զիւրիչ վշտաց, փարատիչ տրտմութեան, վանիչ երկիւղի, սնուցիչ եռանդեան, ծնուցիչ արտասուաց։ Զի՞նչ եմ ես առանց նորա, բայց եթէ փայտ չոր և կոճղ անպիտան 'ի բաց ընկեցիկ։ Ա՛պա շնորհ քո, տէր, յամենայնի իմ առաջի երթիցէ, և զհետ եկեսցէ. և տացէ ինձ հանապազ փոյթեռանդն լինել 'ի գործս բարութեան, Քրիստոսիս Յիսուսիս որդւով քով. ամէն։

ԳԼՈՒԽ ԾԶ

Թէ պարտ է մեզ ուրաւեալ զանձինս, և զհետ երթալ Քրիստոսի 'ի ձեռն խաչի.

Ա. Որդեակ, որչափ 'ի քէն ելանես, այնչափ յիս փոխաբերիս։ Որպէս ոչինչ իմիք ցանկալն արտաքոյ՝ բերէ զներքին խաղաղութիւն, նոյնպէս ներքուստ հրաժարելն յանձնէ՝ ընդ Աստուծոյ միաւորէ։ Կամիմ ուսանել քեզ զկատարեալ յանձնարարութիւն անձինդ 'ի կամս իմ, առանց ինչ հակառակութեան և տրտնջման։ Ե՛կ զկնի իմ. ես եմ ճանապարհ, ճշմարտութիւն, և կեանք։ Առանց ճանապարհի ոչ հատանի ուղի, առանց ճշմարտութեան ոչ ճանաչի ինչ, և առանց կենաց ոչ լինի կեալ։ Ես եմ ճանապարհ, որում պարտ է քեզ զհետ երթալ, ճշմարտութիւն՝ որում պարտ է քեզ հաւա-

տալ, և կեանք՝ յոր ունիս յուսալ։ Ես եմ ճանապարհ անմոլար, ճըշմարտութիւն անսուտ, և կեանք անվախճան։ Ես եմ ճանապարհ ուղիղ, ճշմարտութիւն զերակայ, կեանք ճշմարիտ, կեանք երանական և կեանք անստեղծ։ Եթէ կացցես յիմում ճանապարհի, ծանիցես զճշմարտութիւն. և ճշմարտութիւնն ազատեսցէ զքեզ, և հասցես կենացն յաւիտենից։

Բ. Եթէ կամիս մտանել՝ի կեանս, պահեա զպատուիրանս։ Եթէ կամիս ճանաչել զճշմարտութիւն, հաւատա ինձ։ Եթէ կամիս կատարեալ լինել, վաճառեա զամենայն։ Եթէ կամիս լինել իմ աշակերտ, ուրացիր զանձն։ Եթէ կամիս զերանական կեանս ժառանգել, զաստի կեանս արհամարհեա։ Եթէ կամիս վերադաս լինել յերկինս, խոնարհեցո զքեզ յաշխարհի։ Եթէ կամիս թագաւորել ընդ իս, բարձ զխաչ ընդ իս։ Զի միայն ծառայք խաչին գտանեն զճանապարհ երանութեան և ճշմարիտ լուսոյ։

Դ. Տէր Յիսուս Քրիստոս, քանզի անձուկ էին կեանք քո և արհամարհ աշխարհի, տուր ինձ արհամարհութեամբ աշխարհի՝ լինել քեզ նմանող։ Զի ոչ է ծառայ մեծ քան զտէր իւր, և ոչ աշակերտ քան զվարդապետ իւր։ Մարդեսցի ծառայ քո 'ի վարս քո, զի անդ է իմ փրկութիւն և ճշմարիտ սրբութիւն։ Զոր ինչ արտաքոյ նորա կարդամ կամ լսեմ, ոչ զուարթացուցանէ զիս, և ոչ լիով բերկրեցուցանէ։

Դ. Որդեակ, քանզի զայդ ամենայն զիտես և ընթերցեալ է քո զամենայն, երանելի լինիս՝ եթէ առնիցես զնոսա։ Որ ունի զպատուիրանս իմ և պահէ զնոսա, նա է՝ որ սիրէ զիս. և ես սիրեցից զնա, և երևեցուցից նմա զիս. և նստուցից զնա ընդ իս յարքայութեան հօր իմոյ։

Ե. Տէր Յիսուս Քրիստոս, որպէս ասացեր և խոստացար, նոյնպէս և եղիցի. և ինձ ևս վիճակեսցի այդմ լինել արժանի։ Ընկալայ ընկալայ 'ի ձեռաց քոց զիսաչ. բար-

ձից և բարձից զայն մինչև ցմահ, որպէս և եղեր 'ի վերայ իմ։ Ահա բարւոյ աբեղայի կեանք խաչ է, որ տանի յարքայութիւն։ Սկիզբն ա՞ բարաք. ոչ յետս ընկրկիլ արժան է, և ոչ թողուլ 'ի ձեռանէ։

Զ. Հա՛պա, եղբարք, զիմեսցուք միանգամայն, և Յիսուս եղիցի ընդ մեզ։ Վասն Յիսուսի յանձն առաք զխաչս, վասն Յիսուսի կացցուք մնասցուք 'ի խաչի. նա եղիցի մեր օգնական, որ առաջնորդ է մեր և կարապետ։ Սպա թագաւոր մեր մտանէ առաջի մեր, որ պատերազմի փոխանակ մեր։ Արիաբար զհետ երթիցուք, մի՞ զք երկիցէ յահէ. պատրաստ լիցուք մեռանել քաջութեամբ 'ի պատերազմի, և մի՞ խառնեսցուք անուն վատութեան ընդ փառս մեր՝ փախչելով 'ի խաչէ։

ԳԼՈՒԽ ԾԷ

Թէ չէ պարտ մարդոյ կարի իմն լքանել, յորժամ դիպի նմա 'ի պակասութիւնս ինչ սահել.

Ա. Որդեակ, առաւել հաճոյ են ինձ համբերութիւն և խոնարհութիւն 'ի վիշտս, քան զբազում մխիթարութիւն և եռանդն 'ի յաջողութիւնս։ Զի՞ է զի տրտմեցուցանէ զքեզ խուն ինչ զրոյց ասացեալ զքէն։ Թէ աւելի ևս լինէր, չէր արժան քեզ խռովիլ։ Բայց արդ թող դու, և զանց արա. չէ առաջին, և ոչ նոր ինչ, այլ և ոչ վերջին, եթէ կեցցես ընդ երկար։ Քաջ ես դու, ցորչափ ոչ դիպի ինչ վիշտ. խոհական ես և 'ի խրատել զայլս, և գիտես քաջալերել բանիւք. այլ իբրև զայ յանկարծակի նեղութիւն առ դուրս քո, և 'ի խրատուէ և 'ի քաջալերութենէ վերջացեալ գտանիս։ Հայեաց 'ի մեծ տկարութիւնդ, զո-

բոյ ստէպ առնուս զչափ 'ի գոյգն դէպս։ Բայց առ փրկութիւն քո գործին այս ամենայն, և որ սոցին նման պատահարք։

Բ. Հան ըստ կարի 'ի սրտէ. և թէ երդիծոյց ինչ, մի խսպառ լքուսցէ, և մի ընդ երկար պաշարեսցէ։ Գէթ համբեր երկայնմտութեամբ, թէ ոչ կարես խնդութեամբ։ Թէպէտ և դժուարահաճ ես 'ի լսել, և գայ 'ի քեզ ցաստումն, դու ժուժեա. և մի թողուր թէ անկարգ ինչ ելցէ 'ի բերանոյ քումմէ, յորմէ զայթակղեսցին փոքունք։ Վաղվաղակի զիջցի զայրոյթն զրգռեալ, և զառնութիւնն ներքին քաղցրասցի՝ 'ի զառնալ շընորհի։ Կենդանի եմ ես, ասէ տէր, զի պատրաստ եմ օգնել քեզ, և առաւել քան զսովորականն մխիթարել, եթէ յիս յուսասցիս, և ջերմ առ իս կարդայցես։

Գ. Քաջալերեսց, մենագինեալ 'ի մեծագոյն համբերութիւն։ Զես գլխովին զրաջան, թէ ուրեք երբէք նեղեալ գտանիս կամ մեծապէս փորձեալ։ Արդ ես դու, և ոչ

Աստուած. մարմին ես, և ոչ հրեշտակ։ Զիարդ հնար էր քեզ միշտ 'ի նոյն սահման առաքինութեան կալ մնալ. որ ոչ վիճակեցաւ այս՝ ոչ հրեշտակաց յերկինս, և ոչ նախամարդոյն 'ի դրախտի։ Ես եմ՝ որ զտրտմեալս քաջալերութեամբ կանգնեմ, և զորս ճանաչէն զտկարութիւն իւրեանց՝ յաստուածութիւն իմ վերբերեմ։

Դ. Ցէր, օրհնեալ է բան քո, քաղցր 'ի քիմս իմ քան զմեղր և զխորիսխ։ Զինչ առնել էր ինձ յայնչափ նեղութիւնս և 'ի վիշտս իմ, թէ ոչ զօրացուցանէին զիս բանք քո սուրբ։ Այսուհետև զի փոյթ է, թէ զինչ և որչափ ինչ կրիցեմ. միայն թէ 'ի նաւահանգիստ փրկութեան հասանիցեմ։ Տուր վախճան բարի, տուր երջանիկ փոխումն յաշխարհէ աստի։ Ցիշեա զիս Աստուած իմ, և առաջնորդեա ինձ ընդ ճանապարհ ուղիղ յարքայութիւն քո, ամէն։

ԳԼՈՒԽ ԾԸ.

Յաղագս չքննելոյ զբարձրագոյն իրս, և զԱստուծոյ զպտղոնի դատաստանս.

Ա. Որդեակ, զգոյշ լեր չվիճել զխորին նիւթոց և զզպտղոնի դատաստանացն Աստուծոյ, թէ զիարդ այս ոք այդպէս բարձի թողի կայ, և այն ոք յայնչափ չնորհս ամբարձեալ է. զիարդ սա այսչափ տառապի, և նա այնչափ փառաց 'ի փառս բարձրանայ։ Այդ ամենայն 'ի վեր է քան զհասողութիւն մարդկան, և աստուածային դատաստանաց քննութեան ոչինչ բան կամ վիճումն զիմակալէ։ Ապա յորժամ այսպիսի ինչ թելադրէ քեզ թշնամին, կամ ընդվայրաքննինք 'ի խոյզ և 'ի խնդիր արկանեն, դու զմարգարէինն ասա. Արդար ես, տէր, և ուղիղ են դատաստանք քո։ Եւ թէ՝ Դատաստանք տեառն ճշմարիտ են, և արդար են 'ի նոյն։ Դատաս-

տանք իմ սարսափելի են, և ոչ քննելի. զի մտաց մարդկան են անհասանելի։

Բ. Մի խնդիր առներ, և մի վիճեր և 'ի վերայ աստիճանի սրբոց, թէ ո՞ քան զո՞ սրբազոյն իցէ, կամ ո՞վ մեծ իցէ յարքայութեան երկնից։ Խնդիրք այդպիսիք ծնանին յաճախ վէճս և հակառակութիւնս անպիտանս, և տածեն զհպարտութիւն և զանձանձութիւն. յորմէ 'ի վեր երևին մախանք և երկպառակութիւնք, 'ի ջանալ ումեմն զայս սուրբ՝ և ումեմն զայն սուրբ հպարտութեամբ վերադասել։ Ի զիտութիւն և 'ի քննութիւն այդպիսի իրաց ձեռնարկել՝ ոչինչ օգուտ 'ի մէջ բերէ. նա՝ անհաճոյ իսկ է սրբոց։ Վասն զի չեմ ես Աստուած խռովութեան, այլ խաղաղութեան. որ առաւել հաստատի 'ի ճշմարիտ խոնարհութեան, քան յինքնասարծ բարձրութեան։

Գ. Են որք նախանձու սիրոյ ձըզին յայս կամ յայն սուրբ յորդորոյն ըղձմամբ. բայց մարդկային

իմն է այն, քան աստուածային։ Ես եմ ամենայն սրբոց հաստիչ, ես պարգևեցի նոցա զշնորհս, ես ետու նոցա զփառս։ Ես ծանեայ զմիոյ միոյ 'ի նոցանէ զարժանիս, ես ժաման արարի զնոսա յօրհնութիւն քաղցրութեան իմոյ։ Ես յառաջագոյն ծանեայ զսիրելիս իմ յառաջ քան զյաւիտեանս. ես ընտրեցի զնոսա յաշխարհէ, և ոչ թէ նոքա զիս նախ ընտրեցին։ Ես կոչեցի զնոսա շնորհօք, ձգեցի յիս ողորմութեամբ, և առաջնորդեցի նոցա ընդ պէսպէս փորձութիւնս։ Ես հեղի 'ի նոսա մխիթարութիւնս մեծամեծս, ես ետու նոցա յարատևութիւն, ես պսակեցի զնոցա համբերութիւն։

Դ. Ես եմ՝ որ ճանաչեմ զառաջինն և զյետին, ես ընդ ամենեսին անչափ սիրով զրկախառնիմ։ Ես եմ գովելի յամենայն սուրբս իմ. ինձ 'ի վեր քան զամենայն վայելէ օրհնութիւն և պատիւ վասն միոյ միոյ 'ի նոցանէ, զորս այնպէս փառօք մեծացուցի, և յառաջագոյն

սահմանեցի՝ առանց ինչ արժանաւորութեան նոցա կանխելոյ։ Այլ որ ոք զմի ՚ի փոքրկանց իմոց արհամարհէ, այնպիսին և ոչ զմեծն մեծարէ. զի զփոքրն և զմեծ ես արարի։ Եւ որ ընդ վայր հարկանէ զմի ՚ի սրբոց, ընդ վայր հարկանէ և զիս և զամենայն սուրբս յարքայութեան երկնից։ Ամենեքին մի են յօգիս սիրոյ. զնոյն խորհին, զնոյն կամին, և ամենեքին միաբանութեամբ սիրեն զմիմեանս։

Ե. Այն զի, որ բարձրագոյն ասն է, առաւել սիրեն զիս քան զին. քեանս և քան զիւրեանց արժանաւորութիւն։ Քանզի յաւիշտակեալք ՚ի վերոյ քան զանձինս, և ձգեալք արտաքոյ քան զիւրեանց սէր, զԸլխովին ՚ի սէր իմ զիմեն. յոր և ըղմայլմամբ հանդչին։ Զիք ինչ որ ՚ի բաց զարձուցանէ զնոսա, կամ ճնշէ։ Իբր զի յաւիտենական ճշմարտութեամբ առլցեալք, վառին հրով անշէջ սիրոյ։ Այլա կարկեսցին մարմնաւոր և շնչաւոր մարդիկ՝ խօսել զգերակայութենէ սրբոց,

ոչք ոչ զիտեն սիրել, բայց միայն զիւրեանց խնդութիւնս։ Նուազեն և յաւելուն զփառս նոցա ըստ իւրեանց յօժարութեան, և ոչ ըստ հաճոյս յաւիտենական ճշմարտութեան։

Զ. Ի բաղումս 'ի սոցանէ է տգիտութիւն, մանաւանդ յայնս՝ որոց աղօտ է լոյս, և դուն ուրեք զիտեն սիրել զոք կատարեալ և հոգևոր սիրելութեամբ։ Այլև բնաւոր ախորժմամբ և մարդկային բարեկամութեամբ կարի իմն ձգին յայս ոք կամ յայն ոք. և որպէս բերին 'ի սորինս, նոյնպէս կարծեն և զերկնաւորս։ Բայց անհամեմատ միջոցաւ տարատրոհին, զոր ինչ անկատարք խորհին, և զոր ինչ հոգեկիրք վերին յայտնութեամբ խորհրդածեն։

Է. Այս զզոյշ լեր, որդեակ, չխօսել ընդվայրաքննութեամբ զայնպիսեաց՝ որ 'ի վեր են քան զքո զիտութիւն։ Այլ այսմ առաւել փոյթ կալ, և մնա զկր, զի զէթ փոքրիկ յարքայութեանն Աստուծոյ մարթասցիս զտանել։ Թէպէտ և զիտէր

ոք, թէ ո՛ քան զո՛ սրբազոյն իցէ կամ մեծագոյն համարիցի յարքայութեան երկնից, զինչ օգուտ էր նմա զիտութիւնս, թէ ոչ 'ի զիտութենէ աստի առաջի իմ խոնարհէր, և յառաւելագոյն զովեստ անուան իմոյ խրախուսէր։ Յոյժ աստուածահաճոյ ինչ զործէ, որ զմեզաց իւրոց մեծութիւն և զառաքինութեանց իւրոց փանաքութիւն խորհի, և թէ քանի՞ հեռի է 'ի կատարելութենէ սրբոց, քան զայն՝ որ զերիցութենէ կամ զկրսերութենէ նոցա վիճի։ Լաւ է ՚ի ՚Ջերմեռանդնագոյթիւք և արտասուօք զսուրբս աղաչել, և զպանծալի օգնութիւն նոցա խոնարհամիտ հայցել, քան զգաղտնիս նոցա զրախնդիր քննել։

Ը. Քաջ իսկ հաճեալ են նոքա, եթէ ուսցին մարդիկ զգոյշ կալ և զզրախաւսութիւն իւրեանց կարճել։ Ոչ պարծին նոքա յիւրեանց արժանաւորութիւն. իբր զի ոչինչ բարի ընծայեն անձանց, այլ զամենայն ինձ. զի զամենայն յանբաւ սիրոյ իմոյ նոցա շնորհեցի։ Այն-

չափ լի են սիրով աստուածութեան և բազմազեղ խնդութեամբ, մինչև չպակասել ինչ նոցա 'ի փառաց և յերանութենէ։ Ամենայն սուրբք որչափ բարձր են 'ի փառս՝ այնչափ խոնարհ են յինքեանս, և ինձ առաւել մերձաւոր և սիրելի։ Վասն այսորիկ գրեալ է, թէ արկանէին զպսակս իւրեանց առաջի Աստուծոյ. և անկան 'ի վերայ երեսաց իւրեանց առաջի գառինն, և երկիրպագին կենդանւոյն յաւիտեանս յաւիտենից։

Թ. Բազումք խնդրեն՝ թէ ո՞վ մեծ իցէ յարքայութեանն Աստուծոյ, որք ոչ գիտեն՝ թէ արժանացին արդեօք ընդ փոքրունս դասիլ։ Մեծ է փոքր իսկ լինել յերկինս, ուր ամենեքին են մեծ. զի ամենեքին որդիք Աստուծոյ կոչին և են։ Կրասերն եղիցի 'ի հազարս, և մեղաւորն հարիւրամեայ մեռցի։ Քանզի 'ի խնդրել աշակերտաց, թէ ո՞վ մեծ իցէ յարքայութեան երկնից, այսպիսի լուան պատասխանի. Եթէ ոչ դարձջիք և եղիջիք իբրև զման-

կոխ, ոչ մոռանիցէք յարքայութիւնն երկնից։ Զի որ խոնարհեցուցանէ զանձն իբրև զմանուկս զայս, նա է մեծ յարքայութեանն երկնից։

Ժ. Վա՛յ է նոցա, որք ընդ մանկունս կամաւ խոնարհիլ չառնուն յանձն, զի խոնարհ գուռն արքայութեան երկնից ոչ տացէ նոցա մուտ։ Վա՛յ և մեծատանց, որք ընկալան աստէն զմխիթարութիւնս իւրեանց. զի 'ի մոռանել աղքատաց յարքայութիւնն Աստուծոյ, նոքա արտաքոյ կացեալ կականաւ լացցեն։ Ուրախ լերուք խոնարհք, և ցնծացէք աղքատք, զի ձեր է արքայութիւնն Աստուծոյ. սակայն եթէ ճշմարտութեամբ գնայցէք։

ԳԼՈՒԽ ԾԹ

Թէ զամենայն յոյս մեր և ապաւինու-թիւն յԱստուծոյ միայն պարտ է հաստատել.

Ա. Տէր, ո՞վ է իմ ապաւինու-թիւն յաստի կեանս, կամ ո՞ր իցէ սփոփութիւն իմ յամենայն երևելս ընդ արեգակամբ։ Ո՞չ ապաքէն դու Աստուած իմ, որոյ ողորմութեանդ ոչ գոյ բաւ։ Ո՞ւր ինձ բարի ինչ եղև առանց քոյ, կամ երբ չար ինչ պատահեաց՝ ի լինել քո ընդ իս։ Ա՞ռաջել կամիմ լինել աղքատ վասն քոյ, քան մեծատուն առանց քոյ։ Ընտրեմ մանաւանդ ընդ քեզ յերկրի պանդխտանալ, քան առանց քո դերկինս ժառանգել։ Ուր դու ես, անդ են երկինք. և անդ մահ և դըժոխք, ուր ոչ ես դու։ Դու ես իմ ցանկալի. վասն այսորիկ հարկ է ինձ դՀետ քո յոգւոց հանել, աղաղակել, և աղերս արկանել։ Եւ չիք

ինձ վստահանալ յոր, որ ձեռնտու
եղէ 'ի կարիս 'ի ժամու, բայց 'ի քեզ
միայն Աստուած իմ։ Դու ես յոյս
և ապաւէն իմ, դու մխիթարիչ իմ
և մտերիմ յամենայնի։

Բ. Ամենեքին զիւրեանցն խնդրեն. դու զփրկութիւն և զյառաջադիմութիւն իմ միայն կամիս, և զամենայն ինձ 'ի բարի փոխարկես։ Թէպէտ և 'ի պէսպէս փորձութիւնս և 'ի վիշտս արկանես, սակայն զամենայն յօգուտ իմ կարգես. որ բիւրօրինակ զիտես փորձել զքո սիրելիս։ Յոր հանդէս ոչինչ նուազ արժան է ինձ սիրել զքեզ և օրհնել, քան եթէ երկնային մխիթարութեամբ զիս լնուիր։

Գ. Ապա 'ի քեզ տէր զնեմ զամենայն զյոյս իմ և զապաւինութիւն, 'ի քեզ զամենայն նեղութիւն և զվիշտս իմ հաստատեմ. զի զոր ինչ արտաքոյ քո տեսանեմ, զամենայն տկար և յողողող գտանեմ։ Զի ոչինչ օգտեն ինձ բաղում բարեկամք, և ոչ օգնել ինչ զօրեն հզօր օգնականք. ոչ տան պիտանի

պատասխանի խոհական խորհրդա-
կանք, և ոչ մխիթարեն իմաստնոց
մատեանք. ոչ ընտիր ընտիրք ինչ-
զիտեն զերծուցանել, և ոչ տեղի
անքոյթ և զուարթարար՝ պատրս-
պարել. թէ ոչ զուինքն մօտ եկես-
ցես, օգնեսցես, զօրացուսցես, մը-
խիթարեսցես, ուսուցես, և պա-
հեսցես։

Դ. Զի ամենայն որ ինչ խաղա-
ղութեան թուի առիթ և երջանկու-
թեան, առանց քո ոչինչ է, և ոչ-
ինչ երջանկութիւն ճշմարտութեամբ
'ի ներքս ածէ։ Ապա կատար ամե-
նայն բարեաց, և բարձրութիւն կե-
նաց, և խորութիւն ճարտարու-
թեանց դու ես։ Եւ 'ի քեզ քան յա-
մենայն ինչ յուսալ, արիական սփո-
փումն է քոց ծառայից։ Առ քեզ
են աչք իմ, 'ի քեզ յուսացեալ եմ,
Աստուած իմ, հայր ողորմութեանց։
Օրհնեա և սրբեա զհոգի իմ երկնա-
ւոր օրհնութեամբ. զի եղիցի քեզ
բնակարան սրբութեան, և աթոռ
յաւիտենական փառաց քոց. և ոչ-
ինչ 'ի տաճար փառաց քոց զտցի

յաչս աստուածպետութեանդ անհաճոյ։ Ըստ մեծի բարութեան քում, և ըստ բազում զթութեանց քոց հայեաց յիս, և լուր աղօթից ծառայի քոյ աղքատի, վտարելոյ յերկիր ստուերաց մահու։ Պարըսպեալ պահեա զանձն ծառայի քոյ 'ի բազմապատիկ վիշտս ապականացու կենցաղոյս, և ուղեկցելով շնորհի քոյ առաջնորդեա ինձ 'ի ճանապարհս խաղաղութեան. Ամէն։

Կատարեցան խրատք որ 'ի վերայ ներքին մխիթարութեան.

ԳԻՐՔ ՉՈՐՐՈՐԴ

ՅԱՂԱԳՍ ԽՈՐՀՐԴՈՅ ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ

Չկարմեռանկն հրաւէր առ սուրբ հաղորդարանն.

Զայն Քրիստոսի.

ԱՍԿԵՑԻ առիս ամենայն աշխատեալք և բեռնաւորք, և ես հանգուցից զձեզ, ասէ տէր։ Հայցն, զոր ես տաց, մարմին իմ է. զոր ես տաց վասն կենաց աշխարհի։ առէք կերայք, այս է մարմին իմ, որ վասն ձեր բաշխի. զայս արարէք առ իմոյ յիշատակի։ Որ ուտէ զմարմին իմ, և ըմպէ զարիւն իմ,

յիս բնակեսցէ, և ես 'ի նմա։ Ընբանս, զոր ես խօսեցայ ընդ ձեզ, հոգի են և կեանք։

ԳԼՈՒԽ Ա.

Թէ քանի՞ յարգանօք պարտ է ընդունել զՔրիստոս.

Զայն աշակերտի.

Ա. Այս բանք են քո, Քրիստոս ճշմարտութիւն յաւիտենական. թէպէտ և ոչ միահաղոյն ասացան, և ոչ 'ի մի վայր գրեցան։ Այլ քանզի քո են և ճշմարիտ, սրտի մտօք և հաւատովք ընդունիմ զամենայնն։ Քո են, և դու բարբառեցար. և իմ ես են, զի առ փրկութիւն իմ ասացեր։ Մտաղիւր ընդունիմ ընդնոսա 'ի բերանոյ քումմէ, զի անջինջ տպաւորեսցին 'ի սիրտ իմ։ Զարթուցանեն զիս զորովալիր այս բանք, որ լի են քաղցրութեամբ և սիրով. բայց զարհուրեցուցանեն զիս յանցանք իմ, և յընդունելութենէ ահաւոր խորհրդոյս յետս

ընկրկէ զիս անմաքուր խիղճ մը-
տաց։ Յորդորէ զիս քաղցրութիւն
բանից քոց. այլ ծանրէ զիս բազ-
մութիւն ախտից իմոց։

Բ. Հրամայես ինձ անվեհեր մատ-
չել առ քեզ, եթէ կամիմ ունել ընդ
քեզ մասն, և զանմահականն ճա-
շակել կերակուր, եթէ ցանկամ
զյաւիտենականն ընդունել զկեանս
և զփառս։ Եկայք, ասես, առ իս
ամենայն աշխատեալք և բեռնա-
ւորք, և ես հանգուցից զձեզ։ Ո՜վ
քաղցր և փարելի բարբառոյս յուն-
կընն մեղաւորի. որով դու, տէր,
զաղքատն և զտանկն հրաւիրես՝ի
հաղորդութիւն ամենասուրբ մար-
մնոյ քոյ։ Այլ ո՞վ եմ ես տէր, զի
վստահացայց մատչել առ քեզ։ Ա-
հա երկինք և երկիր չեն քեզ բա-
ւական. և դու ասես, եկայք առիս
ամենեքեան։

Գ. Զինչ իցէ զորովական այս
զիջումն և զթալիր հրաւէր։ Զիարդ
իշխիցեմ գալ, որ ոչինչ բարի զի-
տեմ անձին իմոյ առ՝ի կարող լի-
նելոյ վստահանալ։ Զիարդ մուծից

զքեզ 'ի տուն իմ, որ բաղում անզամ բարկացուցի զքաղցրիկ երեսս քո։ Պատկառին 'ի քէն հրեշտակք և հրեշտակապետք, երկնչին սուրբք և արդարք. և դու ասես, եկայք ասիս ամենեքեան։ Եթէ ոչ քո էր ասացեալ, ո՞ հաւատայր լինել ճշմարիտ. և եթէ ոչ քոյ էր հրամայեալ, ո՞ ձեռնարկէր մատչել։

Դ. Ահա Նոյ այր արդար 'ի շինութիւն տապանին հարիւր ամ աշխատ եղև, զի ապրեսցի ընդ սակաւուց. և ես զիաՀրդ կարիցեմ 'ի մի ժամ պատրաստել զանձն՝ առ ընդունելոյ յարգանօք զաշխարհի արարչագործդ։ Մովսէս մեծ ծառայ քո և մտերիմ, արար տապանակ յանտուտ փայտից. զոր և պատեաց ոսկւով սրբով, դնել 'ի նմա զտախտակս օրինաց. և ես փուտ ստեղծուած իշխիցեմ զօրինագիրդ և զկենսատուդ այսպէս հեշտեաւ ընդունել։ Սողոմոն, իմաստնագոյնն 'ի թագաւորս Իսրայէլի, տաճար շինեաց մեծակաւոյց զամս եօթըն 'ի զովեստ անուան քոյ, և ութ

օր նաւակատիս կատարեաց. հա-
զար զոհս խաղաղականս մատոյց,
և զտասանակն ուխտի ձայնիւ փո-
ղոյ և հոչակաւ մեծահանդէս զետե-
ղեցոյց 'ի պատրաստեալ յիւր տեղի.
և ես թշուառս և ապիկարս 'ի մարդ-
կանէ զիարդ մուծիս զքեզ 'ի տուն
իմ, որ հազիւ զկէս ժամու անցու-
ցանել զիտեմ եռանդեամբ, և երա-
նի թէ զկէս իսկ առ անդամ մի ար-
ժանապէս։

Ե. Բարէ, որչափ ինչ առնել
ջանացան նոքա 'ի հաճոյանալ քեզ,
և որպէս խուն ինչ է՝ զոր եսն առ-
նեմ. որպէս 'ի համառօտն փու-
թամ, յորժամ 'ի հաղորդութիւն
պատրաստիմ. հազիւ զմիտս ամ-
փոփեալ, հազիւ հաղ յամենայն
ցնդմանէ մաքրեալ։ Եւ արդարև
'ի կենարար եկաւորութեան աս-
տուածութեանդ չէր արժան ան-
արժան ինչ խորհրդոյ յիս գալ, և
ոչ արարածոյ իմիք զիս զբաղել. զի
ոչ զհրեշտակ, այլ զհրեշտակացն
տէր հանդերձիմ հիւրընկալել։

Զ. Այն զի մեծ խաւար է 'ի մէջ

տապանակին ուխտի և աւանդիցն որ 'ի նմա, և 'ի մէջ ամենասուրբ մարմնոյ քոյ և անպատում զօրութեանց նորա. 'ի մէջ օրինական զոհից՝ որ նախանկար էին հանդերձելոց, և 'ի մէջ ճշմարիտ մարմնոյ քոյ պատարագի որ ամենայն նախնի զոհից է լրումն։

Է. Իսկարդ զի՞ է, զի ոչ յաւէտ բորբոքիմ առ քոյ արդոյ եկատրութիւն. զիաՀրդ ոչ մեծալան պատրաստիմ առ ընդունելութիւն քոյ սրբութեանց, ուր այն նախնի սուրբ նահապետք և մարգարէք, ևս և թագաւորք և իշխանք հանդերձ ամենայն ժողովրդեամբ, այսչափ իղձ եռանդեան ցուցին առ պաշտօն աստուածային։

Ը. Կաթուղիկոս աւաքինասէր արքայ Դաւիթ առաջի տապանակին Աստուծոյ ամենայն զօրութեամբ, յիշելով զերախտիսն՝ զոր արար Աստուած երբեմն առ հարս։ Աբար ազգս ազգս նուագարանաց, յօրինեաց սաղմոս, և սահմանեաց երգել ուրախութեամբ. նուագէր և

ինքն ստէպ քնարաւ, ազգմամբ շնորհաց սուրբ Հոգւոյն։ Ուսոյց ժողովրդեանն Իսրայէլի յամենայն սրտէ գովել զԱստուած, և միաձայն բարբառով զօրհնանապաղ օրհնել զնա և փառաւորել։ Եթէ այսչափ եռանդն էր յայնժամ, և առաւածային օրհնութեան յիշատակ առաջի տապանակին վկայութեան, ո՞րչափ ևս արդ պարտ է ինձ և ամենայն ժողովրդեան քրիստոնէից՝ ունել յարդ և եռանդն յառաջկայութեան սուրբ խորհրդոյս, և ՝ի ճաշակել զպատուական մարմին Քրիստոսի։

Թ. Ընթանան բազումք ՝ի տեղիս տեղիս յայց նշխարաց սրբոց, և աքանչանան ՝ի լսել զվարս նոցա. հիանան ընդ հոյակապ շինուածս տաճարաց նոցա, և համբուրեն զգ-սուրբ ոսկերս նոցա մեռաքսապատս և ոսկիապատս։ Եւ ահա դու ասա առաջի իմ ես ՝ի վերայ սեղանոյ, Աստուած իմ, սուրբդ սրբոց, արարիչ մարդկան և տէր հրեշտակաց։ Յողովակի յայսպիսի այցելու-

թիւնս է հետաքրքրութիւն մարդ-
կան, և նորութիւն անտես իրաց,
և սակաւ պտուղ քաղի ուղղութեան.
մանաւանդ ուր թեթևութեամբ խու-
սքն ընթանան՝ առանց ճշմարիտ
զղջման։ Այլ ասա՛ի խորհրդեան
սուրբ սեղանոյ զխոսքին ներկայ
ես, Աստուած և մարդ Յիսուս Քրիս-
տոս. ուր և առատ քաղի յաւիտե-
նական փրկութեան պտուղ, քա-
նիցս անգամ արժանապէս և եռան-
դեամբ ճաշակիս։ Ի սա ոչ ձգէ թե-
թևութիւն ինչ, և ոչ հետաքրքրու-
թիւն կամ զզայականութիւն. այլ
հաստատուն հաւատք, ջերմեռան-
դն յոյս, և անկեղծ սէր։

Յ. Ո՛վ անտեսանելի արարիչդ
աշխարհի Աստուած, զի՞արդ սքան-
չելի են գործք քո առ մեզ. զի՞արդ
մարդասիրապէս առ ընտրեալս քո
գթասիրես, որոց զանձն քո՛ի սուրբ
խորհրդեանս առաջի դնես՝ի ճաշա-
կել։ Քանզի՝ի վեր է այս քան զա-
մենայն միտս, և առանձինն իմն
զառաքինեաց զսիրտս ձգէ և զիրգս
վառէ։ Զի քո ճշմարիտ հաւատա-

ցեալք, որք զամենայն կեանս իւ-
բեանց յուղղութիւն կարգեն, յայսմ
արգոյ խորհրդոյ մեծ շնորհ եան-
դեան և սէր առաքինութեան ստէպ
յանձինս ընդունին։

ԺԱ. Ո՛վ սքանչելի և ծածկեալ
շնորհի խորհրդոյս, զոր գիտեն
միայն Քրիստոսի հաւատացեալք.
իսկ անհաւատք և մեղսասէրք ոչ
ժամանեն զսորա առնուլ զչափ։
Յայսմ խորհրդեան տուեալ լինի
հոգևորական շնորհ, վերստին նո-
րոգի յոգի առաքինութիւնն կորու-
սեալ, և զառնայ անդրէն զեղեց-
կութիւնն՝ մեղօք տգեղացեալ։ Այն-
չափ է երբեմն այս շնորհ, մինչև 'ի
յորդութենէ եռանդեան ոչ միտք
միայն՝ այլ և տկար մարմինն առա-
ւել ևս քաջալերութիւն զգենու։

ԺԲ. Այլ աւա՛ղ և եղո՛ւկ յոյժ մե-
ղումս դաղջութեան և հեղգութեան,
զի ոչ մեծափափաք տենչմամբ բե-
բիմք յընդունիլ զՔրիստոս, յոր
հաստատի ամենայն յոյս՝ որոց ակն-
ունին փրկութեան, և արժանաւո-
րութիւն նոցա։ Զի նա է սրբութիւն

մեր և փրկութիւն. նա է մխիթա-
րութիւն յաստի կեանս ճանապար-
հորդելոց, և յաւերժական զմայ-
լումն սրբոց։ Ա.պա յիրաւի է մոր-
մոքիլ յոյժ. զի բազումք այդչափ
անփոյթ են զփրկական խորհրդոյս,
որ զերկինս ուրախ առնէ, և զաշ-
խարհ ամենայն պահէ։ Ա.սա՛զ
կուրութեան և խստասրտութեան
մարդկան, զի զայսպիսի անպա-
տում պարզև ոչ որպէս արժան է՝
մեաբերէ, և 'ի հանապազորդ սո-
վորութենէ 'ի մոռացօնս իսկ ար-
կանէ։

ԺԳ. Զի եթէ այս սուրբ խոր-
հուրդ 'ի միում միայն տեղւոջ, և 'ի
միոջէ միայնոյ քահանայէ կատա-
րէր յաշխարհի, քանի՞ փափաք-
մամբ այնմ՛ տեղւոյ և այնմ՛ քահա-
նայի Ա.ստուծոյ անձկային մարդիկ,
զի զաստուածային խորհրդոյն տես-
ցեն զկատարումն։ Բայց արդ բա-
զում՛ եղեն քահանայք, և 'ի բա-
զում՛ տեղիս մատչի Քրիստոս, զի
սփիւռ տարածութեամբ սուրբ հա-
ղորդութեան ընդ տիեզերս՝ առա-

ել ևս երևեցի շնորհ և սէր Աստուծոյ առ մարդիկ։ Զոհանամ զքէն բարերար փրկիչ, հովիւ յաւիտենական, որ զմեզ զաղքատքս և զաքսորեալքս հաճեցար պատուական մարմնով և արեամբ քո կերակրել. և առ ընդունելութիւն խորհրդոյս՝ ևս և բանիւ բերանոյ քոյ հրաւիրեցեր՝ ասելով. Եկայք առ իս ամենայն աշխատեալք և բեռնաւորք, և ես հանգուցից զձեզ։

ԳԼՈՒԽ Բ

թէ մեծ բարութիւն և սէր Աստուծոյ 'ի տուրբ խորհրդեան ցուցանի մարդկան.

Զայն աշակերտի.

Ա. Ի բարութիւն քո, տէր, և 'ի մեծ ողորմութիւնդ ապաւինեալ՝ մատչիմ տկարս առ կեցուցիչդ, քաղցեալս և պապաքեալս առ աղբիւրդ կենաց, կարօտեալս առ թագաւորդ երկնից, ծառայս առ տէրդ,

արարածս առ արարիչդ, և լքեալս
առ մխիթարիչդ իմ զթած։ Այլ ուս-
տի է ինձ այս, զի եկեսցես առիս։
Ո՞վ եմ ես, զի զանձն քո ինձ ընդ-
ծայեսցես։ Զիա՞րդ իշխեսցէ մեղա-
ւորն երևել առաջի քո. և դու զիա՞րդ
յանձն առնուցուս զալ առ մեղա-
ւորն։ Դու ճանաչես զծառայ քո,
և զիտես զի չունի ինչ բարի, թէ
արասցես նմա զայդ շնորհ։ Այլ
խոստովանիմ զիմ անարգութիւն.
ճանաչեմ զքո բարութիւնդ. օրհ-
նեմ զզթութիւնդ, և շնորհս ունիմ
զքէն վասն մեծի սիրոյդ։ Զի վասն
քոյ զայս առնես, և ոչ վասն իմոյ
արժանաւորութեան. որպէս զի բա-
րութիւն քո ինձ առաւել ևս յայտ-
նեսցի, սէր քո և ևս տպաւորեսցի,
և խոնարհութիւն քո կատարեալ-
զոյն զովեսցի։ Արդ վասն զի հա-
ճոյ է քեզ այդ, և այսմ այսպէս
հրամայեցեր լինել, հաճոյ է և ինձ
քո զիջումն։ Եւ երանի՜ թէ անօրէ-
նութիւն իմ ոչ զդէմ կալցի։

Բ. Ո՞վ քաղցր և բարերար փրկիչ, քանի՜ պատիւ և զոհութիւն հա-

նապազորդ օրհնութեամբ քեզ վայելէ վասն ընդունելութեան սուրբ մարմնոյ քոյ, զորոյ գյարդ ոչ զք 'ի մարդկանէ կարող է պատմել։ Այլ զինչ խորհիցիմ յայսմ հաղորդութեան 'ի մատչել իմում առ տէրդ իմ, զոր ըստ արժանեաց պատուել չեմ բաւական, բայց եռանդեամբ ընդունել ըղձանամ։ Զինչ խորհիցիմ որ լաւ և օգուտ իցէ, բայց զանձն իմ զլիովին խոնարհեցուցանել առաջի քոյ, և զքո անբաւ բարութիւնդ բարձրացուցանել 'ի վերայ իմ։ Օրհնեմ զքեզ, Աստուած իմ, և բարձր առնեմ յաւիտեան։ Արհամարհեմ զանձն իմ, և ներքոյ արկանեմ քոյ, 'ի խորս անարգութեան իմոյ։

Գ. Ահա դու սուրբ ես սրբոց, և ես աղտեղութիւն մեղաց։ Ահա խոնարհիս առ իս. որ չեմ արժանի համբառնալ զաչս իմ առքեզ։ Ահա դաս առիս, և կամիս լինել ընդիս, և հրաւիրես 'ի կոչունս քո։ Տաս ինձ երկնաւոր կերակուր և հաց հրեշտակաց 'ի ճաշակումն, ոչ այլ

ինչ՝ բայց զքեզ ինքն զհայդ կենդանի. որ յերկնից իջեր և կեանս տաս աշխարհի։

Դ. Ահա, թէ ուստի դայ սէրն, և որպիսի՛ վեր երևի զիջումն։ Քանի՛ զոհութիւն և փառաբանութիւն քեզ վայելէ վասն ամենայնի այսորիկ։ Քանի՛ փրկաւէտ և պիտանի եղև քո հանճար՝ի սահմանել զսա. քանի՛ քաղցր և զուարթարար են կոչունքս՝ի պարգևել քո զքեզ՝ի կերակուր։ Ո՛րպէս սքանչելի են գործք քո տէր, որպէս հզօր քո զօրութիւն, և անպատում քո ճշմարտութիւն։ Զի ասացեր, և եղև ամենայն. և այս եղև, զի զու հրամայեցեր։

Ե. Սքանչելի իմն է և արժանահաւատ, բայց մարդկայնոց յաղթէ մտաց. զի զու տէր իմ, ճշմարիտ Աստուած և մարդ, ընդ զոյզն տեսակաւ հացի և զինւոյ ամբողջ կաս, և անծախապէս ճաշակիս։ Դու տէր ամենայնի, որ ոչինչ իմիք կարօտիս, կամեցար՝ի ձեռն սուրբ խորհրդոյս բնակել՝ի մեզ։ Անարատ

պահեա զսիրտ իմ և զմարմին, զի զուարթագին և մաքուր խղճիւ մը-
տաց կարողացայց ստէպ կատարել զքո խորհուրդդ, և ընդունել առ
իմ մշտնջենաւոր փրկութիւն. զոր 'ի պատիւ և յանմոռաց յիշատակ
քո օրինադրեցեր և սահմանեցեր։

Զ. Ուրախ լեր անձն իմ, և զո-
հացիր զԱստուծոյ վասն այսր ազ-
նուական պարգևի և մեծի սփոփա-
նաց՝ որ թողաւ քեզ յայսմ արտա-
սուաց վայրի։ Զի քանիցս անգամ
զայս խորհուրդ պաշտես, և զՔրիս-
տոսի մարմին ճաշակես, զփրկու-
թեան քո գործ գործես, և ամենայն
արժանեաց Քրիստոսի լինիս բա-
ժանորդ։ Զի սէրն Քրիստոսի ոչ
երբէք նուազի, և քաւութիւն նորա
ոչ սպառի երբէք։ Վասն այսորիկ
միշտ նորոգութեամբ մտաց յայս
պատրաստեսջիր զանձն, և զմեծ
զայս խորհուրդ փրկութեան մտա-
զրութեամբ կշռեսջիր։ Այնպէս մեծ
և նոր և զուարճալի քեզ թուեսցի՝
'ի մատուցանել քո կամ 'ի տեսա-
նել զպատարագ, որպէս եթէ յայնմ

աւուր Քրիստոս ի Ջեալ յարգանդ կուսին մարդանայր, և կամ 'ի խաչի բեռեալ՝ վասն փրկութեան քո չարչարէր և մեռանէր։

ԳԼՈՒԽ Գ

Յաղագս թէ օգտակար է ստէպ հաղորդիլ.

Զայն աշակերտի.

Ա. Ահա առքեզ զամ, տէր, զի բարի լիցի ինձ 'ի պարգևաց քոց, և ուրախ եղէց 'ի սուրբ կոչունս քո. զոր պատրաստեցեր քաղցրութեամբ քով աղքատի, Աստուած։ Ահա 'ի քեզ է ամենայն, որում ըղձանալ մարթիմ։ Դու կեանք իմ և փրկութիւն, յոյս և զօրութիւն, վայելչութիւն և փառք։ Ուրախ ա՜ր այսօր զանձն ծառայի քոյ. զի առ քեզ, տէր Յիսուս, համբարձի զանձն իմ։ Փափաքեմ արդ եռանդեամբ և յարգանօք զքեզ ընդունել. ցանկամ զքեզ 'ի տուն իմ տանել,

զի ընդ Զաքէի արժանացայց 'ի քէն օրհնիլ, և ընդ որդիս Աբրահամու համարիլ։ Անձն իմ փափաքէ մարմնոյ քում, և սիրտ իմ ցանկայ միանալ ընդ քեզ։

Բ. Ցուր զքեզ ինձ, և շատ է. զի բաց 'ի քէն՝ ոչինչ մխիթարութիւն արժէ ինչ։ Առանց քո լինել ոչ կարեմ, և առանց այցելութեան քոյ կեալ ոչ զօրեմ։ Վասն այսորիկ պիտոյ է ինձ ստէպ առ քեզ մատչել, և 'ի դեղ փրկութեան իմոյ ըզքեզ ընդունել. զուցէ նքթիցիմ 'ի ճանապարհի, վրէպ զտեալ յերկնային կերակրոյդ։ Զի այսպէս զու, մարդասէր փրկիչ, 'ի քարոզելդ ժողովրդեան և 'ի բժշկել զպէսպէս ախտս նոցա՝ ասացեր երբեմն. Ոչ կամիմ արձակել զնոսա նօթիս 'ի տունս իւրեանց, զուցէ նքթիցին զճանապարհայն։ Այլ արա զայդ և արդ ընդ իս, որ վասն հաւատացելոց մխիթարութեան զքեզ 'ի խորհրդեանս մեզ աւանդեցեր։ Զի զու ես քաղցր կերակուր հոգւոյ. և որ արժանապէս զքեզ ճաշակէ, բա-

ժանորդ և ժառանգ լինի փառացն յաւիտենականաց։ Ինձ, որ յոլովակի զթեամն և մեղանչեմ և վաղվաղ թմրիմ և նուաղիմ, հարկ է ստէպ աղօթիւք և խոստովանութեամբք և սուրբ մարմնոյ քոյ ընդունելութեամբ նորոգիլ, սրբիլ, և վառիլ. զի մի յերկար հրաժարմամբ՝ յետնեալ գտայց 'ի սուրբ առաջադրութենէ։

Գ. Զի դիւրամէտ է զդայութիւն մարդոյ 'ի չարն 'ի մանկութենէ իւրմէ. և թէ ոչ օգնէ նմա զեղս աստուածային, արագ զթէ յես չարագոյնս։ Ապա քեզէ 'ի չարէ սուրբ հաղորդութիւնն, և 'ի բարին զօրացուցանէ։ Իսկ արդ եթէ այժմ որ հաղորդիմս կամ պատարագեմ՝ բազում անգամ հեղգ եմ և դանդաղ, զի՞նչ լինէր՝ եթէ զեղ ոչ առնուի, և օգնականութեանս մեծի ոչ լինէի 'ի խնդիր։ Եւ թէպէտ օրըստօրէ ընդունել չեմ բաւական, և ոչ 'ի պատարագել քաջ պատրաստական, սակայն ջանացայց 'ի պատշաճ ժամանակի դաստուածայինս

ընդունել խորհուրդ, և մեծի շնորհիս բաժանորդ դանձն ընծայել։ Քանզի մեծ մխիթարութիւն է հաւատացեալ հոգւոյ, ցորչափ տարաբիր է 'ի քէն 'ի մահկանացու մարմնի, ստէպ յիշատակութեամբ Աստուծոյ իւրոյ՝ զսիրելին իւր եռանդեամբ ընդունել 'ի սիրտ։

Դ. Ո՛վ սքանչելի զիջման զթութեան քո 'ի մեզ տէր. զի որ արարիչդ ես և կենագործող ամենայն հոգւոց՝ յաղքատին ոգի եկաւորել յանձն առնուս, և բովանդակ աստուածութեամբ քո և մարդկութեամբ զհիւծութիւն նորա պարարես։ Ո՛վ երջանիկ մտաց և երանելի ոգւոյ, որ զքեզ զտէր Աստուած իւր արժանաւորի եռանդեամբ ընդունել, և 'ի քում ընդունելութեան հոգևորական խնդութեամբ լի լինել։ Որպիսի՛ մեծ տէր ընդունի, որպիսի՛ սիրելի հիւրընկալէ, որպիսի՛ զուարթարար ընկեր օթեցուցանէ, որպիսի՛ հաւատարիմ բարեկամ ժողովէ, որպիսի զեղեցիկ և աղնուական փեսայի զիրկս արկա-

նէ, որ սիրելին է քան զամենայն սիրելիս և քան զամենայն ցանկալիս։ Լուսցեն յերեսաց քաղցր սիրելւոյդ իմոյ երկինք և երկիր, և ամենայն զարդ նոցա. զի որինչ է 'ի նոսա գովելի և վայելուչ, քո հաճութեան և առատաձեռնութեան են ձիրք, և ոչ 'ի մեծ վայելչութիւն անուան քո ժամանեն, որոյ իմաստութեանդ ոչ գոյ բաւ։

ԳԼՈՒԽ Դ

Յաղագս թէ բազում բարիք պարգևին այնց, որք առանցեամբ հաղորդին։

Զայն աշակերտի.

Ա. Տէր Աստուած իմ, կանխեա առ ծառայ քո օրհնութեամբ քաղցրութեան քո. զի 'ի քո հրաշափառ խորհուրդ արժանապէս և ետանդեամբ արժանացայց մատչել։ Զարթո զսիրտ իմ 'ի քեզ, և 'ի թանձր թմրութենէ սթափեա զիս։ Այլ արա ինձ 'ի փրկութեան քում,

ճաշակել հոգւով զքաղցրութիւն.քո, որ յայսմ խորհրդեան որպէս յաղ-բեր լիուլի ծածկեալ կայ։ Լուսա-ւորեա և զաչս իմ, հայել յայսպիսի ահաւոր խորհուրդ. և զօրացո զիս հաւատալ յայն աներկբայ հաւա-տով։ Զի.քո գործ է, և ոչ մարդ-կային զօրութիւն. .քո սուրբ սահ-մանադրութիւն է, և ոչ մարդկան զիւտ։ Քանզի չիք ոք իւրև բաւա-կան այսմ ամենայնի հասու լինել-լոյ և իմանալոյ, որ անցանէ զան-ցանէ և զհրեշտակական նրբու-թեամբ։ Եւ զիմբդ ես անարժան մեզաւոր, հող և մոխիր, այսպիսի անհաս խորհրդոյ կարող իցեմ խոյզ և խնդիր առնել, և խելամուտ լինել։

Բ. Տէր, միամիտ սրտիւ, հաս-տատուն հաւատով, և քով հրամա-նաւ առ.քեզ մատչիմ, յուսով և պատկառանօք. և ճշմարտապէս հաւատամ, թէ կաս աստ 'ի խոր-հրդեանս աստուածութեամբ և մարդկութեամբ։ Արդ.քո կամք են, ինձ զքեզ ընդունել, և ընդ.քեզ սի-րով յօդիլ։ Վասն որոյ զքո զթու

թիւնդ աղաչեմ, և զայս առանձինն
չնորհ ինձ պարգևել հայցեմ, զի
զվասվին 'ի քեզ հալեալ սիրով զե-
ղուցում, և յօտար ինչ մխիթարու-
թիւն այլ մի մխիցիմ։ Զի այս զե-
բաստանձ խնկելի խորհուրդ փրկու-
թիւն է հոգւոյ և մարմնոյ, զեղ ա-
մենայն հոգևորական ախտից. որով
մոլութիւնք իմ բուժին, կիրք սան-
ձահարին, փորձութիւնք վանին
կամ նուազին, չնորհք առաւելա-
գոյն հեղանին, առաքինութիւնն
սկսեալ՝ առնու աճումն, հաւատք
հաստատին, յոյսն զօրանայ, և սէրն
բորբոքմամբ արծարծանի։

Գ. Ֆանգի բազում բարիս առա-
տաձեռնեցեր, և արդ իսկ ստէպ
առատաձեռնես 'ի խորհրդեանս՝
քոց սիրելեաց եռանդեամբ հաղոր-
դելոց, Աստուած իմ, ընդունող
հոգւոյ իմոյ, բուժիչ մարդկան ախ-
տից, և տուող ներքին մխիթարու-
թեան։ Զի բազումս հեղուս 'ի նո-
սա մխիթարութիւնս 'ի պէսպէս
փորձութիւնս, և 'ի ստորէ վհատու-
թեան կանգնես 'ի յոյս քո հոմանա-

տութեան, և նորոգ շնորհիւ զնոսա զօրացուցանես և լուսաւորես. մինչ զի որք յառաջ քան զհաղորդութիւնն նեղեալ էին և անեռանդն, ապա ճաշակմամբ երկնային կերակրոյս և ըմպելւոյս՝ 'ի լաւ անդր փոխարկեալ զտանեն զանձինս։ Զոր վասն այնորիկ յընտրեալս քո տնօրինես, զի ստուգութեամբ ծանիցեն և յայտնի զչափ առցեն, թէ քանի տկարութեամբ զդաժեալ են, և որչափ բարութիւն և շնորհ 'ի քէն ընդունին։ Իբր զի յանձանց ցուրտ խիստ և անեռանդն են, այլ քև ջերմ զուարթ և եռանդնոտ արժանաւորին լինել։ Զի ոմ է, որ առ աղբիւր քաղցրութեան խոնարհութեամբ մատուցեալ՝ ոչ սակաւ մի քաղցրութիւն անտի առնուցու. կամ ոմ առ հրով մեծաւ կայցէ, և ոչ զոյգն ջերմութիւն անտի ընդունիցի։ Եւ զու աղբիւր ես մշտալիր զեղեալ, և հուր մշտավառ անչէջ։

Դ. Վասն այսորիկ եթէ չէ ինձ արժան հանել 'ի լրութենէ անտի աղբերն և ցայգ ըմպել, սակայն

մատուցից զիմ բերան յերկնայինդ ծորան, զի զէթ չիթ մի առից անտի 'ի զովացումն ծարաւոյս, և մի խապառ պապակեցայց։ Եւ թէ չեմ ժամանող բոլորովին լինել երկնաւոր, և իբրև զսերովբէսն և զքերովբէսն հրեղէն, սակայն ջանացայց փոյթ ունել եռանդան, և զսիրտ իմ պատրաստել, զի զէթ խուն ինչ բորբոք յաստուածային հրակիզմանէ՝ խոնարհական ճաշակմամբ կենարար խորհրդոյս յանձն ընկալայց։ Իսկ զթերին, բարերար փրկիչ, դու ընդ իմ լցո քաղցրութեամբ և զթովք, որ զամենեսին առ քեզ հաճեցար կոչել ասելով. Եկայք առ իս ամենայն աշխատեալք և բեռնաւորք, և ես հանգուցից զձեզ։

Ե. Աշխատիմ ես քրտամբք երեսաց իմոց, և ցաւովք սրտի տանջիմ. մեղօք ծանրաբեռնեալ եմ, փորձութեամբք վտանկիմ, և բազում չարաչար կրիւք պաշարեալ նեղիմ. և չիք ոք որ օգնէ, և ոչ այն՝ որ ապրեցուցանէ և կեցուցանէ, բայց միայն դու, տէր Աստուած

փրկիչ իմ. որում յանձն առնեմ զիս և զամենայն ինչ զիմ, զի զիս պահեսցես. և առաջնորդեալ հասուցես 'ի կեանսն յաւիտենից։ Ընկալ զիս 'ի փառս և 'ի գովեստ անուան քո, որ զմարմին քո և զարիւն՝ կերակուր և ըմպելի ինձ պատրաստեցեր։ Ցուր տէր Աստուած փրկիչ իմ, զի յաճախութեամբ քումդ խորհրդոյ՝ առաւելցի ախորժակ եռանդեան իմոյ։

ԳԼՈՒԽ Ե

Յաղագս յարգի խորհրդոյս, և քահանայական կարգի.

Զայն սիրեցելոյն։

Ա. ԵԹԷ ունէիր զհրեշտակական մաքրութիւն, և զսրբոյն Յովհաննու մկրտչի սրբութիւն, չէիր արժանի զայս խորհուրդ ընդունել, և ոչ յայն մերձենալ։ Զի ոչ մարդկային արժանաւորութեան է քահանայագործել մարդոյ, և մերձե-

նալ՝ի խորհուրդ Քրիստոսի, և առ-
նուլ՝ի կերակուր զհաց հրեշտակաց։
Մեծ է խորհուրդս, և մեծ է յարգ
քահանայից, որոց տուեալ է որ ինչ
չէ տուեալ հրեշտակաց։ Քանզի
քահանայք միայն՝ օրինօք յեկեղե-
ցւոջ ձեռնադրեալք՝ իշխանութիւն
ունին պատարագելոյ, և զմարմին
Քրիստոսի քահանայագործելոյ։
Այր՝ Աստուծոյ պաշտօնեայ է քա-
հանայ, որ զԱստուծոյ բանն՝ի կիր
արկանէ՝ հրամանաւ և օրինադրու-
թեամբ նորա։ Բայց Աստուած է
անդ զլխաւոր արարօղ, և աներևոյթ
ներգործիչ. ընդ որոյ ձեռամբ է ա-
մենայն՝ զոր կամի, և որում՝ հնա-
զանդի ամենայն՝ զոր հրամայէ։

Բ. Ապա առաւել հաւատալ պարտ
է քեզ՝Աստուծոյ ամենակալի յայսմ
զերահրաշ խորհրդեան, քան քոյին
զգայութեան կամ արտաքին ինչ
նշանի։ Վասն այսորիկ ահիւ և
պատկառանօք լիցի քեզ մատչիլ
յայս զործ։ Հայեաց յանձն քո և
տես, ոյր պաշտօն քեզ աւանդեցաւ
ձեռնադրութեամբ եպիսկոպոսի։

Ահա եղեր քահանայ, և սրբեցար 'ի քահանայազործել. զգոյշ լեր արդ, զի հաւատարմութեամբ և եռանդեամբ յիւրում ժամանակի մատուցցես Աստուծոյ զպատարագ, և զանձն քո անարատ ընծայեցուցցես։ Ոչ թեթևացուցեր զքո բեռն, այլ պնդագոյն ևս կապեցար կապանօք խրատու, և մեծ ևս կատարելութեան սրբութեան պարտականն ընդ առեր։ Պարտ է քահանայի ամենայն առաքինութեամբք լինել զարդարեալ, և բարի վարուց օրինակ ընծայել այլոց։ Գնացք նորա լիցին մի ընդ ճանապարհս զուեհկաց և սոսկականաց, այլ ընդ հրեշտակաց յերկինս, և ընդ արանց կատարելոց յերկրի։

Գ. Քահանայն զզեցեալ զհանդերձ սրբութեան՝ Քրիստոսի է տեղակալ. զի վասն իւր և վասն ամենայն ժողովրդեան խոնարհական հայցմամբ զԱստուած աղաչեսցէ։ Ունի յառաջոյ և 'ի թիկանց զաէրունական խաչին նշան, առ 'ի յիշատակել հանապազ զՔրիստոսի չար-

չարանսն։ Կրէ զնչան խաչի յառաջոյ. զի զգուշութեամբ հայեսցի 'ի շաւիղս Քրիստոսի, և փութոյ պընտութեամբ ջանասցի երթալ զհետ։ Խաչանիշ է և 'ի թիկանց, զի ամենայն վշտաց՝ որ գան յայլոց՝ մտաղիւր վասն Աստուծոյ համբերեսցէ։ Առաջի իւր կրէ զխաչ, զի զիւր մեղս ապաշաւեսցէ. և զկնի իւր, զի և զայլոց մեղս ախտակցաբար ողբասցէ. 'ի միտ առցէ՝ թէ միջնորդ է 'ի մէջ Աստուծոյ և մեղաւորի, և մի հեղգասցի յաղօթից և 'ի նուիրագործութենէ, մինչև զշնորհս և զողորմութիւն ընդունել արժանասցի։ Քահանայ յորժամ պատարագէ, զԱստուած փառաւորէ, զհրեշտակս ուրախս առնէ, զկեղեցի շինէ, կենդանեաց օգնէ, ննջեցելոց հանգիստ շնորհէ, և զանձն իւր ամենայն բարեաց առնէ բաժանորդ։

ԳԼՈՒԽ Զ

Հարցումն 'ի վերայ կրթութեան յառաջ քան զնաղորդութիւնն.

Զայն աշակերտի.

Ա. Ի յիշել իմում տէր զքո բարձրութիւն և զիմ անարգութիւն, զարհուրիմ յոյժ և խռովի անձն իմ։ Զի թէ ոչ մատչիմ, 'ի կենաց փախչիմ. և թէ անարժան մատչիմ, ըզքեզ բարկացուցանեմ։ Այդ զինչ գործեցից, Աստուած իմ, օգնական իմ և մխիթար 'ի վիշտս։

Բ. Դու ուստ ինձ ճանապարհ ուղիղ, արա առաջի կրթութիւն ինչ համառօտ՝ պատշաճող սրբոյ հաղորդութեան։ Զի օգուտ է զիտել, որպէս եռանդեամբ և յարգանօք պարտ իցէ ինձ պատրաստել քեզ զսիրտ իմ առ կենսաբեր ընդունելութիւն խորհրդոյ քոյ, ևս և 'ի նուիրագործութիւն մեծի և աստուածային պատարագի։

ԳԼՈՒԽ Է

Յաղագս քննութեան խղճի մտաց, և ուղղութեան առաջադրութեան.

Զայն սիրելոյն.

Ա. Ի վերջ քան զամենայն, պարտ է քահանայի Աստուծոյ մատչել 'ի քահանայագործել և յընդունել զայս խորհուրդ՝ բազում խոնարհութեամբ սրտի և ողոքական յարգանօք. լի հաւատով, և բարեպաշտ դիտմամբ փառացն Աստուծոյ: Ըզգուշութեամբ քննեսցիր զխիղճ մըտաց քոց, և ըստ կարի ճշմարիտ զղջմամբ և խոնարհ խոստովանութեամբ մաքրեալ սրբեսցիր, մինչև չունել կամ չգտանել 'ի քեզ ծանր ինչ, որ ստգտանիցէ զքեզ և չհամարձակեցուցէ 'ի մատչել: Ստորջասցիր յամենայն մեղաց քոց առ հասարակ. և վասն հանապազորդ յանցուածոց առաւել լիցի քո զիղջ և հեծութիւն: Եւ եթէ ժամանակն

ներէ, խոստման լեր առաջի Աստուծոյ 'ի շտեմարանս սրտի զամենայն կրից քոց թշուառութիւնս։

Բ. Հեծեծեա և ողբա, զի դեռ այդպէս մարմնաւոր ես և աշխարհային. այդչափ անմեռ 'ի կիրս. այդչափ լի խլրտմամբ ցանկութեանց. այդչափ անզգոյշ 'ի զգայութիւնս արտաքինս. այդչափ սնոտի ցնորիւք ստէպ պաշարեալ. այդչափ յօժարամիտ առ արտաքինս. այդչափ հեղգասիրտ առ ներքինս. այդչափ թեթև 'ի ծաղր և 'ի ցոփութիւն. այդչափ խիստ 'ի լալիւն և 'ի զղջումն. այդչափ պատրաստական 'ի թուլութիւն, և 'ի մարմնոյ դիւրութիւն. այդչափ պղերգ 'ի ճգունս և յեռանդն. այդչափ ընդվայրաքընին 'ի լսել զնորալուրս, և 'ի զեղոյ աշարճակութիւնս. այդչափ մեղկ ձեռնարկելոյ 'ի խոնարհականս և յանարգս. այդչափ ցանկացող աւելաստացութեան. այդչափ ճիշդ 'ի տալ. այդչափ ուիշտ 'ի պահել. այդչափ անխորհուրդ 'ի խօսս. այդչափ անժոյժ 'ի լռել. այդչափ ան-

հեթեթ 'ի վարս. այդչափ գժպատեհ 'ի գործս. այդչափ զեղխ 'ի կերակուրս. այդչափ խուլ առ բանն Աստուծոյ. այդչափ արագ 'ի հանգիստ. այդչափ յամր յաշխատութիւնս. այդչափ արթուն առ աւասպելս. այդչափ քնէած առ սուրբ հսկմունս. այդչափ փութացող 'ի կատարածն. այդչափ ապուշ 'ի մտադրել. այդչափ հեղգ 'ի կատարել զժամակարգութիւնս. այդչափ դաղջ 'ի պատարագել. այդչափ ցամաք 'ի հաղորդիլ. այդչափ շոյտ 'ի ցնդել զմիտս. այդչափ դանդաղ 'ի հաւաքել. այդչափ դիւրաշարժ 'ի բարկութիւն. այդչափ վաղվաղակ 'ի զզուել զայլս. այդչափ յօժարամիտ 'ի դատել. այդչափ սոպռ 'ի յանդիմանել. այդչափ ուրախ 'ի յաջողութիւնս. այդչափ տկար 'ի վիշտս. այդչափ ստէպ բաղում բարիս առաջադրես, և սակաւս 'ի գործ դնես։

Գ. Զայս ամենայն, և զսոցին նըման քո պակասութիւնս, բաղում ցաւոքք և տկարութեան քո տաղտ-

կանոք խոստովանեալ և ողբացեալ, հաստատութեամբ առաջադրեա յա-
մենայնի ուղղել զվարս քո. և 'ի լաւ անդր յառաջադէմ լինել։ Ա-
պա լիուլի նուիրմամբ և անթերի կամաք մատո զանձն քո 'ի պատիւ
անուան իմոյ՝ 'ի սեղան սրտի քո հանապազորդ ողջակէզ, զմարմին
քո և զհոգի ինձ յանձն արարեալ հա-
ւատարմութեամբ. որպէս զի ըստ
արժանեաց արժանացիս մատչել
'ի մատուցանել Աստուծոյ զպատա-
րագ, և զիորհուրդ մարմնոյ իմոյ
ընդունել 'ի փրկութիւն։

Դ. Զի չիք նուէր ընտրելագոյն,
և մեծ ես հատուցումն 'ի քաւել ըզ-
մեղս, քան զնուիրել զանձն Ա-
ստուծոյ մաքրութեամբ և ամբողջու-
թեամբ ընդ նուիրագործութեան
մարմնոյն Քրիստոսի 'ի պատարա-
գի և 'ի հաղորդութեան։ Եթէ ա-
րասցէ մարդ՝ որ ինչ անկ է նմա,
և ստուգութեամբ ապաշաւեսցէ,
քանիցս անգամ վասն թողութեան
և շնորհաց առ իս մատչիցի, կեն-
դանի եմ՝ ես, ասէ տէր, որ ոչ կա-

միմ զմահ մեղաւորին, այլ զդառ-
նալ նորա և զկեալ. զի զմեղս նո-
րա ոչ ես յիշեցից, այլ ամենայն
թողցի նմա։

ԳԼՈՒԽ Ը

*Յաղագս նոհիրման Քրիստոսի 'ի խաչ-
ին, և յաղագս յանձնարարութեան
անձին.*

Զայն սիրեցեալն.

Ա. Որպէս ես զանձն իմ բաղկա-
տարած 'ի խաչին և մերկամարմին
վասն մեղաց քոց հօր Աստուծոյ
կամաւ մատուցի, մինչև չմնալոյ ի-
միք յիս՝ որ ոչ բովանդակ ընծայե-
ցաւ 'ի պատարագ աստուածային
հաշտութեան, նոյնպէս և քեզ
պարտ է զանձն քո ինձ մատուցա-
նել կամաւ 'ի նուէր սուրբ և անա-
բատ՝ զօրհանապազ 'ի պատարագի
համայն զօրութեամբ և ախորժա-
կօք քո 'ի սրտէ։ Զինչ աւելի 'ի քէն
պահանջեմ, բայց զի փոյթ կալցիս

զքեզ ինձ բովանդակ յանձն առ-
նել։ Զինչ և տացես ինձ բաց 'ի
քէն, չէ ինչ յաչս իմ. զի ոչ խըն-
դրեմ զտուրս քո, այլ զքեզ։

Բ. Որպէս չէր քեզ բաւական
ունել զամենայն բաց յինէն, նոյն-
պէս և ոչ ինձ հաճոյ է զինչ և տա-
ցես, եթէ ոչ զանձն ընծայեսցես։
Մատո զքեզ ինձ, և տուր զքեզ բո-
վանդակ վասն Աստուծոյ, և եղիցի
նուէրդ ընդունելի։ Ահա ես բովան-
դակ զիս մատուցի հօր վասն քոյ.
ետու և բովանդակ զմարմին իմ և
զարիւն 'ի կերակուր. զի բովանդակ
քո եղէց, և դու իմ։ Ապա եթէ 'ի
քեզ կացցես, և ոչ կամովին զքեզ
կամաց իմոց ընծայեսցես, ոչ լի է
նուէրդ, և ոչ անթերի լիցի 'ի մե-
ջում միջի միաւորութիւն։ Ապա
քան զամենայն գործս քո յառա-
ջեսցէ կամաւորական նուիրումն
անձին 'ի ձեռս Աստուծոյ, եթէ զա-
զատութիւն ստանալ կամիս և զշը-
նորհս։ Քանզի վասն այնորիկ սա-
կաւք լուսաւորին և ազատանան,
զի զանձինս բոլորովին ուրանալ

ոչ զիտեն։ Հաստատուն է իմ վըճիռ. Եթէ ոք ոչ հրաժարեսցէ յաւիենայնէ, ոչ կարէ իմ աշակերտ լինել։ Արդ եթէ ցանկաս դու իմ աշակերտ լինել, մատո զանձն քո ինձ հանդերձ ամենայն ախորժակօք քո։

ԳԼՈՒԽ Թ

Թէ զմեզ, և զամենայն ինչ զմեր, պարտ է մեզ մատուցանել Աստուծոյ, և վասն ամենեցուն առնել աղօթս.

Զայն աշակերտի.

Ա. Ցէր, ամենայն ինչ քոյ է, որ ինչ յերկինս և որ ինչ յերկրի։ Ցանկամ զանձն իմ քեզ կամաւոր պատարագ մատուցանել, և քոյ լինել խսպառ։ Ցէր, սրբութեամբ սրտի մատուցանեմ զիս քեզ այսօր 'ի մշտնջենաւոր ծառայ, 'ի պաշտօն և 'ի պատարագ հանապազորդ օրհնութեան։ Ընկալ զիս ընդ սուրբ

նուիրանացս պատուական մարմնոյ քոյ, զոր քեզ այսօր առաջի հրեշտակաց յաներևոյթս յանդիման կացելոց մատուցանեմ. զի լիցի վասն իմ, և վասն ամենայն ժողովրդեան քո 'ի փրկութիւն։

Բ. Ցէր, առաջի առնեմ քեզ զամենայն մեղս և զյանցանս իմ, զոր գործեցի առաջի քոյ, և սրբոց հրեշտակաց քոց, յօրէ յորմէ սկիզբն արարի մեղանչել մինչև ցայսօր, 'ի վերայ հաշտարար սեղանոյ քո. զի առհասարակ զամենայն այրեսցես և կիզուցուս հրով սիրոյ քոյ, և ջնջեսցես զամենայն բիծս մեղայ իմոց. և զխիղճ մտաց իմոց յամենայն յանցուածոց մաքրեսցես. և դարձուսցես յիս զշնորհս քո, զոր մեղօք կորուսի, 'ի ներել ինձ լիով զամենայն և յընդունել զիս մարդասիրասէս 'ի համբոյր հաշտութեան։

Գ. Զի՞նչ կարող իցեմ առնել վասն մեղաց իմոց, բայց խոնարհութեամբ խոստովանել և ողբալ, և զքո ներողութիւնդ անդադար աղաչել։ Պաղատիմ առ քեզ, լուր

ինձ զթութեամբ 'ի կալ իմում ա-
ռաջի քո, Աստուած իմ։ Ամենայն
մեղք իմ չար թուին ինձ յոյժ, և այլ
ոչ երբէք կամիմ գործել. այլ զըղ-
ջացեալ եմ 'ի նոցանէ, և զղջա-
ցայց ցորչափ իցեմ կենդանի. պատ-
բաստ եմ ապաշխարել, և ըստ կա-
րի փոխարինել։ Թող ինձ, տէր,
թող ինձ զմեղս իմ. վասն անուանդ
քում սրբոյ կեցո զհոգի իմ, զոր
պատուական արեամբ քո գնեցեր։
Ահա յանձն առնեմ զիս ողորմու-
թեան քում, և 'ի ձեռս քո աւան-
դեմ զիս։ Արա ընդ իս ըստ բարու-
թեան քում, և մի ըստ չարութեան
և անօրէնութեան իմում։

Դ. Մատուցանեմ քեզ և զամե-
նայն բարիս իմ, թէպէտ և յոյժ
սակաւ և անկատարս. զի ուղղես-
ցես զնոսա և սրբեսցես, և 'ի հա-
ճոյս քեզ ընկալցիս, և միշտ 'ի լաւ
անդր յառաջեցուսցես. և զիս ըզ-
հեղգս և զանպիտանս 'ի գովելի և
յերանաւէտ կատարած ժամանե-
ցուսցես։

Ե. Մատուցանեմ քեզ և զամե-

նայն բարեպաշտ իղձս առաքի-
նեաց, զկարիս ծնողաց, բարեկա-
մաց, եղբարց, քերց, և ամենայն
սիրելեաց իմոց. և այնց՝ որք վասն
սիրոյ քոյ՝ ինձ և այլոց բարի արա-
րին. և որք աղօթս և պատարագս
վասն իւրեանց, և իւրեանցայնոց
մատուցանել յինէն խնդրեցին. ե-
թէ զեռ 'ի մարմնի կենդանի իցեն,
և եթէ յաշխարհէ փոխեալ. զի ա-
մենեքին զօգնութիւն շնորհաց քոց
ընկալցին և զնպաստ միթարու-
թեան, զպահպանութիւն 'ի վտան-
գից և զազատութիւն 'ի պատժոց.
զի զերծեալք յամենայն չարեաց.
շնորհս քեզ մատուսցեն խնդու-
թեամբ։

Զ. Մատուցանեմ քեզ և զաղա-
չանս և զհաշտութեան նուէրս ա-
ռանձինն վասն այնոցիկ, որք իւիք
յանցեան յիս և տրտմեցուցին կամ
անարգեցին, կամ վնաս ինչ և նե-
զութիւն ինձ հասուցին. այլ և վասն
ամենեցուն, զորս ես ինքն երբեմն
տրտմեցուցի, խռովեցուցի, դառ-
նացուցի և զայթակղեցուցի. բանիւ

կամ գործով, գիտութեամբ կամ անգիտութեամբ. զի ամենեցուն մեզ առհասարակ թողցես զմեր մեղս և զառ միմեանս զայթակղութիւն։ Բարձ տէր 'ի սրտից մերոյ զամենայն կասկած, զցասումն, ըղբարկութիւն, և զհակառակութիւն. և զամենայն որ ինչ վնասակար է սիրոյ, և նուազէ զեղբայրսիրութիւն։ Ողորմեա, տէր, ողորմեա խնդրողացս զքո ողորմութիւն. տուր շնորհ կարօտելոցս, և արժանացո զմեզ վայելել 'ի շնորհս քո, և ժամանել 'ի կեանսն յաւիտենից, ամէն։

ԳԼՈՒԽ Ժ

Յաղագս թէ 'ի սուրբ հաղորդութենէն չէ պարտ 'ի բաց կալ դիւրաւ.

Զայն սիրելոյն։

Ա. Պարտ է քեզ ստէպ դիմել յաղբիւր շնորհաց և աստուածային ողորմութեան, յաղբիւր բարու-

թեան և ամենայն մաքրութեան. զի 'ի կրից քոց և յախտից բուժես-
ցիս, և ընդդէմ ամենայն փորձու-
թեանց և պատրանաց բանսար-
կուին զօրագոյն և հակողագոյն զըս-
ցիս։ Գիտելով թշնամւոյն՝ թէ մեծ
պտուղ և դեղ բժշկութեան կայ 'ի
սուրբ հաղորդութեան, ամենայն
իրօք և պատճառանօք ջանայ զհա-
ստատացեալս և զառաքինիս ըստ
կարի յետս ընկրկել և խափանել
անտի։

Բ. Քանզի են ոմանք, որք 'ի
պատրաստել զանձինս առ սուրբ
հաղորդութիւն, չար ևս զգան յան-
ձինս զատանայիներզործութիւնս։
Ինքնին այսն չար, որպէս զրի 'ի
գիրս Յոբայ, զայ խառնի ընդ որ-
դիսն Աստուծոյ. զի չարութեամբ
իւրով, որպէս սովորութիւն է նո-
ցա, խռովեցուսցէ զնոսա կամ կա-
ցի ինն երկեցուսցէ և 'ի տարակոյս
արկանիցէ. որպէս զի զախորժակ
նոցա նուազեսցէ, կամ զհաւատս
նոցա պատերազմաւ կարճեսցէ. զի
թերևս իսպառ 'ի հաղորդութենէ 'ի

բաց կացցեն, կամ գաղջութեամբ յայն մատչիցին։ Այլ ոչինչ է պիտոյ հոգալ վասն խորամանկութեանց նորա և ցնորիցն, որչափ և զազրոտի իցեն և գարշելի։ Այլ զամենայն ցնորս նորա պարտ է շրջել 'ի նորին գլուխ։ Արհամարհել պարտ է զեղկելին, և ծիծաղիլ զնովաւ. և ոչ վասն յարձակմանց նորա և խռովութեանցն յարուցելոց՝ 'ի բաց կալ 'ի սուրբ հաղորդութենէ։

Գ. Խափանէ յոլովակի և կարի ինն հոգ յորդեռանդն լինելոյ, և վարանք խոստովանելոյ։ Այլ դու արա ըստ խրատու իմաստնոց, և 'ի բաց թօթափեա զվարանս և զխըղճահարութիւն. զի խափանարար է շնորհին Աստուծոյ, և եղծիչ եռանդեան մտաց։ Վասն դոյզն ամբոխման կամ ծանրութեան մի թողուր զհաղորդութիւնն սուրբ. այլ փութա խոստովանիլ, և ամենեցուն առ քեզ յանցուցելոց մտադիր ներումն շնորհեա։ Ապա թէ քոյ յանցուցեալ իցէ առ ոք, խոնարհութեամբ թողութիւն խնդրեա, և Աստուած մտադիր ներեսցէ քեզ։

Դ. Զինչ օգուտ է ընդերկար յամեցուցանել զխոստովանութիւն, կամ յապաղել զսուրբ հաղորդութիւնն։ Մաքրեա զքեզ փութանակի, թուք վաղվաղակի արտաքս զթոյնն, փութա առնուլ զեղ բժշկութեան, և առողջացոյն լիցիս՝ քան եթէ յապաղէիր ընդերկար։ Եթէ այսօր վասն այս ինչ իրաց թողուս, գուցէ վաղիւ մեծ ևս ինչ իրք դիպեսցին։ Եւ այսպէս հնար է քեզ ընդերկար 'ի հաղորդութենէ 'ի բաց կալ, և առաւել ևս անարժան զտանել։ Որչափ վաղագոյն հնար է՝ յայժմու ծանրութենէ և հեղգութենէ սթափեաց. զի ոչ ինչ օգուտ է ընդերկար 'ի վարանս լինել և 'ի ծուխս տատանիլ, և վասն օրըստօրէ խափանածոյ՝ յաստուածայնոց 'ի բաց հրաժարել։ Նա՝ վընաս մեծ է ընդերկար 'ի հաղորդութենէ 'ի բաց կալ. քանզի և ծանր թմրութիւն զիտէ ածել 'ի վերայ։ Ո՛վ աղէտիցս. զի են զաղջք և ցուիք, որք մտաղիւր յապաղեն զխոստովանութիւնն. և զհաղորդութիւնն

սուրբ վասն այնր յամեցուցանել կամին, զի մի հարկ լիցի նոցա ըզ-գուշացոյն պահպանութեան ան-ճանց միտ դնել։

Ե. Բ՚ր. որպէս սակաւ է սո-ցա սէր, և որպէս տկար եռանդն, որք զսուրբ հաղորդութեամբ այդ-պէս հարևանցիկ առնեն։ Քանի՛ երջանիկ է նա և աստուածահաճոյ, որ այնպէս կեայ և այնպէս մաքուր պահէ զիւր խիղճ մտաց, մինչև յա-մենայն օր հաղորդելոյ պատրաստ էր և յօժարամիտ, եթէ օրէն էր նմա, և եթէ անբստոզիւտ հնար էր առնել։ Եթէ ոք երբեմն հրաժարէ խոնարհութեան աղագաւ, և՚ի սակս օրինաւոր ինչ խափանածոյ, զովե-լի է նորա յարդ. բայց եթէ թմրու-թիւն՚ի ներքս սպրդեսցի, այնպիս-ւոյն սթափել պարտ է, և առնել որ ինչ հնար է յիւրն կողմանէ. և տէր զօրավիգն լիցի ըղձման նորա վասն բարեյօժարութեանն, յոր ա-ռաւելապէս հայի։

Զ. Իսկ թէ օրինաք խափանի, պինդ կալցի յամենայնի զբարեյօ-

ժարութիւնն և զբարեպաշտ կամս հաղորդելոյ. և այնպէս ոչ վրիպեսցի 'ի պաղոյ սուրբ խորհրդոյն։ Զի մարթ է ամենայնի, որ Ջերմեռանդն իցէ, յամենայն օր և յամենայն ժամ 'ի հոգևորական հաղորդութիւն Քրիստոսի անարգել մատչել յօգուտ։ Բայց և պարտ է նմա յաւուրս ինչ և 'ի սահմանաւոր ժամանակս զմարմին փրկչի իւրոյ ըղձակաթ յարգանօք 'ի սուրբ խորհրդեանն ճաշակել, և առաւել գովութեան և փառացն Աստուծոյ փոյթ ունել քան զիւր մխիթարութիւն խնդրել։ Քանզի խորհրդաբար հաղորդի և յաներևոյթս կերակրի, քանիցս անգամ ոք զմարդեղութեանն Քրիստոսի զխորհուրդ և զչարչարանս նորա սրտի մտօք յիշատակէ, և 'ի սէր նորա բորբոքի։

Է. Որ ոչն պատրաստի, բայց 'ի դալ տօնի կամ 'ի տիպել սովորութեան, այնպիսին յոլովակի անպատրաստ գտանի։ Եթանէ այնմ՝ որ մատուցանէ տեառն զանձն յողջակէզ, քանիցս անգամ պատա-

բազէ կամ հաղորդի։ Ի պատարագելոյ մի լիցիս կարի երկար կամ արագ. այլ զհասարակաց՝ ընդ որս գտանիս՝ պահեա զբարիոք սովորութիւն։ Մի լիցի քեզ բերել յայլս ճանձրութիւն և տաղտկութիւն. այլ զհասարակաց կա՛լ զշաւիղ՝ ըստ նախնեացն օրինադրութեան. և առաւել այլոց օգտի խնամ կալջիր, քան քում եռանդան և ախորժակի։

ԳԼՈՒԽ ԺԱ

թէ մարմինն Քրիստոսի և. սուրբ գիրք յոյժ ևն հարկաւոր անձին հաւատացելոյ.

Զայն աշակերտի.

Ա. Ո՛վ քաղցր տէր, որպէս զի մեծ է քաղցրութիւն ջերմեռանդն ոգւոյ ընդ քեզ խրախացելոյ՝ի քում խրախճանի. ուր ոչ դնի նորա առաջի այլ կերպկուր՝ի ճաշակել, բայց միայն զու սիրելիդ իւր, քան զամենայն ցանկութիւն սրտի նորա

ցանկալի։ Քաղցր լինէր և ինձ 'ի սիրոյ սրտիս հեղուլ առաջի քոյ արտօսր, և ընդ մաղդաղենացւոյն զքո զուտս արտասուօք ոռոգանել։ Այլ ո՞ւր իցէ այս եռանդն, ո՞ւր սուրբ արտասուաց յորդառատ հեղումն։ Ապաքէն առաջի քոյ և սրբոց քոց հրեշտակաց՝ արժան էր սրտի իմոյ զլխովին վառիլ, և 'ի խնդութենէ յարտասուս լուծանիլ։ Զի 'ի սուրբ խորհրդեանս ճշմարտապէս ունիմ զքեզ առաջի, թէպէտ և օտար կերպարանօք ծածկեալ։

Բ. Քանզի 'ի քո յաստուածային պայծառութիւն ակնարկել աչք իմ ոչ հանդուրժէին. և ոչ աշխարհ ամենայն՝ փայլման փառաց մեծ վայելչութեան քո հանդարտէր։ Ապա այսուիկ յիմ տկարութիւն զի՞ջեր, զի զքեզ ընդ խորհրդեամբ ծածկեցեր։ Ճշմարտապէս առաջի ունիմ, և երկիրպագանեմ, որում երկրպագեն հրեշտակք 'ի յերկինս։ Այլ ես դեռ հաւատովք, և նոքա դէմ յանդիման և անպատրուակ։ Պարտ է ինձ շատանալ լուսով ճրշ-

մարիտ հաւատոյ, և յայնմ գնալ, մինչև ծագեսցի տիւն մշտնջենաւոր պայծառութեան, և խոնարհեսցին ստուերք նմանութեանց։ Այլ յորժամ եկեսցէ կատարեալն, լուսացեն պէտք խորհրդոց. զի երանելոցն յերկնային փառս ոչ պիտին դեղք խորհրդականք։ Զի ինդան անվախճան առաջի Աստուծոյ, զէմ յանդիման տեսեալ զփառս նորա. և 'ի պայծառութենէ 'ի պայծառութիւն խորոցն աստուածութեան փոխակերպեալք՝ ճաշակեն զճաշակ բանին Աստուծոյ մարմնացելոյ, որպէս եղեն 'ի սկզբանէ և մնայ յաւիտեան։

Գ. Ի յիշատակել իմում զսքանչելիսս, տաղտկութիւն է ինձ յոյժ ես և որպիսի և իցէ հոգեորական սփոփումն։ Զի ցորչափ զտէր իմ յայտնապէս յիւր փառսն ոչ տեսանեմ, ոչինչ համարիմ զամենայն զոր յաշխարհի տեսանեմ և լսեմ։ Վկայ ես ինձ դու ինքն տէր, զի ոչինչ կարող է զիս մխիթարել, և ոչ ստեղծուած ինչ հանգուցանել

բաց 'ի քէն տէր, յորում ցանկամ վայելել յաւիտեան։ Այլ չիք այսմ հնար ցորչափ եմ 'ի կենցաղումս. վասն այսորիկ պարտ է ինձ ձեռնարկել 'ի մեծ համբերութիւն, և զանձն իմ ամենայն ցանկութեամբ քեզ հնազանդել։ Քանզի և սուրբք քո տէր, որք արդ ընդ քեզ ցնծան յերկնից արքայութեան, մինչդեռ կենդանի էին՝ հաւատով և համբերութեամբ մեծաւ զալստեան փառաց քոց սպասէին։ Զոր ինչ նոքա հաւատացին, հաւատամ և ես. յոր ինչ նոքա յուսացան, յուսամ և ես. յոր նոքա հասին, շնորհօք քո ակնունիմ հասանիլ և ես։ Ա՛ռ այժմ զնացից հաւատովք, քաջալերեալ օրինակօք սրբոցն։ Կալայց և զսուրբ զիրս ինձ 'ի ափոփանս և 'ի հայելի վարուց, և 'ի վերայ ամենայնի ըզսուրբ մարմին քո 'ի դեղ բժշկութեան և յամուր ապաւինի։

Դ. Զի երկու ինչ ինձ յոյժ կարևոր տեսանեմ յաստի կեանս, առանց որոց անտանելի լինէին ինձ այս թշուառ կեանք։ Ի բանտի մար-

մնոյս արգելական՝ երկուց խոստո-
վանիմ ունել պիտոյս, կերակրոյ և
լուսոյ։ Այրդ ետուր ինձ տկարիս
զսուրբ մարմին քո 'ի կաղդուրումն
մտաց և մարմնոյ. և եղեր ճրագ ո-
տից իմոց զբան քո։ Առանց երկո-
ցուն սոցա անհնար է ինձ բարւոք
կեալ. զի բանն Աստուծոյ լոյս է
հոգւոյ իմոյ, և խորհուրդ քո՝ հաց
կենաց։ Մարթ է զսոսա կոչել և եր-
կուս սեղանս աստի և անտի ե-
դեալս 'ի զանձատան սուրբ եկե-
ղեցւոյ։ Մին է սեղան սուրբ բե-
մին, որ ունի զհացն սրբութեան,
զմարմին Քրիստոսի պատուական։
Երկրորդն է սեղան աստուածային
օրինաց, յորում է վարդապետու-
թիւն սուրբ՝ ուսուցիչ ուղիղ հաւա-
տոյ, որ անստերիւր առաջնորդէ 'ի
ներքին կողմն վարագուրին, ուր են
սրբութիւնք սրբոց։ Գոհանամ ըզ-
քէն տէր Յիսուս, լոյս անվախ-
ճան լուսոյ, վասն սրբոյ սեղանոյ
վարդապետութեան՝ զոր 'ի ձեռն
ծառայից քոց մարգարէից և առա-
քելոց և վարդապետաց մեզ մա-
տակարարեցեր։

Ե. Գոհանամ զքէն արարիչ և փրկիչ մարդկան, որ 'ի ցուցանել ամենայն աշխարհի զսէր քո՝ ընթ-րիս մեծ պատրաստեցեր. յորում՝ ոչ զզաւն օրինակին, այլ զամենա-սուրբ քո մարմին և արիւն առաջի եղեր 'ի կերակուր, զուարճացու-ցեալ զամենայն հաւատացեալս 'ի սուրբ կոչունսդ, և արբուցեալ նո-ցա բաժակ փրկութեան, յորում՝ են ամենայն փափկութիւնք դրախ-տին, և ուր ընդ մեզ սեղանաւորին սուրբ հրեշտակք, բայց առաւելա-գոյն քաղցրութեամբ։

Զ. Ո՛վ որպէս մեծ և արդոյ է պաշտօն քահանայից. որոց շնոր-հեցաւ զտէրն փառաց բանիւք սըր-բութեան քահանայագործել, շըր-թամբք օրհնաբանել, ձեռօք շօշա-փել, բերանով ճաշակել, և զնոյն այլոց մատակարարել։ Քանի՞ ջինջ-լինել պարտին նոցա ձեռք, քանի՞ մաքուր բերանն, քանի՞ սուրբ մար-մինն, քանի՞ անարատ սիրտն, յոր ստէպ մտանէ մաքրութեանն արա-րիչ։ Ի բերանոյ քահանային մի

լուիցի ինչ բան, բայց որ սուրբ ի-
ցէ և վայելչական և պիտանի. զի
բաղում անգամ զՔրիստոսին ճա-
շակէ խորհուրդ։

Է. Աչք նորա ամբիծք և պար-
կեշտք, զի 'ի մարմին Քրիստոսի
հային։ Ձեռք նորա մաքուրք ամ-
բարձեալք յերկինս, զի զարարիչն
երկնի և երկրի շօշափեն։ Ա՛ռ քա-
հանայս առանձինն ասի յօրէնս.
Եղերուք սուրբք, զի սուրբ եմ ես
տէր Աստուած ձեր։

Ը. Օգնեա մեզ շնորհօք քո, ա-
մենակալ տէր. զի որք զպաշտօն
քահանայական յանձն առաք, ար-
ժանապէս և եռանդեամբ քեզ ծա-
ռայեսցուք, ամենայն մաքրութեամբ
և բարիոք խղճիւ։ Եւ թէ ոչ ժամա-
նեմք գնալ ամբծութեամբ վարուց՝
որպէս արժանն է, զէթ շնորհեա
մեզ արժանապէս ողբալ զչարիսն՝
զոր գործեցաք։ Զի հոգւով խոնար-
հութեան և բարեյօժար առաջադ-
րութեամբ յայսմհետէ ջերմադոյնս
քեզ ծառայեսցուք։

ԳԼՈՒԽ ԺԲ

*Թէ որ հաղորդելոցն է, բազում զգուշ-
չութեամբ պատրաստել պարտի
զանձն առ ընդունելութիւն Քրիս-
տոսի.*

Զայն սիրեցելոյն.

Ա. Սիրող եմ ես մաքրութեան, և տուող ամենայն սրբութեան։ Սիրա սուրբ խնդրեմ, և անդ է իմ տեղի հանգստեան։ Պատրաստեա ինձ վերնատուն մեծ զարդարեալ, և առ քեզ արարից զգաստիկ աշա-կերտօքս հանդերձ։ Եթէ կամիս՝ զի առ քեզ եկիցս և օթեվանս առ քեզ արարիցս, 'ի բաց սրբեա զհին խը-մորն, և մաքրեա զսրտի քո բնա-կարան։ Ի բաց արա զամենայն զկենցաղականս, և զամենայն ախ-տից աղմուկ. Նիստ որպէս ճնճղուկ միայն 'ի տանիս, և խոկա զյան-ցուածս քո 'ի դառնութեան անձին քոյ։ Քանզի ամենայն որ սիրէ, սիրոզի իւրում սիրեցելում աղնիւ

և զեղեցիկ յարդարէ տեղի. զի այսուիկ ճանաչի սէր ընդունողին զսիրելին։

Բ. Բայց զայն գիտասջիր, թէ անհնար է քեզ յանկ հանել զայս պատրաստութիւն զօրութեամբ ճաշանց քոց, թէպէտ և ամ մի ողջոյն զանձն պատրաստեսցես, և յայլ ինչ ոչ զբաղեսցիս։ Այլ միայն յիմմէ զթութենէ և 'ի շնորհաց թողացուցանի քեզ մատչել յիմ սեղան. զորօրինակ եթէ մուրօղ ոք կոչիւր 'ի ճաշ մեծատան, և նա ոչինչ ունէր 'ի հատուցումն երախտեաց նորա, բայց զխոնարհիլն և զշնորհակալել։ Այրա ըստ կարի, և զիր ջան, մի 'ի սովորութենէ, մի առ հարկի, այլ ահիւ և պատկառանօք և ըղձմամբ ընդունել զմարմին սիրեցելոյ տեառն Աստուծոյ քոյ, որ յանձն առնու զալ առ քեզ։ Ես եմ որ կոչեցի և հրամայեցի այսմ այսպէս լինել, և ես լցուցից զքո թերին. եկ, և ընկալ զիս։

Գ. Եթէ տամ շնորհ եռանդեան՝ զոհացիր զԱստուծոյ քումմէ. ոչ

զի արժանի էիր, այլ զի զթացայ՝ի քեզ։ Թէ չունիս եռանդն, այլ ցամաքեալ կաս, կանխեա յաղօթս, հառաչեա, բաղխեա և մի դադարեր, մինչև արժանասցիս փչուր մի կամ չիթ մի կենարար շնորհաց ընդունել։ Դու ինձ կարօտ ես, և ոչ ես քեզ. ոչ դու դաս սրբել զիս, այլ ես գամ սրբել և բժշկել զքեզ։ Դու դաս, զի յինէն սրբեսցիս, և ընդ իս յօդեսցիս. զի նոր շնորհս ընկալցիս, և նորոգ յուզղութիւն վարուց բորբոքեսցիս։ Մի զանց առներ զշնորհիւս, այլ պատրաստեա ամենայն փութով զսիրտ քո, և մոյծ առ քեզ զսիրելիդ քո։

Դ. Բայց ոչ միայն պիտոյ է քեզ պատրաստել զանձն յեռանդն յառաջ քան զհաղորդութիւն, այլ խնամովք կալ մնալ յայնմ և յետ ընդունելութեան սուրբ խորհրդոյն։ Եւ ոչ փոքր պահպանութիւն պահանջի զկնի, քան զԼերմեռանդն պատրաստութիւնն՝ որ յառաջն։ Քանզի բարիոք պահպանութիւնն զհետ եկեալ՝ քաջ պատրաստու-

թիւն է մեծ ևս չնորհաց հասանելոյ։ Իբր զի յայնմանէ լինի զբ յոյժ անպատրաստ, յորժամ անդէն վազվազակի կարի իմն զբաղի յարտաքին սփոփանս։ Զգոյշ լեր 'ի չատխօսութենէ, կամ առանձինն, և ուրախ լեր յԱստուած քո։ Զի զայն ունիս՝ զոր աշխարհ ամենայն 'ի քէն բառնալ ոչ կարէ։ Ես եմ, որում պարտ է քեզ զլխովին անձնատուր լինիլ որպէս զի ոչ ևս 'ի քեզ, այլ յիս կենդանի լինել քեզ՝ առանց ինչ հոգոց։

ԳԼՈՒԽ ԺԳ

Թէ պարտ է ջերմեռեռանկն ոգւոյ յամենայն սրտե ախորժել զմիանալն ընդ Քրիստոսի 'ի սուրբ խորհրդեսն.

Զայն աշակերտի.

Ա. Ո՞ տայէ ինձ տէր, զտանել զքեզ միայն. բառնալ քեզ բովանդակ զսիրտ իմ. և վայելել 'ի քեզ, որպէս փափաքէ անձն իմ. մինչ

զի յայնմհետէ ոչ զք ասէ որ զիս
շարժեսցէ, կամ բնաւ իսկ յիս հա-
յեսցի. այլ զու միայն ընդիս խո-
սեսցիս, և ես ընդ քեզ. զոր օրի-
նակ խօսիցի սիրելին ընդ սիրելւոյ,
և կեցցէ բարեկամն ընդ բարեկամի։
Զայս աղաչեմ, և այսմ ըղձանամ,
զի ընդ քեզ բոլորովին միացայց, և
զսիրտ իմ յամենայն արարածոց 'ի
բաց զարձուցից. և սուրբ հաղոր-
դութեամբ և սուէպ պատարագմամբ
ուսայց ես քան զես քաղցրանալ
յերկնային խոկմունս։

Ե՞րբ, տէր, բոլորովին ընդ քեզ
միացայց. և 'ի քեզ ընկալայց, և բնա-
վին զիս մոռացայց։ Շնորհեա, տէր,
քեզ յիս լինել և ինձ 'ի քեզ, և այն-
պէս մնալ մեզ 'ի միասին։

Բ. Զու ես սիրելի իմ, ընտրեալ
'ի բիւրուց, յոր հաճեցաւ անձն իմ
բնակել զամենայն աւուրս կենաց
իմոց։ Զու ես իմ խաղաղարար,
յորում է ամենակատար խաղա-
ղութիւն և հանդիստ ճշմարիտ. և
արտաքոյ նորա վաստակք և ցաւք,
և անհնարին թշուառութիւն։ Զու

ես Աստուած ծածկեալ, և խոր-
հուրդ քո չէ ընդ ամպարիշտս. այլ
ընդ խոնարհս և ընդ պարզամիտս
են խօսք քո։ Ո՞վ ո՞րպէս քաղցր է
հոգի քո, տէր, որ 'ի ցուցանել ըզ-
քաղցրութիւն քո առ որդիս, անու-
շակ հացիւ՝ որ իջեալ է յերկնից՝
յանձն առնուս զնոսա կերակրել։
Զի՞ այլ ազգ այնպէս մեծ, որ ու-
նիցի Աստուածս իւր հպատուս, որ-
պէս դու Աստուած մեր մերձ ես ա-
մենայն հաւատացելոց քոց. որոց
'ի հանապազորդ սփոփանս, և առ
ուղղելոյ զսիրտ նոցա յերկինս,
զքեզ Ջամբեաս 'ի կերակուր և 'ի
վայելս։

Գ. Զի՞ ո՞ր ազգ է այնպէս ազ-
նուական, որպէս ազգ քրիստո-
նէից. կամ ո՞ր ստեղծուած 'ի ներ-
քոյ երկնից այնպէս սիրելի, որպէս
եռանդնոտ ոգի. առ որ մտանէ Ա-
ստուած կերակրել զնա իւրով պա-
տուական մարմնով։ Ո՞վ անճառելի
շնորհիս, ո՞վ աքանչելի զիջմանս,
ո՞վ անչափ սիրոյս՝ որ ցուցաւ առ
մարդիկ։ Այլ զի՞նչ տաց տրիտուր

տեսան ընդ այսր չնորհի և ընդ սի-
րոյս մեծի։ Զունիմ ինչ ընծայել
Աստուծոյ իմոյ առաւել հաճոյա-
կան, բայց զսրտի իմոյ բոլորապը-
տուղ նուէր և զսերս միակցութիւն։
Յայնժամ ցնծասցեն ամենայն ոս-
կերք իմ, յորժամ կատարելապէս
ընդ Աստուծոյ միաւորեսցի անձն
իմ։ Յայնժամ ասասցէ ցիս. Եթէ
կամիս զու լինել ընդ իս, և ես կա-
միմ լինել ընդ քեզ։ Եւ ես տաց
պատասխանի. Հաճեաց տէր, լի-
նել ընդ իս, և ես մտադիր եղէց
ընդ քեզ. այս է ամենայն ցանկու-
թիւն իմ, յօդիլ սրտի իմոյ 'ի քեզ։

ԳԼՈՒԽ ԺԴ

*Յաղագս վառեալ լրջի եռանդեղոտաց
սէր մարմին Քրիստոսի.*

Զայն աշակերտի.

Ա. Որպէս զի մեծ է օրհնութիւն
քաղցրութեան քոյ տէր, զոր պա-
հեցեր երկիւղածաց քոց։ Ի յիշել

խմում, տէր, զմատչել եռանդնոտաց 'ի սուրբ քո խորհուրդ մեծաւ եռանդեամբ և ըղձիւք, բազում անգամ ամաչեմ և յամօթ լինիմ. զի 'ի մատուցարան քո և 'ի սուրբ հաղորդութեան սեղան գաղջ և ցուրտ մատչիմ, ցամաք և անյորդոր գտանիմ: Ոչ բոլորովին վառիմ առաջի Աստուծոյդ իմոյ, և ոչ կաթողնիմ. որպէս էին բազումք յեռանդնոտաց, որք կարի իմն տարփմամբ հաղորդութեան՝ և զգալի իսկ սիրով սրտի ոչ ժոյժ ունէին արտասուաց. այլ սրտիւ և բերանով առ քեզ Աստուած, աղբիւրդ կենդանի, անձկանօք յոգւոց հանէին. ոչ կարացեալ զբաղց իւրեանց այլազգ զիջուցանել և յազեցուցանել, բայց զմարմին քո ճաշակելով ամենայն խնդութեամբ և հոգևորական ըղձմամբ:

Բ. Ո՛վ ճշմարիտ վառեալ հաւատոյ սոցա, որ ցոյց մեծ է լինելոյ քոյ 'ի խորհրդեան անդ: Քանզի սոքա ճշմարտապէս ճանաչեն զտէր իւրեանց 'ի բեկանել հացին, որոց

սիրտ այնպէս ուժգին ճմլի 'ի նոսա վասն գնալոյն Յիսուսի ընդ նոսա։ Հեռի է յինէն յոլովակի այդպիսի ախորժակ և եռանդն, այդպիսի սաստիկ սէր և բորբոքումն։ Քա-վիչ իմ լեր, բարերար Յիսուս, քաղցր և գթած. և շնորհեա ինձ աղքատ մուրոզի քում՝ զէթ խուն ինչ զըզճակաթ սիրոյ քոյ 'ի սուրբ հաղորդութեան առնուլ երբեմն ըզ-ճաշակ։ Զի հաւատք իմ և ես զո-րասցին, յոյս իմ 'ի բարութիւն քո առաւելցի, և սէր իմ կատարելա-պէս վառեալ, և զերկնային մանա-նայիս առեալ զճաշակ, մի ես նը-ւազեսցի։

Դ. Այդ կարող է ողորմութիւն քո զայս ցանկալի շնորհ պարգևել և ինձ. և հոգւով բորբոքման, յոր-ժամ եկեսցէ օրն՝ յորում հաճոյ լի-ցի քեզ, այց առնել և ինձ գթու-թեամբ։ Զի թէպէտ և ոչ վառիմ ես այսպիսի մեծափափաք տենչ-մամբ քոց նշանաւոր եռանդնոտաց, սակայն շնորհիս քո այդմ մեծա-բորբոք տենչման փափաքեմ, աղա-

չելով և անձկալով ամենայն այդ-
պիսի յորդեռանդն սիրողաց քոց
բաժանորդ դիս առնել, և 'ի սուրբ
վիճակ նոցա համադասել։

ԳԼՈՒԽ ԺԵ

Թէ զշնորհ եռանդեան խոնարհու-
թեամբ և անձին ոչնչացութեամբ ցի-
նի ստանալ.

Զայն սիրելոյն.

Ա. Պարտ է քեզ զշնորհ եռան-
դեան ստէպ խնդրել, փափաքմամբ
հայցել, երկայնմտութեամբ և յու-
սով սպասել, գոհութեամբ ընդու-
նել, խոնարհութեամբ պահել, ժրա-
ջան 'ի գործ արկանել, և զսահման
և զպայման վերնական այցելու-
թեան յԱստուած յանձն առնել,
մինչև եկեսցէ։ Խոնարհիլ առաւել
պարտ է քեզ, յորժամ նուազ կամ
ոչինչ եռանդն զդաս յանձին. այլ
ոչ կարի ինն լքանիլ, և ոչ տարա-
պայման տրտմել։ Տայ յոլովակի

Աստուած 'ի վայրկեան ժամանակի, զոր չետ ընդ ժամանակս բազումս։ Ցայ երբեմն 'ի վախճանի, զոր 'ի սկզբան աղօթից յապաղեաց տալ։

Բ. Եթէ հանապազ արագ տրտնջալ լինէր շնորհ, և զոյգ ընդ խընդրոյն 'ի վերայ հասանէր, տկարութիւն մարդկան ոչ ճանաչէր զյարգ նորա։ Վասն այսորիկ քաջ յուսով, և խոնարհ երկայնմտութեամբ պարտ է սպասել շնորհի եռանդեան։ Այլ դու՝ քեզ և մեղայ քոց լեր մեղադիր, յորժամ ոչ տուեալ լինի կամ լուելեայն ընաւ խակ բառնի։ Փոքր իմն է երբեմն, որ զշնորհն խափանէ և ծածկէ. սակայն թէ արժան իցէ փոքր կոչել զայն, և ոչ մանաւանդ մեծ, որ մեծի բարոյ է խափանարար։ Եւ թէ զայս փոքր կամ զմեծ 'ի բաց առնես, և 'ի սպառ վանես, լինելով լիցի զոր ինչ խնդրեցեր։

Գ. Զի վազվազակի երբև յամենայն սրտէ 'ի ձեռս Աստուծոյ զքեզ աւանդեսցես, և ոչ այսմ կամ այնմ

ըստ հաճոյից կամաց քոց 'ի խնդիր լիցիս, այլ բովանդակ 'ի նա յանձն եղիցիս, անդէն ընդ նմա յօդեալ՝ հանդարտեալ գտցիս. վասն զի ոչ ինչ այնուհետև քաղցրասցի քեզ և ոչ ինչ հաճոյասցի՝ իբրև զհաճոյս կամացն Աստուծոյ։ Ապա որ զքեզ միւր կամս միամիտ սրտիւ 'ի վեր առ Աստուած ամբառնայ, և զինքն յամենայն անկարգ սիրոյ կամ 'ի չկամութենէ արարածական իրաց դատարկէ, եղիցի դիպող ընդունելութեան շնորհի, և արժանի պարգևի եռանդեան։ Քանզի անդ տայ տէր զիւր օրհնութիւն, ուր անօթս գտանէ դատարկս։ Եւ որչափ կատարելագոյն 'ի ստորայնոց զքեզ հրաժարէ, և արհամարհութեամբ անձին մեռելութիւն զգենու, այնչափ շնորհն վաղագոյն գայ, առատագոյն մտանէ, և զաղատ սիրտ նորա բարձրագոյն 'ի վեր ամբառնայ։

Դ. Յայնժամ տեսցէ, և խնդասցէ, զարմասցի և ընդարձակեսցի սիրտ նորա 'ի նմա. զի ձեռն տեառն է ընդ նմա, և ինքն զլխովին եղ

զանձն 'ի ձեռին նորա մինչև յաւիտեան։ Այս այսպէս օրհնեսցի այր, որ խնդրէ զտէր յամենայն սրտէ իւրմէ, և որ ոչ առնու զնաներութիւն յանձն իւր։ Սա յընդունելութեան սուրբ հաղորդութեան՝ մեծի արժանաւորի աստուածային միաւորութեան շնորհի. զի ոչ հայի յիւր եռանդն և 'ի մխիթարութիւն, այլ ի վեր քան զամենայն եռանդն և մխիթարութիւն 'ի փառս Աստուծոյ և 'ի պատիւ նորա։

ԳԼՈՒԽ ԺԶ

Թէ պարտ է մեզ՝ զկարիս մեր Քրիստոսի յայտնել, և զշնորհն նորա հայցել.

Զայն աշակերտի.

Ա. Ո՛վ քաղցր և մարդասէր տէր, զոր արդ եռանդեամբ ընդունել ցանկամ, զու զիտես զտկարութիւն իմ և զվիշտս զոր կրեմ. յորչափ չարիս և 'ի մոլութիւնս անկեալ զը-

նիմ. որպէս յոլովակի ծանրիմ, փորձիմ, խոսվիմ, և ազատեղանամ։ Ի հնարս բժշկութեան առ քեզ մատչիմ. վասն մխիթարութեան և օգնականութեան առ քեզ պա-զատիմ։ Ա. ամենազէտդ բարբա-ռիմ, որում յայտնի են ամենայն ներքինք իմ, և որ միայն կարողդ ես լիով զիս մխիթարել, և իմ լի-նել ձեռնկալու։ Դու զիտես որոց բարեաց առաւելապէս կարօտիմ, և որպէս թափուր եմ յառաքինու-թեանց։

Բ. Ահա կամ առաջի քո աղքատ և մերկ, զշնորհ քո հայցելով և ո-զորմութիւն խնդրելով։ Կերակրեա զբաղցեալ մուրացիկ քո, ջեռո զցրտութիւն իմ հրով սիրոյ քոյ, լուսաւորեա զկուրութիւն իմ լու-սով եկաւորութեան քոյ։ Դարձո զամենայն երկրաւորս ինձ 'ի դառ-նութիւն, զամենայն ծանունս և ներհակականս 'ի համբերութիւն, զամենայն ստորինս և արարածա-կանս յարհամարհութիւն և 'ի մո-ռացումն։ Ուղղեա զսիրտ իմ առ

քեզ յերկինս, և մի թողուր ինձ տատանել 'ի վերայ երկրի։ Դու միայն քաղցրասցիս ինձ յայսմ հետէ մինչև յաւիտեան. զի դու միայն ես կերակուր և ըմպելի իմ, սէր և խնդութիւն իմ, քաղցրութիւն իմ և ամենայն բարութիւն։

Գ. Երանի՜ թէ յեկաւորութեան քում զկիսովին զիս վառէիր, կիզուիր, և 'ի քեզ փոխարկէիր. զի մի լինէի ընդ քեզ հոգով, շնորհօք սերա միաւորութեան և հալմամբ բորբոքեալ սիրոյ։ Մի թողուր ինձ նօթի և պասքեալ 'ի քէն հեռանալ. այլ արա ընդ իս մարդասիրապէս, զորօրինակ բաղում անգամ արարեր ընդ սուրբս քո սքանչելապէս։ Զինչ զարմանք են՝ թէ բնաւին քև հրանամ՝ և յիս նուազիմ, հուր դոլով քոյ մշտավառ և աննիւթ, սէր սրբարար սրտի և լուսաւորիչ մտաց։

ԳԼՈՒԽ ԺԷ

Յաղագս փառեալ սիրոյ, և ըղձակար փափաքելոյ ընդունելոյ զՔրիստոս.

Զայն աշակերտի.

Ա. Մեծաւ եռանդեամբ և փառեալ սիրով, ախորժմամբ և տարփմամբ սրտի փափաքիմ ընդունել զքեզ, տէր. զորօրինակ բազում սուրբք և առաքինիք 'ի հաղորդել իւրեանց քեզ փափաքեցին, որք մեծապէս սրբութեամբ վարուց քեզ հաճոյացան, և 'ի ջերմ եռանդն փառեցան: Աստուած իմ, սէր յաւիտենական, լրումն բարութեան, երջանկութիւն անզրաւական. ցանկամ ընդունել զքեզ մեծ ևս տարփմամբ և արժանաւոր յարգանօք, քան զոր սուրբք երբէք կալան յանձինս:

Բ. Եւ թէպէտ անարժան եմ զայն ամենայն եռանդն յանձին բերել. սակայն զամենայն զիմոյ սըր-

տի ախորժակ քեզ մատուցանեմ, որպէս եթէ այն ամենայն խանդաղակաթ ըղձից բորբոքք յիս միայն էին։ Այլ և զոր ինչ հնար է բարեպաշտ մտաց խորհել և փափաքել, զայն ամենայն մեծաւ յարգանօք և ըղձմամբ սրտի քեզ ընծայեմ և մատուցանեմ։ Ոչինչ կամիմ անձին պահել. այլ զիս, և զամենայն որ ինչ է իմ, քեզ կամակար և մտադիւր նուիրեմ։ Աստուած իմ, արարիչ իմ, և փրկիչ իմ, այնպիսի ըղձիւ և յարգմամբ, զովութեամբ և պատուով, այնպիսի զոհութեամբ մեծարանօք և սիրով, այնպիսի հաւատով յուսով և մաքրութեամբ անձկամ ընդունել զքեզ այսօր, զոր օրինակ փափաքմամբ ընկալաւ ըղքեզ ամենասուրբ մայր քո փառաւորեալ կոյսն Մարիամ, յորժամ յանետել նմա հրեշտակին զմարդեղութեանն խորհուրդ՝ խոնարհութեամբ և եռանդեամբ ետ պատասխանի. Ահաւասիկ կամ աղախին տեառն, եղիցի ինձ ըստ բանի քում։

Գ. Եւ որպէս երանելի կարապետն քո, մեծն 'ի սուրբս Յովհաննէս մկրտիչ՝ առաջի քո խաչտալով ցնծացաւ խնդութեամբ հոգւոյն սրբոյ, մինչդեռ փակեալ էր յարգանդի մօրն. և յետ ժամանակաց տեսեալ զքեզ զի գնայիր 'ի մէջ մարդկան, առաւել ևս խոնարհեալ՝ յորդեռանդն ըղձիւ ասէր. Իսկ բարեկամ փեսային, որ կայ և լսէ նմա, ուրախութեամբ ուրախ լինի վասն ձայնի փեսային. Նոյնպէս և ես ցանկամ սուրբ ըղձմամբ բորբոքիլ, և յամենայն սրտէ առաջի առնել քեզ զանձն իմ։ Վասն որոյ և զամենայն եռանդնոտաց հրճուանս, զբորբոքեալ խղճս, զմտաւոր զմայլմունս, զզերբնական լուսաւորութիւնս և զառ 'ի յերկնից յայտնութիւնս, հանդերձ ամենայն ազաքինութեամբք և զոլութեամբք՝ որ յամենայն արարածոց յերկինս և յերկրի քեզ ընծայեալ, մատուցանեմ քեզ և ընծայեմ վասն իմ, և վասն ամենեցուն յաղօթս իմ յանձն եղելոց. զի յամենեցունց ար-

ժանապէս օրհնեսցիս և յաւիտեան փառաւորեսցիս։

Դ. Ընկալ զուխտս իմ, տէր Աստուած իմ, և զիրգս անչափ օրհնութեան և անբաւ փառաւորութեան, որ քեզն վայելեն ըստ առաւելութեան անպատում մեծութեան քոյ։ Զայս ամենայն քեզ փոխատրել ցանկամ յամենայն աւուրս և 'ի ժամանակս. և հայցմամբ և ըղձմամբ հրաւիրանօք աղերսեմ զամենայն երկնային զօրս, և զամենայն հաւատացեալս 'ի քեզ, փոխատրել քեզ ընդ իս զշնորհս և զզովութիւն։

Ե. Օրհնեսցեն զքեզ ամենայն աղգք և ազինք և լեզուք, և զսուրբ զանուշակ անուն քո հոչակաւ և վառեալ եռանդեամբ մեծացուսցեն։ Եւ որք յարդանօք եռանդին զայս զերահրաշ խորհուրդ քո կատարեն, և լիահաւատ յայն մատչին, զշնորհս և զողորմութիւն առաջի քո գտանել արժանասցին, և վասն իմ մեղաւորիս աղերս մատուցեն։ Եւ իբրև յանձկալի յայն

եռանդն և 'ի զմայլեցուցիչ միաւորութիւն հասանիցեն, և քաջ մխիթարեալք և մեծահրաշ վայելեալք 'ի սուրբ յերկնային սեղանոյ քոյ մեկնեսցին, և զիս զտառապեալս յիշման արժանի արասցեն։

ԳԼՈՒԽ ԺԸ

Թէ չէ պարտ մարդոյ լինել ընդվայրաքնին խուզարկու խորհրդոյս, այլ խոնարհ հետևող Քրիստոսի, հնազանդեալ զիւր միտս սրբոյ հաշտողոյ.

Զայն սիրեցելոյն.

Ա. Զգոյշ լեր յընդվայրաքնին և յանպիտան հետազօտութենէ խորին խորհրդոյս, եթէ ոչ կամիս խարդաւանել'ի վիհ երկբայութեան։ Որ քննիչ է մեծվայելչութեան, մղձկի 'ի փառաց անտի։ Բազում ինչ հնար է Աստուծոյ գործել, քան մարդոյ 'ի միտ առնուլ։ Ցանելի է բարեպաշտ և խոնարհ քննութիւն

ճշմարտութեան, որ պատրաստ է միշտ ուսանել, և ջանայ ըստ ողջամիտ իմաստից հարց դնալ։

Բ. Երանի՛ պարզմտութեան, որ զգժուարին խնդրոց ճանապարհ թողու, և ընդ հարթ և հաստատուն շաւիղս պատուիրանացն Աստուծոյ գնայ։ Բազումք կորուսին զեռանդն, 'ի ձեռնարկել իւրեանց քննել զբարձրագոյնս։ Հաւատք 'ի քէն պահանջին և վարք ամբիծք. ոչ վսեմութիւն մտաց, և ոչ խորք խորհրդոցն Աստուծոյ։ Թէ չիմանաս և չտանիս որ ինչ ստոր է քան զքեզ, զիարդ հասու լիցիս որոց 'ի վեր են քան զքեզ։ Հնազանդ լեր Աստուծոյ, և խոնարհեցո զմիտս քո հաւատոյ. և տացի քեզ լոյս զիտութեան, որպէս զիարդ օգուտ իցէ քեզ և պիտոյ։

Գ. Ոմանք մեծապէս փորձին 'ի վերայ հաւատոյ և խորհրդոյ հաղորդութեան. բայց այս ոչ նոցա է մեղ, այլ առաւել թշնամւոյն։ Մի՛ հոգար, մի՛ վիճեր ընդ խորհուրդս քո. և մի՛ երկբայութեանց, որ 'ի

սաղրելոյ սատանայի, տար պա-
տասխանի։ Այլ հաւատա բանիցն
Աստուծոյ, հաւատա սրբոց նորա
և մարգարէից. և թշնամին չար լի-
ցի 'ի քէն հալածական։ Բաղում
անգամ օգուտ մեծ է ծառայի Ա-
ստուծոյ՝ այդպիսեաց համբերել։
Քանզի ոչ փորձէ նա զանհաւատս
և զմեղաւորս, յորս վստահ է թէ
իւր են. այլ զչերմեռանդն հաւա-
տացեալս բազմօրինակ փորձէ և
չարչարէ։

Դ. Հա՛պա, զնա զհանապարհ
քո անկեղծ և աներկբայ հաւատով,
և աղօթանուէր յարգանօք մատիր
'ի սուրբ խորհուրդ. և զոր ոչ բա-
ւես իմանալ, Աստուծոյ ամենակա-
լի աներկեան արա յանձն։ Ոչ խա-
բէ զքեզ Աստուած. այլ խաբի՝ որ-
կարի իմն հաւատայ անձին։ Գնայ
Աստուած ընդ պարզամիտս, յայտ-
նէ զանձն խոնարհաց, տայ իմաս-
տութիւն տղայոց, բանայ զմիտս
մաքրամտաց, և ծածկէ զչնորհս 'ի
հետաքրքրաց և յամբարտաւանից։
Բանն մարդկային տկար է, և հնար

է թէ խաբեսցի. այլ հաւատք ճըշ-
մարիտ՝ է անխաբ։

Ե. Ամենայն բանի և բնաւոր հե-
տազօտութեան պարտ է զհետ եր-
թալ հաւատոյ. ոչ յառաջել, և ոչ
միջամուխ լինել։ Զի հաւատք և սէր
դեր ի վերոյ են յոյժ, և յայսմ ամե-
նասուրբ դերահրաշ խորհրդեան
ծածկապէս ներգործեն։ Աստուած
անչափ յաւիտենական և անբաւա-
զօր առնէ մեծամեծս և անքննիս
յերկինս և յերկրի. և չիք զննու-
թիւն սքանչելի գործոց նորա։ Եթէ
էին նորա գործք՝ մարդկային բանի
զիւրահասք, ոչ արդեօք սքանչելի
էին և ոչ անպատում։

ՅԱՆԿ

ԳՐՈՑ ԵՒ ԳԼԽՈՑ

ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ

Խրատք առ հոգևոր կևանս պիտանիք.

ԳԼ.

Ա. Յաղագս նմանող լինելոյ Քրիստոսի, և արհամարհել զամենայն ունայնութիւնս աշխարհի 5

Բ. Յաղագս նուաստ համարելոյ զանձն 8

Գ. Յաղագս վարդապետութեան Ճշմարտութեան 11

Դ. Յաղագս յառաջատեսութեան 'ի գործս 16

Ե. Յաղագս ընթերցման սուրբ գրոց 17

Զ. Յաղագս անկարգ ախորժակաց 19

Է. Յաղագս խորշելոյ 'ի անոսկ յուսոյ, և 'ի մեծամտութէ. 20

Ը. Յաղագս զգոյշ լինել 'ի կարի իմն ընտանութենէ . . . 22
Թ. Յաղագս հնազանդութեան և հպատակութեան . . . 24
Ժ. Յաղագս խորշելոյ 'ի դատարկ բանից 26
ԺԱ. Յաղագս սատանայոյ զնաւաղութիւն, և յաղագս նախանձու յառաջադիմութեան 28
ԺԲ. Յաղագս օգտի վշտաց . . . 31
ԺԳ. Յաղագս հակառակ կալոյ փորձութեանց 33
ԺԴ. Յաղագս խորշելոյ 'ի յանդուգն դատողութենէ 38
ԺԵ. Յաղագս որ 'ի սիրոյ արարեալ գործք 40
ԺԶ. Յաղագս համբերելոյ պակասութեանց այլոց 42
ԺԷ. Յաղագս միանձնական վարուց. 44
ԺԸ. Յաղագս օրինակաց սքից հարց . 46
ԺԹ. Յաղագս կրթութեանց բարւոյ կրօնաւորի 50
Ի. Յաղագս սիրոյ առանձնութենէ և լռութեան 55
ԻԱ. Յաղագս զղջութեան սրտի . 61
ԻԲ. Յաղագս խոկման մարգկային թշուառութեան 64
ԻԳ. Յաղագս խոկման մահու . . 69

ԻԴ. Յաղագս դատաստանի, և պատ-
ժոց մեղաւորաց 75
ԻԵ. Յաղագս փոյթեռանդն ուղ-
ղութեան վարուց մերոց . 81

ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ

Խրատք, որք ձգեն զմեզ 'ի ներքին.

ԳԼ.
Ա. Յաղագս Ներքին գնացից . . 91
Բ. Յաղագս խոնարհ հպատակու-
թեան 97
Գ. Յաղագս առն խաղաղարարի . 99
Դ. Յաղագս մաքուր մտաց, և միա-
միտ դիտաւորութեան . . 101
Ե. Յաղագս Ճանաչելոյ զչափ ան-
ձին 103
Զ. Յաղագս ուրախութեան բա-
ւոք խղճի մտաց 106
Է. Յաղագս սիրոյն Յիսուսի 'ի վեր
քան զամենայն 109
Ը. Յաղագս մտերիմ սիրելութեան
Յիսուսի 111
Թ. Յաղագս պակասութեան ա-
մենայն սփոփանաց . . . 115
Ժ. Յաղագս գոհութեան առ Հա-
նորհս Աստուծոյ. . . . 121

ԺԱ. Յաղագս սակաւութեան սիրոյ խաչին Յիսուսի . . . 125
ԺԲ. Յաղագս արքունի Ճանապարհի սրբոյ խաչին 129

ԳԻՐՔ ԵՐՐՈՐԴ

Յաղագս նեղբին մխիթարութեան.

ԳԼ.
Ա. Յաղագս նեղբին խօսից Քրիստոսի առ հաւատացեալ ոգի 141
Բ. Թէ ճշմարտութեն նեղբուստ խօսի լռելեայն 143
Գ. Թէ զբանս Աստուծոյ խոնարհութեամբ պարտ է լսել. և թէ բազումք ոչ քննեն զնոսա 145
Դ. Թէ պարտ է ճշմարտութեամբ և խոնարհութեամբ գնալ առաջի Աստուծոյ . . . 150
Ե. Յաղագս պանջելի պաղոյ աստուածային սիրոյ . . . 153
Զ. Յաղագս հանդիսի ճշմարիտ սիրողի 159
Է. Յաղագս ծածկելոյ զշնորհս ընդ պահպանութեամբ խոնարհութեան. 163

Ը. Յաղագս նուաստ համարման անձին առաջի Աստուծոյ . 167
Թ. Թէ զամենայն պարտ է վերաբերել յԱստուած իբրև 'ի վերջին վախճան 170
Ժ. Թէ արհամարհողին զաշխարհ քաղցր է ծառայել Աստուծոյ 172
ԺԱ. Թէ զնդձս սրտի քննել պարտ է, և կարգաւորել . . . 176
ԺԲ. Յաղագս օրինակի համբերութեան, և մարտնչելոյ ընդդէմ ցանկութեանց . . . 178
ԺԳ. Յաղագս հնազանդութեան խոնարհ հպատակի ըստ օրինակին Յիսուսի Քրիստոսի . 182
ԺԴ. Յաղագս խոկման գաղտնի դատաստանացն Աստուծոյ, զի մի մեծամտեսցուք ընդ բարութիւնս 184
ԺԵ. Թէ զնաւդ պարտ է մեզ կալ և զինչ ասել յամենայն ցանկալիս 187
ԺԶ. Թէ Ճշմարիտ սփոփանս խնդրել պարտ է միայն յԱստուած 190
ԺԷ. Թէ զամենայն հոգս ընկենուլ պարտ է յԱստուած . . . 192
ԺԸ. Թէ ժամանակեան թշուառու-

Թեանց ըստ օրինակին Քրիս-
տոսի պարտ է երկայնմտու-
թեամբ համբերել . . . 194
ԺԹ. Յաղագս տանելոյ անիրաւու-
թեանց, և ցոյց Ճշմարիտ
համբերողին 197
Ի. Յաղագս խոստովանութեան
անձին տկարութեան, և կեն-
ցաղոյս թշուառութեանց . 200
ԻԱ. Թէ պարտ է հանդչել յԱ-
տուած, քան յամենայն բա-
րութիւնս և 'ի պարգևս . . 204
ԻԲ. Յաղագս յիշատակի բազմա-
պատիկ բարերարութեանց
Աստուծոյ 209
ԻԳ. Յաղագս չորից, որք 'ի նեղս
ածեն խաղաղութիւն մեծ . 213
ԻԴ. Յաղագս խորշելոյ յընդվայրա-
քնին հետազօտութենէ վա-
րուց այլոց 217
ԻԵ. Թէ յինչ հաստատեալ էցէ
անխռով խաղաղութիւն սրտի,
և Ճշմարիտ յառաջադիմու-
թիւն 218
ԻԶ. Յաղագս վնասութեան ազա-
տական մտաց, որում արժա-
նանամք առաւել խոնարհա-
կան աղօթիւք՝ քան ուսմամբ. 221
ԻԷ. Թէ առանձնական սէրն 'ի գե-

բոգոյն բարւոյ մեծապէս
յեռս ընկրկէ 224
ԻԸ. Ընդդէմ լեզուաց բամբասողաց 227
ԻԹ. Թէ ո՛րպէս 'ի նեղութիւն պարտէ կարդալ առ Աստուած, և օրհնել զնա 228
Լ. Յաղագս խնդրելոյ զօգնակցութիւնն Աստուծոյ, և յաղագս յուսոյ վերստին ընդունելութեան շնորհաց . 230
ԼԱ. Յաղագս զանց առնելոյ զամենայն արարածովք առ գտանելոյ զարարիչն 235
ԼԲ. Յաղագս ուրանալոյ զանձն, և հրաժարելոյ յամենայն ցանկութենէ 239
ԼԳ. Յաղագս անհաստատութեան սրտի, և յաղագս վախճանական դիտման՝ զոր պարտէ ունել առ Աստուած . . 241
ԼԴ. Յաղագս թէ սիրոյին քաղցր է Աստուած 'ի վեր քան զամենայն և յամենայնի. . . 243
ԼԵ. Թէ չէք ապահովութիւն 'ի փոփոխութենէ յաստի կեանս. . 246
ԼԶ. Ի վերայ ունայն գաղտղութեան մարդկան 249
ԼԷ. Յաղագս անխառն և ողջիկ

յանձնարարութեամբ անձին, առ ստանալոյ զաղատութիւն սրտի 251
ԼԸ. Յաղագս քաջ կառավարութեան յարտաքինս, և դիմել առ Աստուած 'ի վտանգս 254
ԼԹ. Թէ չէ պարտ մարդոյ տագնապել յիրողութիւնս . . . 256
Խ. Թէ մարդ չունի ինչ բարի յիւրմէ, և չէ կարող պարծել յիրս ինչ 257
ԽԱ. Յաղագս արհամարհութեամբ ամենայն ժամանակաւոր պատուոյ 261
ԽԲ. Թէ չէ պարտ գնել զնաղաղութիւն 'ի մարդիկ 262
ԽԳ. Յաղագս սնոտի և աշխարհային գիտութեան 264
ԽԴ. Յաղագս չձգելոյ յանձն զարտաքինս 267
ԽԵ. Թէ չէ պարտ հաւատալ ամենեցուն, և յաղագս գիւրահաւատութեան 'ի բանս . . 268
ԽԶ. Յաղագս ապաւինելոյ ՅԱստուած, յորժամ 'ի վերայ յարձակին սղաքք բանից . 273
ԽԷ. Թէ պարտ է տանել ամենայն ծանուցս՝ վասն յաւիտենիցն կենաց 277

ԽԸ. Յաղագս աւուրն յաւիտենից, և կենցաղոյս անձկութեանց 280
ԽԹ. Յաղագս փափաքման յաւիտենական կենաց, և թէ քանի բարիք խոստացեալ են պատերազմողաց 285
Ծ. Թէ որպէս պարտ է լքելոյն՝ աւանդել զանձն 'ի ձեռս Աստուծոյ 291
ԾԱ. Թէ պարտ է պատաղել 'ի խոնարհ գործս, յորժամ չէմք ժամանող բարձրագունից . 297
ԾԲ. Թէ չէ պարտ մարդոյ համարել զանձն արժանի մխիթարութեան, այլ յաւէտ պարտաւոր գանից 299
ԾԳ. Թէ շնորհն Աստուծոյ ոչ խառնի ընդ այնս՝ որոց քաղցր են երկրաւորք 302
ԾԴ. Յաղագս այլևայլ շարժմանց բնութեան և շնորհաց . . 305
ԾԵ. Յաղագս ապականութեան բնութեան, և ազգութեան աստուածային շնորհաց . . 312
ԾԶ. Թէ պարտ է մեզ ուրանալ զանձինս, և զհետ երթալ Քրիստոսի 'ի ձեռն խաչի . 317
ԾԷ. Թէ չէ պարտ մարդոյ կարի իմն լքանել, յորժամ դիպի նմա

'ի պակասութիւնս ինչ սահել 321
ԾԸ. Յաղագս չքննելոյ զբարձրագոյն իրս, և զԱստուծոյ գաղտնի դատաստանս . . 324
ԾԹ. Թէ զամենայն յոյս մեր և ապաւինութիւն յԱստուած միայն պարտ է հաստատել. 332

ԳԻՐՔ ՁՈՐՐՈՐԴ

Յաղագս խորհրդոյ հաղորդութեան.

Ձերմեռանդն հրաւէր առ նբ հաղորդութիւնն 337
ԳԼ.
Ա. Թէ քանի՛ յարգանօք պարտ է ընդունել զՔրիստոս . . 338
Բ. Թէ մեծ բարութիւն և սէր Աստուծոյ'ի սուրբ խորհրդեան ցուցանի մարդկան . . . 347
Գ. Յաղագս թէ օգտակար է ըստէպ հաղորդիլ 382
Դ. Յաղագս թէ բաղում բարիք պարգևին այնց, ոլք եռանդեամբ հաղորդին . . . 356
Ե. Յաղագս յարգի խորհրդոյս, և քահանայական կարգի . . 361

Զ. Հարցումն 'ի վերայ կրթութեան յառաջ քան զհաղորդութիւնն. 365
Է. Յաղագս քննութեան խղճի մտաց, և ուղղութեան առաջագրութեան. . . . 366
Ը. Յաղագս Նուիրման Քրիստոսի 'ի խաչին, և յաղագս յանձնարարութեան անձին . . 370
Թ. Թէ զմեզ, և զամենայն ինչ ըզմեր, պարտ է մեզ մատուցանել Աստուծոյ, և վասն ամենեցուն առնել աղօթս . 372
Ժ. Յաղագս թէ 'ի սուրբ հաղորդութենէ չէ պարտ 'ի բաց կալ դիւրաւ 376
ԺԱ. Թէ մարմինն Քրիստոսի և նոր գինեաւ յոյժ են հարկաւորանձին հաւատացելոյ . . . 382
ԺԲ. Թէ որ հաղորդելոցն է, բազում զգուշութեամբ պատրաստել պարտի զանձն առ ընդունելութի Քրիստոսի . 389
ԺԳ. Թէ պարտ է ջերմեռանդն ոգւոյ յամենայն սրտէ ախորժել զմիանալն ընդ Քրիստոսի 'ի սուրբ խորհրդեան . 392
ԺԴ. Յաղագս վառելոյ ըղձի եռանդնոտաց առ մարմին Քրիստի . 395

ԺԵ. Թէ զշնորհ եռանդեան՝ խոնարհութեամբ և անձին ուրացութեամբ լինի ստանալ. 398
ԺԶ. Թէ պարտ է մեզ զկարիս մեր Քրիստոսի յայտնել, և զշնորհս նորա հայցել . . . 401
ԺԷ. Յաղագս վառեալ սիրոյ և ըղձակաթ փափաքման ընդունելոյ զՔրիստոս 404
ԺԸ. Թէ չէ պարտ մարդոյ լինել ընդվայրաքնին խուզարկու խորհրդոյս, այլ խոնարհ հետևող Քրիստոսի, հնազանդեալ զիւր միտս սրբոյ հաւատոյ 408

ՎԵՐՋ